ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

www.syuniacyerkir.am

Սյունյաց երկիր

№19 (585) / 15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ. / ՇԱԲԱԹ

ՔԱՂԱՂՈՒՆՆԵՐ ՍՅՈՒՆՅԱՑ՝

դուք մարտնչեցիք արիաբար և հոգու ամբողջ զորությամբ՝ սեփական արյամբ վերստին սրբացնելով հայրենի հողը

ISSN 1829-3468

Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին և պսակը՝ վեհ . . .

Վահան Տերյան

Երապի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, հույսդ մեծ,
Քարքարոտ երկիր:

Ես մի բուռն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Երապի իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, հույսդ մեծ,
Արծվաբուն երկիր:

Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քունն են որդիքն իմ ջահել,
Հայրենի երկիր,
Հայաստան:

Հեղինակ՝ Ռոբերտ Ամիրխանյան

Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի, Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼ

Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն՝ վերջին քնար.–
Մի պիրկ պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի –
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեգ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ, իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անքոց մորմոքը նահրյան իմ ո՞րբ հոգու:
Իջել է շուրջը մի անհուր իրիկնաժամ,
ՈՒ լռություն մի անստվեր, անդուռ, անդող,
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիծը՝ իմ անլուր սիրտը բանտող:
Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ –
Ի՞նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա:
Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան –
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ո՞վ դարձրեց – մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտե՛ր երկու:
Գուցե այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհներգե ո՛չ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նահրի...

Երթամ հիմա: Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույր իմ օրերի երգով մթար
Ու նահրյան իմ երազի վերջին սիրով, –
Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ –
Տա՛մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն ի՛մ աչքերի մեջ կախվածի,
Իմ բո՛ղբ երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա, –
Թող ո՛չ մի զոհ չպահանջվի ինձնից բացի,
Ո՛չ մի ստվեր կախաղանին թող մոտ չգա...

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, 1920.6.X

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ձեզ հավիտյանս փա՛ռք՝ զորականներ չպարտված ու նահատակված

ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՄԵՆԱՄՂԱՎԱՆՋԱՅԻՆ ԵՐԱՇՈՒՄ ԱՆԳԱՄ ԴԺՎԱՐ ԿԼԻՆԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼ ՄԻ ԻՐԱՎԻՃԱԿ, ԵՐԲ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ ՊԻՏԻ ԱՍԵՆՔ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ և ԱՐՑԱԽԻ ՁՈՀՎԱԾ ՄԵՐ ՀԱՇԱՐԱՎՈՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ...

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բայց եղավ 2020 թ. աղետաբեր աշունը, եղավ տարակուսանքներով լեցուն Արցախյան նոր պատերազմը, որի սկսվելն ու ընթացքն առայսօր էլ հստակ պարզաբանման կարիք ունեն...

Պատերազմը, անշուշտ, հայրենական էր. ոտքի ելան Հայաստանի Հանրապետության՝ ազգային արժանապատվություն ունեցող բոլոր քաղաքացիները՝ յուրաքանչյուրն իր տեղում և իր կարելիությունների չափով:

Պատերազմը յուրօրինակ մի նոր հերոսամարտ էր Սյունյաց աշխարհի բազմադարյա պատմության մեջ, ինչը, անտարակույս, բացատրելի է. Արցախի անառիկությունը հարյուրամյակներ շարունակ պայմանավորված է եղել և՛ է Սյունիքի անպարտելիությամբ, և՛ ընդհակառակը:

Պատերազմում զոհվեց Սյունյաց աշխարհի 228 զավակ, իսկ 11-ի ճակատագրի մասին մինչև հիմա տեղեկություններ չկան, մեկն էլ գերեվարվել ու կեղծ մեղադրանքներով դատապարտվել է:

Պատերազմի օրերին սրտի անհուն կսկիծով անուն առ անուն ներկայացրել ենք անմահության ճամփա բռնած մեր լույս տղաներին, որոնց դաժանորեն կուլ էր տալիս արհավիրքը:

2020 թ. նոյեմբերի 9-ից հետո (թերթային բոլոր համարներում) շարունակել ենք հիշատակի խոսքեր հնչեցնել իրենց կյանքը հայրենիքին զոհաբերած մեր նահատակ հայրենակիցների մասին:

Եվ այնուամենայնիվ մեզ պարտավորված զգացինք սերունդներին թողնել մի ամբողջական մատյան՝ ներառելով սեղմ ու համառոտ շարադրանքով հիշատակություններ մեր բոլոր զոհերի մասին:

Ու մեկուկես տարի տեղեկություններ էինք հավաքում պատերազմում նահատակված ամեն մի սյունեցու մասին:

Այդ աշխատանքի արդյունքը «Սյունյաց երկրի» սույն համարն է:

* * *

Հիշատակարան-մատյանում փորձել ենք վերստին կարևորել 44-օրյա պատերազմում Սյունյաց աշխարհի քաջարի զավակների նահատակությունն ու անմար պահել հիշողությունը նրանց մասին:

Եվ պատշաճ համարեցինք դա անել՝ ինչոր առումով նրանց հետ նաև մենախոսելու ձևաչափով...

... Հրի և սրի զոհ մեր եղբայրներ, արևաբույր մեր տղաներ, մեր զավակներ, նահատակությամբ սրբացած մեր քաջ զորականներ՝ ողբ ու սուգ այստեղ չենք անելու:

Ձեզանով հպարտանալու ենք, աղոթելու ենք ձեր հոգիների հանգստության համար, ձեր գործած սխրանքների հերոսապատումն ենք ներկայացնելու՝ երդվելով, որ ձեր անկատար երազներն ու իղձերը

ՀԱՄԱՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻՅ, ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՎԱՐԴԱՆ ՁՀԱՆՅԱՆ, ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

կյանքի ենք կոչելու:
Իսկ եթե նենգ թշնամին շարունակի իր սուրը մեր գլխին մերկացրած պահել, ի զեն ենք գոչելու, և այունեցիներս՝ ոգեղեղնացած ձեր գնդերի հետ, մեր սրբազան նահատակներ Սիսակ Նահապետի, Անդովկ իշխանի, Դավիթ Բեկի ու Մխիթար Սպարապետի, Զորավար Անդրանիկի ու Արսեն Շահմազյանի, Դրոյի ու Գարեգին Նժդեհի, Վազգեն Սպարապետի հաղթական դրոշները վեր պարզած, նոր սխրանքների ենք գնալու...
Դուք դարձաք ազատաբաղձ հայ ժողովրդի անպարտելի ոգու և երազանքների մերօրյա խորհրդանիշը:
Դուք ձեր արյամբ նոր պատմություն կերտեցիք, որն ապագայում, անշուշտ, ուղղորդելու է մեր ազգային ընթացքը:
Ձեր նահատակությամբ մեր ժողովուրդը վերահաստատեց հարատևելու և արժանապատիվ պետականություն ունենալու իր աստվածատուր իրավունքը:
Դուք մարտնչեցիք արիաբար և հոգու ամբողջ զորությամբ՝ սեփական արյամբ վերստին սրբացնելով հայրենի հողը:
Ձեր կյանքի նվիրաբերությամբ պարտավորեցրեցիք ողջերիս ու եկող սերունդներին՝ մշտապես ոգեշնչվելու ձեր օրինակով: Դուք ոչ թե վախճանվեցիք, այլ ձեր կյանքը միաձուլեցիք մեր ժողովրդին հավերժորեն ուղեկցող աստվածային լույսի հետ:
Ձեր հիշատակը ոգեշնչում է մեզ, որ բարձր պահենք մեր գլուխը, ոտքի կանգնենք ծնկաչոք վիճակից, ապաքինենք 2020-ի աղետալի պատերազմից ստացած վերքերը, արթուն պահենք մեր հույսը և հավատանք, որ լեռներում նորից հարսանիք է լինելու:
Այդ դուք եք, որ կենսունակ եք պահում նաև անսակարկելի այն ճշմարտությունը, որ Արցախը չի կարող որևէ կարգավիճակով լինել մոլագարությամբ և ազգայնամոլությամբ տառապող ադրբեջանական պետության կազմում, որ հազարամյակներով աննվաճ Այունիքը չի կարող անդամահատված մնալ ու չի կարող թուրք-ազերիների ոտի կոխան դառնալ:
2020-ի սեպտեմբերի 27-ից սկսած պատերազմում յուրաքանչյուրդ ճակատ էիք մեկնում գիտակցումով, որ հնարավոր է և զրկվեք կյանքից... Գիտակցում էիք, բայց և գնում էիք անխռով, ու հայրենիքի կանչով խանդավառված...
Հենց այդպիսի վարք ունեցողների համար էր Ավարայրի պատմիչը գրել՝ **«... Գիտակցված մահն անմահություն է»:**
Երիցս օրինյալ լինեք դուք՝ չպարտված ու նահատակությամբ անմահացած մեր զորականներ, մեր արևաբույր տղաներ, հրի և սրի զոհ դարձած մեր զավակներ, մեր անմարելի փառքեր...

* * *

Համարում ձեռնպահ մնացինք խոսք ասել անհայտ ճակատագրի արժանացած մեր 11 հայրենակցի մասին՝ բավարարվելով նրանց անունները հիշատակելով:
Առայժմ մի ճշմարտություն ենք փաստում՝ նրանց ճակատագրերի անհայտությունը նույնպես զոհաբերություն է հանուն Հայաստանի պետականության:

* * *

Արցախյան մերօրյա պատերազմը, չնայած իր ողբերգական ավարտին, միանշանակ հերոսական էր:
Մեր պարտքն ենք համարում նորից ցավակցել մարտիրոսացած մեր հերոսների հարազատներին, մերձավորներին, սիրելիներին:
Այս հուշամատյանը թող փոքրիկ մխիթարանք լինի որդեկորույս ծնողներին, այրիացած կանանց, որբացած մանուկներին:
Այս հիշատակարանով մեր երախտագիտության տուրքն ենք մատուցում իրենց կյանքը հայրենիքի զոհասեղանին դրած մեր նվիրական հայորդիներին:
Փառք տանք մեր զորականներին, ովքեր նահատակվեցին հանուն հայրենիքի ու միացան Ավարայրում, Սարդարապատում, Լեռնահայաստանի հերոսամարտերում, Արցախյան առաջին և Ապրիլյան (2016 թ.) պատերազմներում մարտիրոսացած ու սրբացած մեր նախնիներին:
Հիշենք նաև, որ զոհվածների հիշատակի առջև ապրողներիս գլխավոր առաքելությունը մեր հայրենիքին արժանապատվորեն տիրություն անելն է...

* * *

2020 թ. Արցախյան պատերազմը հայ ժողովրդի պատմության ամենածանր գոյամարտերից էր. մեր դեմ էին ելել ոչ միայն թուրք-ազերիները, այլև միջազգային ահաբեկչական կազմակերպությունների վարձկան զինյալները...
Եվ այդ ամենը՝ աշխարհի հզորների լուռ ու անտարբեր հայացքի ներքո, ինչից հայ ժողովուրդը գոնե այս անգամ պարտավոր է համապատասխան եզրակացություններ անել...
Անկախ ամեն ինչից՝ Արցախյան երրորդ պատերազմը հայ ժողովրդի երբևէ ունեցած նշանավոր հերոսամարտերից էր և նրա ողբերգական ավարտն ամենևին էլ չի կարող ստվերել այն սխրանքը, որ գործել են հայոց մարտիկներն ու հրամանատարները, մեր կամավորական նվիրյալները:
Բոլոր նահատակների անունները պարտավոր ենք փոխանցել սերունդներին, որպեսզի նրանք ոգու կրակ առնեն իրենց նախնիների նվիրական հիշատակից:
«Այունյաց երկրի» սույն հրատարակություն-հուշամատյանն այդ ուղղությամբ արվող ընդամենը մի համեստ քայլ է:
Հուշամատյանն ամբողջացավ և ծնվեց Արթուր Նիկողոսյանի կամեցողությամբ ու աջակցությամբ, ով «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալն է, ում փոխանցում ենք մեր խմբագրակազմի ու ընթերցողների երախտագիտությունը:
Մեր երախտագիտությունը ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Այունիքի մարզի տարածքային ստորաբաժանմանը (ղեկավար՝ գնդապետ Վահե Աղալարյան), ԵԿՄ Այունիքի մարզային կառույցին (ղեկավար՝ գնդապետ Մելիքսեթ Պողոսյան)՝ հիշատակարանի նախապատրաստության ընթացքում մեր ստեղծագործական թիմին օժանդակելու, հրապարակվող տեղեկությունների արժանահավատությունն ապահովելուն աջակցելու համար:
Համարի ծրագրավորումից մինչև հրատարակություն՝ իր աշխարհընկալումների խորախորհուրդ ներկայությամբ մեզ հետ էր Այունյաց աշխարհի մերօրյա բանաստեղծ Տիգրան Գրիգորյանը, ում խմբագրակազմի խորին երախտագիտությունն ենք փոխանցում:
Օրինաբեր այս հուշմատյանի նախապատրաստության ամբողջ ընթացքը հավելյալ անգամ ցույց տվեց, որ արժանապատիվ այունեցիներն իրենց ապրած կյանքով ու խոնարհումով շարունակում են սրբագործել հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած քաջերի անունները:
Իսկ դա նշանակում է, որ նահատակներից յուրաքանչյուրի համար սիրով կարող ենք գործածել հայտնի աստվածադիր խոսքը՝ **«Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար»:**
Համոզված ենք՝ Հայաստան աշխարհի և հայոց Այունիքի ազգային սրբազան երթն անվախճան է լինելու...

2020թ. սեպտեմբերի 27-ին սկսած հայրենական պատերազմը.

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԱՅԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց բանակի օրհներգը 2

Եղիշե Չարենց, Մահվան տեսիլ 3

Խմբագրական՝ «Ձեզ հավիտյանս փառք՝ զորականներ չպարտված ու նահատակված» (Սամվել Ալեքսանյան) 4

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսած հայրենական պատերազմը. ռազմաճակատային դրվագներ 6

ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ալավերդյան Գուրգեն Կարոյի 12

Անտոնյան Վրույր Սիամանթոյի 13

Առաքելյան Արմեն Ալիքի 14

Գևորգյան Ժորժ Արսենի 15

Գևորգով Յուրի Նիկոլայի 16

Գրիգորյան Արթուր Վոլոդիայի 17

Գրիգորյան Շահեն Արսենի 18

Գրիգորյան Ռազմիկ Թելմանի 19

Խաչատրյան Խաչատուր Գուրգենի 20

Խաչատրյան Մարատ Վլադիկի 21

Հարությունյան Կարեն Սեյրանի 22

Ղարիբյան Կարեն Ռուդիկի 23

Մարտիրոսյան Արտաշես Արմանի 24

Միրզոյան Վահե Հայկազի 25

Մովսիսյան Վարդան Սերյոժայի 26

Նավասարդյան Ալեն Արտակի 27

Պապյան Արամ Հրաչիկի 28

Պապյան Գարիկ Արմենի 29

Պետրոսյան Սասուն Սարուբեկի 30

Սարգսյան Նորայր Փայլակի 31

ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ազիզյան Արտաշես Եղիշեի 33

Բաղդասարյան Արմեն Լյովայի 34

Բեգլարյան Մակար Ջանիկի 35

Չաքարյան Անդրանիկ Սամվելի 36

Խաչատրյան Ալբերտ Արմենի 37

Խաչատրյան Ջիվան Ռոբերտի 38

Ծատրյան Անդրանիկ Սերժիկի 39

Համբարձումյան Սուրեն Բագրատի 40

Հայրապետյան Արմեն Գրիգորի 41

Հայրապետյան Տիգրան Կարենի 42

Հարությունյան Անդրանիկ Համլետի 43

Հովհաննիսյան Արսեն Եղիշեի 44

Ղուկասյան Տիգրան Լենդրուշի 45

Մաթևոսյան Դավիթ Ղևոնդի 46

Միրզոյան Կարեն Արթուրի 47

Մկրտչյան Հայկ Արամի 48

Մկրտչյան Վազգեն Ռուդիկի 49

Մնացականյան Սպարտակ Լևոնի 50

Սարգսյան Նարեկ Սամվելի 51

Սարգսյան Սուրեն Բենիկի 52

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ալևորդյան Յուրի Միերի 54

Աղաբեկյան Միեր Չարմոյի 55

Անդրեասյան Գոռ Ռոբերտի 56

Անտոնյան Արտեմ Վլադիմիրի 57

Ավանեսյան Արեն Արամի 58

Ավանեսյան Բորիս Վարուժանի 59

Ավետիսյան Մարտիկ Պապիշի 60

Արզումանյան Արեն Հովիկի 61

Արթին Քրիստափոր Անդրանիկի 62

Բեգլարյան Ալեն Եղիշի 63

Գարակյան Սեյրան Գրիշայի 64

Գևորգյան Արմեն Հրանտիկի 65

Գրիգորյան Արամ Սամվելի 66

Գրիգորյան Էրիկ Սերգեյի 67

Գրիգորյան Կարեն Գեդեոնի 68

Գրիգորյան Հայկ Գագիկի 69

Դանիելյան Էդվարդ Գառնիկի 70

Թումանյան Գրիշա Նորայրի 71

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իսայան Վահրամ Վազգենի 72
Լալաբեկյան Սերգեյ Սամվելի 73
Խաչատրյան Հովհաննես Վրեժի 74
Խաչատրյան Նորայր Արարատի 75
Խաչատրյան Շանթ Արսենի 76
Խլղաթյան Գառնիկ Էդգարի 77
Խուդագուլյան Սեդրակ Սուլթանի 78
Ծատրյան Արամայիս Գագիկի 79
Հակոբյան Արեգ Աշոտի 80
Հարությունյան Արման Ռուբիկի 81
Հարությունյան Դավիթ Հրայրի 82
Հարությունյան Դավիթ Յուրիկի 83
Հարությունյան Ձորիկ Արծրունի 84
Հարությունյան Ռուդիկ Ֆրունզիկի 85
Հովհաննիսյան Հովհաննես Սմբատի 86
Ղուկասյան Դավիթ Երվանդի 87
Մաթևոսյան Ժիրայր Վազիկի 88
Մաթևոսյան Էդգար Արթուրի 89
Մանասյան Արսեն Լևի 90
Մարգարյան Գարիկ Լևոնի 91
Մուրադյան Շավարշ Մարտունի 92
Ներսիսյան Գարիկ Սերյոժայի 93
Ներսիսյան Սասուն Գրենիկի 94
Շահնազարյան Էդուարդ Վարդանի 95
Ոսկանյան Խաչիկ Ծատուրի 96
Պետրոսյան Տիրան Անդրանիկի 97
Պողոսյան Արտեմ Հենրիկի 98
Պողոսյան Մանուկ Արթուրի 99
Պողոսյան Սարգիս Սամվելի 100
Վարդանյան Հարություն Սամվելի 101
Փարամազյան Արշակ Հրաչիկի 102
Օհանյան Արման Մայիսիկի 103

ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Աղամալյան Ազնիվ Արգամի 105
Աղաջանյան Անդրանիկ Սուրենի 106
Աղասյան Գարիկ Արարատի 107
Առաքելյան Համլետ Ռաֆիկի 108
Ասրյան Սերոբ Սարմենի 109
Ավետիսյան Հովհաննես Նիկոլայի 110
Արզանյան Արթուր Սամվելի 111
Արզումանյան Արտուշ Արարատի 112
Արչունց Արման Արտուշի 113
Ափյան Արա Յուրիկի 114
Բաբայան Վահագն Վահանի 115
Բաբայան Վահան Գագիկի 116
Բաբայան Վանիկ Վահանի 117
Բազունց Բաբկեն Արսենի 118
Բազունց Սևակ Ռուբիկի 119
Բակունց Վահե Վահագնի 120
Բաղդագուլյան Աշոտ Վարազդատի 121
Գասպարյան Դավիթ Սերգեյի 122
Գրիգորյան Կարեն Արբենի 123
Դանիելյան Ավետիք Ավշարի 124
Դանիելյան Արամիկ Կամոյի 125
Դանիելյան Լևոն Գրիգորի 126
Դավթյան Սերյոժա Արթուրի 127
Իսայան Հայկ Սասունի 128
Իսունց Գևորգ Ռաֆիկի 129
Խաչատրյան Արա Ադոլիկի 130
Խաչատրյան Արթուր Արարատի 131
Խաչատրյան Գավրուշա Ջոնիկի 132
Խաչատրյան Տիգրան Արթուրի 133
Կիզիրանց Գարիկ Քաջիկի 134
Հայրապետյան Աշոտ Արտուրիկի 135
Հայրապետյան Կարեն Վարդգեսի 136
Հայրապետյան Միհր Ռադիկի 137
Հարությունյան Գոռ Յուրիի 138
Հարությունյան Հարություն Կառլենի 139
Հարությունյան Հունան Պարգևի 140
Հարությունյան Մեսրոպ Վաչեի 141

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ղուկասյան Գևորգ Կորյունի..... 142
Ղուկասյան Նաիրի Կամոյի..... 143
Ղուշունց Գեղամ Սարմենի..... 144
Մալինցյան Արսեն Սամվելի..... 145
Մալինցյան Գագիկ Արամի..... 146
Մաշուրյան Արման Արմենի..... 147
Մարության Վրեժ Արտավազդի..... 148
Մարտիրոսյան Միեր Կամոյի..... 149
Մարտիրոսյան Նարեկ Շիրազի..... 150
Մելքումյան Սամվել Արտակի..... 151
Միրաքյան Կարապետ Շավարշի..... 152
Միրզոյան Արեն Կարենի..... 153
Միրումյան Լևոն Սամվելի..... 154
Մուրադյան Հարութ Ֆրիկի..... 155
Պետրոսյան Խաչիկ Հրաչիկի..... 156
Պողոսյան Արշավիր Աշոտի..... 157
Պողոսյան Հրաչյա Վաչիկի..... 158
Սաթունց Տիգրան Մարտունի..... 159
Սահակյան Արմեն Արմանի..... 160
Սարգսյան Մայիս Կոլյայի..... 161
Սաֆյան Սենիկ Սերյոժայի..... 162
Սինանյան Նարեկ Սերգեյի..... 163
Վանեսյան Գարիկ Միշայի..... 164
Տատինցյան Էլներ Արթուրի..... 165
Քյարունց Գագիկ Ռազմիկի..... 166

ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ազարյան Արեգ Բորիկի..... 168
Ամարյան Սամսոն Ռաֆիկի..... 169
Առաքելյան Արթուր Արայիկի..... 170
Առաքելյան Արտակ Սեյրանի..... 171
Առաքելյան Միեր Սասունի..... 172
Ավանեսյան Վահիկ Սերյոժայի..... 173
Արզումանյան Հասմիկ Սմբատի..... 174
Արիստակեսյան Կոլյա Ռաֆիկի..... 175
Բաբայան Անդրանիկ Մանասերի..... 176
Բաբայան Աշոտ Մանասերի..... 177
Բաբայան Նարեկ Աշոտի..... 178
Բաբաջանյան Գևորգ Արտուրի..... 179
Բալյան Արտաշես Ալբերտի..... 180
Բաղինյան Լևոն Սամվելի..... 181
Գաբրիելյան Իգոր Գրիշայի..... 182
Գալստյան Արթուր Սուրենի..... 183
Գալստյան Արմեն Անդրանիկի..... 184
Գալստյան Մարտին Վազգենի..... 185
Գևորգյան Դավիթ Աշոտի..... 186
Գրիգորյան Արա Տարսեիչի..... 187
Գրիգորյան Արմեն Գրիգորի..... 188
Գրիգորյան Գագիկ Հայկազի..... 189
Գրիգորյան Գրիգոր Արայիկի..... 190
Գրիգորյան Լևոն Միերի..... 191
Գրիգորյան Հայկ Դավիթի..... 192
Գրիգորյան Հովհաննես Կառլենի..... 193
Գրիգորյան Վահագն Արտուշի..... 194
Գրիգորյան Վլադ Ալբերտի..... 195
Դանիելյան Դավիթ Հմայակի..... 196
Դավթյան Վարդան Վահանի..... 197
Ելուդյան Նարեկ Յուրիկի..... 198
Եսայան Պարույր Արամայիսի..... 199
Թևանյան Դավիթ Սամվելի..... 200
Թովմասյան Օգսեն Խաչատուրի..... 201
Թունյան Սարո Միքայելի..... 202
Իսրայելյան Կարեն Ձորավիկի..... 203
Խաչատրյան Անուշավան Վարուժանի..... 204
Խաչատրյան Դավիթ Հովնանի..... 205
Կարապետյան Արման Ռուդիկի..... 206
Կարապետյան Հրահատ Փայլակի..... 207
Կիրակոսյան Արայիկ Էդիկի..... 208
Հակոբջանյան Մարատ Մարտունիկի..... 209
Հակոբջանյան Տիգրան Դրաստամատի..... 210
Հայրապետյան Արշակ Վանուշի..... 211

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Նարեկ Սենիկի 212
Հովակիմյան Սամսոն Միշայի 213
Հովակիմյան Վահագն Հրաչյայի 214
Հովհաննիսյան Վարդան Գևորգի 215
Հովսեփյան Արամ Բենիկի 216
Մայիլյան Ռուբիկ Հովհաննեսի 217
Մանուկյան Իգոր Համլետի 218
Մանուկյան Նարեկ Սուրենի 219
Մանուկյան Տիգրան Աշոտի 220
Միրզոյան Համլետ Գրիշայի 221
Միքայելյան Գեորգի Վարդանի 222
Մնացականյան Նարեկ Լյովայի 223
Մնացականյան Վարդան Մուշեղի 224
Մովսեսյան Ներսես Պյոտրի 225
Մուրադյան Աշոտ Հովհաննեսի 226
Մուրադյան Գարիկ Սերոբի 227
Ներսիսյան Պողոս Պարգևի 228
Նիկալյան Արմեն Սամվելի 229
Նիկոլյան Գարեգին Հազարապետի 230
Պետրոսյան Արմեն Գևորգի 231
Պետրոսյան Վաչե Արարատի 232
Պողոսյան Վրեժ Սեյրանի 233
Սարգսյան Էդգար Դավիթի 234
Սարգսյան Նարեկ Ջիվանի 235
Սաֆյան Արայիկ Հովհաննեսի 236
Սաֆյան Գեղամ Սերժիկի 237
Սիմոնյան Ռաֆիկ Սարոյի 238
Սողոմոնյան Մելիք Սեյրանի 239
Ստեփանյան Կարեն Ռուբիկի 240
Ստեփանյան Հրաչյա Գագիկի 241
Վարդազարյան Արծրուն Վարդազարի 242
Քարամյան Վահե Արսենի 243
Օհանյան Հայկ Նվերի 244
Օհանյան Յուրի Սամսոնի 245
Ֆիլիպոսյան Տարոն Հրայրի 246

Գերեվարվել ու կեղծ մեղադրանքով դատապարտվել է 247
Պատերազմում անհայտ ճակատագրի արժանացած մեր հայրենակիցները 247
Շարական սրբոց. Արիացյալք 248
Գրիգոր Նարեկացի, Սուրբ նահատակներին 249
Համո Սահյան, Չտեսնեի 250
Վարուժան Խաստուր, Տղերք 250
Սիսիանի քաղաքային պանթեոն 251
Քաջարան քաղաքի զոհված ազատամարտիկների հուշահամալիր 252
Մեղրի քաղաքի հիշատակի պուրակ 253
Նահատակ գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիր 254
Կապանի Բաղաբուրջի հուշահամալիր 255
Եվ պահենք այս հողը մի բուռ, Անունը՝ Հայաստան պահենք 256

Սյունյաց Երկիր

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
Գրանցման վկայական՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 32 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1000: Ստորագրված է տպագրության 15.10.2022թ.:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԱՄԱՅՆՔ

Ալավերդյան Գուրգեն Կարոյի

Ծնվել է 1995 թ. սեպտեմբերի 15-ին Քաջարան քաղաքում: Մինչև չորրորդ դասարանը սովորել է Գորիսի տարածաշրջանի Խոզնավար գյուղի միջնակարգ դպրոցում, ապա տեղափոխվել Երևան՝ սովորել «Փոքր Միեր» ռազմական կրթահամալիրում: Ամուրի էր:

Մանկուց երազում էր օդաչու դառնալ...

2013 թ. զորակոչվել է բանակ: Զորացրվելուց հետո ընդունվել է Գորիսի պետական համալսարանի էլեկտրատեխնիկայի բաժին, աշխատում էր «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում:

Հազար ու մի ծրագիր ուներ՝ պիտի դիպլոմը ստանար, պաշտոնի բարձրացում էին խոստացել, 2021 թ. ապրիլին պիտի ամուսնանար ու էլի շատ նպատակներ...

Դրանց իրականացումն ընդհատեց 2020-ի սեպտեմբերի 27-ին սկիզբ առած պատերազմը. Գուրգենն իր համաքաղաքացի բազմաթիվ տղաների հետ մեկնեց հայրենիքը պաշտպանելու:

Մայրն ասում է, որ տղան զանգահարելիս ամենաշատը երկու րոպե էր խոսում, չէր բողոքում, ասում էր, որ ամեն ինչ լավ է. *«Գուրգենն իրականում անթերի էր, կկարծեք՝ մայր եմ, ասում եմ, բայց նրան ճանաչող բոլոր մարդիկ կհաստատեն, որ նա անթերի էր...»:*

Հրետանավորի մասնագիտություն ուներ և հաճախ էր մեր զինվորներին օգնում ճշգրիտ հաշվարկներ կատարել: Անսխալ հաշվարկող էր, սուր միտք ուներ, երբեք չվրիպեց, ինչն առաջացնում էր բոլորի հիացմունքը:

Մեծահոգի էր, հոգատար. անգամ այդ ծանր օրերին չկորցրեց հումորի զգացումը, երբ տխրում էին, կատակելով փորձում էր զինակիցների տրամադրությունը բարձրացնել:

Գուրգեն Ալավերդյանը հոկտեմբերի 10-ին Ջրականում բեկորային վիրավորում է ստացել, տեղափոխել են Իշխանաձոր, բժիշկները փորձել են փրկել կյանքը, ցավոք, չի հաջողվել. հոկտեմբերի 11-ին դադարել է բաբախել երիտասարդի սիրտը...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Անտոնյան Վրույր Սիամանթոյի

Ծնվել է 1977 թ. փետրվարի 3-ին Քաջարան քաղաքում: Երեք տարեկանում տեղափոխվել է Գորիս, մեծացել տատի ու պապի մոտ՝ դառնալով նրանց մխիթարությունը: Միջնակարգ կրթությունը ստացել է Գորիսի թիվ 3 դպրոցում: Իններորդ դասարանում տեղափոխվել է Քաջարան: Ավարտել է տեղի Ե. Չարենցի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1995 թ. զորակոչվել է հայոց բանակ: Սովորել և 1999 թվականին ավարտել է Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը, ստացել տնտեսագետ-հաշվապահի որակավորում:

Աշխատանքային ուղին սկսել է Գորիսի «Տրանսգազ»-ի Քաջարանի մասնաճյուղում՝ համակարգչային օպերատոր, այնուհետև փրկարար է աշխատել Քաջարանի ԱԻՆ-ում:

2001 թ. ամուսնացել է, ունի 2 երեխա: Կինը Վրույրին բնութագրող բառերը հուզմունքով է արտաբերում. *«Օրինակելի ամուսին ու հայր էր, նրա բնավորության լավագույն գծերից էին կարգապահությունն ու աշխատասիրությունը, որոնք մեր ընտանիքի հաջողությունների հիմքն էին: Լավ երեխաներ ենք մեծացրել՝ խելացի, հարգալից, լավ ընտանիք ունեինք, հիմա էլ ունենք, քանի որ մեր օրը լցված է Վրույրի մասին հիշողություններով, նրա հիշատակը վառ է, բայց կորստի ցավը՝ սարսափելի մեծ»:*

2007 թ. աշխատանքի է անցել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում՝ երթակարգավար:

Աշխատանքային ընկերները նրան բնութագրում են որպես հարգալից մարդու, ով իր անձնական բարձր հատկանիշների շնորհիվ արժանացել էր հարգանքի:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. հաջորդ օրը Վրույրն Արցախում էր, մասնակցել է Վարանդայի և Ջրականի մարտերին:

«Հերոսաբար էր կռվում, հերոսաբար էլ ընկավ, քչերն են հայրենիքը պաշտպանելու գնում գիտակցաբար, Վրույրը քչերից մեկն էր», – պատմում է ընկերը:

Հոկտեմբերի 13-ին Վրույրը վտանգավոր մարտական գործողությանը մասնակցել է կամավոր, որպեսզի հանձնարարությունը ժամկետայիններ չկատարեն: Նա գիտակցել է վտանգի չափը, բայց կատարել է հանձնարարությունը և հերոսաբար անմահացել:

Վրույր Անտոնյանի մարմինն ամփոփված է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Առաքելյան Արմեն Ալիքի

Ծնվել է 1996 թ. սեպտեմբերի 25-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ապա Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում: 2013 թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ: 2015 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Մատաղիսում և Թալիշում:

Ապրիլյան պատերազմի ժամանակ Թալիշի այն զորամասում էր, որն առաջինը մարտի մեջ մտավ:

Ապրիլյան պատերազմի ժամանակ ցուցաբերած քաջության համար պարգևատրվել է «Արիության» մեդալով:

2017 թ. զորացրվել և անմիջապես աշխատանքի է անցել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում՝ անվտանգության աշխատակից, կրթությունը շարունակել է հեռակա ուսուցմամբ և ավարտել 2020 թվականին:

2020 թ. սեպտեմբերի 28-ին կամավորագրվեց և մեկնեց Արցախ. օրեր անց Արցախ է մեկնել նաև նրա ավագ եղբայրը: Մայրը վշտից խեղդվող ձայնով հիշում է, որ զինկոմն իրեն առաջարկել էր որդիներից մեկին հետ պահել, բայց ինքը որդիների միջև ընտրություն անել չէր կարող. *«Երբ մեր տան մոտ հավաքված բազմությանը տեսա, հասկացա, որ որդիներիցս մեկին ինչ-որ բան է պատահել. քիչ անց իմացա, որ իմ փոխարեն ճակատագիրն է ընտրություն կատարել ու ընտրել է Արմենիս, իմ կարգապահ, մաքրասեր, հարգալից որդուն, իմ կրտսեր տղային...»:*

Արմենը ռազմաճակատի հարավում միացել է Քյարամ Սլոյանի անունը կրող եզդիական ջոկատին, որի հրամանատար Ռզգոն նրան զգուշացրել է կարգապահական բացառիկ պահանջների, իր ջոկատում ընդունված խիստ կարգապահության մասին: Ի պատասխան Արմենն ասել է, որ հենց կարգապահությունն ու կազմակերպվածությունն են իրեն գրավել այդ ջոկատում: Մի քանի օր անց տուն է եկել և Քաջարանից վերցրել է իրենց «Վիլիսը» ու վերադարձել ռազմաճակատ: Ականատեսները պատմում են, որ նրան կարելի էր տեսնել ռազմաճակատի տարբեր հատվածներում, զարմանալիորեն հասցնում էր թե՛ վիրավորներին տեղափոխել, թե՛ սնունդ ու ջուր հասցնել, թե՛ ռազմամթերքով ապահովել ընկերներին:

Հոկտեմբերի 13-ին թշնամու անօդաչուն հարվածում է հայ մարտիկների մի խմբի. Արմենը նրանցից բավականաչափ հեռու էր գտնվում, բայց սրտին դիպած մատնաչափ բեկորը դառնում է նրա կյանքի ընդհատման պատճառ:

Արցախի պաշտպանության համար կյանքը չխնայած Արմեն Առաքելյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Գևորգյան Ժորժ Արսենի



Ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 26-ին Քաջարան քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 2018 թ. ընդունվել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» բաժինը: 2019 թվականի հունվարին զորակոչվել է բանակ: Եղբայր չուներ, տոհմածառի իրենց ճյուղի միակ շարունակողն էր, քրոջ միակ պաշտպանը՝ պահանջկոտ, խիստ ու անչափ հոգատար: Հարազատները, ընկերներն ու ծանոթները նրան նկարագրելիս շեշտում են չափազանց խելացի լինելը: Մինչև դպրոց գնալն էր կարդալ ու գրել սովորել: Բանակում ևս աչքի էր ընկել իր իմացությամբ, մաթեմատիկայից ունեցած գիտելիքները թույլ էին տալիս հեշտությամբ կատարել տեղագրումներն ու հաշվարկները: Զինակիցներն այսօր էլ հիացմունքով ու ցավով են հիշում իրենց նահատակ ընկերոջը. *«Չափազանց համեստ էր, իրական հերոս, 35 օր անդադար քաջություններ է գործել, իսկապես արժանի է իր ստացած առաջին աստիճանի «Մարտական խաչին»: Ժորժի մասին անվերջ կարելի է խոսել, յուրահատուկ մարդ էր, ասում էր, թե շատ է սիրում կարդալ, եթե չասեր էլ, միանգամից գլխի կընկնեինք, որ զարգացած, կարդացած ու խելացի մարդ է: Այդպիսի մարդիկ պիտի գիտնականներ դառնային, հայտնագործություններ անեին, ոչ թե զոհվեին պատերազմում: Ժամանակներն անցնում են, բայց նրա կորստյան ցավը չի մեղմանում, երևի երբեք էլ չմեղմանա...»:*

Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան, երբ սկսվեց թշնամու լայնածավալ հարձակումը, սկզբից և եթ դրսևորվեցին նրա կազմակերպչական ունակությունները, շրջապատին զարմացնող ու ոգևորող քաջությունը: Ինտենսիվ հրետակոծության տակ, երբ շրջակայքում պայթյունների տեղատարափ էր, դասակի տղաներին արգելեց դուրս գալ թաքստոցից, միայնակ անհրաժեշտ զենք ու զինամթերք բարձեց ավտոմեքենան, ինչը հետագայում շատ պետք եկավ: Այդ օրը նա ոչնչացրեց թշնամական առաջին տանկը... Հետո՝ երկրորդը, երրորդը...

Ժորժ Գևորգյանը հրաման է ստանում շրջափակման վտանգի տակ հայտնված զինվորներին աջակցելու համար դիրքավորվել մոտակա իշխող բարձունքում և թույլ չտալ հակառակորդի կողմից օղակի սեղմումը: Թշնամու օդուժը ռմբակոծում է դիրքերը... Այդ օրը՝ 2020 թ. նոյեմբերի 2-ին, մի քանի զինակից ընկերների հետ զոհվում է...

Հերոսացած պատանու աճյունն ամփոփվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում 2020 թ. նոյեմբերի 10-ին:

Արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, ԼՂՀ «Մարտական ծառայություն», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի կողմից երախտագիտության մեդալների՝ հետմահու:

Գևորգով Յուրի Նիկոլայի

Ծնվել է 1985 թ. հուլիսի 9-ին Բաքու քաղաքում: Հայտնի ջարդերից հետո ընտանիքը հանգրվանել է Սյունիքում՝ Կապանում, ապա՝ Քաջարանում: Սովորել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 9-րդ և 10-րդ դասարանները սովորել է Սյունիքի միջնակարգ դպրոցում: 2003 թ. զորակոչվել է բանակ, ծառայել է Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքի զորամասում, ականանետի նշանառու էր: Աշխատում էր «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունում՝ փոխարկիչի մեքենավար: 2018 թ. ամուսնացել էր, ունի երկու դուստր:

Յուրիի կրտսեր դուստրը ծնվել է հոր զոհվելուց ամիսներ անց. ավագը երկու տարեկան է. հայրիկին լավ է հիշում, հայրիկի նկարները ցույց է տալիս երկու ամսական քույրիկին, որ քույրիկն էլ ճանաչի հայրիկին, Սրբուհին մեկ այլ զբաղմունք էլ ունի. ժամերով նստում է մուտքի դռան մոտ ու հետևում ոտնաձայներին, որ հայրիկի գալու պահը հանկարծ բաց չթողնի...

Յուրիի մասին պատմում են Սյունիքի միջնակարգ դպրոցի ուսուցիչները: Մոտ 20 տարի անց էլ ռուսերենի ուսուցչուհի Էլզա Բաղդասարյանը չի մոռանում իր համեստ, ժպտերես աշակերտին. *«Յուրիի բնավորության ամենաառանձնահատուկ գիծը համեստությունն էր, բացառիկ հարգալից տղա էր, չարաբաստիկ պատերազմից օրեր առաջ եմ հանդիպել՝ պահպանել էր իրենց սերնդին հատուկ հարգանքն ու միայն իրեն պատկանող յուրահատուկ ժպիտը: Հիշում եմ՝ շատ արագ մերվեց դասարանին՝ իր մարդկային բնավորության շնորհիվ: Շատ-շատ եմ ափսոսում, որ նրա նման երիտասարդն այսօր մեր կողքին չէ, ինչ-որ բան սխալ է՝ նրա պես մարդիկ պիտի երկար ու երջանիկ ապրեին...»:*

Ուսումնական գծով տեղակալ Աշխեն Իսրայելյանի հայացքում բարի հուշերի ժպիտն ու ափսոսանքն իրար են փոխարինում. *«Մեր Յուրիի ժպիտը մոռանալ անհնար է, համեստ տղա էր, բայց սեփական կարծիքն ուներ ու իր տեսակետը համեստորեն առաջ էր տանում: Հերոս դառնալու համար մի վայրկյան է պետք, մարդ լինելու համար՝ մի ամբողջ կյանք. Յուրին հենց այն տեսակն էր, ով իր ապրած կարճ կյանքի ընթացքում ապացուցեց, որ մարդ է և լավ մարդ...»:*

2020 թ. սեպտեմբերի 28-ին Յուրին միացել է Քաջարանի մերձակա սահմանները պաշտպանող խմբերին: Հոկտեմբերի 8-ին կամավոր մեկնել է Արցախ, մասնակցել Ջրականի և Իշխանաձորի պաշտպանության մարտերին: 2020 թ. հոկտեմբերի 17-ին զոհվել է Խուդաֆերինի ջրամբարի մոտակայքում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Գրիգորյան Արթուր Վոլոդիայի

Ծնվել է 1977 թվականի դեկտեմբերի 2-ին Քաջարան քաղաքում: Ավարտել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցը, ապա սովորել Կապանի բժշկական քոլեջում, ստացել բուժակի մասնագիտություն: Ծառայել է ՀՀ զինված ուժերում, որից հետո ավարտել է Երևանի արտաքին տնտեսական կապերի համալսարանը: Աշխատել է «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության տեխնոլոգիական ավտոհավաքակայանում, զբաղեցրել պատասխանատու պաշտոններ:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ՝ որդի և դուստր:

Անկախ տիրապետած մասնագիտությունից ու կատարած աշխատանքից՝ նրա ուշադրության կենտրոնում միշտ սահմանն էր, այնտեղ կանգնած հայ զինվորը: Եվ խաղաղ, եվ պատերազմական իրավիճակներում այցելում էր դիրքեր, հանդիպում դիրքապահներին՝ իր խորհուրդներով գոտեպնդում նրանց, աջակցում՝ ինչով կարող էր: Նրա նախաձեռնությամբ և անձնական միջոցներով Նախիջևանի, Սիսիանի և Քաջարանի պաշտպանական դիրքերին է տրամադրվել անհրաժեշտ տեխնիկա՝ տրակտոր, ձյուն մաքրող մեքենա, բժշկական պարագաներ, պատգարակներ, հեռադիտակներ և այլն:

Հայրենանվեր գործունեության համար պարգևատրվել է «Հայրենիքի պաշտպան» մեդալով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով, «ՀՀ ԵԿՄ 20 տարի» հոբելյանական մեդալով, շնորհակալագրերով և պատվոգրերով:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան, երբ ադրբեջանական կողմը նախահարձակ եղավ, առաջիններից էր, որ մեկնեց ռազմաճակատ: Արդեն մարտական գործողությունների մասնակից էր միակ որդին՝ Կարենը, ով Ջրականի պաշտպաններից էր:

Ծանր մարտերից մեկի ժամանակ՝ որդու և ընկերների կյանքը փրկելով՝ հերոսաբար զոհվում է:

Որդին հպարտությամբ է հիշում հոր հետ անցկացրած ռազմաճակատային օրերը:

Արթուր Գրիգորյանը սիրում էր կրկնել. *«Աշխարհի որևէ հրաշք չեմ փոխի իմ հայրենի բնաշխարհի մի թիզ հող ու ջրի, անգամ՝ փոքրիկ քարի հետ»:*

Ցավոք, նրա երազանքներն անկատար մնացին...

Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության», «Արիության», Երկրապահ կամավորականների միության «Հայրենիքի պաշտպան» և Ազգային գվարդիայի «Հավերժի մարտիկ» մեդալներով:

Գրիգորյան Շահեն Արսենի

Ծնվել է 1970 թ. հունիսի 8-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոցում: Ծառայել է խորհրդային բանակում:

1992-1994 թթ. մասնակցել է Կապանի տարածաշրջանի Ծավ, Ներքին Հանդ, Սրաշեն գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, ստացել հրազենային վիրավորում և կոնտուզիա: Հետագա տարիներին մասնակցել է հայրենիքի բարգավաճման աշխատանքներին, վաստակել Շինարար Շահեն պատվավոր անունը:

Շահենի հետ ծանոթ լինելը ընկերները պատիվ են համարում, նրան նկարագրելիս ընդգծում են հայրենասիրությունն ու պատվախնդրությունը. *«Շահենի համար հայրենիքը միշտ առաջին տեղում է եղել, պատերազմն ամենատխուր ու ամենաանարդար բանն էր համարում, բայց միշտ ասում էր՝ յուրաքանչյուրս պիտի ամեն վայրկյան պատրաստ լինենք պաշտպանելու հողը, որը մեզ մեր պապերն են ժառանգություն թողել, որից մեկ մետր անգամ կորցնելու իրավունք չունենք: Ինքը միշտ պատրաստ էր զենք վերցնել, երբեք չի սպասել, որ հայրենիքն իրեն կանչի, այլ աչքը՝ սիրող հոր պես, իր հայրենիք-զավակի վրա է պահել ու վտանգի առաջին պահի հետ ոտքի է կանգնել երկրի պաշտպանության համար, նա կարծում էր, որ հենց խաղաղություն սիրողը պիտի զենքը ձեռքին պահի, որովհետև թուրքը խաղաղության թշնամին է: Ապրիլյանին էլ էր կամավորագրվել, որ ճակատ մեկներ, բայց ռազմական գործողությունները շուտ դադարեցին»:*

Շահենի մասին քույրն է պատմում. «Չափազանց խաղաղասեր անձ էր, հարգված, հարգալից, նրան բնութագրելու համար ուղղակի դրական բաներ ասել՝ նշանակում է ոչինչ չասել: Սեպտեմբերի 27-ին, երբ հարձակվեց թշնամին, Շահենը կորցրեց հանգիստը: Որքան համառեց, չզորակոչեցին՝ առողջության պատճառով, սակայն, այդ փաստը նրան հետ չպահեց: Սեփական նախաձեռնությամբ հոկտեմբերի 15-ին գնաց Արցախ, Ճարտարում կամավորագրվեց և Մարտունի 2-ում կանգնեց ժամկետային զինվոր որդու կողքին: Հոկտեմբերյան ծանր օրերին մասնակցեց մի շարք ծանր մարտերի: Հոկտեմբերի 25-ին՝ դավադիր թշնամու հերթական հարձակման ժամանակ, վիրավորվեցին ինքն էլ, որդին էլ: Վիրավոր վիճակում օգնեց երիտասարդ զինվորներին՝ տեղափոխելով անվտանգ տարածք: Ինքը զոհվեց թշնամու կրկնակի հարվածից»:

Հերոսացած Շահեն Գրիգորյանի աճյունն ամփոփվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում 2020 թ. հոկտեմբերի 29-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Գրիգորյան Ռազմիկ Թելմանի

Հայրը ԵԿՄ անդամ է, նա Արցախյան 44-օրյա պատերազմի առաջին օրվանից առաջնագծում է եղել, բայց զորահավաքով Ջրականում գտնվող որդին նրան չէր ասել իր գտնվելու վայրը...

Ծնվել է 1998 թ. սեպտեմբերի 22-ին Քաջարան քաղաքում: Հիմնական կրթությունը ստացել է Քաջարանի Ե. Չարենցի անվան թիվ 1 միջնակարգ և Երևանի N 64 դպրոցներում: 2013-2016 թթ. սովորել է Քաջարանի պետական արհեստագործական ուսումնարանում, որի ծրագրավորման երրորդ կուրսն ավարտելուց հետո զորակոչվել է ՀՀ զինված ուժեր, ծառայել է Դիլիջանի զորամասում: Զորացրվելուց հետո վերադարձել է Քաջարան և աշխատանքի ընդունվել «Աժդանակ» ՍՊԸ-ում՝ փականագործ:

Գործընկերները նրա մասին հարգանքով ու սիրով են պատմում. *«Լավ երիտասարդ էր, ինքը մեզ էր հարգում, մենք՝ իրեն, գործի հանդեպ էլ պարտաճանաչ էր, ուշադիր: Շատ-շատ ցավալի է նման լավ մարդ կորցնելը...»:*

«Ռազմիկը դեռ մանկուց համեստ, խելացի ու աշխատասեր երեխա էր, նաև համառ ու նպատակասլաց: Սիրում էր ինքնուրույնություն դրսևորել, նախաձեռնող էր, չէր վախենում անգամ իր ուժերից վեր աշխատանքից: Քրոջն ու եղբորն անչափ շատ էր սիրում, մեր առաջինն էր, հիմա էլ է առաջինը, մենք հիմա ապրում ենք, որ հիշենք...», – որդու մասին հպարտությամբ պատմում է հայրը:

Հայրը ԵԿՄ անդամ է, նա Արցախյան 44-օրյա պատերազմի առաջին օրվանից առաջնագծում է եղել, բայց զորահավաքով Ջրականում գտնվող որդին նրան չէր ասել իր գտնվելու վայրը, չանհանգստացնելու համար ասել էր՝ Ջերմուկում է, ու ամեն ինչ լավ է...

Սեպտեմբերի 29-ին հասավ Ջրական ու միացավ Կապանի բրիգադի զինվորներին: Բանակում ծառայության ընթացքում ծանոթացել էր Դ-20 հրանոթին և օգնում էր տղաներին նշանառության ու հաշվարկների հարցերում...

Հոկտեմբերի 10-ին հերոսաբար զոհվել է Ջրականի մատույցներում՝ թշնամու անօդաչու սարքի արձակած հրթիռի պայթյունից:

Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Խաչատրյան Խաչատուր Գուրգենի

Բազմազավակ ընտանիքից էր, ութ երեխա են՝ երեք եղբայր, հինգ քույր: Երեք եղբայրն Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հենց առաջին օրը մեկնեցին առաջնագիծ:

Ծնվել է 1982 թ. հոկտեմբերի 22-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 4 միջնակարգ դպրոցում: 2000 թ. անցել է զինծառայության Տավուշի մարզի Բերդ քաղաքում: Ծառայությունից հետո աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ էլեկտրիկ, միաժամանակ սովորել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում՝ կապի մասնագետ դառնալու ծրագրով: Հարգանք էր վայելում ուսանողության շրջանում, աչքի էր ընկնում պատասխանատվությամբ, կենսասիրությամբ, ակտիվությամբ, աջակցում էր սովորողներին:

Ամուսնացած էր, ունի երկու որդի և մեկ դուստր:

Վտանգված հայրենիքի կանչով, զինվորական ծառայությունից 20 տարի անց, կամավոր զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, մասնակցեց Արցախյան երրորդ պատերազմին, կանգնեց 20-ամյա զինվորի կողքին:

Երբեք չկորցրեց վստահությունն ու հավատը հաղթանակի նկատմամբ. ծանր, մռայլ, դաժան օրերին, խաղաղ պահերին երգում էր, երգում հոգով՝ մարտական տրամադրություն պարգևելով զինակիցներին:

Բազմազավակ ընտանիքից էր, ութ երեխա են՝ երեք եղբայր, հինգ քույր: Երեք եղբայրն Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հենց առաջին օրը մեկնեցին առաջնագիծ: Մի քանի օր հետո Խաչատուրն եկավ՝ հանգստանալու, բայց միայն մի քանի ժամ կարողացավ մնալ տանը: *«Ասաց՝ ինչի՞ պիտի երկու եղբայրս առաջնագծում լինեն, ես՝ ոչ»,* – պատմում է Արամ Ոսկանյանը:

2020 թ. հոկտեմբերի 13-ին թեժ մարտեր էին Ջրականի մերձակայքում: Ավմ՞ղ, հենց այդ օրն էլ նահատակվեց քաջարի զինվորը, անմահացավ մարտի դաշտում և միացավ հազարավոր լուսե տղաների մաքրամաքուր հոգիներին:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով: Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Խաչատրյան Մարատ Վլադիկի

Ծնվել է 1979 թվականի դեկտեմբերի 9-ին Քաջարան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո 1997-1999 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, արժանացել հրամանատարության շնորհակալագրերի և խրախուսանքների: Զորացրվելուց հետո աշխատել է «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունում: Գործընկերները նրա մասին խոսում են անսահման ափսոսանքով, պատմում, որ չափազանց պատասխանատու և բանիմաց մասնագետ էր իրենց հերոսացած ընկերը:

2013-2017 թթ. սովորել և ավարտել է Գորիսի պետական համալսարանը, ստացել ճարտարագետ-էներգետիկի մասնագիտություն: Ամուսնացած էր, ունի երկու երեխա:

Գեղեցիկ ու երջանիկ էր ընտանեկան կյանքը. սիրող, հոգատար հայր ու ամուսին էր, կինը պատիվ է համարում Մարատի նման հերոսի կին լինելը, երեխաները փոքր են՝ հավատում են հայրիկի վերադառնալու հրաշքին, հավատում են ու կարոտով սպասում...

Մարատը սիրում էր հայրենիքը որդիական հպարտությամբ և հայրական հոգատարությամբ, համոզված էր, որ սյունեցի լինելը պատիվ է, պարտք՝ Նժդեհի առաջ. պաշտում էր Նժդեհին, անգիր մեջբերումներ անում նրա խոսքերից: 2016 թ. ապրիլի 2-ին Ադրբեջանը փորձեց ներխուժել Արցախ. Մարատը, ով բանակում տանկիստ էր եղել, առանց հապաղելու մեկնեց մարտադաշտ, վերադարձավ լեյտենանտի ուսադիրներով:

2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո պահեստազորի սպան կամավոր ներկայացավ. վտանգված էին Արցախը, Սյունիքը, հայի հողն ու արյունը: Նրան վստահվեց 25 ժամկետային զինծառայողից կազմված տանկիստների դասակ: Փառահեղ էր տանկիստների ընթացքն ու գործը Ջրականում՝ թիրախները վերացվում էին անհապաղ, մեր տանկիստները փայլում էին, փայլում էին նաև դասակի հրամանատար Մարատ Խաչատրյանի աչքերն իր «առյուծների» անթերի գործողություններից:

Հոկտեմբերի 3-ին և 4-ին թշնամական անօդաչուներն աշխատում էին անդադար, նրանց առաջնային թիրախներից մեկը Մարատի դասակն էր: Հոկտեմբերի 5-ին Մարատը վիրավորվում է՝ վնասվել էր աորտան: Վիրավոր սպան մահից 15 րոպե առաջ զանգահարում է կնոջը՝ *«Հիշի՛ր, որ քեզ շատ եմ սիրում, քեզ լավ պահիր, երեխեքիս նույնպես...»:*

Ռոպեներ անց զոհվում է քաջ հայորդին՝ վստահ, որ չենք պարտվելու, որ հայի կամքը կերերա, բայց չի կոտրվի:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Հարությունյան Կարեն Սեյրանի

Ծնվել է 2000 թ. հոկտեմբերի 8-ին Քաջարան քաղաքում: Հիմնական կրթությունը ստացել է Քաջարանի N 1 միջնակարգ դպրոցում, ապա Քաջարանի արհեստագործական ուսումնարանում, ցանկանում էր ծրագրավորող դառնալ:

Բազմանդամ ընտանիքում է մեծացել, երեք եղբայր ու մի քույր ունի, ովքեր անհուն ցավով ու կարոտով են հիշում իրենց եղբորը. *«Կարենին երեք որպե էր պետք ցանկացած շրջապատում ինտեգրվելու համար, հումորով, ուրախ տղա էր, Քաջարանում բոլորն են հիշում եղբորս, նա մեծին հարգող, բոլորին օգնող տեսակ էր, եթե մի ծեր մարդ տեսներ ծանր բան տանելիս, անմիջապես օգնության էր հասնում, մենք կարոտում ենք նրա ծիծաղը, նրա ամեն ինչը, նրան...»:*

Պարտադիր ժամկետային ծառայությունն անցկացնում էր Դիլիջանի զորամասում: «Գրադ» կայանքի մեքենայի վարորդը 2020 թ. հուլիսին մասնակցել է Տավուշի մարտերին: Նրա մասին ջերմությամբ ու հպարտությամբ է պատմում Դիլիջանի զորամասի սիսիանցի հրամանատար մայոր Սեդրակ Մարտիրոսյանը. *«Ամենաբարձր դրական կողմերով բնութագրվող անձ ու զինծառայող, մի բառով՝ հերոս: Ուրախ, կատակասեր, շուտ մերվող, խիզախ, նվիրված, հայրենասեր, չընկճվող, մեծ նվիրումով ծառայող: Նրա կողմից արված բոլոր գործողություններն արդյունավետ ու հաջող էին. զոհվեց մարտական խնդիր կատարելիս: Ցավ է, որ նման ազգանվեր մարդն էսօր մեր կողքին չէ, հպարտություն ու պատիվ է նրան ճանաչելը, նրա հետ պատերազմի մասնակցելը՝ առավել ևս»:* Եղել է ավտովարորդ, օրինակելի, կարգապահ զինվոր: Հեղինակություն է վայելել ծառայակիցների՝ զինվորների ու սպաների շրջանում: Բազմաշնորհ զինվորը զորամասում իր ձեռքերով մատուռ է կառուցել, որն այսօր էլ կանգուն է:

2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո Դիլիջանի զորամասի տղաները, ովքեր երկու ամիս առաջ էին թշնամուն դեմ առ դեմ հանդիպել Տավուշում, շտապեցին առաջնագիծ: Հոկտեմբերի 8-ին Կարենի ծննդյան օրն էր ու, ընկերների պատմելով, չնայած վարորդ լինելուն, նա մասնակցել էր «Գրադի» նշանառման հաշվարկներին. այդ փաստից հրճվել էր երիտասարդ զինվորը. *«Տղերք, կուզեի՞ք ձեր ծննդյան օրն էլ սենց սայլուտ անենք...»:*

Հոկտեմբերի 11-ին անօդաչուի հարվածից զոհվում է Կարեն Հարությունյանը՝ ընկերների ականջներում թողնելով իր հոգեթով ծիծաղի ձայնը, սրտերում՝ անսահման կարոտ ու հպարտություն...

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Ղարիբյան Կարեն Ռուդիկի

Ծնվել է 1982 թվականի մայիսի 27-ին Քաջարան քաղաքում:

Սովորել և ավարտել է տեղի Ստ. Շահումյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2000 թվականին զորակոչվել է ՀՀ զինված ուժեր, ծառայել Քարվաճառում:

Համեստ ու կարգապահ զինվորն աչքի է ընկել պատասխանատվությամբ, մարդամոտությամբ, ընկերասիրությամբ, հարգանք վայելել ծառայակիցների և հրամանատարության շրջանում, բազմիցս արժանացել շնորհակալագրերի, խրախուսանքների:

2002 թվականին զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի քաղաք, աշխատանքի անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում:

Սեպտեմբերի 27-ն էր... Կարենն աշխատանքի էր, երբ քրոջ որդին, ով ժամկետային զինծառայող էր Արցախում, զանգահարեց, զգուշացրեց, որ իրեն չզանգեն, քանի որ պատերազմ է...

Արցախցու արյունն ու Արցախի հողը կանչում էին, տեղը չէր գտնում. Արցախի ազատության համար 1992 թ. զոհվել էր հայրը, Մարտունու Գիշի գյուղում տատն ու պապն են, նախնիների շիրիմները:

– *Գնում եմ, Բելլա, իմ միջի արյունն Արցախին է պատկանում, պահը եկել է, էդ շներին ներս չենք թողնելու,* – ճակատ մեկնելուց ասաց քրոջը:

Երեկոյան արդեն զինկոմիսարիատում էր: 28-ի առավոտյան խնդրում է իրեն անհապաղ ուղարկել առաջնագիծ և բոլոր պնդումներին ի պատասխան անընդհատ կրկնում. *«Գիտեմ ու գիտակցում եմ, որ հնարավոր է հետ չգամ, բայց համոզված եմ՝ իմ կարիքը կա»:*

Կամավոր մեկնում է այդ օրերի ամենաթեժ կետերից մեկը՝ Ջրական: Հնարավորության դեպքում զանգահարում էր քրոջը՝ զինվոր որդու մասին մի բան իմանալու: Ինքն ամուսնացած չէր, երեխաներ չուներ, բայց հայրաբար էր վարվում կողքին կռվող ժամկետայինների հետ, փորձում ամեն կերպ խնայել նրանց:

Հոկտեմբերի 10-ն էր. հարվածային անօդաչուները կարկուտի պես կրակ էին թափում երկնքից, Կարենը զանգահարեց տնեցիներին՝ խնդրեց ուշադիր լինել ու երջանիկ ապրել, քույրը եղբոր ձայնի մեջ նախազգուշացնող երանգ զգաց, հուզվեց, խնդրեց գոնե մի քանի օրով տուն գալ, բայց...

Երեկոյան լսեցին բոթը՝ Կարենն ընկել է թշնամու արկի հարվածից :

Հերոսացած Կարենը հողին հանձնվեց Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մարտիրոսյան Արտաշես Արմանի

Ծնվել է 2002 թ. մարտի 17-ին Քաջարան քաղաքում: Մանկավարժի ընտանիքում ծնված մինուճար Արտաշեսը մեծացել է սիրո և հոգատարության մթնոլորտում: Այն մանուկներից էր, ովքեր զարմացնում են իրենց գիտելիքների անսահման պաշարով, այն երիտասարդներից, ովքեր ակնածանք են արթնացնում իրենց անբասիր վարքով ու դաստիարակվածությամբ, այն երիտասարդներից, որոնցով հպարտանում են ոչ միայն ծնողները, այլև հարևաններն ու ամբողջ քաղաքը: Սիրում էր նկարել, նկարում էր պայծառ հերոսներ, որոնք իր հոգու անաղարտությունն էին ցույց տալիս: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժինը, մտադիր էր լավ ծրագրավորող դառնալ...

2019 թ. հուլիսի 19-ին զորակոչվել է բանակ: Արցախում ծառայելը նա պատիվ էր համարում: Սպայական անձնակազմն անմիջապես նկատեց խելացի պատանուն՝ նրան վստահվեց հրետանու նշանառու լինելու բարդ և պատասխանատու պարտականությունը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմում նշանառու Մարտիրոսյանը փայլում էր իր պրոֆեսիոնալիզմով՝ հարյուրավոր խոցված թիրախներ, հաղթանակի ուրախություն՝ ամեն վերացված թիրախի հետ... Հնարավորության դեպքում զանգահարում էր տուն. միշտ մի պատասխան ուներ մոր բոլոր անհանգստություններին՝ «լավ եմ»: Բայց վերջին խոսակցության ժամանակ մայրն ինչ-որ բան կանխազգաց, քանի որ որդին նույն առույգությամբ չէր պատասխանել՝ սովորական դարձած «լավ եմ»-ի փոխարեն ասել էր՝ «ոչինչ»:

Հարազատներն այդպես էլ չհասցրեցին նրան այցելել բանակում. սկզբում համավարակը, ապա՝ սկսված պատերազմը խանգարեցին: Միայն ծառայակից ընկերներից կարողացել են իբրև հուշ մի քանի լուսանկար ունենալ՝ մարտական դիրքում, զինվորական համազգեստով, հրանոթի մոտ:

Մոր սիրտը չէր խաբում, մոր անհանգստությունը, ցավոք, զուր չէր...

Հոկտեմբերի 27-ին՝ ծառայության 100-րդ օրը, հայ ազգը ևս մի տակավին երեխա հերոս ունեցավ:

Արտաշես Մարտիրոսյանը հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Միրզոյան Վահե Հայկազի

Քիչ, շատ քիչ էր մնում ծառայությունն ավարտելուն, մայրն օրերն էր հաշվում, որդին՝ մտքում կառուցում քաղաքացիական կյանքը...

Ծնվել է 2000թ. հուլիսի 11-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, ապա՝ «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում:

Բազմանդամ ընտանիքի կրտսեր որդին մշտապես շրջապատված է եղել ընտանեկան ջերմությամբ: Սերը, որ ստացել էր ընտանիքում, նրան դարձրել էր բացառիկ մարդասեր պատանի: Շրջապատում նրան բնորոշում են որպես համեստ, հանդուրժող, ընկերասեր, ժպտերես, պայծառ մարդու:

Մեծացել է ազատամարտիկի ընտանիքում. հայրը վիրավորվել էր Արցախյան առաջին պատերազմի ժամանակ. հինգ զավակը գիտեին հայրենի հողի արժեքը, Արցախի արժեքը, հայի պատվի արժեքը...

Վահեն ծառայում էր Արցախում՝ Ջրականի զորամասում: Համեստ երիտասարդը վայելում էր ծառայակիցների ու հրամանատարության սերն ու հարգանքը...

2020 սեպտեմբերի 23-ին՝ դիրքեր բարձրանալուց առաջ, զանգահարել է եղբորը, խոսել իր նպատակների, ուսում ստանալու երազանքի մասին:

Քիչ, շատ քիչ էր մնում ծառայությունն ավարտելուն, մայրն օրերն էր հաշվում, որդին՝ մտքում կառուցում քաղաքացիական կյանքը...

Սեպտեմբերի 27-ի առավոտը բացվեց բոթով՝ պատերազմ է...

Սեպտեմբերի 28-ին Միրզոյանների ընտանիքը լսեց երկրորդ բոթը՝ Վահեն չկա...

Ընդհատվեցին երազանքները, մոր սպասումը դարձավ հավերժական կարոտ... Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Մովսիսյան Վարդան Սերյոժայի

Ծնվել է 1983 թ. նոյեմբերի 30-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի N1 միջնակարգ դպրոցում: 2001-2003 թթ. ծառայել է հայոց բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է ընդունվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում՝ էլեկտրաեռակցող:

2007 թ. ամուսնացել է՝ ունի երեք որդի:

Վարդան Մովսիսյանի մասին զրուցում ենք կնոջ հետ. կոտրված է, ասում է. «Ցավը ժամանակի ընթացքում պակասելու փոխարեն սառչող վերքի պես սաստկանում է»: Ամուսնուն նկարագրում է լավագույն բառերով. շեշտում նրա մեծ սերը հայրենիքի հանդեպ: Մի տեսակ չի հաշտվում, որ ամուսինն իր ու երեք որդու կողքին չէ, որ ինքը պիտի առանց նրա շարունակի ապրել ու իրենց զավակներին մեծացնի հենց այնպիսին, ինչպիսին երազում էր Վարդանը:

Սեպտեմբերի 27-ին Արցախի վրա հարձակման մասին գույժը լսելուց մի քանի ժամ անց Վարդանը կամավորագրվեց և մեկնեց ռազմաճակատ:

Ռազմաճակատի հարավային թևում էր՝ Ջրականում, ծանր մարտեր էին, թշնամին գրոհում էր բազմաթիվ անօդաչուներով, հրետանիով ու մարդուժով:

Վարդանի հետ մարտադաշտում ծանոթացած տղաների հետ ենք զրուցում. *«Մի քանի օր ենք ճանաչել, հպարտ եմ, որ նրա նման տղայի կողքին եմ կռվել, գաղափարական մարտիկ էր, գիտեր՝ ուր է եկել և ինչու: Պատերազմի օրերին՝ հիմնականում գիշերը, երկար զրուցում էինք. պնդում էր, որ պարտավոր ենք Արցախը պահել, որովհետև մեզ պատիվ չի բերում պարտվելը, քանզի զանգեզուրցի ենք...»:*

Հոկտեմբերի 10-ին Վարդան Մովսիսյանի կյանքի ընթացքն ընդհատվեց անօդաչուի հարվածից. զոհվեց ու չիմացավ, որ իր երազած հաղթանակին չհասանք, չիմացավ, որ թուրքը հասել է Զանգեզուրի դռներին...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Նավասարդյան Ալեն Արտակի

Ծնվել է 1989 թ. հունիսի 27-ին: Արմատներով Կապանի շրջանի Ուժանիս գյուղից էր: 1994 թվականին ընտանիքը տեղափոխվել է Քաջարան: 1996-2006 թվականներին սովորել և ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 2006 թվականին ընդունվել է Կապանի արվեստի պետական քոլեջ: 2016 թ. ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղ: 2008-2010 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին:

Թշնամուն Ալենը ծանոթ էր մանկությունից: Շատ փոքր էր, երբ Կապանի Ուժանիս գյուղում ռմբակոծության հետևանքով ավերվեց նրա պապական տունը՝ տարիներով ստեղծված ամեն ինչով: Թշնամու հանդեպ ատելությունը նրան բերել էր մեկ անբեկանելի որոշման՝ թուրքին պիտի լռեցնես զենքով, այլ լեզու թուրքը չի հասկանում:

Ալենը հայտնի էր իր ընկերասիրությամբ: Ընկերները գիտեին, որ ամեն վայրկյան պատրաստ է իրենց կողքին լինել: Կենսախինդ էր, սիրում էր կյանքը, ձգտում վայելել այն:

Ալենը հնարամիտ էր, երազող, երբեմն նաև զինագործ, գեղանկարիչ ու բանաստեղծ...

«Որդիս բարի էր, ուշադիր բոլորիս նկատմամբ, հայրենասեր էր, շատ էր սիրում Քաջարանը: Ուղղամիտ ու սկզբունքային էր, չէր ընդունում, երբ խաբում էին իրեն, ինքն էլ չէր չարաշահում ուրիշների վստահությունն ու հարգանքը», – ասում է մայրը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ալենը միացավ հայրենի հողը պաշտպանելու մեկնող քաջարանցիներին: Նրա գործած սխրանքների մասին լեգենդներ են հյուսվում: Երբ լսում ես, թե ինչպես է կռվել, ինչպես է ֆիզիկական բնատուր ուժը կիրառել ի փրկություն վիրավորների՝ միայնակ դուրս բերելով մի քանի հոգու, ինչպես է իր վրա վերցրել հրամանատարությունն անծանոթ տեղանքում, հասկանում ես, որ հայի քաջ տեսակը դեռ կա, որ հզորները մեզանից հեռանալով չեն մեռնում՝ անմահանում են:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 23-ին՝ դիպուկահարի կրակոցից: Աճյունն ամփոփված է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պապյան Արամ Հրաչիկի

Ծնվել է 1973 թ. փետրվարի 6-ին Քաջարան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: 1989-1994 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (ԵՊՃՀ) մեքենաշինական ֆակուլտետում՝ ստանալով ինժեներ-մեխանիկի մասնագիտություն. այդտեղ նույնպես աչքի է ընկել գերազանց առաջադիմությամբ՝ արժանանալով լավագույն ուսանողի տիտղոսին: Ինստիտուտն ավարտելուց հետո զորակոչվել է ազգային բանակ, ծառայել որպես սպա (1994-1996թթ.): Լինելով հրետանավոր՝ մասնակցել է 90-ականների Արցախյան պատերազմին և զորացրվել լեյտենանտի կոչումով:

1997 թ. աշխատանքի է ընդունվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Կարճ ժամանակ անց դարձել է արտադրամասի ճարտարագետը: 2009-2013 թթ. աշխատում էր ԶՊՄԿ-ի կապիտալ շինարարության բաժնում՝ ինժեներ-մեխանիկ՝ համատեղելով նոր տեխնոլոգիաների համակարգողի պաշտոնը, 2013-2018թթ.՝ ԶՊՄԿ-ի արտադրական բաժնի գլխավոր մասնագետն էր, իսկ 2018թ.-ից նրան է վստահվել ընկերության գլխավոր մեխանիկի տեղակալի պաշտոնը: Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

Արամի մասին ընկերները պատմում են. *«Կարելի է անվերջ խոսել նրա մարդկային արժանիքների, նրա մարդ տեսակի ու տիեզերական ոգու մասին: Արամն օժտված էր մարդկային վեհ գաղափարներով և բնավորության այնպիսի վեհանձն գծերով, որոնք են՝ մարդասիրությունը, ազնվությունը, համեստությունը, բարությունը, կարեկցանքը: Ուրախության առիթներին կարողանում էր լիաթոք ուրախանալ, իսկ որևէ մեկի անհաջողությունը կամ տխրությունն ընդունում էր որպես անձնական: Անձնվիրաբար, անշահախնդիր նվիրվում էր ընկերներին, շատ ընկերասեր էր և յուրաքանչյուրի հետ ուներ առանձնահատուկ շփման ձևը: Մեծ հարգանք էր վայելում շրջապատում, քանի որ նրան շատ սիրում ու գնահատում էին թե իրենից տարիքով փոքրերը, թե մեծահասակները՝ նրան համարելով եզակի կերպար: Նույնիսկ կարճ ժամանակում առնչվածները հասցրել էին ընկալել նրա մարդ տեսակը և մեծ ափսոսանք էին հայտնում եղելության առիթով՝ նշելով, որ Պապյանն իր խորհուրդներով, մարդկային որակներով ու մասնագիտական լուրջ կարողություններով թև ու թիկունք կլիներ մեր սերունդներին: Ափսո՜ս, հազար ափսո՜ս, որ մեր իրականությունից հեռանում են նման մարդիկ...»:* Պատերազմի առաջին օրվանից, որպես պահեստազորի սպա, դասակի հրամանատարի կարգավիճակով մեկնել է ռազմաճակատ, սկզբից՝ Սյունիքի սահմաններ, հետո՝ Արցախ:

Քաջաբար զոհվել է մարտական գործողությունների ընթացքում՝ հոկտեմբերի 17-ի գիշերը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

Պապյան Գարիկ Արմենի

Ծնվել է 1987 թ. հունվարի 27-ին Քաջարան քաղաքում: Սովորել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի «Տրանսպորտի կառավարում» բաժնում: 2005-2007 թթ. ծառայել է հայոց բանակում: Աշխատում էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Հայոց աշխարհում տղամարդը ռազմիկ է ծնվում: Ռազմիկ, ով պիտի խաղաղության ամեն օրն օգտագործի բարիք ստեղծելու, ընտանիք կազմելու, իրենից հետո անուն ու ժառանգներ թողնելու համար: Գարիկն էլ բացառություն չէր. մանուկ տարիներին էր տեսել պատերազմը, գիտեր խաղաղության գինը, գիտեր նաև, թե ինչ է նշանակում թուրքի հարևանությամբ ապրելը: Գիտեր, որ պարտադիր է թուրքին կանգնեցնել, քանզի նրանց հիվանդ երևակայության մեջ Սյունիքն է, որին տիրելու հարյուրամյա մարմաջ ունեն:

Պատասխանատու աշխատող էր, հոգատար հայր ու ամուսին: Թվում էր՝ ոչինչ չի կարող խաթարել նրա կյանքի երջանիկ ընթացքը, բայց սկսվեց չարաբաստիկ պատերազմը: Սեպտեմբերի 28-ին զորահավաքով մեկնեց առաջնագիծ, մասնակցեց ռազմական գործողություններին Ֆիզուլիի, ապա Մարտունիի ուղղություններում:

Պատերազմ էր. քաջորդիները մարտնչում էին՝ փրկելու մի բուռ մնացած հայկական հողը, մայրերն ու կանայք աղոթում էին, երեխաները՝ կարոտում: Նրանք, միայն նրանք, ովքեր ռազմաճակատից զանգի են սպասել, գիտեն այդ զանգի կենսատու գինը, երբ օրը սկսվում է զանգի սպասումով, ավարտվում աղոթքով: Վերջին անգամ ընտանիքի անդամներին զանգահարել է հոկտեմբերի 25-ին, որից ժամեր անց զոհվել է Մարտունի 2-ի դիրքերում՝ մարտական գործողության ժամանակ թշնամու անօդաչու թռչող սարքի արձակած հրթիռի պայթյունից:

Գարիկին Քաջարանում բոլորն են ճանաչում, նկարագրում միայն դրական բառերով, շեշտում, որ քաղաքի համար ծանր ցավ էր կորցնել նման զավակին, ծանր է տեսնել նրա որբացած զավակներին:

Անմահացած Գարիկ Պապյանի աճյունն ամփոփվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում 2020 թ. հոկտեմբերի 30-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պետրոսյան Սասուն Սարուբեկի

Ծնվել է 2001 թ. հունիսի 6-ին Սյունիքի մարզի Լեռնաձոր գյուղում: Հիմնական կրթությունը ստացել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, սովորել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի «Տրանսպորտի կառավարում և շահագործում» բաժնում:

Միջնակարգ մասնագիտական կրթություն ստանալուց հետո ընդունվել է Հայաստանի պետական ագրարային համալսարան:

2020 թ. հուլիսին զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, ծառայել է Ջրականի զորամասում:

Երեք ամսվա ծառայող էր Սասունը, երբ սկսվեց պատերազմը: Առաջին թեժ հարձակումներից մեկը հենց Ջրականի զորամասի վրա է եղել:

Սասունը նոյեմբերի 9-ից հետո Հադրութում շրջափակման մեջ է եղել. վեց հայ զինվորի սպանությունն առ այսօր առեղծված է: Ծնողներն այսօր էլ սպասում են հանգամանքների բացահայտմանն ու մեղավորների պատժմանը:

Ծնողներին վերջին անգամ 2020 թ. հոկտեմբերի 14-ին է զանգահարել, որից հետո կապն ընդհատվել է, բայց նրա հետ շրջափակման մեջ մնացած տղաներից մեկը կարողացել է կապի դուրս գալ՝ իրենց տեղն ասել ու օգնություն խնդրել: Օգնությունը, ավաղ, ժամանակին չի եղել: Հադրութին մերձակա Հակակու գյուղում իր ընկերների հետ հերոսաբար զոհվել է ոսոխի դեմ անհավասար մարտում:

Սասունի մասին մեզ ընկերն է պատմում. *«Դաստիարակված, համեստ, խելացի տղա էր: Հետաքրքրասեր էր՝ սիրում էր ուսումնասիրել անծանոթ երևույթները: Ընկերասեր էր, ոչ մեկի օգնության խնդրանքը չէր մերժի: Պատերազմից հետո ասում էին, թե ողջ է, բոլորս սպասում էինք, որ կվերադառնա, ցավոք, այդպիսի դաժան ճակատագիր ունեցավ...»:*

Լուսավոր երիտասարդ էր, ժպտադեմ, ով սիրում էր կյանքը... Պատվով ընդունեց ճակատագրի մարտահրավերն ու կարողացավ ընկերների հետ պայքարել իրենց բաժին հասած արհավիրքի դեմ: Պատերազմից հետո բոլորը սպասում էին նրան, ում անունը չկար ոչ զոհվածների, ոչ գերիների ցուցակում, չնայած չկար նաև որևէ տեղեկություն, սակայն վստահ էին, որ նա և ընկերները կենդանի են, կգան...

Սասուն Պետրոսյանը զոհվել է 2020 թ. դեկտեմբերի 27-ին Հադրութում:

Աճյունը հողին է հանձնվել Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում 2021 թ. հունվարի 7-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով:

Սարգսյան Նորայր Փայլակի

Ծնվել է 1967 թ. փետրվարի 13-ին Ղափանի շրջանի Ներքին Խոտանան գյուղում: Ծնողները 1971 թ. տեղափոխվել են Քաջարան քաղաք: Այնտեղ ավարտել է թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1985-1987 թթ. ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Ծառայությունից հետո աշխատել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Երկու տարի անց տեղափոխվել և մինչև 1995 թվականն աշխատել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության Քաջարանի մասնաճյուղում, իսկ 1995 թվականից՝ կրկին կոմբինատի աշխատակից էր: Մասնագիտական բարձր որակներով, կարգապահությամբ և պատասխանատվությամբ պատշաճ հեղինակություն էր վայելում գործընկերների շրջանում:

Սակայն Նորայրը (ընկերների համար՝ Նորոն) էությամբ զինվորական էր, ուներ հարուստ մարտական կենսագրություն: Արցախյան գոյամարտի մասնակիցներից էր, որպես կամավոր 1992 թվականից զինվորագրվեց Արցախյան ազատամարտին, հայրենիքի սահմանների պաշտպանությանը: 90-ականներին դիրքերն էր բարձրանում կապի սարքավորումն ուսած: Այն բավականին ծանր էր, և ֆիզիկապես լավ պատրաստված պետք էր լինել՝ դրանք տեղափոխելու համար, հատկապես՝ դժվարանցանելի տեղանքում, ու չէր սիրում, երբ փորձում էին օգնել: Միշտ ասում էր. «Կարող եմ, ինքս կտանեմ...»: Պարգևատրվել է ՀՀ պաշտպանության նախարարության «Առաջին գունդ», «Ծովակալ Իսակով», «Լավագույն մարտական դիրքապահ» մեդալներով:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

2020 թ. չարաբաստիկ պատերազմը հերոսացած Նորայր Սարգսյանի համար երրորդն էր: *«Երբ լսեցինք պատերազմի բոթը, արդեն գիտեինք՝ նա տանը նստել և խաղաղ առօրյան շարունակել չէր կարող: Ուստի ռազմաճակատ մեկնելու նրա որոշումից հանկարծակի չեկանք, ավելին՝ չքննարկեցինք... Գիտեինք՝ քննարկման ենթակա չէ»*, – պատմում էր որդին՝ Աշոտը:

Մարտական հերթապահությունների ժամանակ նորեկներին նեցուկ էր, սիրով ու ժպիտով փոխարինում էր հերթափոխում կանգնած հոգնած ընկերոջը՝ չնայած իր հոգնածությանը: Նա բարի հսկա էր... *«Նորայր Սարգսյանի հետ մտերիմ ընկերներ էինք, բնական է՝ այս անգամ էլ հայտնվեցինք նույն մարտական ջոկատում»*, – պատմում է Լեռնիկ Հարությունյանը: *«Հերթափոխի մեկնելուց առաջ զանգահարեց և ասաց՝ անպայման քեզ հետ գալիս եմ: Իսկապես լավ մարդ էր, բառիս բուն իմաստով խիզախ մարտական ընկեր: Այդ օրը դեպի մեր զբաղեցրած դիրքերն էր գրոհում թշնամու մեծաթիվ խումբը: Դիրքավորվում ենք և անցնում պաշտպանության: Դիվերսիոն խումբն արժանի հակահարված ստացավ: Տղաները կռվեցին առյուծաբար, բայց, ցավոք, անմահացավ Նորայր Սարգսյանը՝ մեր Նորոն»:* Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում:

ՄԵՂՐՈՒ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ազիզյան Արտաշես Եղիշեի

2022 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան պատրաստվում էր այգի գնալ, բայց կանգեցին ու շտապ կանչեցին աշխատանքի: Պատրաստվեց ու ոչինչ չասելով՝ դուրս եկավ...

Ծնվել է 1980 թ. հուլիսի 7-ին Երևանում: Սովորել է մայրաքաղաքի թիվ 144 դպրոցում, ապա ընտանիքը տեղափոխվել է ՌԴ, որտեղ և շարունակել է ուսումը: 1991 թ. ընտանիքով վերադարձել են Հայաստան և բնակություն հաստատել Մեղրիի շրջանի Նռնաձոր գյուղում: Ուսումը շարունակել է տեղի միջնակարգ դպրոցում: 1998 թ. անցել է ծառայության հայոց բանակում, ծառայել է Վայքի ռազմական ոստիկանությունում՝ շարքային զինվոր: Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Արտաշեսը սիրում էր կյանքը, ապրում էր՝ իր հետ ապրեցնելով բոլորին: Շատ էր սիրում երեխաներին և յուրաքանչյուր ազատ վայրկյանն օգտագործում էր նրանց հետ շփվելու: Չափազանց ընկերասեր էր, ուներ մեծ շրջապատ, հոգատար էր, համբերատար և՛ որպես ամուսին, և՛ որպես հայր ու ընկեր:

2016 թ. աշխատել է Ագարակի զորամասում՝ պայմանագրային զինծառայող:

2022 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան պատրաստվում էր այգի գնալ, բայց զանգեցին ու շտապ կանչեցին աշխատանքի: Պատրաստվեց ու ոչինչ չասելով՝ դուրս եկավ...

Սկզբում եղել է Ագարակի դիրքերում, հոկտեմբերի 3-ին տեղափոխել են Ջրական (Ջաբրաիլ): Ձանգահարում էր տուն, երեխաներից հարցնում, խնդրում, որ զգույշ լինեն և չանհանգստանան: Վերջին զանգը եղել է հոկտեմբերի 8-ին: Հոկտեմբերի 10-ին հայտնի դարձավ զոհվելու մասին: Արտաշեսի ծննդյան օրվանից երկու օր անց՝ 2021թ. հուլիսի 9-ին, ստացան ԴՆԹ-ի պատասխանը:

Հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Բաղդասարյան Արմեն Լյովայի

Արմեն Բաղդասարյանին ճանաչողները նրան նկարագրում են որպես աշխատասեր, ընկերասեր, ընտանիքին ու հայրենիքին անսահման նվիրված մարդ:

Ծնվել է 1980 թ. հունիսի 20-ին Սյունիքի մարզի Ագարակ քաղաքում: Հաճախել է Ագարակի միջնակարգ դպրոցը: Այնուհետև ստացել է միջին մասնագիտական կրթություն: 1998 թ. զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Տավուշի մարզի Չինարի գյուղում: Ծառայությունից հետո աշխատանքի է անցել Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արմենը ևս կամավոր զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը:

Մասնակցել է Կովսականի (Զանգելան-Միջնավան) շրջանի մարտերին:

Նոյեմբերի 9-ին հայտարարված հրադադարից հետո Արմենը ծառայությունը շարունակել է Ագարակի մարտական դիրքերում:

Դեկտեմբերի 18-ին մարտական դիրքերում հերթափոխ կատարելիս զոհվել է:

Արմեն Բաղդասարյանին ճանաչողները նրան նկարագրում են որպես աշխատասեր, ընկերասեր, ընտանիքին ու հայրենիքին անսահման նվիրված մարդ: Հուղարկավորվել է դեկտեմբերի 20-ին Ագարակի գերեզմանատանը:

Բեգլարյան Մակար Ջանիկի

Ծնվել է 1980 թ. ապրիլի 8-ին Մեղրիում: Սովորել է Մեղրիի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Բարձրագույն կրթությունը ստացել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում:

1998-2000 թթ. ծառայել է Մատաղիսում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին հարյուրավոր այուներ հայրենիքի պաշտպանության գործը ստանձնեցին՝ առանց հապաղելու, առանց հրամանի, առանց կանչի, կամավոր:

Նրանց թվում էր Մակար Բեգլարյանը: Սկզբում հիմնականում սնունդ, ջուր ու ծխախոտ էր հասցնում ռազմաճակատ: Բայց երբ սահմանին դրությունը ծանրանում է, ինքը նույնպես ներգրավվում է ռազմական գործողություններում:

Մակարի մասին մեզ ընկերն է պատմում. *«Մի տեսակ կապող օղակ էր ընկերների, հարազատների միջև: Յուրահատուկ լավ մարդ էր, Աստված լավերին է տանում: Մակարի համար հայրենիքը կարևորագույնն էր, նրան հետ պահել հայրենիքի պաշտպանության գործից անհնար էր, ասում էր՝ մենք չգնանք, ո՞վ պիտի գնա, իրեն վատ էր զգում, որ ազերիները մոտեցել են Մեղրիին: Հայրենասիրությունը հորից էր գալիս, հայրն էլ ազատամարտիկ էր...»:*

Զրուցում ենք մարտական ընկերների հետ. *«Մակարն այնքան ցավով էր ընդունում ստեղծված իրավիճակը, արդեն հասկանում էր, որ մեր գործերը լավ չեն, բայց բարկանում էր, երբ տեսնում էր, որ տղերքը հուսահատվում են, համոզում էր, նույնիսկ խնդրում, որ չհուսալքվեն, ասում էր՝ մեր պատվի հարցն է պաշտպանել երկիրը, եթե այսօր չկանգնեցնենք թուրքին, վաղը մեր սերունդների համար շատ ավելի ծանր է լինելու...»:*

Մակարի երեխաները դեռ փոքր են, որդին հիշում է հայրիկին, գիտի, որ նա երկնքում է, գիտի, որ հայրիկը նայում է իրեն ու ամեն ինչ անում է, որ հայրիկը երկնքում հպարտանա: Դուստրը շատ փոքր է. հայրիկին նկարից է ճանաչում, բայց նա էլ գիտի, որ հայրիկը երկնքում է, գնացել է երկինքը խաղաղ պահելու...

Զոհվել է հոկտեմբերի 22-ին Նռնաձորի մերձակայքում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորված է Մեղրիի գերեզմանատանը:

Զաքարյան Անդրանիկ Սամվելի

Ծնվել է 2002 թվականի հունիսի 25-ին Ագարակ քաղաքում: Սովորել է Վարդանիձորի հիմնական դպրոցում, այնուհետև Մեղրիի պետական քոլեջում:

2020 թ. հուլիսի 19-ին զորակոչվել է բանակ, ծառայել Մարտունու, ապա Հադրութի զորամասերում:

Անդրանիկի մասին մեզ հայրն է պատմում. «*Իմ ավագ որդին էր, իմ օգնականը, իմ հույսը, ամեն տեղ, ամեն հարցում ինձ համար սյուն էր: Փոքր տարիքից ինձ նեցուկ է եղել, աշխատասեր, բարի, ներողամիտ: Տղայիս ժպիտը, տղայիս աչքերը, նրա ձայնը, ամբողջն աչքիս առաջ են, ականջներումս են: Աչքերս չեն չորանում, սիրտս չի դիմանում, ուզում եմ մեկը լինի, որ որդուս վերջին օրերի մասին ինձ պատմի, բայց չկա, նրա ընկերները նրա պես Շուշիի մոտ ընկան: Իմ որդին մի աշխարհ էր, իմ որդին դեռ երեխա էր, անտանելի ցավ է...*»:

Դեռ երեկ «կյանքով կպաշտպանեմ հայրենիքս» բառերն արտասանած երիտասարդը սեպտեմբերի 27-ին ընկերների հետ կանգնեց դիմակայելու թուրք-ադրբեջանական բանակին ու ահաբեկիչ վարձկաններին:

Անդրանիկը դեռ նոր էր զինվորական երդում տվել, նոր պիտի հարմարվեր զինվորական ծառայությանը, երբ սկսվեց պատերազմը:

Դեռ երեկ «կյանքով կպաշտպանեմ հայրենիքս» բառերն արտասանած երիտասարդը սեպտեմբերի 27-ին ընկերների հետ կանգնեց դիմակայելու թուրք-ադրբեջանական բանակին ու ահաբեկիչ վարձկաններին: Դիմագրավեց 44 օր. կռվեց Հադրութում, Կարմիր շուկայում, Շուշիում: Կռվեց հաղթանակի հավատով, կռվեց իր երկրի ու իր խաղաղ կյանքի իրավունքի տերը լինելու հաստատ համոզմունքով:

44 օր պատերազմի դաժանությունը տեսած 18-ամյա Անդրանիկը զոհվեց հրադադարից ժամեր առաջ՝ նոյեմբերի 9-ին՝ Շուշիի մոտ: Հուղարկավորվել է Վարդանիձորի գերեզմանատանը նոյեմբերի 18-ին: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Խաչատրյան Ալբերտ Արմենի

Ծնվել է 1994 թ. հունիսի 12-ին Ագարակ քաղաքում: 2002թ. ընդունվել և 2012թ. ավարտել է Ագարակի միջնակարգ դպրոցը: Կյանքը բանակին նվիրած երիտասարդ սպան հայրենասեր էր, պահանջկոտ, ճշտապահ, հոգեբանորեն պատրաստված ու խիզախ...

Այնուհետև ուսումը շարունակել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Ավարտելուց հետո ծառայության է անցել Արցախի Հանրապետության Հադրութի զորամասում: Աչքի է ընկել զինվորների հանդեպ հոգատար վերաբերմունքով, նրանց համարում էր իրենը, խիստ էր, բայց ավագ եղբոր պես ծանոթ էր իր ղեկավարած վաշտի զինվորների թե՛ ներբանակային, թե՛ քաղաքացիական խնդիրներին: Վաշտում յուրաքանչյուր զինվոր ծառայակից ընկերոջն իր եղբայրն էր համարում, քանի որ դա էր իր՝ հրամանատար, կապիտան Խաչատրյանի պահանջը...

Ամուսնացել էր գեղեցկուհի Մարիամի հետ, ով սպայի կին լինելու դժվարությունը կրել է անտրտունջ և հպարտությամբ, երեխաներ չունեին...

Արձակուրդում գտնվող սպան սեպտեմբերի 26-ի երեկոյան տեղեկանում է Արցախի արևելյան սահմանի երկարությամբ ադրբեջանական ուժերի կուտակումների մասին և անմիջապես մեկնում ծառայության վայր:

2020 թվականի սեպտեմբերի 27-ի լուսաբացին սկսվեց պատերազմը. հայրենանվեր կապիտանն առաջին վայրկյանից ներգրավվեց ռազմական գործողություններում...

Վիրավոր էր, բայց մարտը թեժ էր, ու իր զինվորների կյանքի հանդեպ հոգածությունը մոռանալ էր տալիս արյունաշաղախ վերքերի ցավը:

Սեպտեմբերի 30-ին դաժան մարտում վիրավորվել էին իր «էրեխեքը», ու Ալբերտը չէր կարող նրանց թողնել խրամատում, պետք էր դուրս բերել ամեն գնով, դուրս բերեց՝ կյանքի գնով. ընկավ հերոս կապիտանը՝ դառնալով շատ մայրերի օրհնության հասցեատերն ու պարտավորեցնելով մեզ՝ սիրել այն հողը, որը թաթախված է հայոց քաջերի արյունով...

Հուղարկավորված է Մեղրիի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Արիություն» մեդալներով և «Մարտական խաչ» շքանշանով:

Խաչատրյան Ջիվան Ռոբերտի

Ծնվել է 1994 թ. ապրիլի 26-ին Ագարակ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ագարակ քաղաքի դպրոցում: Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել է Արա լեռան զորամասում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը՝ սովորել և ավարտել է Մեղրիի պետական քոլեջի «Բեռնափոխադրումների կառավարում» բաժինը:

Աշխատում էր Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ «Բելազ»-ի վարորդ:

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

Ջիվանի մասին զրուցում ենք մանկության ընկերոջ՝ Արայիկի հետ. *«Ջիվանին բնութագրելու համար պիտի առանձնացնեմ նրա ամենատարբերվող հատկությունը՝ նվիրվածությունը. նվիրված էր բոլորին, կարող էր ինքն իրեն վնասել, բայց այնպես անել, որ իր հետ գործ ունեցող մարդիկ վնաս չկրեն: Ոչ մեկին չէր ասել, որ մեր (Մեղրիի) դիրքերից տեղափոխվել է Արցախ: Մի քանի օր նրան փնտրելուց հետո միայն հասկացա, որ Արցախում է: Մի առանձնահատկություն էլ ուներ՝ նրա ներկայությամբ պիտի ամեն ինչ լավ լիներ, որևէ լարվածություն, անհամաձայնություն, վեճ նրա ներկայությամբ բացառված էր: Կարողանում էր իր խոսքով մեզ կտրել առօրյայից, նրա հետ հոգսերը մոռանում էինք: Ասել, որ ափսոսում կամ ցավում ենք, նշանակում է՝ ոչինչ չասել, մեր ցավը շատ մեծ է, նրա հիշատակը միշտ վառ է մնալու մեր սրտերում...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Ջիվանի որդին 17 օրական էր, Ջիվանը սյունեցի էր, իսկ սյունեցին իր տան պաշտպանությունն ուրիշին չի թողնում. նա ևս միացավ Ագարակի մերձակա դիրքերը հսկող տղաներին:

Արցախում դրությունն օրհասական էր. հոկտեմբերի 3-ին կամավոր միացավ Արցախ մեկնող խմբին...

Հոկտեմբերի 11-ին թշնամու անօդաչուի հարվածից զոհվում է Ջիվանը. այրիանում է մի երիտասարդ հայուհի, փլվում է հայոց մի օջախ ևս. մի մանուկ ևս կրելու է հերոսի անունը որպես հայրանուն, բայց հայրական գորովանքի մասին միայն մի քանի լուսանկար են պատմելու, որոնցում ինքը հոր ափի չափ է...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է հոկտեմբերի 13-ին Ագարակի գերեզմանատանը:

Ծատրյան Անդրանիկ Սերժիկի

Ծնվել է 1987թ. սեպտեմբերի 30-ին Ագարակ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի Եղիշե Չարենցի անվան դպրոցում: Սովորել է Երևանի «Մենեջմենթի» համալսարանում, մասնագիտությամբ իրավագետ էր: Աշխատում էր Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ մեքենավար: Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Անդրանիկի մասին զրուցում ենք կնոջ հետ, պատմում է, որ կրտսեր դուստրը մի քանի ամսական է եղել ու հայրիկին չի հիշում, իսկ ավագը, ով սովոր էր իր բոլոր նկարները հայրիկին ցույց տալ, հիմա նկարները երկնքին է ցույց տալիս, որ հայրիկը նայի, տխրում, մինչև իսկ լաց է լինում, երբ հայրիկը, գոնե երկնքից, սպասված գովասանքները չի ասում...

Անդրանիկ Ծատրյանի ու իր ընտանիքի մասին խոսելիս հարևանների աչքերն արցունքոտվում են. *«Օրինակելի ընտանիք ասվածը նրանց մասին է, այնքան շատ էին իրար սիրում, շատ-շատ ափսոս, հիանում էինք նրանցով, հիմա չգիտենք էլ՝ հանդիպելիս ինչ ասենք...»:*

Անդրանիկը Սյունիքում էր ծնվել, սյունեցին գիտի, որ թուրքի կողքին զենքը ձեռքին են ապրում, որ թուրքը միայն սրի լեզուն է հասկանում: Եվ չզարմացավ, երբ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց, այլ զենք առավ ու կանգնեց զինվորի կողքին: Նա էլ ընկերների հետ նախ՝ Սյունիքի դիրքերը պահելու մեկնեց, ապա՝ Արցախ: Արցախ մեկնելու որոշումն Անդրանիկինն էր, կամավոր էր միացել Արցախի պաշտպանությանը:

Ընտանիքի անդամներին չէր ասել, որ Արցախում է, չէր ցանկացել նրանց անհանգստացնել: *«Զանգահարելիս այնքան հանգիստ ու զվարթ էր խոսում, ասես՝ ինքն առողջարանում է, ոչ թե առաջնագծում, նա չափազանց հոգատար էր, բացառիկ հայր, բացառիկ մարդ»,* – պատմում է կինը:

Հաճախ էր զանգահարում, կինը չէր էլ պատկերացնում, որ հոկտեմբերի 10-ի իրենց խոսակցությունը վերջինը կլինի, որ ժամեր անց՝ հոկտեմբերի 11-ի լուսաբացին, Անդրանիկը ԱԹՍ-ի առաջին հարվածից հետո չի շտապի թաքստոց գտնել, այլ, իր բնույթի համաձայն, կմնա ծանր վիրավոր ընկերոջն օգնելու և ինքն էլ կանմահանա Իշխանաձորում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է հոկտեմբերի 13-ին Ագարակի գերեզմանատանը:

Համբարձումյան Սուրեն Բագրատի

Ծնվել է 1992 թ. հունվարի 1-ին Մեղրու տարածաշրջանի Գուդեմնիս գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ագարակի Եղիշե Չարենցի անվան դպրոցում: Զարգացած երաժշտական լսողություն ուներ, հաճախում էր երաժշտական դպրոց՝ շվի էր նվագում: Սուրենին սիրում էին բոլորը, ընդգծված բարություն կար նրա ամեն քայլում, չէր կարող անտարբեր անցնել ուրիշի վշտի ու ցավի կողքով:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Եվրոպական համալսարանի կառավարում բաժինը: 2010-12 թթ. ծառայել է հայոց բանակում՝ Սիսիանի զորամասում, ծառայության ընթացքում արժանացել պատվոգրերի:

Զորացրվելուց հետո աշխատանքի է ընդունվել Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում, բայց զինվորական ծառայությանը կարոտում էր, սիրում էր զինվորականի կյանքը, սիրում էր սահմանին ապրողի գիտակցությամբ: Մի օր էլ, սեփական դիմումի համաձայն, դուրս է գալիս աշխատանքից և պայմանագրային ծառայության անցնում Ագարակի զորամասում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Սուրենը դիրքերում էր... Սեպտեմբերի 30-ին հերթափոխն ավարտվել էր, պիտի տուն գար, բայց դիրքերից իջնելուց հետո ներկայանում է Ագարակի զորամաս և կամավոր մեկնում Արցախ...

Համաքաղաքացիները հարցրել էին, թե ինչու տուն չի գնում հանգստանալու, պատասխանել էր. «Թուրքի դեմն առնելը թասիբի հարց է»:

Մարտական ընկերները նրա մասին խոսում են հպարտությամբ. *«Գաղափարական մարտիկ էր, գիտեր՝ ուր է եկել, գիտեր՝ ինչի համար է կռվում, երբեք հաշվի չի առել թշնամու քանակական առավելությունը, իր կյանքը շատ թանկ էր, բայց մի բան հաստատ է՝ մինչև զոհվելն ազերիների է սատկացրել, միշտ առաջ գնալու ձգտում ուներ...»:*

Մարտերը թեժ էին, Սուրենը չէր համակերպվում նահանջելու մտքին, չնահանջեց, որոշումը վերջնական էր՝ կռվել մինչև վերջ. որոշեց ու մնաց իր դիրքում:

Վերջը հոկտեմբերի 5-ն էր, երբ թշնամու դիպուկահարը նկատեց համառ մարտիկին... Սուրենն ընկավ՝ իր հողը, պատիվը, արժանապատվությունը պաշտպանելիս...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Ագարակի գերեզմանատանը:

Հայրապետյան Արմեն Գրիգորի

Ծնվել է 1987 թ. օգոստոսի 30-ին Մեղրի քաղաքում: Սովորել է Մեղրու N 2 միջնակարգ դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Մատաղիսում: Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

2009 թ. պայմանագրային ծառայության է անցել Մեղրու գնդում՝ որպես դիպուկահար: Եղել է դիպուկահարների ջոկի հրամանատար:

Դիպուկահարի իր ծառայությունը հրաշալի էր կատարում, ծառայակից ընկերները նրա մասին անթաքույց ցավով են խոսում. *«Արմենի մասին միայն լավը կարող ենք ասել, ընտանիքին ու ընկերներին նվիրված, խելացի տղա էր, հարգանքով, հայրենասեր, աշխատասեր...»:*

Կինը կոտրված է, ամուսնու մասին խոսելը ծանր է նրա համար: Երեխաներից ավագը, ով դեռ յոթ տարեկան էլ չկա, ամեն օր հայրիկին է սպասում. փոքրիկը կարծում է, թե առատ ձյուն է եկել, այդ պատճառով հայրիկը չի գալիս դիրքերից, հիմա արև է, ու չի հասկանում, թե ինչու հայրիկը չի գալիս, հետևում է զինվորական մեքենաների շարքին և ուշադիր զննում յուրաքանչյուր իջնող զինվորականի, երբ տեսնում է, որ վերջինն իջավ, տխրում է. «Ուրեմն՝ պապաս էս մեկով էլ չեկավ...»:

Արմենն իր ծառայության մասին երբեք ոչինչ չէր պատմում: Կինը գիտեր միայն, որ ամուսինը դիպուկահար է, նույնիսկ տեղյակ չի եղել, որ ամուսինը ոչ թե Մեղրիին մոտ գտնվող դիրքերում է, այլ Արցախում:

Հոկտեմբերի 3-ին մարտական առաջադրանքով մեկնել է Ջրականի առաջնագիծ:

Արմենը տուն էր զանգահարել հոկտեմբերի 5-ին, խոսել երեխաների հետ, ավագ դստերը խորհուրդ տվել՝ անպայման լավ սովորել ու միշտ լսել մայրիկին:

Ավա՜ղ, խոսակցությունը դարձել էր վերջինը, խոսելուց ժամեր անց անօդաչուի հարվածից ընկել էր քաջ հայորդին...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորված է Մեղրու գերեզմանատանը:

Հայրապետյան Տիգրան Կարենի

Ծնվել է 2000 թ. սեպտեմբերի 13-ին Մեղրիում: Միջնակարգ կրթությունը ստացել է Մեղրիի N 1 դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի բաժին:

Տիգրանի մաթեմատիկական հատուկ ընդունակություններն ուսուցչուհին նկատել էր դեռ առաջին դասարանում:

Նա ծնողների առաջնեկն էր, ծնողները նրանից շատ մեծ սպասելիքներ ունեին՝ հաշվի առնելով որդու բնատուր ունակությունները...

Հազար ու մի հետաքրքրություն ուներ, ազատատենչ պատանին երևի ինչ-որ բան կանխազգալով՝ ուզում էր հասցնել լինել ամենուր, հասցնել ամեն ինչ: Նկարչական դպրոց էր բացվել Մեղրիում. Տիգրանի առաջին աշխատանքն այնքան ճիշտ էր թե գույների, թե գծագրի առումով, որ զարմացրել ու հիացրել էր ուսուցչուհուն:

Տիգրանը զորակոչվելուց առաջ մասնակցել էր պատվո պահակային գնդի համար պատանիների ընտրությանը. նրա թե արտաքին, թե մտավոր տվյալները համապատասխանում էին. և առաջիններից մեկն էր ընտրվել:

Բանակային կյանքից ոչինչ չէր պատմում, նույնիսկ մեդալներ ստանալու մասին չէր տեղեկացրել, մայրը նրա նահատակվելուց հետո հրամանատարներից է իմացել, որ որդին բազմաթիվ մեդալներ ու կրծքանշաններ ունի՝ «Մարտական հերթապահության համար», «Քաջարի մարտիկ», «Լավագույն զինվոր-մարզիկ», «Հայոց բանակի գերազանցիկ»:

Տիգրանը հետախույզ էր, մասնագիտություն, որում՝ գիտելիքների ու ֆիզիկական տվյալների շնորհիվ, փայլում էր:

Սեպտեմբերի 27-ից հետո հետախույզ, դիրքի ավագ, սերժանտ Տիգրան Հայրապետյանն առանց խուճապի, գիտակից, հասուն զինվորականի պես անցավ իմացածը մարտադաշտում կիրառելուն: Ծնողների անհանգիստ զանգերին հանգստացնող հորդորով էր պատասխանում, ասում, որ ինքն ապահով է, որ ամեն ինչ հրաշալի է լինելու:

Հոկտեմբերի 2-ին վերջին անգամ է զանգահարել ընտանիքի անդամներին...

Միայն հինգ ու կես ամիս անց ԴՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Տիգրանը զոհվել է... Հուղարկավորվել է 2021թ. մարտի 24-ին Մեղրիի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Հարությունյան Անդրանիկ Համլետի

Ծնվել է 1968 թ. հուլիսի 6-ին Մեղրու շրջանի Տաշտուն գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Սովորել է Անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում՝ մասնագիտությամբ անասնաբույժ էր: Ուսանողական տարիներին զբաղվել է կշռաքարի բարձրացմամբ, դարձել այդ սպորտաձևի ԽՍՀՄ չեմպիոն: Ծառայել է խորհրդային բանակում:

Հայրենիքը պաշտպանելն Անդրանիկի համար պատվի ու տղամարդկության չափանիշներից էր...

1994 թ. մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին. վեց ընկերոջ հետ գերեվարվել է, բայց շնորհիվ շրջահայացության, մտավոր և ֆիզիկական ուժի, կարողացել է անվնաս ազատվել գերությունից և փրկել ընկերներին:

2007 թ. ամուսնացել է: Երբ հարցնում ես նրան ճանաչողներին, թե ինչպիսի՞ն էր Անդրանիկը, պատասխանը մեկն է՝ *«Եվրոյի Անդոն (զբաղվում էր մետաղապլաստե (եվրո) պատուհանների արտադրությամբ) իսկական տղամարդ էր, հայ տղամարդ, ում հարգում էին թե՛ տանը, թե՛ դրսում: Ընտանիքն արժանապատիվ էր պահում, ընկերներին էլ հասնում էր՝ առանց բացառության»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ից Անդրանիկն առանց հապաղելու անցավ թիկունքի ապահովման գործին, իր միջոցներով կատարում էր գնումներ, ինքն էլ տեղ հասցնում: *«Երեխաներիցս ավագը, իհարկե, գիտի հայրիկի զոհվելու մասին, փոքրին չեմ ասել, կարոտում են, բայց ես իրենց բացատրել եմ, որ իրենք հերոսի զավակներ են, և հպարտությունը պիտի լինի միակ զգացումը, որ երբևէ պիտի ունենան: Իմ զավակները չեն չարանալու ճակատագրի հանդեպ, քանի որ միշտ կրկնելու եմ՝ ձեր հայրը հերոս է, նա ինքն է հայրենիքն իր կյանքից վեր դասել, դա նրա որոշումն էր, իսկ նրա որոշումները մեր տանն ընդունվել են առանց քննարկման: Նրանց համար դժվար է լինելու, Անդրանիկը չտեսնված հայր էր»,* – պատմում է կինը: Անդրանիկը Մեղրիի «Ոռոգման ջուր» ընկերության փոխտնօրենն էր, ընկերության տեխնիկայով կատարում էին ինժեներական աշխատանքներ, երբ դրությունը ծանրացավ, նա միացավ Դավիթ Մաթևոսյանի ջոկատին...

Հոկտեմբերի 22-ին թեժ մարտեր են լինում, մարտի դադարից հետո Անդրանիկը տուն է զանգահարում, ասում, թե մի փոքր ինժեներական աշխատանքներ կան, որոնք վերջացնելուց հետո վերադառնալու է, բայց թշնամու անօդաչուն հայտնաբերում է նրանց ջոկատը. նույն օրը նույն տեղում զոհվում են երեք մեղրեցի քաջեր՝ Մակար Բեգլարյանը, Դավիթ Մաթևոսյանը և Անդրանիկ Հարությունյանը:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Տաշտունի գերեզմանատանը:

Հովհաննիսյան Արսեն Եղիշեի

Ծնվել է 1983 թ. սեպտեմբերի 1-ին Ագարակ քաղաքում: Սովորել է Ագարակի Եղիշե Չարենցի անվան միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել է Արմավիրում: Աշխատում էր Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ «Բելազ»-ի վարորդ էր: Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

Արսենի մասին մեզ կինն է պատմում. *«Նրա նմանը չկար, լավ ամուսին էր, հրաշալի հայր: Մեր աղջիկը 14 տարեկան է, Արսենն աշխարհի չափ սիրում էր նրան, նա էլ հորն էր անսահման սիրում, առհասարակ նրա սրտում շատ սեր կար բոլոր հարազատների նկատմամբ, բոլորս էլ նրան էինք յուրահատուկ սիրով սիրում: Մենք աշխարհում մենակ մնացինք, նրա կորուստը մեր կյանքի գույները տարավ...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Սյունեցին գիտի, որ իր տունն ու դուռն ինքը պիտի պաշտպանի, սյունեցին հրամանի չի սպասում՝ տագնապի ժամին իր սահմանն ամրացնելու համար: Արսենն էլ, առանց հապաղելու, միացավ Մեղրիի մերձակա դիրքերը պաշտպանող զինվորներին: Իրավիճակն Արցախում ծանր էր. հոկտեմբերի 5-ին Արսենը կամավոր մեկնեց Արցախ: Կինը պատմում է, որ ամուսինն իրենց զանգահարում էր, եթե հնարավոր էր լինում: Իմացել է, որ ամուսինը Ջրականում է, որ այնտեղ թեժ մարտեր են, բայց Արսենի զանգերից հետո սիրտն ու միտքը հանգստանում էին: Հոկտեմբերի 11-ին հերթական զանգն ուշացավ, կինն անհանգստացավ, մտածեց, որ հնարավոր է՝ մի վատ բան պատահած լինի, բայց վատթարագույնի մասին ինքն իրեն արգելեց մտածել ու սպասեց հերթական զանգի...

Հետո Ագարակ քաղաքը պիտի ցնցվեր, որովհետև փոքրիկ քաղաքում գույժն արագ տարածվեց՝ Ջրականում զոհվել է Արսեն Հովհաննիսյանը...

Զոհվեց հոկտեմբերի 11-ին՝ անօդաչուի հարվածից:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հերոսացած Արսենի մարմինն ամփոփված է Ագարակի գերեզմանատանը:

Ղուկասյան Տիգրան Լենդրուշի

«Հրաշալի մարդ էր, խաղաղասեր, բարի, ընտանիքին ու ընկերներին նվիրված: Պատերազմ ասվածը չարիք է, ցավոտ է տեսնել որբացած երեխաներ, իսկ երբ այդ երեխաներն ընկերոջդ որդիներն են, ցավին գումարվում է անզորության զգացումը»:

Ծնվել է 1974 թ. հոկտեմբերի 3-ին Ագարակ քաղաքում: Սովորել է Ագարակի Եղիշե Չարենցի անվան միջնակարգ դպրոցում, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում: Պարտադիր զինվորական ծառայությունն անցկացրել է Շամշադինում:

Աշխատել է Ագարակի քաղաքապետարանում, պղնձամոլիբդենային կոմբինատում: 2004 թվականից չէր աշխատում:

Ամուսնացած էր, ունի երկու որդի:

Տիգրանի մասին կինը՝ Էռնան է պատմում. *«Աննկարագրելի մարդ էր ամուսինս, լավ զավակ, հայր, ընկեր, ամուսին... Ինձ խոստացել էր երկու օրից գալ, բայց երկու օրից բերեցին... Ինձ ասել էր, որ չվախենամ, ասել էր, որ անպայման վերադառնալու է: Պատերազմը փոխեց իմ կյանքը, պատերազմը խլեց մեզանից ամեն ինչ: Տղաներս մեծ են, գիտակցում են, թե ինչ է կատարվել, բայց շարունակում են սպասել: Մի տեսակ անբացատրելի է՝ գիտենք, որ չի գալու, բայց սպասում ենք»:*

Տիգրանին հիշում են, ափսոսում, կարոտում: Ընկերները ցավով են խոսում իրենց հերոսացած ընկերոջ մասին. *«Հրաշալի մարդ էր, խաղաղասեր, բարի, ընտանիքին ու ընկերներին նվիրված: Պատերազմ ասվածը չարիք է, ցավալի է տեսնել որբացած երեխաներ, իսկ երբ այդ երեխաներն ընկերոջդ որդիներն են, ցավին գումարվում է անզորության զգացումը»:*

2020 թ. հոկտեմբերի 24-ին Տիգրան Ղուկասյանը զորահավաքով մեկնել է Նռնաձոր, ապա միացել Արցախի հարավային հատվածի պաշտպանությանը շտապող խմբին:

Զոհվել է հոկտեմբերի 26-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հուղարկավորվել է Ագարակում՝ ընտանեկան գերեզմանոցում:

Մաթևոսյան Դավիթ Ղևոնդի

Ծնվել է Մեղրիի շրջանի Կարճևան գյուղում 1960 թ. մարտի 22-ին: Ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը՝ ինժեներ հիդրոտեխնիկի որակավորմամբ: 1982-1983 թվականներին աշխատել է Ագարակի հանքաշինական վարչությունում, 1983-1984 թվականներին՝ Մեղրիի ոռոգման և ջրարբիացման համակարգերի վարչությունում՝ ինժեներ, 1984-1985 թվականներին եղել է ՀԼԿԵՄ Մեղրու շրջկոմի հրահանգիչ, 1985-1991 թվականներին՝ Կարճևանի պետտնտեսության տնօրեն:

1991-1995 թվականներին Մեղրու ՆԳ բաժնի պետն էր:

1995 թ. ընտրվել է ՀՀ առաջին գումարման ԱԺ պատգամավոր:

1996-1998թթ. Սյունիքի փոխմարզպետն էր:

2008 թ. մարտի 1-ի գործով դատապարտվել էր երեք տարվա ազատազրկման: 2009 թ. հունիսի 22-ին համաներմամբ ազատ է արձակվել:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 22-ին՝ Ադրբեջանի ծավալած լայնամասշտաբ պատերազմի ժամանակ:

Հայրենասիրությունը, հայրենի եզերքին նվիրվածությունը Դավիթ Մաթևոսյանի համար բառեր չէին սոսկ, այլ կոնկրետ գործերի հանրագումար, անմնացորդ նվիրում ազգային կյանքին...

Դա հատկապես երևաց 1990-ականներին, երբ հայ ժողովուրդը ոտքի էր ելել Արցախի ազատագրության համար, երբ հայրենի Արևիք աշխարհը ևս ռազմական գործողությունների թատերաբեմ էր դարձել:

Նրա հայրենասիրության նոր պոռթկումին ականատես եղանք 2020-ին՝ Արցախյան երրորդ պատերազմում:

Սեպտեմբերի 27-ից հետո վերադարձել էր Մեղրի և բազմակողմանի գործունեություն ծավալել երկրամասի անվտանգության ապահովման ուղղությամբ, մանավանդ որ հոկտեմբերի կեսերին թուրք-ազերիները թիրախավորել էին նաև Մեղրու շրջանի արևելյան սահմանամերձը:

Բազմաթիվ ականատեսներ մեզ պատմեցին, թե կազմակերպչական ինչպիսի գործունեություն էր ծավալել Դավիթ Մաթևոսյանը սահմանի պաշտպանությունն ամուր հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

Նրա կերպարը պատերազմական այդ օրերին ոգեշնչման աղբյուր էր շատերի համար:

Մարտական առաջադրանքներ կատարելու ժամանակ էլ մահացու վերքեր ստացավ թշնամու անօդաչու սարքի գրոհի հետևանքով...

Հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում:

Միրզոյան Կարեն Արթուրի

Ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 23-ին Մեղրու տարածաշրջանի Ագարակ քաղաքում:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Ուսուցիչները չեն կարողանում զսպել արցունքները, քանի որ, իրենց խոսքով, տեսնում էին, թե դեռ փոքրուց ինչքան հայրենասեր ու քաջ տղա է մեծանում:

2019 թ. հունվարի 25-ին զորակոչվել է բանակ: Ծառայության անցավ Արցախի Հանրապետության Ստեփանակերտի Ցոր զորամասում: Այնտեղ ծառայելը Կարենը պատիվ էր համարում, հպարտանում իրենց զորամասով, երբեք չի բողոքել ծառայությունից: Թե՛ հրամանատարական կազմը, թե՛ ընկերները նրան հիշում ու բնութագրում են որպես նվիրված, ինքնավստահ, գիտակից, առաջնորդի ընդգծված հատկանիշներով օժտված ընկերոջ ու զինվորի: Զորակոչից վեց ամիս անց կրտսեր սերժանտի, ապա սերժանտի կոչում էր ստացել: Զորամասում, ազատ ժամերին, մարզադահլիճ էր հաճախում, պարապում: Տղաներին էլ հետն էր տանում, նրանց «մարզիչն էր»: Զորամասում նրան «Մեղրեցի Կարեն» էին կանչում, քանի որ մեղրի պես քաղցր էր ու անմահական և մեղրեցու պես խիզախ ու անկոտրում:

2020 թ. սեպտեմբերի 27... Կարենը զորամասի կազմում կռվել է Ջրականում, Հադրութում, Քարին տակում, հասել էր Շուշի:

Նոյեմբերի 7-ին զանգահարել էր տուն, խոսել՝ ասել, որ ամեն ինչ լավ է. ավա՜ղ, վերջին զանգն էր... Հետո, հրաշքով փրկված ընկերը ծնողներին պիտի պատմեր, որ իրենց որդին՝ երեք տեղից վիրավոր, ու մի ուրիշ հերոս ժամեր շարունակ կռվել են մինչև նախավերջին փամփուշտը, քանի որ վերջին փամփուշտներն իրենց համար էին պահել, սպասել են օգնության, իսկ երբ գիտակցել են, որ հնարավոր է թուրքի ձեռքն ընկնեն, ինքնասպան են եղել...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով: Հուղարկավորվել է Ագարակ քաղաքի գերեզմանատանը:

Մկրտչյան Հայկ Արամի

Հայկը չափազանց ուշադիր էր մարտադաշտում, նրա ուշադրության ու հստակ կողմնորոշման շնորհիվ վաշտն անվնաս էր մնացել:

Ծնվել է 1997 թ. դեկտեմբերի 5-ին Ագարակ քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի Եղիշե Չարենցի անվան դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի «Բերկուտ» թիկնապահական քոլեջ: 2016 թ. զորակոչվել է բանակ: Վեց ամիս անց կրտսեր սերժանտի կոչում է ստացել: Ծառայության ընթացքում արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և շնորհակալագրերի:

2016 թ. ապրիլյան մարտական գործողությունների ժամանակ Հայկը, ով հատուկ ջոկատային էր, մասնակցել է դժվար առաջադրանքների կատարմանը:

Զորացրվելուց հետո պայմանագրային ծառայության է անցել Ագարակի զորամասի սակրավորների վաշտում: Ծառայակիցներն ափսոսանքով ու ցավով են հիշում իրենց հերոսացած ընկերոջը՝ *«Սիրված էր բոլորիս կողմից, բարի, հոգատար, անմնացորդ նվիրվող, կենսախինդ տղա էր Հայկը, նրա մասին, քանի կանք, պատմելու ենք, հիշելու ենք ու անմար ենք պահելու մեր ընկերոջ հիշատակը»:*

Հոկտեմբերի 2-ին Հայկն Ագարակի զորամասի սակրավորների վաշտի կազմում մեկնում է Ջրական, մասնակցում մարտական գործողություններին: Նրա հետ ռազմադաշտում եղած ընկերները պատմում են, որ Հայկը չափազանց ուշադիր էր մարտադաշտում, նրա ուշադրության ու հստակ կողմնորոշման շնորհիվ՝ վաշտն անվնաս էր մնացել: Անվնաս էլ վերադառնում էր Ջրականից, սակայն... Ճանապարհին զինծառայողները նկատել են թշնամու անօդաչուն, իջել մեքենայից, փորձել պատսպարվել, բայց մեքենա բարձրանալու հրաման են ստացել. նստել են «Ուրալը», որից հետո թշնամու ԱԹՍ-ի հարվածից մեքենան ամբողջությամբ այրվել է: Մեքենայի ուղևորներից միայն մեկ զինվոր է փրկվել...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով: Հուղարկավորվել է Ագարակի գերեզմանատանը:

Մկրտչյան Վազգեն Ռուդիկի

2000թ. հոկտեմբերի 27-ին Լեհվազում Մկրտչյանների ընտանիքում ծնված լույս տղային ծնողները կոչեցին Սպարապետի անունով՝ Վազգեն:

Սովորել և ավարտել է Լեհվազի միջնակարգ դպրոցը: Սիրած առարկան մաթեմատիկան էր: Որոշել էր ավտոմեխանիկ դառնալ, սովորում էր Մեղրու պետական քոլեջում:

Ծառայել է Հադրութում՝ դիպուկահար: Պատերազմի առաջին իսկ օրից եղել է ամենաթեժ կետերում և կռվել մինչև վերջին շունչը: Հոկտեմբերի 14-ին ընկերների հետ ընկել է շրջափակման մեջ և, չխնայելով իր կյանքը, փրկել ընկերներին ու ընկել հերոսի մահով:

«Յուրահատուկ հպարտ քայլվածք ուներ, երբ դարպասը բացվում էր, արդեն գիտեի, որ ինքն է ներս մտնելու: Մտնում էր ներս, գոռում՝ մամ, ես արդեն տանն եմ: Գրեթե երկու տարի է այդ ձայնը չեմ լսում, ու երբեք էլ չեմ լսելու...», – հիշում է Վազգեն Մկրտչյանի մայրը՝ Արմինե Հարությունյանը:

20-ամյա Վազգենը 2021թ. հունվարին պիտի զորացրվեր:

Մեղրու շրջանի Լեհվազ գյուղից էր: Ծառայակից ընկերներից մեկը ծնողներին ասել է, թե Վազգենը սկզբում վիրավոր է եղել:

Տղաները շրջափակման մեջ են ընկել, Վազգենին չեն կարողացել դուրս բերել, հակառակորդը նորից է կրակել, ու նա զոհվել է: Դա 2020թ. հոկտեմբերի 14-ին էր:

Վազգենը որոշել էր միշտ մնալ հայրենի գյուղում: Ծնողները հորդորում էին գյուղից դուրս գալ: Իսկ ինքն ասում էր, թե Մեղրին իր սիրած վայրն է, ուրիշ տեղ ապրել չի ուզում:

Ընտանիքի կրտսեր զավակն էր:

Մայրը պատմում է՝ մի օր, երբ զանգահարել է Վազգենին, զրուցելիս եղանակից է հարցրել, Վազգենն ասել է՝ տաք է, չեն մրսում, ամեն ինչ լավ է. մի քանի վայրկյան հետո ուժեղ ձայն է լսվել, մայրը եզրակացրել է, որ հրթիռակոծում են: Վազգենն անջատել է հեռախոսը, հետո նորից զանգահարել ու ասել է, թե ամպերն էին որոտում, կտրուկ եղանակը փոխվել է, վատացել: Մայրը, իհարկե, չի հավատացել. որդին ուժեղ էր ու չէր ցանկացել անհանգստացնել ծնողներին:

«Վազգենը երբեք չի դժգոհել, չի բողոքել, իր պատմելով՝ ծառայությունը խաղ ու պար էր, չկար ոչ մի դժվարություն: Անգամ պատերազմի օրերին, երբ հարցնում էինք՝ ո՞նց ես, երբեք չէր ասում, թե իրավիճակը վատ է: Գիտե՞ք՝ միշտ հպարտ եմ եղել, որ երկու տղա եմ լույս աշխարհ բերել, գիտեի, որ մեջք ունեմ: Հիմա մեջքս կոտրվել է...», – պատմում է մայրը:

Հուղարկավորվել է Լեհվազի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մնացականյան Սպարտակ Լևոնի

Ծնվել է 2000 թվականի նոյեմբերի 3-ին Ագարակ քաղաքում: Սովորել է Ագարակի միջնակարգ դպրոցում: Զինվորականի ընտանիքում մեծացած տղան չէր երազում զինվորական դառնալ: Երազում էր դեսպան լինել Իրանում կամ Արաբական Միացյալ Էմիրություններում: Երազանքին հետևելով՝ դպրոցը գերազանց առաջադիմությամբ ավարտելուց հետո, ընդունվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ: Երբ պատրաստվում էր ընդունելության քննություններին, եղբոր՝ Հայկի խոսքով, հայոց պատմությունը նրա տարերքն էր դարձել:

«Երբ հայոց պատմության գրքերն էր կարդում, անընդհատ գալիս, ինձ ասում էր՝ նայի, սենց բան ենք ունեցել, կարդա, դու էլ սովորի: Ու տալիս էր, որ անպայման կարդամ», – պատմում է Հայկը:

«Սպարտակն ուներ իր աշխարհը, որի մասին ամենից շատ կիսվում էր ամենամոտ ընկերոջ՝ Նարեկի հետ, ով նույնպես զոհվել է պատերազմում: Երբ միասին նստում էին, խոսում, ոչ ոք ոչինչ չէր հասկանում», – հիշում է զինվորի եղբայրը:

2019 թ. զորակոչվել է բանակ, ծառայել է Արցախի Հանրապետության Մատաղիսի զորամասում: Օրինակելի ծառայության համար արժանացել է «Բանակի գերազանցիկ» և «Քաջարի մարտիկ» մեդալների: Մոր ասելով՝ հրամանատարներն ասում էին. *«Չկար մի բան, որ հարցնեինք, ու Սպարտակը չիմանար թե՛ ծառայության հետ կապված, թե՛ զենքերի ու թե՛ իր զենքի՝ հրետանու: Հորից էր ժառանգել հրետանու հանդեպ սերը. նա էլ է հրետանավոր»:*

«Սպարտակը շատ գրագետ էր, հաշվարկներից լավ գլուխ էր հանում ու նաև լավ հիշողություն ուներ և իր համար առավել հեշտ էին հրետանու հետ գործ ունենալը, բոլոր նախնական հաշվարկներն իրականացնելը»,- ասում է հայրը:

Ծնողների հպարտությունն անհանգստության փոխվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին. առաջին իսկ օրվանից եղել է մարտի դաշտում, մասնակցել Թալիշի, Մատաղիսի, Շուշիի, Քարին տակի, Կարմիր շուկայի, Մարտունիի թեժ մարտերին:

Սպարտակը հավատում էր հաղթանակին. *«Եթե այս փոքր բանակով կարողանում ենք պայքարել չորս պետության դեմ, ուրեմն մեզ հաղթել չի լինի...»:*

Նրա վերջին մարտը նոյեմբերի 9-ին էր՝ Մարտունու շրջակայքում: Պատերազմի ավարտից ժամեր առաջ է զոհվել...

Աճյունն ամփոփվել է Եռաբլուր պանթեոնում նոյեմբերի 11-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սարգսյան Նարեկ Սամվելի

Ծնողներից գրքեր էր խնդրել, որովհետև չէր կարողանում լիարժեք ապրել առանց իր գրքերի. գրքերն իրենն էին, ինքը՝ գրքերինը, շատ փոքրուց էր դյութվել գրքերով...

Ծնվել է 2001 թ. սեպտեմբերի 12-ին Ագարակ քաղաքում, միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում, սովորել գերազանց: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ԵՊԲՀ ընդհանուր բժշկության ֆակուլտետ:

Նարեկը բազմաթիվ երազանքներ ուներ, բազմաթիվ հետաքրքրություններ, բժիշկ դառնալու երազանքը չէր խանգարում, որ գերազանց սովորեր պատմություն, գրականություն, հայոց լեզու և այլ առարկաներ: Առաջին կուրսը գերազանց է ավարտել, համակուրսեցիները նրա մասին չեն կարողանում խոսել առանց արցունքների. պատմում են, որ Նարեկը պատրաստակամ էր օգնելու բոլորին, հարգալից էր, համեստ, խելացի...

2020 թ. օգոստոսի 6-ին զորակոչվել է բանակ՝ ծառայել Մարտակերտում:

Գիտակից ու հայրենասիրության գաղափարով մեծացած երիտասարդի համար Արցախում զինվոր լինելը պատիվ էր: Նորակոչիկ Նարեկը մեկ պատասխան ուներ ծնողների բոլոր հարցերին՝ լավ եմ:

Միայն զոհվելուց հետո են ծնողներն իմացել, որ իրենց որդին հոսպիտալում է եղել՝ առողջական խնդիրներ է ունեցել:

Ծնողներից գրքեր էր խնդրել, որովհետև չէր կարողանում լիարժեք ապրել առանց իր գրքերի. գրքերն իրենն էին, ինքը՝ գրքերինը, շատ փոքրուց էր դյութվել գրքերով, գրքերը նրան ազատ մտածելու, սեփական խոսքն ու գաղափարներն ունենալու առանձնահատկություն էին շնորհել, որով տարբերվում էր հասակակիցներից:

Սեպտեմբերի 27-ին մեր հրոսակ հարևանը պատերազմ սկսեց հայոց Արցախի դեմ. անօդաչուի հարվածից զոհվեց Նարեկը՝ ավարտվեց բացառիկ գիտելիքներով օժտված ապագա բժշկի կենսագրությունը...

Մարմինն ամփոփված է Ագարակի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սարգսյան Սուրեն Բենիկի

Ծնվել է 1985 թվականի նոյեմբերի 17-ին Մեղրի քաղաքում: 2002թ. ընդունվել է Մեղրու թիվ 2 դպրոցը, ուսումը շարունակել է Մեղրու պետական քոլեջում:

Ճակատագրի բերմամբ մանուկ Սուրենի կնքահայրը պիտի լիներ ոչ այլ ոք, քան գնդապետ Ղևոնդ Հովհաննիսյանը: Սուրենը եկեղեցում ծառեր էր տնկել ու ամեն առավոտ դպրոց գնալուց ջրում էր: Սովորականի նման, երբ փոքրիկ տղան հերթական անգամ գնացել էր ծառերը ջրելու, տեսել է շարք կանգնած զինվորներին ու կանգնել նրանց կողքին: Ի պատասխան գնդապետի հարցական հայացքի՝ տղան պատասխանել է. «Ինձ էլ կնքեք»: Ահա այսպես մանուկ Սուրենը դարձավ Ղևոնդ Հովհաննիսյանի սանիկը:

Դեռ մանկուց աննկարագրելի սեր ուներ զինվորների, բանակի հանդեպ: Գրքի էջերում միշտ զենք ու զինվոր էր նկարում…

Ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը վերջացնելուց հետո դարձել է պայմանագրային զինծառայող:

Երբ սկսվեց Արցախյան երրորդ պատերազմը, շրջանի պաշտպանությունը հանձնելով ընկերներին՝ մեկնեց Ջրական: Շատ սիրված ու հարգված երիտասարդը նշանառու էր ու միշտ պատրաստ էր պաշտպանել իր հայրենիքը: Քաջ հայորդին՝ գիշերն աննկատ սողալով թշնամու խրամատ, սպանելով ադրբեջանցի մի քանի ասկյարի, զենք ու զինամթերք է հասցրել իր մարտական ընկերներին:

Հոկտեմբերի 7-ին Իշխանաձորում է եղել. տեսնելով տղաներին անօգնական վիճակում՝ նստել է մեքենան ու շտապել մարտի դաշտ՝ այնտեղից վիրավորներին դուրս բերելու…

Վայքի հետախուզական ջոկատի հետ թշնամու խրամատներից Սուրենը զենք-զինամթերք է քանիցս առգրավել և բերել մեր զինվորներին:

Մարտերը ծանր էին…

Հոկտեմբերի 9-ին զանգահարում է տուն ու կնոջն ասում. «Որդուս լավ կնայես»:

Սուրենի հետ կապն ընդհատվել է հոկտեմբերի 10-ից:

Ցավոք, թշնամու աչքից չի վրիպել Սուրենը, հոկտեմբերի 10-ին անօգնական մնացել է մարտի դաշտում:

Սուրենն ծննդավայրում շինած մատուռ ունի, որը հերոսից հուշ մնաց համաքաղաքացիներին:

Ավանդույթ է ձևավորվել՝ մարտական դիրքեր բարձրանալիս զինվորներն այդտեղ մոմ են վառում: Նոյեմբերի 23-ին հուղարկավորվել է Մեղրիի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

ԿԱՐԳԱՆ
ՀԱՄԱՅՆՔ

Ալևորյան Յուրի Միերի

Ծնվել է 2001 թ. ապրիլի 10-ին Կապանում, սովորել թիվ 6 հիմնական դպրոցում: Նրան դասավանդած մանկավարժները հիշում են, որ Յուրին շատ ուշադիր և հարգալից էր շրջապատի հանդեպ: Բարձրահասակ լինելու համար դասղեկը նրան վերջին նստարանին էր նստեցրել, այդտեղից էր «հսկում» դասարանի կարգ ու կանոնը: Իսկ դասամիջոցներին աղջիկներին էր երբեմն սաստում. «Ձեզ համեստ պահեք»:

«Ոչինչ, որ բարձր առաջադիմություն չունի, բայց երևում է, որ հայրենիքին արժանապատվորեն ծառայող զինվոր կլինի», – մտածում էին նրա մասին ուսուցիչները. այդպես էլ եղավ:

Յոթ տարեկանից հաճախել է Սյունիքի մարզի քիք-բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբը, մասնակցել մրցաշարերի, դարձել հանրապետության չեմպիոն: Ակումբի մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արա Սարգսյանը Յուրիին բնութագրեց որպես պարտաճանաչ, բարի կամեցող, աշխատասեր պատանի, ով մարզումների ժամանակ հետևողականորեն բարձրացնում էր իր տակտիկական և ֆիզիկական որակները:

2017-2018 թթ. սովորել է Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրի մասնագիտական (արհեստագործական) խմբի վարսավիրական բաժնում: Մասնագիտություն ստանալուց հետո 2019 թ. հուլիսի 5-ին զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Մարտունու զորամասում՝ հրետանավոր: Զինակից ընկերները նրան Մոնթե էին անվանում՝ մարդկային տեսակով և ազգասիրությամբ նմանեցնելով Մոնթե Մելքոնյանին:

2020 թ. սեպտեմբերի 27-ից ակտիվորեն մասնակցում էր մարտական գործողություններին: Ավա՜ղ, մարտերից մեկը վերջինը եղավ զինվորի համար: Բայց որքա՜ն նպատակներ ուներ նա, նվիրական երազանքներ, որոնք այդպես էլ մնացին չիրականացած...

Ընկերներն անմար են պահում նրա հիշատակը, մասնավորապես՝ քիք բոքսինգի «Գարեգին Նժդեհ» ակումբի սաները: Վերջերս նրանք մասնակցեցին Արցախի քիք-բոքսինգի ակումբային առաջնությանը: Կապանցի 10 մարզիկից յոթը դարձավ հաղթող. հաղթանակը նվիրեցին ակումբի նախկին սան Յուրի Ալևորյանի հիշատակին:

Կապանի «Ակումբագրադարանային միավորում» ՀՈԱԿ-ի էլեկտրոնային գրադարանում տեղի ունեցավ հիշատակի միջոցառում նվիրված Յուրի Ալևորյանի հիշատակին:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Մարտական խաչ» 1-ին աստիճանի, «Արիության», ինչպես և «Կապան» մեդալներով:

Աղաբեկյան Միեր Զարմոյի

2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակ նույնպես կամավոր մեկնել է ռազմաճակատ: Չվախենալով իր կյանքի համար՝ դարձել է կենդանի թիրախ, որպեսզի մեր զինվորները մոլորության մեջ գցեն և ոչնչացնեն թշնամու դիպուկահարին:

Ծնվել է 1972 թ. դեկտեմբերի 25-ին Կապան քաղաքում: Հաճախել է Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցը, ապա սովորել Կապանի պրոֆտեխ ուսումնարանում: Աշխատել է Կապանի տրիկոտաժի ֆաբրիկայի կարի արտադրամասում՝ որպես մեխանիկ:

1992 թ. զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Մեղրիում: Արցախյան առաջին պատերազմի ժամանակ վիրավորվել է ուսից: Ապաքինվելուց հետո կրկին մեկնել է ճակատ:

2016 թ. քառօրյա պատերազմի ժամանակ նույնպես կամավոր մեկնել է ռազմաճակատ: Չվախենալով իր կյանքի համար՝ դարձել է կենդանի թիրախ, որպեսզի մեր զինվորները մոլորության մեջ գցեն և ոչնչացնեն թշնամու դիպուկահարին: Բարեբախտաբար, մեր դիպուկահարն ավելի արագ գործեց:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հաջորդ օրը, առանց վարանելու, Միերը կամավորագրվել և մեկնել է մարտի դաշտ:

Հոկտեմբերի 22-ին զոհվել է Հադրութում՝ փրկելով զինակից ընկերոջը:

Իր և երկու զինակից ընկերների պատվին Երևանի Հաղթանակ զբոսայգու հարևանությամբ կառուցվել է հուշակոթող:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Հուղարկավորված է Եռաբլուրում:

Խիզախության և արիության համար հետմահու պարգևատրվել է «Տիգրան Մեծ» շքանշանով, «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Անդրեասյան Գոռ Ռոբերտի



Ծնվել է 2000 թ. սեպտեմբերի 24-ին Կապան քաղաքում:

Պաշտում էր իր ծննդավայրը, համեստ, քչախոս պատանին գովեստներ չէր խնայում, երբ խոսքը հայրենի բնօրրանին էր վերաբերում: Սովորել է Կապանի թիվ 2 ավագ դպրոցում: Մաթեմատիկան նրա տարերքն էր, հոբբին, զբաղմունքը. ազատ ժամանակը նվիրում էր տրամաբանական խնդիրների լուծմանը: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» բաժինը:

2019 թ. զորակոչվել է բանակ, ուսումնական շրջանն անց է կացրել Լուսակերտի զորամասում, ապա՝ որպես հակատանկային մարտկոցի ավագ օպերատոր, տեղափոխվել է Արա լեռան զորամաս:

Խելացի, համեստ, մաթեմատիկական հիմնավոր ունակություններ ունեցող կրտսեր սերժանտին հրամանատարական անձնակազմը շուտ նկատեց, հաշվարկները կատարում էր անսխալ, գերազանց տիրապետում էր զենքին:

2020 թ. սեպտեմբերի 27-ը նաև Գոռի եղբոր ծննդյան օրն էր. երեկոյան զանգահարել էր տուն, հանգստացրել տնեցիներին՝ ասել, թե ամեն ինչ լավ է: Հետագայում ևս, հնարավորության դեպքում, զանգահարում էր, խոսում, մխիթարում:

«Այնքան հանգիստ էր խոսում, որ չէինք կարող պատկերացնել, թե ինչ օրեր է ապրում, ասում էր. «Գիտե՞ք՝ ինչքան ցեպավոր ենք խփել», հետո վիրավոր ընկերներից ենք իմացել, թե ինչ ծանր ու թեժ մարտերի է մասնակցել», – արցունքներն աչքերին պատմում է մայրը:

Հոկտեմբերի 10-ին ընկերների հետ ընկել էր շրջափակման մեջ. ծնողներին հայտնել էին, որ զոհվել է, բայց մարմինն ամիսներ անց միայն գտնվեց:

Գոռը զոհեց ամենաթանկը հայրենիքին՝ մեզ թողնելով իր ու ընկերների արյամբ սրբագործված հողն ազատ պահելու պատգամը...

2021թ. փետրվարի 1-ին հաստատվեց ԴՆԹ-ի թեսթի պատասխանը: 2021թ. փետրվարի 6-ին հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Անտոնյան Արտեմ Վլադիմիրի

Ծնվել է 1978 թ. փետրվարի 8-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 9 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Քարվաճառում:

Արտեմը կամ ինչպես նրան մտերիմներն են անվանում՝ Արտյոմը, չէր աշխատում, Կավարտում էր բնակվում: Մայրը՝ տիկին Լյուսյան, ով որդու զոհվելուց հետո մենակ է մնացել (ամուսինը մեկ տարի առաջ էր մահացել), հուզմունքից խեղդվող ձայնով պատմում է, որ որդին պատերազմ գնալուց առաջ ներողություն է խնդրել՝ իրեն ժառանգ չթողնելու համար. *«Կարծես՝ ինչ-որ բան էր զգում, ինքը միշտ սարերում էր, բնությունը շատ էր սիրում, մեր հայրենիքն էլ էր շատ սիրում, մահից չէր վախենում, ընդհանրապես ոչնչից չէր վախենում, թե մտքով ինչ անցավ այդ պահին, որ այդպիսի բան ասաց, չգիտեմ»:*

Արտեմի զոհվելու հանգամանքներն ընկերը՝ Արտաշես Զաքարյանն է ներկայացնում. *«Արտյոմի հետ միշտ միասին ենք եղել, հարազատ եղբայրների պես ենք եղել: Երբ իմացավ, որ գնում եմ Ջրական, եկավ ու Գորիսում միացավ ինձ՝ որպես կամավոր: Պատերազմի դաշտում Արտյոմի նման ընկեր ունենալը բախտավորություն է: Արտյոմը շատ վիրավորների է օգնել, ամենածանր պայմաններում, անգամ դուրս է բերել վիրավորներին: Արտյոմի ու մի քանի ընկերների հետ շրջափակման մեջ գտնվող զինվորներ գտնելու նպատակով մտել ենք Ջրականի արդեն գրավված հատվածները: Նա պատրաստակամ էր կատարելու ցանկացած աշխատանք. եթե պետք էր դիրքերից իջնել ջուր, սնունդ կամ զինամթերք բերելու, առանց մի վայրկյան հապաղելու, առանց երկմտելու գործի էր անցնում: Չարաբաստիկ հոկտեմբերի 14-ին՝ կեսօրից հետո, ժամը 2-ն անց էր, Ջրականում՝ հենց այն խրամատի վրա, ուր ես էի, երեք արկ ընկավ: Արտյոմը մեզանից մի փոքր այն կողմ էր. երբ տեսավ, որ իմ խրամատն են արկակոծում՝ իր խրամատից դուրս եկավ՝ համոզվելու, որ ինձ հետ ամեն ինչ նորմալ է: Չորրորդ արկն ընկավ նրանից մի քիչ հեռու: Արկի պայթյունից Արտյոմը վիրավորվեց: Վերքն ազդրի վրա էր, շատ ուժեղ արյունահոսություն սկսվեց: Փորձեցի առաջին օգնություն ցույց տալ՝ ազդրը կապեցի գոտիովս, քանի որ ժգուտ չունեինք: Երկու ընկերս ու ես Արտյոմին 2-3 կմ բերել ենք՝ մեքենա գտնելու հույսով, արդեն «Ուրալին» էինք հասնում, երբ Արտյոմն ասաց, որ շունչը կտրվում է, փորը տաքանում, հասկացա՝ ներքին արյունահոսություն ունի: Հասցրինք մեքենային, բայց արդեն մահացել էր»:*

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայություն» մեդալներով:

Ավանեսյան Արեն Արամի

Արենն իր կյանքի 20 տարում շատերի հարյուր տարվա կյանքի չափ հասցրեց ապրել: Նրան կարելի էր հանդիպել ամենուր՝ դպրոցի առօրյայում, հասարակական կազմակերպությունների ճամբարներում, «Impact» ծրագրի դասերը վարելիս, ականահանման դասընթացներին, ջերմոցում, ընտանեկան բիզնեսի հաշվապահությունն անելիս կամ վաճառքի հարցերով զբաղվելիս, բասկետբոլ և ֆուտբոլ խաղալիս, գյուղի երիտասարդական կյանքը կազմակերպելիս...

Ծնվել է 2000 թ. նոյեմբերի 3-ին Կապան համայնքի Դավիթբեկ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ֆիզիկայի բաժին (անվճար): Մայրը փայփայում է բազմաթիվ գովասանագրերը, պատվոգրերն ու մեդալները: Սպորտը նրա տարերքն էր՝ զբաղվում էր արևելյան մարզաձևերով, դեղին գոտի ուներ...

Զորակոչի ժամանակ կամավոր է ընտրում ծառայության վայրը՝ Արցախ:

Բանակում նորակոչիկ Արենը տարբերվում էր գիտելիքներով, կազմակերպվածությամբ ու լրջությամբ: Հրամանատարության բնորոշմամբ՝ Արենն օժտված էր սպայի բոլոր հատկանիշներով: Պատրաստված, բացառիկ հայրենասեր սերժանտ էր, նրան էր վստահված դիրքի ավագ լինելու պատասխանատու պարտականությունը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախում սկսված պատերազմի առաջին օրվանից առաջնագծում էր, ջոկի հրամանատար Արենը կանգ չէր առնում... Ոգևորվում էր հաջող գրոհներով, բայց չէր կորցնում զգոնությունը:

Ծառայության ընթացքում մայրը շատ էր խնդրել, որ արձակուրդ տան, հրամանատարները չէին թողել՝ «Արենն անփոխարինելի է, չենք կարող արձակուրդ ուղարկել»:

...Նոյեմբերի 9-ին զոհվեց Հադրութի զորամասի անփոխարինելի սերժանտը: Զոհվեց՝ հարազատներին թողնելով հայրենի գյուղը չլքելու և շենացնելու պատգամը...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» և «Կապան» մեդալներով:

Ավանեսյան Բորիս Վարուժանի

Ծնվել է 1990թ. փետրվարի 8-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 9, ապա՝ թիվ 10 դպրոցներում, ավարտելուց հետո ընդունվել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ:

2008թ. զորակոչվել է բանակ, ծառայել Գորիսի զորամասում:

2016թ. ամուսնացել է, ունի երկու երեխա:

Աշխատում էր Կապանի լեռնահարստացման կոմբինատում:

Բորիսը ծնողներ չուներ: Հայրը մահացել էր, երբ ինքը փոքր էր, մորն օձն էր խայթել Արցախ գործուղման ժամանակ. Կապանի զորամասում խոհարար էր աշխատում տիկին Արմինեն և զորքին կերակրելու համար էր Արցախ մեկնել:

Բորիսի մասին կինը՝ Մարիամն է պատմում.

«Շատ գեղեցիկ սիրո պատմություն ենք ունեցել: Բորիսը կյանքում բազմաթիվ դժվարություններ էր տեսել, 22 տարեկանում որբացել էր: Շտապում էր երջանիկ լինել: Համատեղ կյանքի սկզբում զգացվում էր այդ շտապողականությունը. երեք ամսվա ընթացքում նշանադրվեցինք ու հարսանիք արեցինք: Ծնվեց մեր աղջիկը, ում նրա վաղամեռիկ մայրիկի անունով՝ Արմինե կոչեցինք: Տղայիս էլ նրա հայրիկի անունով Վարուժան ենք կոչել:

Իսկապես երջանիկ էինք... 2020 թ. սեպտեմբերի 1-ին նշեցինք տղայիս մեկամյակը, 27-ին սկսվեց պատերազմը: Երբ ստացավ զորահավաքի ծանուցագիրը, խնդրեցի չգնալ, զինկոմիսարիատում ասել, որ երկկողմանի ծնողազուրկ է, ասաց՝ ճակատագրի դեմ պայքարել չի կարելի ու գնաց: Նրան Ֆիզուլի (Վարանդա) էին տարել: Զոհվելու օրը պիտի վերադառնար՝ հերթափոխ էր: Ականատեսները պատմում են, որ մի քանի հոգու կյանք է փրկել իր կյանքի գնով: Մարմնում 38 բեկոր կար:

Բազմաթիվ նպատակներ ունեինք, հիմա այդ նպատակներից յուրաքանչյուրը պիտի ի կատար ածեմ...

Նա չափազանց համեստ էր, բոլորը կվկայեն, որ շրջապատում որևէ մեկին չի նեղացրել: Կյանքը նրան շատ անգամ էր հարվածել, բայց չէր կոտրվել, ընդհակառակը՝ տարիքի համեմատ շատ հասուն և ուժեղ մարդ էր դարձել, ով վստահություն էր ներշնչում: Մենք գիտենք, որ հայրենիքը պաշտպանելը նրա ընտրությունն էր, գիտենք նաև, որ այս կյանքում նրա նպատակը, սերը, ուրախությունն ու երջանկությունը մենք էինք...»:

Բորիս Ավանեսյանը զոհվեց 2020 թ. հոկտեմբերի 15-ին:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ 2020 թ. հոկտեմբերի 18-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Ավետիսյան Մարտիկ Պապիշի

Ծնվել է 1960 թ. հուլիսի 2-ին Կապանի շրջանի Դավիթբեկ գյուղում, սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, ապա՝ Կապանի ավտոդպրոցում:

Ծառայել է խորհրդային բանակում:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Կամավոր մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին: Հայրենի գյուղը պաշտպանելը, այնտեղ ապրելն ու արարելը յուրաքանչյուր հայի, առավել ևս՝ սյունեցու պարտքն էր համարում: Եվ տեր էր իր համոզմունքին՝ ապրում ու արարում էր Դավիթբեկում, ու երբ Ադրբեջանը 2020-ի սեպտեմբերի 27-ին հարձակվեց խաղաղ Արցախի վրա, կրկին կամավորագրվեց:

Նրա մասին եղբորորդին՝ Վարդանն է պատմում. *«Հորեղբայրս ինձ իր երեխաներից չի տարբերել: Վարակիչ հայրենասեր էր, կարողանում էր ոգևորել շրջապատի մարդկանց, նրա կողքին ամեն ինչ հնարավոր էր թվում: Երբ արդեն Որոտանի (Կուբաթլի) մեծ մասն Ադրբեջանի վերահսկողության տակ էր, Դավիթբեկի պաշտպանությունը կազմակերպելու համար սկսեցինք խրամատներ փորել, որոնք հետո ինչ-որ բանավոր համաձայնությամբ հանձնվեցին թշնամուն: Դավիթբեկ գյուղի մոտ մի բարձունք կա, որը վիճելի է: Հոկտեմբերի 29-ի առավոտյան հորեղբայրս իմանում է, որ այդ բարձունքի մոտ ադրբեջանցիներ կան: Ինքն առաջ է ընկնում, թեժ կռիվ է լինում, որի ընթացքում էլ նահատակվում է: Հպարտ եմ, որ այդպիսի հորեղբայր եմ ունեցել, նրանով բոլորս ենք հպարտանում, նա այն օրինակներից է, որով պիտի դաստիարակվեն մեր երեխաները, մատաղ սերունդը պիտի իմանա, որ հայրենիքը կյանքից թանկ արժեք է:*

Չնայած նրան, որ հորեղբորս աճյունը հուղարկավորված է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում, մենք գյուղի ընտանեկան գերեզմանատանը հուշաքար ենք տեղադրել, քանի որ նա պաշտում էր իր գյուղը...»:

Մարտիկի մասին գյուղացիներն ակնածանքով են խոսում, *«Լավ հարևան էր, լավ մարդ, հարգալից ու հարգված, հայրենասեր, պատվախնդիր: Չի կարելի սեփական տնից փախչել վտանգի ժամանակ՝ հույս ունենալով, թե մեկ ուրիշը քո տունը քեզանից լավ կպաշտպանի: Դավիթբեկցիները՝ մի բռունցք դարձած, թե՛ առաջնագծում, թե՛ թիկունքում ամեն ինչ արել են, որ թուրքը Սյունիք չմտնի: Այս հողը սրբագործվել է նաև մեր ընկերների ու որդիների արյունով...»:*

Մարտիկ Ավետիսյանի ընտանիքն այսօր էլ բնակվում է Դավիթբեկում... Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Արիության» մեդալներով:

Արզումանյան Արեն Հովիկի



Ծնվել է Կապանում 2000 թ. հոկտեմբերի 11-ին՝ աշնանային ոսկեզօծ, բազում գույներով ներկված, բերքառատ աշնանը:

Շատ շարժունակ էր, ճկուն, հետաքրքրասեր… Դեռ մանկուց սիրում էր նկարել, քանդել իր իրերը, հեռախոսները և նորից մաս-մաս հավաքել: Հաճախում էր գեղարվեստական մարմնամարզության, հետո՝ բռնցքամարտի, կարատեի խմբակ…

Դեռ հինգ տարեկանը չբոլորած՝ Գյումրիում մասնակցեց մրցույթի և արժանացավ դիպլոմի:

Հաճախեց թիվ 1 միջնակարգ դպրոցը, հետո՝ չորրորդ դասարանից, տեղափոխվեց թիվ 3 միջնակարգ դպրոցն ու այնտեղ էլ ավարտեց 12-րդ դասարանը:

Բոլոր առարկաներն էլ սիրում էր, բայց ավելի շատ՝ ֆիզիկան և աստղագիտությունը:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց Երևանի պետական համալսարանի «Տեղեկատվական տեխնոլոգիա» բաժինը: Առաջին կուրսը դեռ չավարտված՝ զորակոչվեց հայկական բանակ: Սկզբից ծառայում էր Երևանում: Կրտսեր սերժանտի կոչում ստանալուց հետո տեղափոխվեց Վարդենիսի Կարճաղբյուրի զորամաս:

Գնդի կապի մասնագետն էր, միաժամանակ՝ ջոկի հրամանատար: Շատ լավ տիրապետում էր տեխնիկային, որի համար արժանացել էր ՊՆ-ի խրախուսանքների:

Նորից եկավ աշունը… Մոլեգնեց երկիրը, հայկական լեռնաշխարհում կուտակվեցին սև ամպերը: Բոլորեցին հազարավոր հայորդիների քսանամյակներ, այդ թվում նաև Արենի… Կատաղած թշնամու հրետակոծությունների ժամանակ նա գտնվում էր Քարվաճառ կոչվող տարածքում՝ Օմարի լեռներում: Այնտեղ՝ հոկտեմբերի 11-ին, բոլորեց 20-ամյակը… 18 օր շարունակ կատաղի մարտերի մեջ գտնվելով, իր բնավորության համաձայն, խնդրել է հրամանատարին՝ անցնել հրետանավորների մոտ: Փոքրամարմին հսկան հրետանային համազարկով ոչնչացրեց թշնամու 18 տանկ: Թշնամին չկարողանալով հակահարված հասցնել մեր տղաներին՝ սկսեց օգտագործել կործանիչներ՝ ռմբակոծելով տարածքը:

Հոկտեմբերի 14-ի անիծված աշնանային իրիկնամուտն էր, երբ…

Արեն Արզումանյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով, «Կապան» հուշամեդալով, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի մեդալով:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Արթին Քրիստափոր Անդրանիկի

Ծնվել է 1972 թ. հունվարի 16-ին Լիբանանում: Նախնական կրթությունը ստացել է Բուրջ Համուդի Սեն Կրեկուար վարժարանում:

1986 թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Տորոնտո՝ Կանադա, և ուսումը շարունակել Կանադայի բարձրագույն վարժարանում:

1991 թ. անդամակցել է ՀՅ Դաշնակցությանը:

ՊԲ Շուշիի առանձին հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Արցախի Հանրապետության համար մղված մարտական գործողություններին. 1993 թ. հունիսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը՝ Մարտակերտի, Աղդամի և Կովսականի (Զանգելանի) շրջաններում, 1994 թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 12-ը՝ Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում, հրադադարից հետո՝ մինչև 1995 թ. հունիսը՝ Մարտակերտի շրջանի Կարմիրավան-Ջրաբերդ-դաշտային կայան-Մարտակերտ տեղամասի պաշտպանությանը:

2011-ի օգոստոսին կնոջ՝ Գայանեի և դստեր՝ Արազի հետ, վերջնականապես տեղափոխվել է Հայաստան՝ բնակություն հաստատել Կապան քաղաքում:

Սեպտեմբերի 27-ին, երբ Ադրբեջանը սանձազերծեց պատերազմ, նա Երևանում էր: Անդամագրվեց «Կամավորական շարժում» ՀԿ գումարտակի 2-րդ վաշտին, մի քանի օր մասնակցեց զինավարժություններին ու իր մարտական ընկերների հետ միանգամից մեկնեց առաջնագիծ:

Հոկտեմբերի 2-ին վաշտը մեկնեց Արցախ և անմիջապես ընդգրկվեց Վարանկաթաղի (Լուլասազ) բարձունքի շրջանում ընթացող մարտական գործողություններին:

2020 թ. հոկտեմբերի 6-ին հերոսաբար զոհվեց Մարտակերտի շրջանի համար մղված մարտերի ժամանակ՝ կյանքի գնով պաշտպանելով Վարանկաթաղի (Լուլասազ) բարձունքը: Այդժամ հայրենիքը կորցրեց լավագույն հայերից մեկին, այն մարդուն, ով չէր ծնվել հայրենիքում, բայց հայրենիքը ծնվել էր իր մեջ:

Հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, «Մարտական ծառայության» մեդալով:

Բեգլարյան Ալեն Եղիշի

Ծնվել է 2000 թ. փետրվարի 1-ին Կապան քաղաքում: Տան կրտսեր որդին էր: Դեռ մանկուց նրա մեջ ձևավորվել էր զինվոր դառնալու ցանկությունը, և մեծ սեր ուներ դեպի զինվորական համազգեստը:

2006 թ. ընդունվում է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, ապա ուսումը շարունակում Ձագեձորի միջնակարգ դպրոցում և ավարտում 2017 թ.: Դպրոցում սովորելու տարիներին անդամակցում է Երկրապահ կամավորական միությանն ու երդվում, որ կլինի հայրենիքի նվիրյալ զինվոր:

2018 թ. հուլիսի 8-ին զորակոչվում է հայոց բանակ: Ծառայությունն անց է կացնում Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մատաղիսի զորամասում: Երկու տարի անց է կացրել սահմանի առաջնագծում: Հրամանատարության կողմից պարգևատրվել է պատվոգրերով, շնորհակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքանշանով: Զորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Զորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուզում գնալ, բայց իրենց ջոկատին կցագրեցին սահմանամերձ Դավիթբեկ գյուղի ինքնապաշտպանությանը:

Ասաց՝ *«Մամ ջան, ես պետք եմ Արցախին, այնտեղ եմ ծառայել, ամեն մի թուփն ու քարը գիտեմ: Իմ նմանների կարիքը կա Արցախում»*, – հիշում է Ալենի եղբոր կինը՝ Աստղիկ Ոսկանյանը:

Հերթափոխով էր ծառայում, տուն էր գալիս ու նորից գնում ծառայության: Ներքուստ մտահոգ էր, բայց արտաքուստ ցույց չէր տալիս: Ոչ մեկին չէր հայտնում, թե ինչ է կատարվում: *«Ասում էր՝ կներեք, ռազմական գաղտնիք է, բայց լավ է լինելու, դրանք չեն մտնի մեր հողերը»*, – հիշում է Աստղիկը:

Նոյեմբերի 8-ին հերթափոխի էր, տնից առավոտը գնաց Դավիթբեկ ու այդ օրն էլ զոհվեց: Թշնամու արկը հարվածել էր նրանց խրամատին:

Ալենն ընդամենը 20 տարեկան էր: Նա դասվեց այն քաջորդիների շարքը, ովքեր իրենց կյանքը զոհեցին հանուն հայրենիքի, հանուն վաղվա օրվա…

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» հուշամեդալով:

Գարակյան Սեյրան Գրիշայի

Ծնվել է 1973 թ. դեկտեմբերի 2-ին Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Հերհեր գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա Ստեփանակերտի ավտոդպրոցում:

1992-94 թթ. կամավորագրվել է ու մասնակցել Արցախյան առաջին պատերազմին, ստացել ոտքերի և մեջքի ծանր վիրավորում:

1996-98 թթ. ծառայել է Արցախի հատուկ նշանակության զորքերում:

2016-2020 թթ. աշխատել է Կապանի «Ապառաժ մայնինգ» ընկերությունում:

Կամավոր մասնակցել է Ապրիլյան պատերազմին, նույնիսկ ռազմական գործողությունների ավարտից հետո շարունակել մնալ զինվորների կողքին, օգնել նրանց իր խորհուրդներով ու ներկայությամբ: Վերադարձել էր՝ հայ զինվորի անզուգական քաջությամբ հիացած ու հաղթանակի հանդեպ անսասան հավատով լցված:

Ամուսնացած էր, ունի երեք որդի:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Սեյրան Գարակյանը կամավորագրվեց առանց հապաղելու: Արցախը նրա տունն էր. նրա ծննդավայրը, նա գիտեր, թե որքան կարևոր է այդ հողը հայկական պահելը, մոտիկից էր ճանաչում թուրքին, գիտեր՝ ինչ վայրագությամբ է թուրքը հարձակվում անպաշտպան բնակչության վրա:

Նրան փորձել են հետ պահել՝ առողջական վիճակի մասին հիշեցնելով, բայց բարկացել էր. *«Տասնութ տարեկաններին չի կարելի մենակ թողնել ադրբեջանաթուրքական ոհմակի առաջ»:*

Մեկ ամիս Արցախում էր, չնայելով անցած պատերազմներից մնացած վերքերին, քայլելու դժվարություններին, չէր հրաժարվում ոչ մի հանձնարարությունից, հետ չէր կանգնում մարտական ոչ մի առաջադրանքից:

Նրա հետ մարտական ճանապարհ անցած ընկերները, գործընկերները, մարդիկ, ովքեր ծանոթացել էին հենց մարտադաշտում, Սեյրանին բնութագրում են բացառիկ դրական բառերով. *«Ընկերոջ համար կյանքը չէր խնայի և չխնայեց. զոհվել է ընկերոջ մարմինը դուրս բերելիս: Սեյրանի կողքին յուրաքանչյուր մարդ մի տեսակ ապահով էր զգում իրեն, գիտեր, որ մենակ չէ: Այո, յուրաքանչյուրս համոզված էինք, որ մեզ մենակ չի թողնի...»:*

Սեյրան Գարակյանը զոհվեց 2020 թ. հոկտեմբերի 26-ին՝ նահատակված ընկերոջ մարմինը մարտի դաշտից դուրս բերելիս:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ 2020 թ. հոկտեմբերի 29-ին: Պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայության» մեդալներով՝ հետմահու:

Գևորգյան Արմեն Հրանտիկի

Ծնվել է 1979 թ. նոյեմբերի 12-ին Կապանում: Հիմնական կրթությունը ստացել է Կապանի N 5 դպրոցում, ապա մեկնել Երևան՝ սովորել ռազմական վարժարանում: Վարժարանն ավարտելուց հետո օգնել է ծնողներին, փորձել թեթևացնել նրանց հոգսը՝ գյուղական աշխատանքների հիմնական բեռն իր վրա վերցնելով: 1997-99 թթ. ծառայել է հայոց բանակում:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

2020 թ. սեպտեմբերի 27... Կապանի գրեթե բոլոր տղամարդիկ մեկնեցին ռազմադաշտ, քանզի ամոթ էր ապրել Սյունիքում ու չպաշտպանել սեփական տունը. Արմենը ևս մեկնեց հայրենիքը պաշտպանելու:

Կինը պատմում է, որ զոհվելուց մի քանի օր առաջ ամուսինը տուն էր եկել, օղի խմել ու երկար, շատ երկար խոսել, նույնիսկ լաց էր եղել Արցախում ամեն վայրկյան դժոխային մահով զոհվող 18, 19, 20 տարեկան երեխաների համար: Կինը սարսափով էր լսել ամուսնուն, *խնդրել էր, որ էլ չգնա, ամուսինը բարկացել էր. «Դու չես տեսել, հեշտ ես խոսում, էդ երեխեքը մեղք են, թե կարամ մեկի փոխարեն ես մեռնեմ, էլի օգուտ է...»:* Մի քանի ժամ տանն էր մնացել, մի քիչ քնել էր ու մեկնել...

Մեկնելուց հետո մի քանի անգամ զանգահարել է, վերջին զանգը եղել է հոկտեմբերի 10-ին: Հարցին, թե ինչպե՞ս է, պատասխանել է, որ ինքը լավ է, որ կինը երեխաներին լավ նայի ու զգույշ լինի, որովհետև չգիտի, թե մի րոպե հետո ինչ կլինի...

Հոկտեմբերի 11-ին Արմենը զոհվել է, կինը չգիտի, թե ինչպես է եղել, բայց փաստում է՝ ամուսինն իր այնտեղ տեսածից ու ապրածից հետո շատ-շատ էր փոխվել, դժվար էր լինելու նրա համար ապրելը, որովհետև տպավորվող ու չափազանց մարդասեր տեսակ էր:

Արմենն իր կյանքը նվիրեց հայրենիքին, գուցե իր ցանկացածի պես մի 18, 19 կամ 20 տարեկանի փոխարեն է ընկել, գուցե՝ ոչ, բայց իր 13-ամյա որդին ու 11 տարեկան զույգ դուստրերն ապրելու են հավերժական կարոտով ու հերոսի զավակ լինելու հպարտությամբ:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայություն» մեդալներով:

Գրիգորյան Արամ Սամվելի

Ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 5-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 6 հիմնական դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժին:

Ընտանիքի կրտսեր որդին էր՝ փոքրամարմին, բնավորությամբ՝ կենսախինդ, մարդկային հարաբերություններում՝ ընկերասեր ու կամեցող: Ուսման մեջ առավել հակված էր դեպի տեխնիկական առարկաները, միշտ ցանկացել էր շուտ ավարտել զինծառայությունն ու հմտանալ ծրագրավորողի մասնագիտության մեջ:

Չորս ամիս սովորելուց հետո՝ 2019 թ. հունվարի 23-ին, զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության. ուսումնական շրջանն անցկացրել է Գյումրիում տեղակայված N զորամասում: Ստանալով սերժանտի կոչում՝ տեղափոխվել է Պաշտպանության բանակի հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամաս:

Պատահում էր, որ կապվում էր հարազատների հետ, բայց երբեք ծառայությունից չէր խոսում: «Ամեն ինչ նորմալ է»,- սա էր նրա մշտական պատասխանն իրեն հարցեր տվողներին:

Սեպտեմբերի 25-ին իջել էին դիրքերից, 26-ին անընդհատ ուզում էր տեսակապ հաստատել ընտանիքի անդամների հետ, բայց չէր ստացվում: Սեպտեմբերի 27-ի առավոտյան եղբորը հաղորդագրություն էր թողել, որ բարձրանում են դիրքերը, այնտեղից կկարողանա կապվել: Բայց տեղ հասնելուն պես անհավասար մարտի մեջ են ընկել: Թշնամու տանկից արձակած արկը կտրել է 20 տարին տակավին չբոլորած երիտասարդի կյանքի թելը...

Սեպտեմբերի 30-ին կապանցիները խոր վշտով վերջին հանգրվան ճանապարհեցին Արամ Գրիգորյանին, ում աճյունը զինվորական պատիվներով ամփոփվեց Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Արցախյան երկու պատերազմում ընկած կապանցի ռազմընկերների կողքին:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Կապան», ինչպես և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի մեդալներով:

Գրիգորյան Էրիկ Սերգեյի

Ծնվել է 1983 թ. օգոստոսի 26-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցում: 1998-2001 թթ. ուսումը շարունակել է Կապանի թիվ 62 մասնագիտական տեխնիկական ուսումնարանում՝ հացագործ, խմորագործ մասնագիտությամբ: 2001-2003 թթ. ծառայել է հայոց բանակում՝ Արցախում, ծառայության ընթացքում արժանացել է պատվոգրերի և գովասանագրերի՝ օրինակելի և կարգապահ ծառայության համար: Զորացրվելուց հետո աշխատել է տարբեր բնագավառներում: Վերջին աշխատավայրը Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատն էր:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

2020 թ. սեպտեմբերի 27... Երեք օր հետո Էրիկը Ջրականի դիրքերում էր: Էրիկի մասին ընկերն է պատմում, ամիսներ անց էլ նրա ձայնը խզվում է ընկերոջ կորստի ցավից. *«Շատ-շատ նվիրված էր ընկերներին, պատերազմի ժամանակ էլ անհանգստանում էր բոլորիս համար, ինքը վտանգի մեջ էր, բայց մեր որպիսությունն էր հարցնում, օգնող, հասնող բնավորություն ուներ, չէր թողնի՝ ինչ-որ հարցում նեղվես, մեզ համար ծանր է նրա կորուստը, բայց ավելի ծանր է իր երեխաների համար, ոչինչ չի մխիթարի նրանց...»:*

Էրիկն Արցախից մի քանի ժամով տուն էր վերադարձել: Կինը պատմում է, թե շատ է համոզել, որ ամուսինը չվերադառնա Արցախ, խնդրել է՝ հաշվի առնել, որ երեխաները փոքր են, որ ինքը կդժվարանա մեկ և երկու տարեկան երեխաներին պատերազմական իրավիճակում մենակ խնամել, բայց ամուսինը հակադարձել է. *«Այնտեղ ավելի դժվար է, այնտեղ ամեն րոպե վիրավորվում են ընկերներս, նրանց մենակ թողնել չի կարելի...»:* Մի քանի ժամ հանգստանալուց հետո Էրիկը կրկին մեկնել էր Արցախ: Կինն անհանգստացել էր, աղոթել, անհաշիվ անգամ Աստծուց պաշտպանություն խնդրել ամուսնու կյանքի համար, սպասել, հուսացել...

Հոկտեմբերի 10-ին Ջրականում զոհվում է Էրիկը. որբանում է երեք հայ մանուկ, փլվում է հայկական մի օջախ ևս...

Հուղարկավորվել է հոկտեմբերի 15-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայություն» մեդալներով:

Գրիգորյան Կարեն Գեղեոնի



Հոկտեմբերի 16-ին՝ թեժ մարտերի ընթացքում, անօդաչու սարքից արձակված հրթիռի պայթյունը Կարենն իր վրա վերցրեց՝ փրկելով զինակից ընկերների կյանքը:

Ծնվել է 2001 թ. մայիսի 22-ին Կապան քաղաքում: Կրթությունը ստացել է Կապանի թիվ 5, ապա՝ Օխտարի միջնակարգ դպրոցներում: Ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Եվրոպական համալսարանի «Կառավարում» բաժինը:

Կյանքով լի, առույգ, բարի, ընկերասեր, խելացի, մեծ հոգու տեր էր: Դպրոցում սովորելուն զուգահեռ զբաղվել է կարատեով: Ուներ բազում գավաթներ, պատվոգրեր ու մեդալներ:

Կարենը հայոց բանակ է զորակոչվել 2020 թ. օգոստոսի 24-ին՝ 2-րդ կուրսից ուսումը կիսատ թողնելով: Ծառայել է Սոթքի զորամասում: 44-օրյա պատերազմի առաջին իսկ օրվանից մարտնչել է Քարվաճառում: Պատերազմի ժամանակ միշտ սպիտակ գլխարկ էր կրում, բոլորն ասում էին՝ սպիտակ գլխարկով տղան:

Աստվածասեր ու մեծ հավատքով էր Կարենը: Երբ գտան զոհված, գրպանում «Աստվածաշունչն» էր՝ արյունով շաղախված, որը վերադարձրել են մայրիկին:

Հայրենասեր ու քաջարի Կարենը տնեցիներին միշտ «դուխ» էր տալիս՝ ասելով՝ «մամ ջան, չվախենաս»:

Հոկտեմբերի 16-ին՝ թեժ մարտերի ընթացքում, անօդաչու սարքից արձակված հրթիռի պայթյունը Կարենն իր վրա վերցրեց՝ փրկելով զինակից ընկերների կյանքը:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Խիզախության և անձնուրացության համար հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով, Կապանի համայնքապետարանի կողմից՝ «Կապան» մեդալով:

Օխտարի միջնակարգ դպրոցում բացվել է անկյուն՝ Կարեն Գրիգորյանի հիշատակին:

Գրիգորյան Հայկ Գագիկի

Ծնվել է 1998 թ. հուլիսի 14-ին Քաջարանում: Ծնվելուց երեք ամիս անց հայրը մահացել է: Մոր միակ զավակն էր: Մանկությունն ու պատանեկությունն անցել են Կապան քաղաքում:

Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ: Ուսումը կիսատ է թողել և 2016-2018 թթ. ծառայել Սիսիանի զորամասում. արժանացել է բազմաթիվ շնորհակալագրերի, պատվոգրերի:

Ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է աշխատանքի ԶՊՄԿ-ում և միաժամանակ շարունակել ուսումը:

Հայկ Գրիգորյանը խիզախ, բարի, հայրենասեր, ընկերասեր, աշխատասեր ու կենսուրախ մարդ էր: Կիսատ թողնելով պլանները, աշխատանքը, ուսումը, սերը և իր երիտասարդ կյանքը՝ Արցախյան 3-րդ պատերազմի առաջին իսկ օրերից մեծ եռանդով ու հայրենասիրությամբ լծվել է հայրենի երկրամասի՝ Սյունիքի պաշտպանության սուրբ գործին:

Պատերազմական օրերին լավատեսորեն էր գնահատում իրավիճակը և հավատում էր մեր հաղթանակին: *«Մի օր ծնվել եմ, մի օր էլ պիտի մահանամ: Էլ ո՞վ պիտի պաշտպանի հայրենիքը, եթե ոչ ես: Մենք միշտ պարտք ենք մեր հայրենիքին»*, – անմահ մարտիկի՝ Հայկի խոսքերն են:

Նոյեմբերի 1-ին, երբ հերթական հերթապահության է եղել ընկերների հետ, դիպուկահար Մայիսը նկատել է հակառակորդի դիպուկահարին. այդ մասին հայտնել է Հայկին, ով էլ վազելով մոտեցել է՝ տեսնելու, սակայն հակառակորդի կրակն անմահացրել է նրան ու ընկերոջը: Դիրքապահ ընկերները մոտեցել են, որ օգնություն ցույց տան նրանց, բայց այդ նույն պահին անօդաչու թռչող սարքը հարվածել է խրամատին:

Նա երկնային արքայությունում է, իսկ հարազատներին ու ընկերներին թողել է վառ հուշեր: Գնաց, որ մենք ապրենք...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով, Կապանի համայնքապետի «Կապան» մեդալով և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի մեդալով:

Դանիելյան Էդվարդ Գառնիկի

Ծնվել է 1983 թ. հուլիսի 15-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցում: Հայրը՝ Գառնիկը, անժամանակ էր մահացել ու միակողմանի ծնողազուրկ Էդվարդը ծառայել էր Գորիսում:

Աշխատում էր Կապանի լեռնահարստացման կոմբինատում՝ մեքենավար:

Ամուսնացած էր, ունի երկու երեխա:

2006 թվականին էր ընտանիք կազմել, 13 տարի երիտասարդ ընտանիքը զավակ ունենալու մասին էր երազել, վերջապես իրականացել էր երազանքը՝ ծնվել էր որդին, և Էդվարդին ու Կարինեին թվում էր, թե աշխարհում ոչինչ չի կարող խանգարել իրենց երջանկությանը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսվեց պատերազմը. Էդվարդը վայրկյան իսկ չվարանեց՝ միացավ հայրենիքի պաշտպանությանը: Եղբայրը ցավով է հիշում այդ օրերը, երկուսն էլ առաջնագծում էին:

Հոկտեմբերի 18-ին եղբայրը պիտի իմանար բոթը՝ Էդվարդը զոհվել է, զոհվել է առանց իմանալու, որ Աստված իրենց ընտանիքին երկրորդ երջանկությունն է պարգևել, որ կինն իրենց երկրորդ զավակին է սպասում...

Կինը՝ Կարինեն, Էդվարդի անունն ամիսներ անց էլ հեկեկալով է արտասանում. *«Բառեր չկան, որ նկարագրեմ, նա լավագույն ամուսինն էր, լավագույն հայրն էր, լավագույն մարդն էր...»:*

Էդվարդի մարտական ուղու, զոհվելու հանգամանքների մասին սյունեցի մի այլ քաջ երիտասարդ՝ Ավետ Հակոբյանն է պատմում. *«Էդվարդի հետ ծանոթացել եմ սեպտեմբերի 28-ին Գեղիի դիրքերում, հոկտեմբերի 14-ին մեկնել ենք Արցախ, հոկտեմբերի 15-ի լուսաբացին ստացել ենք մարտական առաջին առաջադրանքը: Էդվարդի ժպիտն է մեջս տպավորվել ու անկեղծությունը... Նա ասում էր, թե վախենում է այս կյանքում կնոջն ու երեխային մենակ թողնել, ամբողջ ընթացքում իր ընտանիքի մասին էր մտածում: Հոկտեմբերի 17-ի գիշերը «մարտի» հրամանից հետո դուրս եկանք, որ դիրքավորվենք, բայց թշնամու անօդաչուներն անմիջապես սկսեցին ռմբակոծել: Արկերից մեկն Էդվարդին շատ մոտ ընկավ, նա աչքիս առաջ զոհվեց: Այդ ցավը մոռանալ կամ սփոփվել չի լինի...»:*

Աճյունը զինվորական պատիվներով հողին է հանձնվել հոկտեմբերի 20-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու արժանացել է «Կապան» և «Մարտական ծառայության» մեդալների:

Կարինեի ու Էդվարդի կրտսեր որդին լույս աշխարհ է եկել հունիսի 9-ին, նրան հերոսացած հայրիկի անունով են կոչել՝ Էդվարդ Էդվարդի Դանիելյան:

Թումանյան Գրիշա Նորայրի



Ծնվել է 1999 թ. դեկտեմբերի 5-ին Կապան քաղաքում, սովորել է թիվ 7 հիմնական դպրոցում:

Ուսուցիչները նրան բնութագրում են որպես քնքուշ, երաժիշտներին ու արվեստագետներին հատուկ հոգի ունեցող զգացմունքային պատանու:

Պարտադիր զինվորական ծառայությունն անցկացրել է Նոյեմբերյանում. լավ զինվոր էր՝ զուսպ ու հարգալից բնավորությամբ, խաղաղասեր, բայց պատվախնդիր, սկզբունքներ ուներ, որոնց նկատմամբ ոտնձգություններ չէր հանդուրժում: Երեք որդիներից ավագն էր Գրիշան, մանկության տարիներին էլ լուրջ ու խոհուն էր, երիտասարդ տարիքում ավելի ընդգծվեց նրա ինքնուրույնությունը: Բանակից զորացրվելուց հետո ընտրեց զինվորականի ճանապարհը՝ ծառայության անցավ ՀՕՊ զորքերում, ծնողները դեմ էին, բայց 20-ամյա երիտասարդն իր հիմնավորումն ուներ. *«Ծառայելու եմ երկրիս, կարևոր գործ եմ անելու, ուզում եմ բարձրանալ՝ գեներալ դառնալ...»:*

Գրիշան հրամանատարին պատմել էր իր նպատակների մասին, հրամանատարը խորհուրդ էր տվել բարձրագույն կրթություն ստանալ, երիտասարդն ընդունել էր խորհուրդը՝ դարձել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող:

2020 թ. սեպտեմբերի 27... Առաջնային թիրախները հակաօդային պաշտպանության միջոցներն էին: Գրիշան շատ տխուր էր՝ զոհվում էին իր ընկերները, Ադրբեջանը հայտնաբերում ու խոցում էր ՀՕՊ տեխնիկան, Արցախի ու Հայաստանի երկինքն անպաշտպան էր դառնում: Իր մտահոգությունները Գրիշան կարող էր բոլորից թաքցնել, բայց հոկտեմբերի 9-ին, երբ մի քանի րոպեով տուն էր եկել, հոր հետ անկեղծացավ. *«Վերջին անգամ ես ինձ տեսնում, պապ, մենք ենք մնացել...»:*

Անմահացել էր 21-ամյա երիտասարդը. հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուները խոցեցին Հայաստանի տարածքում տեղակայված հակաօդային պաշտպանության տեխնիկան՝ Գրիշան նահատակվեց...

Հուղարկավորված է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ կյանքը հայրենիքի պաշտպանության համար չխնայած մյուս կապանցիների կողքին:

Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայություն» մեդալներով:

Իսայան Վահրամ Վազգենի

Ծնվել է 1980 թվականի մարտի 3-ին Կապանի շրջանի Դավիթբեկ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: 1998-2000 թթ. ծառայել է հայոց բանակում:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

2014 թ. պայմանագրային ծառայության է անցել Կարմրաքարի, ապա Կապանի զորամասում:

2016 թ. Ապրիլյան պատերազմից հետո՝ մի քանի ամիս, զորամասի կազմում մնացել էր Արցախում. վերադարձել էր հուսավառ՝ *«Մերոնք ուժեղ են, մերոնց հաղթող չկա...»:*

2018 թվականից ծառայում էր Որոտանում (Կուբաթլի): Ամուսինները միասին էին աշխատում նույն զորամասում: Կինն արցունքախեղդ ձայնով է խոսում ամուսնու մասին՝ *«Վահրամը շատ ծանր էր տանում. ամեն օր վիրավորներ ու դիակներ էր իջեցնում, նույնիսկ հաց չէր կարողանում ուտել, քանի որ վատ էր զգում այդ անվերջանալի վշտից»:*

Ընկերները նրա մասին ափսոսանքով են պատմում՝ *«Մեքենան, որն ինքն էր վարում, այնքան անսարք էր, որ կարող էր չքշել, իր զոհվելու օրն էլ նահանջի հրաման կար, բայց Վահրամն ընդդիմացավ՝ չենթարկվեց հրամանին, գնաց, որ մերոնց դիակները չմնան, գնաց ու զոհվեց»:*

Համագյուղացիները Վահրամի մասին միայն լավն են հիշում, բայց չեն կարողանում խոսել, քանի որ ամիսներ անց էլ չեն հաշտվում իրենց բարի, կամեցող, բոլորին ամենուր և ամեն ժամ օգնող (իրենց բնութագրմամբ) ընկերոջ զոհվելու փաստի հետ:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան Վահրամը, ով Որոտանի զորամասում բուժկետի վարորդ էր, նախ՝ Գորիս է տեղափոխում զինծառայողների կանանց ու երեխաներին, ապա՝ վերադառնում զորամաս: Եվ սկսվում է մղձավանջը... Թանկ էր ամեն րոպեն, Վահրամի մեքենան ոչ մի անգամ կանգ չառավ՝ բուժանձնակազմին տանում էր առաջնագիծ, ինքը մի քանի րոպեում մարմիններն էր իջեցնում, վիրավորներին տեղափոխում...

Երբ հրետակոծությունը սաստկանում էր, դիրքեր բարձրանալը դժվարանում էր. մեքենան էր կարգի բերում, որ հանկարծ կյանքի ու մահվան ճանապարհին կանգ չառնի...

Հոկտեմբերի 15-ին անօդաչուի հարվածից զոհվեց Վահրամը՝ երեք երեխային ավանդելով իր զավակը լինելու վեհ կոչումն ու անդառնալի կարոտ...

Հուղարկավորվել է Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Լալաբեկյան Սերգեյ Սամվելի



«Կարոտում ենք, նստում ենք բոլորով, ասենք՝ գարեջուր ենք խմում, մեկ էլ մեկանից մեկն անպայման հիշեցնում է, որ Սերգեյը մեկ հետ չէ...»

Ծնվել է 1997 թ. ապրիլի 27-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 2 ավագ դպրոցում, ապա Սյունիքի տարածաշրջանային քոլեջում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արարատի զորամասում:

Մանուկ տարիքից զբաղվել է սպորտով, ուժերը փորձել տարբեր մարզաձևերում:

Ընկերները Սերգեյի մասին պատմելիս տխրում են՝ *«Կարոտում ենք, նստում ենք բոլորով, ասենք՝ գարեջուր ենք խմում, մեկ էլ մեզանից մեկն անպայման հիշեցնում է, որ Սերգեյը մեզ հետ չէ, հետո բոլորս սկսում ենք մի-մի բան մտաբերել, ափսոսալ, տխրել: Ինքը շատ լուրջ տղա էր, տարիքի համեմատ մի տեսակ շուտ մեծացած: Այնպիսի մարդ էր, ում կարող էիր դիմել ու համոզված լինել, որ չի մերժի: Պատերազմից հետո մենք էլ ենք փոխվել, շատերս ենք մասնակցել պատերազմին, շատ ընկերներ ենք կորցրել: Սերգեյին միշտ հիշելու ենք՝ որպես հերոսի և հրաշալի մարդու...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին մասնակցել է առաջին օրերից: Կռվել ու քաջաբար ընկել է Մատաղիսում հոկտեմբերի 19-ին:

Նահատակված Սերգեյ Լալաբեկյանի աճյունը զինվորական պատիվներով հողին է հանձնվել Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ հոկտեմբերի 21-ին:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Խաչատրյան Հովհաննես Վրեժի

Մի օր իմ դասարան մտավ արտահայտիչ աչքերով, վառ շրթունքներով, զարմանալի գրավիչ ժպիտով մի փոքրիկ: Ծանոթացանք, միանգամից յուրօրինակ երանգ հաղորդեց դասարանին, դարձավ բոլորիս սիրելին՝ մեր Հովոն: Անչափ բարի, սիրում էր երգել, հիանալի կատարում էր իր դերը բեմում, օգնում էր բոլորին...

Ների՛ր, տղաս, եթե ինչ-որ վարժություն կամ խնդիր լուծել եմ պարտադրել, ցանկացել եմ, որ ավելին սովորես, բայց ես քեզ ներարկել եմ սիրելու արվեստը, իսկ քեզնից ինձ է մնացել մի պտղունց բարություն: Անհնար է պատկերացնել, որ չկաս:

Հովհաննեսը ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 16-ին Կապանի Աշոտավան բանավանում: Թիվ 2 գիշերօթիկ դպրոցում առաջին դասարանն ավարտելուց հետո տեղափոխվել է Կապանի թիվ 1 դպրոց, ավարտել և կրթությունը շարունակել Կապանի ճարտարագիտական քոլեջում՝ կապի բաժնում:

2019թ. հունվարի 13-ին զորակոչվել է հայկական բանակ: Ծառայության անցավ Հադրութի առաջին պաշտպանական գնդում: Անմիջապես աչքի է ընկնում պարտաճանաչությամբ, տոկունությամբ, ֆիզիկական պատրաստվածությամբ: Գործուղվում է Հոկտեմբերյանի ռազմաուսումնական զորամաս, երկու ամիս հետո վերադառնում իր զորամասը՝ որպես սերժանտ: Անմիջապես կարգվում է դիրքի ավագ:

2020թ. սեպտեմբերի 27-ից պատերազմի առաջին գծում է հայտնվում: Հադրութի շրջափակումից դուրս գալով՝ անտառներով 50 կմ անցնելով՝ հասնում են Մարտունու շրջան, դիրքավորվում: Կարողանում են դիմագրավել և հետ շպրտել թշնամու ութ տասնյակից ավելի անդամ ունեցող ջոկատին: Պատերազմական թեժ իրավիճակում նրան նշանակում են դասակի հրամանատարի տեղակալ: Մարտերի ընթացքում ոտքից վիրավորվում է, սակայն չի թողնում դիրքը, ընկերներին:

2020թ. նոյեմբերի 10-ին, հրադադարի օրը, դիրքերի հրետակոծման ժամանակ, Հովիկը և հրամանատարը հերոսաբար զոհվում են...

Հայրը պատմում է, որ ուրախությամբ է զորակոչվել բանակ, նույնիսկ չի ասել վիրավորվելու մասին: Երբ հարցրել է, թե չի՞ վախենում, զարմացել է՝ ինչի՞ց պիտի վախենամ: Մարտական ընկերները պատմում են նրա խիզախության, ընկերասիրության մասին:

Հովհաննեսը լուսապսակ բարձունքներում է, միացել է հավերժի ճամփորդներին:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» մեդալով:

ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼԱՅԱՆ

Խաչատրյան Նորայր Արարատի

Ծնվել է 1979 թ. դեկտեմբերի 22-ին Կապանում: Միջնակարգ կրթությունը ստացել է Կապանի N 2 դպրոցում: 1996 թ. ընդունվել է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ, որն ավարտելուց հետո մեկնել է ծառայության, ծառայել Արցախում:

Զորացրվելուց հետո ընդունվել է աշխատանքի Կապանի լեռնահարստացման կոմբինատում՝ որպես ֆլոտատոր և իր աշխատասիրության ու գիտելիքների շնորհիվ հասել մինչև տեղամասի պետի պաշտոնին:

2013 թ. աշխատանքի է անցել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, նախ՝ հերթափոխի պետ, ապա՝ հարստացնող:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Սեպտեմբերի 30-ին Նորայրը ևս միացավ Արցախը պաշտպանելու մեկնող սյունեցիներին:

Կինը պատմում է, որ ամուսինը պատերազմ գնալուց մի քանի օր հետո տուն էր եկել՝ հոգնած ու հիվանդ, իր հորդորով գնացել էր հիվանդանոց. բժիշկները թոքաբորբ էին հայտնաբերել, կինը խնդրել էր, որ զինկոմիսարիատ ներկայացնի հիվանդության մասին տեղեկանքը և այլևս չգնա, բայց ամուսինը հակադարձել էր՝ *«Չեմ կարող՝ տղերքը մենակ են...»:*

Կինը նրա մասին խոսելիս չի կարողանում զսպել արցունքները, ամիսներ անց էլ չի հաշտվում, որ Նորայրը չկա, որ իրենց երեխաները պիտի անհայր մեծանան. *«Նրան նկարագրելն այնքան հեշտ է՝ բարի, հոգատար, խելացի, զուսպ, համեստ, եթե հայերենում կա բոլոր դրական հատկանիշները մեկ բառով բնորոշող բառ, դա իր համար է: Անթերի ու աննման մարդ իր տեսակով, ով կյանքում ամեն ինչի միայն իր խելքի ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ է հասել: Պարտաճանաչ և նվիրված էր ոչ միայն ընտանիքին, այլ նաև աշխատանքին, ինչի շնորհիվ էլ կարողացավ կայանալ:*

Նա ամենուր էր լավը՝ լավ որդի, ամուսին, հայր, եղբայր, ընկեր, հարևան, փեսա, աշխատակից...»:

Նորայր Խաչատրյանը զոհվել է հոկտեմբերի 11-ին Ջրականում՝ մարտական առաջադրանք կատարելիս...

Պատերազմն ընդհատել է ևս մի երջանիկ ընտանիքի պարտմություն՝ երջանիկ ընթացքը փոխարինելով ցավով, կսկիծով, կարոտով...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում...

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Խաչատրյան Շանթ Արսենի

2020 թ. աշնանային պատերազմի ընթացքում կռվել է Հադրութում, Ջրականում և Մարտունիում: Տուն կանգահարելիս միշտ վստահ էր խոսում, համոզված, որ հաղթելու ենք:

Ծնվել է 2001 թ. հունիսի 18-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի № 5 հիմնական և № 9 ավագ դպրոցներում: Վերջինս ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժինը: Յոթ տարի զբաղվել է կարատեով՝ մրցումներում զբաղեցրել մրցանակային տեղեր, իսկ 2011 թ. դարձել է Հայաստանի չեմպիոն:

2019 թ. անցել է պարտադիր զինվորական ծառայության: 2019 թ. հուլիսի 5-ին զորակոչվել է Հայոց բանակ:

Սկզբնական ծառայությունն անց է կացրել Գյումրիում, վեց ամիս հետո տեղափոխվել է Արցախի Հանրապետություն՝ Մարտունի-3 զորամաս՝ որպես կրտսեր սերժանտ: Ծառայության ընթացքում արժանացել է ՀՀ զինված ուժերի «Մարտական հերթապահության համար» մեդալի և «Լավագույն զինվոր-մարզիկ» կրծքանշանի:

Բարի, ընկերասեր, ժպիտը դեմքին պատանի էր՝ հոգատար ու հայրենասեր…

2020 թ. աշնանային պատերազմի ընթացքում կռվել է Հադրութում, Ջրականում և Մարտունիում: Տուն զանգահարելիս միշտ վստահ էր խոսում, համոզված, որ հաղթելու ենք: Վերջին զանգը նոյեմբերի 6-ին էր, ու այլևս նրա ձայնը լռել է… Անորոշ սպասումներից, տառապանքներից հետո 2021թ. մարտի 16-ին Շանթի դին գտել են Մեծամորի դիահերձարանում:

Զոհվել է նոյեմբերի 7-ին՝ Մարտունու շրջանի Կոհակ սարի բարձունքում: Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Կապան», ԼՂՀ «Մարտական ծառայություն», Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մեդալներով և ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Խլղաթյան Գառնիկ Էդգարի

Գառնիկ Խլղաթյանը ծառայում էր Քարվաճառում: Չանգահարել էր տուն և մեծ ոգևորությամբ պատմել մայրիկին, որ հաջող հանձնել է քննությունները և ուզում է հետախույզ դառնալ...

Ծնվել է 2001 թ. հուլիսի 28-ին Կապանում: Առաջին դասարանը հաճախել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցում, այնուհետև տեղափոխվել են Հադրութ, սովորել է Առաջամուղ գյուղի Հ. Եսայանի անվան միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվել է Կապանի պետական բժշկական քոլեջ: 2019թ. դեկտեմբերին զորակոչվել է ՀՀ զինված ուժեր: Ըստ քոլեջի տնօրեն Արաքսյա Սարգսյանի՝ Գառնիկը բանակ պիտի զորակոչվեր ուսումն ավարտելուց հետո: *«Բայց դիմում գրեց ու կամավոր զորակոչվեց բանակ: Ասաց՝ ծառայեմ, կգամ՝ կսովորեմ մի կիսամյակ էլ, ու պետական քննությունները կհանձնեմ: Ճակատագիր էր, երևի ներքուստ զգում էր, որ հայրենիքն իր կարիքն ունի»,* – ասաց տիկին Սարգսյանը: Գառնիկը ընտանիքի միակ զավակն էր, որ մնացել էր մոր խնամքին: Մայրը երկարամյա բուժքույր էր և Ջրականի զորամասում աշխատում էր բուժքույր: *«Պատմում էր, որ մայրն է իր մեջ սեր արթնացրել դեպի բուժական գործը: Գառնիկն էլ էր պատրաստակամ օգնել յուրաքանչյուրին»,* – հիշում է քոլեջի տնօրենը:

Գառնիկ Խլղաթյանը ծառայում էր Քարվաճառում: Չանգահարել էր տուն և մեծ ոգևորությամբ պատմել մայրիկին, որ հաջող հանձնել է քննությունները և ուզում է հետախույզ դառնալ:

2020 թ. սեպտեմբերի 27... Գառնիկն առաջիններից էր, որ իր վրա վերցրեց հարվածը: Հոիվեց՝ ցանկանալով փրկել ընկերների կյանքը...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով, Կապանի համայնքապետարանի «Կապան» մեդալով:

Խուդագուլյան Սեդրակ Սուլթանի

Ծնվել է 1971 թվականի հունվարի 22-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 6 դպրոցում, ապա Կապանի պրոֆտեխնիկական ուսումնարանում:

Բանակում չի ծառայել առողջական խնդիրների պատճառով:

Ամուսնացած էր, ունի չորս երեխա:

Սեդրակն ու Աննան 2012 թ. տեղափոխվել էին Արցախի Հանրապետության Իշխանաձոր գյուղ: Գյուղի նորակառույց տներից մեկն էլ բազմազավակ այդ ընտանիքին էր հատկացվել: Ամուսիններն ապրում էին իրենց վաստակածով, գոհ էին...

2020 թ. սեպտեմբերի 27... Սեդրակին զինկոմիսարիատում մերժել էին՝ հաշվի առնելով առողջական վիճակն ու բազմազավակ լինելը: Ինքը նեղացել էր. *«Ուրեմն թուրքը հարձակվի իմ տան վրա՝ ես նստեմ տանը, սպասեմ...»:* Միացել էր կամավորականներին ու մեկնել Ջրական: Սեպտեմբերի 30-ին նա ծանր վիրավորվում է, ընկերները փորձում են նրան բերել Իշխանաձոր, բայց Սեդրակը զգում է, որ իր վիճակը ծանր է ու խնդրում է իրեն թողնել այդտեղ:

Պատերազմից հետո Աննայի աշխարհը փուլ եկավ, հիմա կինը զավակներին թևի տակ առած այստեղից այնտեղ է գնում, քանի որ տունն ու ունեցվածքը մնացել են թշնամուն. *«Ես ամեն ինչ կորցրի, Սեթոն չկա, ինձ որևէ աջակցություն չեն տալիս, քանի որ մեր մտքով չի անցել ամուսնությունը գրանցել, մեր մեծ երեխային է միայն հայրություն ճանաչել, մյուս երեխաների ծնվելու ժամանակ Քաշաթաղում էինք, հեռավորության ու փաստաթղթային խնդիրների պատճառով երեխաներին իմ ազգանունով ենք գրել, որովհետև մտքովս չի անցել ու իր մտքով էլ չի անցել, թե նման բան կլինի: Սեդրակը ծնողներ չունի, որ կարողանային գումարը ստանալ ու օգնել մեզ: Երեխաներս առողջական խնդիրներ ունեն, հոգեբանական խնդիրների մասին էլ չեմ խոսում...»:*

Սեդրակի մասին Իշխանաձորի հարևանները ցավով ու ափսոսանքով են խոսում. *«Բարի, համեստ տղա էր, այնքան էլ լավ չէին ապրում, բայց ինքը հասնող, օգնող, երբեք որևէ մեկին չմերժող մարդ էր: Դժվար է պատկերացնել, որ Սեթոն չկա, ափսոս...»:*

Սեդրակին վերջին անգամ ծանր վիրավոր էին տեսել, հույս կար, որ փրկված կլինի, քանի որ մինչև 2021 թ. հունվար ամիսն անհայտ կորած էր համարվում:

2021 թ. հունվարի 31-ին ԴՆԹ հետազոտությունը փաստեց՝ Սեդրակ Խուդագուլյանը զոհվել է:

Աճյունն ամփոփված է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» մեդալով:

Ծատրյան Արամայիս Գագիկի

2016 թ. ապրիլյան պատերազմին կամավոր մասնակից լինելուց, հաղթանակի բերկրանքը ճաշակելուց հետո մի հաստատակամ որոշում էր ընդունել՝ դառնալ զինվորական, պայքարել իր փոքրիկ երկրի ամեն մետր հողի համար:

Ծնվել է 1987 թ. հունիսի 24-ին Կապան քաղաքում: Մինչև 5-րդ դասարանը հաճախել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոց: Ծատրյանների ընտանիքը տեղափոխվել է Ռուսաստանի Դաշնություն, երբ Արամայիսը պատանի էր:

Հետագայում նա վերադարձել է Հայաստան, ծառայել հայոց ազգային բանակում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արցախում՝ Եղնիկներ անունով հայտնի դիրքերում:

2016 թ. ապրիլյան պատերազմին կամավոր մասնակից լինելուց, հաղթանակի բերկրանքը ճաշակելուց հետո մի հաստատակամ որոշում էր ընդունել՝ դառնալ զինվորական, պայքարել իր փոքրիկ երկրի ամեն մետր հողի համար:

2019 թ. պայմանագրային ծառայության է անցել Գեղիի զորամասում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արամայիսը սկսված պատերազմի ամենաթեժ կետում էր՝ Ջրականում, հետո պիտի լիներ բազմաթիվ այլ տեղերում, ուր վիճակը ծանր էր, ուր իրական նվիրյալի կարիք կար:

Ընկերներն ափսոսանքով ու կարոտով են հիշում Արամայիսին, հպարտանում նրա հետ անցկացրած ժամանակի, նրան ճանաչելու համար. *«Մեզ թվում էր՝ անհնար էր, որ Արամայիսին վատ բան պատահի, նրա մեջ մի տեսակ առասպելական բան կար, մինչև այդ չարաբաստիկ նոյեմբերի 1-ը ադրբեջանցիներն անընդմեջ փորձել են վնասել նրան: Այդ օրը Դավիթբեկ գյուղի մոտ էինք, երբ խրամատում տեսա գլխից վիրավոր Արամայիսին, մոտեցա, որ օգնեմ, արդեն ուշ էր...»:*

Հայրը, ով վերադարձել էր Ռուսաստանից, նոյեմբերի 3-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում հուղարկավորեց հերոս զավակին:

«Իմ որդին տղամարդու պես է կռվել, տղամարդու պես է զոհվել... Ես նրան կյանք էի տվել, որը նվիրեց հայրենիքին...», – ասաց հայրը:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Հակոբյան Արեգ Աշոտի

Ծնվել է 1977 թ. սեպտեմբերի 17-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղի «Հաշվողական տեխնիկա» բաժնում:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Աշխատում էր «Կապան Էնեղժի» ՓԲԸ-ում՝ հերթափոխի պետ: Աշխատանքային ընկերների խոսքով՝ բոլորին հասնող էր. *«Եթե մեկին մի բան պետք էր լինում, չեղած տեղից ճարում՝ բերում էր: Շատ բարի սիրտ ուներ...»:*

43-ամյա կապանցի Արեգ Հակոբյանը սեպտեմբերի վերջին օրերին, երբ զինկոմիսարիատից ծանուցագիր եկավ, անմիջապես ներկայացավ: Բայց գնալը չէր ստացվում: Երեք անգամ տուն ուղարկեցին, ասելով՝ սպասիր, կկանչենք: *«Կանչեցին՝ գնաց... Պայծառ մարդ էր Արեգը, շատ հումորով, բոլորին ասում էր՝ ձեր հրամանատարն եմ, կգաք ինձ մոտ, որ կանչեմ»,* – պատմում է Արեգի քույրը՝ Թամարը: Վերջինիս խոսքով՝ եղբայրն այնքան հաջողակ էր եղել կյանքում, որ տնեցիների մտքով անգամ չէր անցնում, թե թշնամու գնդակը կարող է վնասել Արեգին, մտածում էին՝ հաղթանակած տուն կվերադառնա:

Հոկտեմբերի 3-ին գնաց: *«Ամեն օր ժամը 12.30-ին զանգահարում էր կնոջը՝ ասում էր լավ եմ, աղջիկներիս լավ նայի, մինչև կգամ»,* – պատմում է քույրը:

Մարտական ընկերը՝ Նորայրը, պատմում է, որ Արեգն իրենց ուրախությունն էր. *«Մեզ ասում էր՝ քնեք, ես պոստերը մենակ կպահեմ: Դուխով էր: Ամեն օր ասում էր՝ շուտով տուն ենք գնալու, չմտածեք»:*

Հենց Նորայրի աչքի առաջ՝ Ջրականում՝ հոկտեմբերի 13-ին, անօդաչուի հարվածից երեք ընկերների հետ զոհվեց Արեգը:

«Անունի նման լուսավոր էր, ախր հայկական դիցաբանության մեջ արևի աստծո՝ Արեգի անունն էր կրում եղբայրս, ինչո՞ւ այդպես եղավ, – պատմում է քույրը: – *Ուրեմն թող Արեգս վերջին զոհը լինի, թող ոչ մի քույր ու կին, մայր ու հայր, եղբայր, ամուսին ու որդի չկորցնեն»:*

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության», Կապանի համայնքապետարանի «Կապան» մեդալներով:

Հարությունյան Արման Ռադիկի

Ընդամենը մեկ ամսվա ուսանող էր, բայց արժանացել էր դասախոսների, կուրսընկերների հարգանքին: Արման Հարությունյանը սեպտեմբերի 29-ին արձագանքեց կորահավաքին:

Ծնվել է 1984 թ. հունիսի 24-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 5 հիմնական դպրոցում: 2002-2004 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ Տավուշի մարզի Բերդ քաղաքում:

Ամուսնացած էր, ունի երկու որդի:

Աշխատել է տարբեր բնագավառներում, նաև երկու տարի պայմանագրային զինծառայող եղել:

Երիտասարդ ընտանիքի հայրն աշխատանքին զուգահեռ սովորում էր, որ մասնագիտություն ստանալով՝ ընտանիքն ապահովեր բարեկեցիկ կյանքով (սովորել է Կապանի տարածաշրջանային քոլեջի «Օգտակար հանածոների հարստացում» բաժնում): Ընդամենը մեկ ամսվա ուսանող էր, բայց արժանացել էր դասախոսների, կուրսընկերների հարգանքին:

Արման Հարությունյանը սեպտեմբերի 29-ին արձագանքեց զորահավաքին: Զինվորական ծառայություն անցած հայորդին իր պարտքն էր համարել կանգնել հայրենիքի կողքին, լինել նրա զինվորը և մասնակցել մարտական գործողություններին:

Մեկնել են Սանասար (Կուբաթլի): Այնտեղ մնացել են շրջափակման մեջ: Արմանը շատ արագ կողմնորոշվեց, նրա օգնությամբ տղաները դուրս եկան ծուղակից:

Տուն էր վերադարձել շատ տխուր և հոգեբանորեն ճնշված:

Հոկտեմբերի 7-ին մեկնեցին Ջրական, ու ամենածանր օրերին մասնակցեց թշնամու դեմ մղվող անհավասար ու թեժ մարտերին և ձեռք բերեց անվեհեր զինվորի անուն:

Թշնամու սանձազերծած պատերազմը հոկտեմբերի 14-ին խլեց նաև Արմանի կյանքը:

Նա զոհվեց Ջրականում՝ անօդաչու թռչող սարքի հարվածից, շատերի պես ընկավ հերոսի մահով՝ հանուն Հայաստանի ու Արցախի, հանուն հայ ժողովրդի ապագայի:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Արիության» մեդալներով:

Հարությունյան Դավիթ Հրայրի



2020 թ. հուլիսին հայ-ադրբեջանական շփման գծի Տավուշ-Թովուզ հատվածում Ադրբեջանը հրահրեց զինված ռազմական բախումներ: Դավիթը պատվով հաղթահարեց բոլոր մարտական առաջադրանքներն ու փորձությունները:

Ծնվել է 2000 թ. հուլիսի 12-ին Կապանում: Հաճախել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը: 2018 թ. ընդունվել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բաժինը: Ուսումը կիսատ թողնելով՝ 2019 թ. ձմռանը զորակոչվեց բանակ, ծառայել է Իջևանի հակաօդային պաշտպանության զորամասում:

Վստահ էր՝ գալու և շարունակելու էր ուսումը…

Նա ծառայության մեջ էր, երբ 2020 թ. հուլիսին հայ-ադրբեջանական շփման գծի Տավուշ-Թովուզ հատվածում Ադրբեջանը հրահրեց զինված ռազմական բախումներ: Դավիթը պատվով հաղթահարեց բոլոր մարտական առաջադրանքներն ու փորձությունները:

Կարճ ժամանակ անց՝ սեպտեմբերի 27-ին, Ադրբեջանը սանձազերծում է պատերազմ Արցախում, որը ճակատագրական է դառնում Դավիթի համար: Նա էլի վստահ էր, որ հաղթանակելու ենք ու մի քանի ամիս հետո ինքը վերադառնալու է իր ընտանիքի գիրկը, բայց…

Ապրեց կարճ, բայց իմաստալից:

Դավիթը հերոսաբար ընկավ հոկտեմբերի 19-ին Ջրականի մոտակայքում:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի և «Կապան» մեդալներով:

Հարությունյան Դավիթ Յուրիկի

Ծնվել է 1961 թ. հոկտեմբերի 6-ին Կապանում: 1968 թ. հաճախել է Կապանի թիվ 6 դպրոցը, որն ավարտելուց հետո ընդունվել է պրոֆտեխուսումնարան՝ մասնագիտություն ստանալու նպատակով: Ծառայել է խորհրդային բանակում՝ ՌԴ Մուրմանսկ քաղաքում: Զորացրվելուց հետո աշխատել է Կապանի «Թունել» ՓԲ ընկերությունում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

1990 թ. Կապանի երկրապահ կամավորական ջոկատի կազմում ակտիվորեն մասնակցել է Կապանի շրջանի սահմանամերձ գյուղերի համար մղվող մարտերին: N զորամասի կազմում եղել է վաշտի հրամանատարի տեղակալ: Մարտական գործողությունների ժամանակ ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ՝ բեկորային, գանգուղեղային: Որպես գումարտակի հրամանատարի տեղակալ՝ ծառայել է մինչև 1997 թ.:

2016 թ. Դավիթ Հարությունյանը մասնակցել է քառօրյա պատերազմին:

2020 թ. սեպտեմբերին, երբ սկսվեց պատերազմը, Դավիթն առաջիններից էր, որ մեկնեց Արցախ՝ հայտնվելով մարտական գործողությունների ամենաթեժ կետերից մեկում:

Ցավոք, հոկտեմբերի 5-ին՝ Ջրականում մղված մարտերի ժամանակ, հրազենային մահացու վնասվածք է ստանում:

Դավիթ Հարությունյանն արժանացել է բազմաթիվ պատվոգրերի, շնորհակալագրերի:

Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած արիության համար պարգևատրվել է «Հայրենիքի պաշտպան», «ՀՀ զինված ուժեր. 20 տարի» հոբելյանական, «5-րդ բրիգադի 20 տարի» հոբելյանական, «Գարեգին Նժդեհ», «Մայրական երախտագիտություն», «Մարտական ծառայության» մեդալներով, «97-րդ առանձին մոտոհրաձգային բրիգադի 15-ամյակ» կրծքանշանով:

Հուղարկավորվել է 2020թ. դեկտեմբերի 20-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի, Կապանի համայնքապետի «Կապան» մեդալով:

Հարությունյան Զորիկ Արծրունի

Ծնվել է 2001 թ. մայիսի 8-ին Չարենցավան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 5, ապա՝ Գեղիի միջնակարգ դպրոցում:

Պատերազմից ամիսներ անց էլ ուսուցիչների աչքերն արցունքոտվում են Զորիկի մասին խոսելիս, նրան բնութագրելիս առանձնացնում հաստատակամությունն ու նպատակասլացությունը: Պատմում են, որ աշակերտ Զորիկը հայրենիքի ու հայրենասիրության մասին սեփական դատողություններն ուներ, պնդում էր, թե հայրենիքը սիրել՝ նշանակում է ապրել ու աշխատել հայրենիքում, իսկ բանակում ծառայելը նրա համար այլընտրանք չուներ, որովհետև համոզված էր՝ հայ տղան զինվոր լինելուց հետո միայն իրավունք ունի իրեն տղամարդ համարել:

Դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել էր բանակ, ծառայում էր Արցախում:

2020 թ. սեպտեմբերի 27… Միայն օրեր անց էին ծնողներն իմացել, որ Զորիկը վիրավոր է ու Սիսիանի հոսպիտալում է, շտապել էին նրան տեսակցելու, բայց չէին հասցրել, քանի որ նրան հետ էին տարել ռազմաճակատ:

Քույրը մորմոքվում է. «*Վերքերը չլավացած՝ հետ գնաց, ախր շատ փոքր էր, մեր ընտանիքի միակ տղան էր, ամիսներ անց էլ ուշքի չենք գալիս, չենք հավատում, սպասում ենք…*»:

Հադրութ վերադառնալուց հետո Զորիկը զանգահարել էր ծնողներին, ասել, թե իրենք Հադրութի անտառներում են, որ մոլորվել են… Կապն ընդհատվել էր: Հետո ամիսներ շարունակ Զորիկին ճանաչողներն արթնանում էին նրա մասին լուր իմանալու հույսով, քնում՝ նրա համար աղոթելով… Սպասումի երկար ու տանջալից ամիսներ, հույս, որն օրերի ու ամիսների հետ ավելի ու ավելի էր խամրում…

2021 թ. մարտի 14-ին ԴՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Զորիկ Հարությունյանը նահատակվել է…

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Զորիկի 20-ամյակից 5 օր առաջ՝ 2021 թ. մայիսի 3-ին, ծնվել է նրա քրոջ որդին, ով կրելու է հերոսացած մորեղբոր անունը:

Հարությունյան Ռուդիկ Ֆրունզիկի

Ծնվել է 1982 թ. հուլիսի 15-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում, ապա՝ թիվ 27 գիշերօթիկում: Ուսումն ավարտելուց հետո ծառայել է ՀՀ զինված ուժերում, զորացվելուց հետո՝ 2008 թվականին, աշխատանքի է ընդունվել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության ստորգետնյա տրանսպորտային հանքուղում: Հետագայում տեղափոխվել է լեռնային արտադրամաս և աշխատել խոր փորման հաստոցի մեքենավարի օգնական:

2008 թվականին ամուսնացել է, տեղափոխվել Քաջարան: Ունի երկու զավակ՝ որդի և դուստր:

«Հիանալի անձնավորություն էր, մարդամոտ, բարի և կարեկից: Կարելի է ասել սիրահարված էր կյանքին, ուշադիր և հոգատար ամուսին էր: Անում էր ամեն ինչ մերձավորների բարեկեցության, ընտանիքի կարիքների բավարարման համար», – պատմում է կինը՝ Արմենուհի Կոստանդյանը:

Մտերիմ ընկերոջ հետ ռազմաճակատ մեկնեց հենց սեպտեմբերի 27-ին: Գնդում ավտովարորդ էր:

Հոկտեմբերի 15-ի լուսադեմին առաջնագծում էին՝ Ջրականի աջ թևում: Այդ օրը մարտական մկրտություն ստացան՝ տալով առաջին մարտը թշնամու դեմ, որի ընթացքում ընկերը վիրավորվեց: Թշնամու անօդաչուի հարվածից շարքից դուրս եկավ նաև Ռուդիկի ավտոմեքենան…

«Ապշում ես, ինչպես էր հաղթահարում տեսողության հետ ունեցած խնդիրները, մթության մեջ անփորձանք վարում զինվորական «ՈՐԱԼ»-ը, որը նախկինում երբեք չէր վարել», – պատմում է ընկերը:

Հոկտեմբերի 18-ի չարաբաստիկ կեսգիշերին (իբր զինադադար էր հայտարարված), ոսոխը դավադրաբար անօդաչուներով, հրետանիով, զենքի այլ տեսակներով հրետակոծեց դիրքերը… Ունեցան զոհեր, վիրավորներ: Անմահացավ նաև 38-ամյա Ռուդիկ Հարությունյանը:

«Անսահման բարի էր, մարդամոտ: Ինչպես քաղաքացիական, այնպես էլ զինվորական կյանքում մնաց նույն մաքուր, համեստ, օրինակելի ու լավ մարդը: Ինքը հեշտությամբ կարող էր չգնալ առաջնագիծ, սակայն վճռականորեն մերժեց թիկունքում մնալու առաջարկությունը: Շատ եմ ցավում՝ հերոս տղա կորցրեցինք», – պատմում է գործընկերը՝ Սուրենը:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Հովհաննիսյան Հովհաննես Սմբատի

Ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 23-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցում, ավարտելուց հետո՝ 2018 թ. ընդունվել Կապանի պետական բժշկական քոլեջի «Դեղագործական գործ» բաժինը: 2015 թվականից սկսած՝ եղել է Կապանի «Պատանի երկրապահ» խմբի անդամ: 2019 թ. հունվարի 13-ից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության է անցել ՀՀ զինված ուժերում՝ Բերդ քաղաքում: Ծառայել է հետախուզության խմբում, իսկ վեց ամիս անց՝ ցուցադրելով իր բարձր մարտունակությունն ու գիտելիքները, ծառայությունը շարունակել է ՀՀ ՊՆ հատուկ նշանակության զորքերում: Զորամասի հրամանատարության կողմից արժանացել է «Հայոց բանակի գերազանցիկ», «Լավագույն զինվոր-մարզիկ», «Քաջարի մարտիկ» կրծքանշանների: Ճանաչվել է 2019-2020 թթ. ուսումնական տարվա լավագույն զինվոր:

Հետախույզ Հովհաննես Հովհաննիսյանը պատերազմի ամենաթեժ կետերում էր հենց առաջին օրվանից: Եղել է Քարվաճառում, այնուհետև՝ Ջրականում, Հադրութում: Մարտական ընկերները նրան Դոկ էին անվանում, այսինքն՝ բժիշկ: Պատերազմի ընթացքում իր խմբի հետ միասին շրջափակումից դուրս են հանել շատ ու շատ մարդկանց: Իր բժշկական գիտելիքների շնորհիվ փրկել է տասնյակ զինվորների կյանք՝ վիրակապելով նրանց ու մարտի դաշտից հանելով ավելի ապահով վայր: Սանասարում՝ թեժ մարտի ժամանակ, հոկտեմբերի 20-ին նախահարձակման անցնելիս խոցվել է դիպուկահարի գնդակից:

Հոկտեմբերի 21-ից սկսած նրա հետ կապ հաստատելու բոլոր փորձերն անարդյունք էին: Նոյեմբերի 5-ին լուր ստացան նրա մահվան մասին, բայց շարունակեցին որոնումներն աճյունի բացակայության պատճառով՝ հուսալով, որ ողջ է: Միայն 2021թ. հունվարի 28-ին՝ ԴՆԹ-ի անալիզի օգնությամբ, Հովհաննեսի դին գտան Գյումրու դիահերձարանում:

Հուղարկավորվել է 2021թ. փետրվարի 1-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի և «Կապան» մեդալներով:

Ղուկասյան Դավիթ Երվանդի

Ծնվել է 1980 թվականի նոյեմբերի 3-ին Լեռնաձոր գյուղում, տարածաշրջանում հարգանք վայելող մարդկանց՝ Երվանդ Ղուկասյանի և Անուշ Հովհաննիսյանի ընտանիքում: Համեստ, աշխատասեր, պարզ ու բարի մարդիկ, որոնցից սերել են որդիները՝ Զորիկը, Գարիկը, Դավիթը, Շամիրը:

Նրանք բոլորն էլ որպես վարորդ հաջողությամբ աշխատում էին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում և հեղինակություն վայելում կոլեկտիվում:

Դավիթը բազմանդամ ընտանիքի երրորդ զավակն էր:

Նախ՝ հաճախել է Լեռնաձորի ութամյա, ապա՝ սովորել և 1998 թվականին ավարտել Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոցը: Զուգահեռ մասնակցել է վարորդական դասընթացների ու ստացել վարորդի որակավորում:

1998-2000 թվականներին ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ Վանաձորում, ապա Քանաքեռում...

Զորացրվելուց հետո վերադարձել և 2001 թվականին աշխատանքի է ընդունվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ վարորդ:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Մասնակցել է 2016 թվականի ապրիլյան քառօրյա և 2020 թվականի Արցախյան պատերազմներին ու հոկտեմբերի 15-ին Ջրականի մատույցներում մղված մարտերում զոհվել հերոսի մահով:

«Դավիթը դեռ մանկուց աշխույժ, շարժունակ երեխա էր: Սիրում էր իր երկիրը, սիրում էր բոլորին, բոլորն էլ իրեն էին շատ սիրում», – դժվարությամբ պատմում է հերոսի մայրը՝ տիկին Անուշը:

«Շուրջ մեկուկես տասնամյակ համատեղ երջանիկ կյանք ապրեցինք, ամուսնացել ենք 2006 թվականին, Դավիթը հիանալի ամուսին ու ծնող էր: Աշխատասեր, նպատակասլաց, համառ, նաև ուրախ և կատակասեր մարդ էր, ում գերնպատակն իր ընտանիքի բարեկեցությունն էր: Նրա հետ օրը սկսվում և ավարտվում էր ժպիտով, տուն մտնելուց իր հետ ուրախություն էր բերում...Շատ էր սիրում երեխաներին, մեծ հույսեր կապում նրանց՝ հատկապես որդու՝ Էրիկի հետ, երազում, որ նա հաջողակ գործարար դառնա... Բարի մարդ էր, սրտացավ ընկեր, կյանքը հայրենիքին գիտակցաբար նվիրաբերած իսկական հերոս», – արցունքներից խզված ձայնով պատմում է կինը:

Հերոսացած հայորդու աճյունն ամփոփվել է 2020 թ. հոկտեմբերի 18-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Մաթևոսյան Ժիրայր Վազիկի

Ժիրայրը ծառայել է Մարտունի-3 կորամասում՝ որպես դիպուկահար: Հրամանատարի խոսքով՝ եղել է պարտաճանաչ ու պատրաստակամ զինվոր, քաջ դիրքապահ:

Ծնվել է 2001 թ. դեկտեմբերի 14-ին Կապան քաղաքում զինվորականի ընտանիքում: Ընտանիքի միակ զավակն էր: Աշխույժ, խելացի ու սթափ դատողություն ունեցող տղա էր:

Քանի որ հայրը զինվորական էր և հաճախ փոխում էր ծառայության վայրը, Ժիրայրենց ընտանիքն այդ պատճառով ապրել է Հայաստանի տարբեր քաղաքներում: Տղան էլ տարբեր դպրոցներ է հաճախել: Սովորել է նախ Կապանի թիվ 2 վարժարանում, ապա Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոցում:

Ժիրայրը բարության ու մեծահոգության մարմնացում էր. չէր սիրում վիճել, չէր սիրում անարդարություն, ուներ յուրահատուկ հումոր, եղել է կարգապահ, ընկերասեր, կազմակերպված աշակերտ:

2019 թ. ընդունվել է Հայաստանի պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը: Առաջին կիսամյակն ավարտելուց հետո՝ 2020 թ. հունվարի 26-ին, զորակոչվել է ՀՀ զինված ուժեր:

Ծառայել է Մարտունի-3 զորամասում՝ որպես դիպուկահար: Հրամանատարի խոսքով՝ եղել է պարտաճանաչ ու պատրաստակամ զինվոր, քաջ դիրքապահ:

Ժիրայրը մասնակցել է 44-օրյա պատերազմին: Զանգահարում էր ու մայրիկին համոզում, որ ինքը չի մասնակցում պատերազմական գործողություններին, ու իրենց մոտ ամեն ինչ «ցենտր» է, կամ էլ սիրում էր Արցախի բարբառով ասել՝ ամեն ինչ «ղաշանգ» է ու չէր պատմում պատերազմի մասին:

Ժիրայրը զոհվեց պատերազմի ավարտից հետո՝ 2020 թվականի դեկտեմբեր 1-ին. զինամթերքի պայթյունից:

Հուղարկավորվել է Բաղաբուրջ գյուղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի մեդալներով:

Մաթևոսյան Էդգար Արթուրի

Ծնվել է 1984թ. հունիսի 7-ին Կապան քաղաքում: Մեծացել էր առանց հոր, մոր՝ Արմինե Գևորգյանի հովանու ներքո: Մանկությունից օջախի իսկական տղամարդն ու տերն էր: Ավարտեց Կապան համայնքի Սյունիքի միջնակարգ դպրոցը: Հրաշալի աշակերտ էր և կարող էր ընտրել յուրաքանչյուր մասնագիտություն, բայց գերադասեց բանակը և ընդունվեց Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտն ու գերազանցությամբ ավարտեց այն:

Էդգար Մաթևոսյանը նշանակվեց Արցախի պաշտպանության բանակի վաշտի հրամանատար, այնուհետև՝ գումարտակի շտաբի պետ՝ Սանասարում: Իրեն լիովին նվիրել էր բանակին ու հայրենիքի պաշտպանությանը: Երբ սկսվեց 2016թ. ապրիլյան պատերազմը, մայոր Էդգար Մաթևոսյանը թշնամուն դիմավորեց առաջնագծում: Գիտեր՝ պետք է մարտնչել: Նրա զինվորները հաղթեցին մարտերում և կորուստներ չունեցան: «Մարտական ծառայության» մեդալով գնահատվեց խիզախ հրամանատարի սխրանքը: Էդգարի շնորհիվ տասնյակ զինվորի կյանք է փրկվել, որի համար էլ նրան շնորհվել են «Տիգրան Մեծ» շքանշան և «Արիության համար» մեդալ:

2020թ. սեպտեմբերի վերջին մայոր Մաթևոսյանի գումարտակը տեղակայվեց Ջրականում: Հինգ օր գումարտակը մարտնչում էր բարձունքի վրա՝ հետ մղելով հակառակորդի գրոհները: Հոկտեմբերի 2-ին գումարտակի դիրքեր զինամթերք բերեցին: Նա օգնում էր բեռնաթափելու մեքենաները. այդ ժամանակ էլ սկսվեց թշնամու օդուժի հարձակումը: Ծանր վիրավորվեց, բայց առաջվա պես ոգին բարձր էր: Սկսվեց երկրորդ հարձակումը, և թշնամու հրթիռը խլեց նրա կյանքը...

Բանակում Էդգար Մաթևոսյանը հանդիպեց իր սիրուն՝ Ասթինե Հովակիմյանին: Նրանք ամուսնացան և հրաշալի ընտանիք կազմեցին: Իրենց երկու զավակին՝ Գոռին և Արինեին, Էդգարն իր ոգով դաստիարակեց:

Մայոր Էդգար Մաթևոսյան... Բնածին սպա, խիզախ, անվախ մարտիկ...

Հուղարկավորվել է Գորիսի քաղաքային պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Մանասյան Արսեն Լևի

2020թ. սեպտեմբերի 27... Արսենը կամավոր միացավ Արցախը պաշտպանելու մեկնող ծառայակիցներին: Կռվում էր Ջրականում...

Ծնվել է 1999 թ. հունիսի 17-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոցում:

2017-2019 թթ. ծառայել է հայոց բանակում՝ Արարատի զորամասում:

Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտելուց հետո պայմանագրային ծառայության է անցել Կապանի զորամասում:

2020թ. սեպտեմբերի 27... Արսենը կամավոր միացավ Արցախը պաշտպանելու մեկնող ծառայակիցներին: Կռվում էր Ջրականում, ծանր մարտեր էին, շատերն էին զոհվում Արսենի աչքի առաջ, բայց ինքն անդրդվելի էր, հավատում էր հաղթանակին, պնդում, թե պայքարելն է հաղթանակի միակ ուղին, բարկանում ու հայհոյում էր, երբ լսում էր, որ ինչ-որ մեկը լքել է դիրքը, բողոքել է կամ վիատվել...

Արսենի հետ մարտնչած ընկերները նրան բնութագրելու համար, կարծես պայմանավորված, մեկ արտահայտություն են շեշտում՝ «հայ երիտասարդի օրինակ էր»:

2020 թ հոկտեմբերի 18-ին Ջրականի բնագիծը պահելու համար թեժ մարտեր էին ընթանում, տեղեկություններ կային, թե թշնամին երեք կողմից շրջափակել է Ջրականը, հրետանի չկար, հակաօդային պաշտպանություն չկար, բայց Արսենը չի համաձայնվում նահանջել, որովհետև, իր խոսքով, հենց նահանջն էր մեծաթիվ զոհերի պատճառը:

Անհավասար մարտում ընկել է քաջ հայորդին, ընկել է փառքով՝ իր հողն ու ազգը պաշտպանելիս՝ մարտական խնդիրը հաջողությամբ կատարելուց հետո...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Կապան» մեդալներով:

Մարգարյան Գարիկ Լևոնի



Ծնվել է 1993 թ. հունիսի 11-ին Կապան քաղաքում:

Մանկուց Գարիկը շատ աշխույժ երեխա էր, մեկ տարի շուտ է գնացել դպրոց, քանզի մանկապարտեզում այլևս անելիք չուներ: Հաճախել է Հունան Ավետիսյանի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցը: Թեև փոքր-մոքր, բայց շատ համարձակ, խիզախ երեխա էր, նաև կատակասեր՝ ժպիտը դեմքին: Ամենատխուր պատմությունը կպատմեր ժպիտը երեսին:

«Մի անգամ – վերհիշում է հայրը՝ Լևոն Մարգարյանը, – *«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղն էի դիտում և հընթացս հարցերին պատասխանում: Գարիկը՝ մեկ էլ թե՝ մի հարց էլ ես տամ՝ Այվազովսկին ինչո՞ւ նկարելիս «այս մատը» չի օգտագործել և ցուցադրեց իր ցուցամատը: Պահանջվող մեկ րոպեն անցավ, և չկարողացա պատասխանել: Ասաց, հայրիկ, հեչ տրամաբանող չես: Այվազովսկին ինչպե՞ս կարող էր այդ մատն օգտագործել, երբ դա իմն է»:*

«Ողջ կյանքում եղել է ինքնուրույն. երբ հարցնում էի, ինչո՞ւ չես այս բանը սովորել, պատասխանում էր՝ ինչ-որ պետք է՝ ես սովորել եմ», – սա էլ հոր խոստովանանքն է:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Մեկ տարի սովորելուց հետո մեկնել է զինվորական ծառայության, ծառայում էր Երևանի հետախուզական զորամասում: Ծառայության ընթացքում զինվորական կարգապահության բարձր ցուցանիշների հասած Գարիկ Մարգարյանը պարգևատրվել է ՀՀ զինված ուժերի «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանով:

Ծառայությունից հետո շարունակել է բարձրագույն կրթությունը:

Պատերազմի առաջին օրերից առաջնագծում էր, թեև հարազատների հեռախոսազանգերին պատասխանում էր՝ դեռ Գորիսում եմ:

Հոկտեմբերի 15-ին գլխից ծանր վիրավորվեց, առաջին վիրահատությունը Գորիսում էր, հետո՝ մայրաքաղաքում: Բայց այդպես էլ կոմայից դուրս չեկավ և անմահացավ հոկտեմբերի 29-ին:

Ամուսնացած էր, ավա՜ղ, այդպես էլ չհասցրեց վայելել մանկական թոթովանքի բերկրանքը...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Կապան» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Մուրադյան Շավարշ Մարտունի

Ծնվել է 1996-ի նոյեմբերի 19-ին Կապանում՝ Արցախյան առաջին պատերազմի ակտիվ մասնակից Մարտուն Մուրադյանի ընտանիքում: Մանկուց հորից լսել է մարտական ընկերների սխրանքների մասին, դաստիարակվել կապանյան ազատամարտի նվիրյալների ոգով: Նախ՝ սովորել է Կապանի թիվ 7, այնուհետև՝ թիվ 3 դպրոցում: Ուսումնառության տարիներին աչքի էր ընկնում դպրոցական առարկայական օլիմպիադաներում, 11-րդ դասարանում շահեց «ՖԼԵՔՍ» մրցույթում և ուսումը շարունակեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Վերադառնալով Կապան՝ ուսումը շարունակել է Եղեգի միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո ընդունվեց Հայաստանի ամերիկյան համալսարան:

2015 թ. ամռանը զորակոչվել է հայոց բանակ. գնդացրորդ էր, մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին: Ձինծառայությունն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ամերիկյան համալսարանում: 2019 թ. անդամագրվել է «Արծիվ-30 Արարատ» մահապարտների ռազմահայրենասիրական կազմակերպությանը:

«Շավարշն ինձ հետ կիսվում էր իր մտորումներով, ասում էր՝ երբ պատերազմ սկսվի, անպայման գնալու եմ: Կարծեք գուշակում էր՝ շուտով պատերազմ է սկսվելու, և Ադրբեջանին օժանդակելու է Թուրքիան», – նշեց Շավարշի մայրը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին «Արծիվ-30» մահապարտների գումարտակի հետ մեկնել է Արցախ: Մարտակերտի համար մարտերը ծանր էին ու վճռական. ցավոք, երկու օր հետո՝ սեպտեմբերի 29-ին, գնդացրորդ Շավարշ Մուրադյանը բռնեց հավերժի ճամփան...

Պարգևատրվել է «Քաջարի մարտիկ», «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշաններով, «Մարշալ Բաղրամյան», «Աղբյուր Սերոբ», «ՀԱԲ-30», «Արծիվ-30 Արարատ» մեդալներով: 2021 թ. հունիսի 10-ին Կապանի թիվ 7 դպրոցի բակում բացվեց հուշաղբյուր՝ նվիրված կրթօջախի շրջանավարտներ Շավարշ Մուրադյանին, Գրիշա Թումանյանին, Արեգ Հակոբյանին: Արարողությանը ելույթ ունեցավ «Արծիվ-30-մահապարտներ» գումարտակի փոխհրամանատար Եփրեմ Մարգարյանը, ով ներկայացրեց 2020 թ. սեպտեմբերի 29-ի մարտը, որ վերջինը եղավ հայրենիքի զինվորի համար:

Նաև հրապարակվեց Արցախի նախագահի հրամանագիրը Շավարշ Մուրադյանին հետմահու ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով պարգևատրելու մասին:

Շավարշ Մուրադյանը զինվորական պատիվներով հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է նաև «Կապան» մեդալով:

Ներսիսյան Գարիկ Սերյոժայի

Ծնվել է 1978 թ. փետրվարի 12-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 9 միջնակարգ դպրոցում, ապա մեկնել Երևան՝ սովորել Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացիոն ուսումնարանում: 1996-98 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում, վերադարձել է սերժանտի կոչումով: Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Աշխատում էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ փոխադրիչ-մեքենավար:

Գործընկերները նրան բնութագրելիս առանձնացնում են օգնելու պատրաստակամությունն ու աշխատասիրությունը:

2006 թ. Գարիկն ու Անին ամուսնացել էին … Անին մեծ ցավով է պատմում ամուսնու մասին. *«Ամեն լավ բան կարելի է ասել նրա մասին՝ լավ հայր ու ամուսին էր, ընկերասեր, բարի, մի խոսքով՝ իդեալական մարդ…»:*

Սեպտեմբերի 27-ից Գարիկը զորահավաքով մեկնեց Ջրական: Կինը ծանոթ էր նրա բնավորությանը, գիտեր, որ ցանկացած առաջադրանք առաջինն է կատարելու, որ տեսակով իրեն առաջ գցող է, ու հենց դա էր նրան վախեցնում: Հաճախ էր տուն զանգահարում, վերջին խոսակցության ժամանակ մի տեսակ ընդգծված խնդրել էր երեխաներին լավ նայել: Նրա խնդրանքը տարօրինակ էր թվացել Անիին, ծանր կանխազգացում էր ունեցել…

Մարտական ընկերներից Կարենը՝ Գարիկի մասին խոսելիս տխրում է, ափսոսում: Պատմում է, որ Գարիկն ու ինքը մարտադաշտում են ծանոթացել, իր մեջ տպավորվել է նրա՝ ամեն մի դժվարին առաջադրանք կատարելու պատրաստակամությունը, եռանդն ու կոկիկությունը: Նրա խոսքով՝ Գարիկն ամեն գործ պատրաստ էր կատարել, մեքենաներ էր նորոգում, վարորդություն էր անում, կատարում էր այն, ինչ այդ պահին շատ անհրաժեշտ էր:

Հոկտեմբերի 11-ին թշնամու անօդաչուի հարվածից այրվում է Գարիկի վարած մեքենան. մարտական ընկերները պատմում են, թե ինքն էր կամավոր գնացել այդ մեքենան վարելու, երբ իմացել էր, որ վարորդ չկա:

Հուղարկավորվել է հոկտեմբերի 13-ին՝ Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով, Կապանի համայնքապետարանի «Կապան» մեդալով:

Ներսիսյան Սասուն Գրենիկի

Վերջին անգամ մայրիկի հետ խոսելիս թաքցրել է, որ հրաշքով փրկվել է ԱԹՍ-ի հարվածից: Սակայն առաջնագիծ մեկնելիս չհաջողվեց փրկվել ԱԹՍ-ի հերթական հարվածից...

Ծնվել է 2002 թ. մարտի 21-ին Կապանում: Նախ՝ սովորել է Կապանի թիվ 13 հիմնական դպրոցում, ապա՝ ուսումը շարունակել Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջում՝ ստանալով«Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» մասնագիտությունը: Միաժամանակ սովորել է վարսահարդարում մասնագիտությունը. արդեն կայացած վարսավիր էր: Ուրախ և հպարտ էր Սասունը, որ պատանի տարիքում գտել էր իր տեղը և օգնում էր ծնողներին: Շատ ընկերասեր էր, օգնում էր բոլորին, միշտ ամենաթույլի կողքին էր:

2020 թ. հուլիսին զորակոչվել է ՀՀ զինված ուժեր և ծառայության անցել Պաշտպանության բանակի հարավային ուղղությամբ տեղակայված Հադրութի զորամասում:

Երբ թշնամին 2020 թվականի սեպտեմբերի 27-ին պատերազմ սանձազերծեց հայրենի Արցախի դեմ, Սասունն այդ ժամանակ ընդամենը երկու ամսվա ծառայող էր:

Վերջին անգամ մայրիկի հետ խոսելիս թաքցրել է, որ հրաշքով փրկվել է ԱԹՍ-ի հարվածից: Սակայն առաջնագիծ մեկնելիս չհաջողվեց փրկվել ԱԹՍ-ի հերթական հարվածից, և Սասունն անմահացավ պատերազմի առաջին օրը՝ հավերժ մնալով 18 տարեկան:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», Կապանի համայնքապետարանի «Կապան» մեդալներով:

Շահնազարյան Էդուարդ Վարդանի

Ծնվել է 1994 թ. փետրվարի 6-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի N 27 գիշերօթիկ դպրոցում: 2001 թ. ընտանիքը տեղափոխվել է Արցախի Հադրութի վարչական շրջանի Մեխակավան Ջրական բնակավայր, որտեղ և ավարտել է միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ:

2012 թ. զորակոչվել է Հայոց բանակ: Ժամկետային զինծառայության ավարտից հետո շարունակել է ծառայությունը զինված ուժերում՝ ՊԲ Ջրականի զորամասում:

2017 թ. ընդունվել է Ստեփանակերտի Գրիգոր Նարեկացու անվան համալսարանի պատմության բաժին:

Մորաքույրը մորմոքվում, հիշում է Էդուարդի ամեն բառը, հայացքը՝ *«Էդուարդս Արցախում մեծացավ, մի օր ինձ հարցրեց, թե ինչո՞ւ են իրեն Կապանում ղարաբաղցի, իսկ Արցախում հայաստանցի ասում: Շատ ուշադիր էր, նկատում էր յուրաքանչյուր թերություն, կյանքով լցված էր: Սիրում էր կյանքը, ճանապարհորդել էր սիրում: Երբեք չէր խոսում իր աշխատանքից, գաղտնապահ էր, ու դա նրա հատկանիշներից մեկն էր. նրա կորուստը մեզ համար անասելի տանջանք է...»:*

Էդուարդի ընկեր Արթուր Մագերկոյի հետ ենք զրուցում: Նրա ձայնը դողում է ընկերոջ մասին խոսելիս. *«Էդուարդի հետ ծանոթացել եմ, երբ ժամկետային զինծառայող էի, ինքը նույն զորամասում պայմանագրային ծառայող էր: Ընկերացանք, շատ-շատ էի լինում նրանց ջերմ ու հյուրասեր օջախում, հիանալի որդի էր, օգնում էր ծնողներին, չնայած բոլորին էր օգնում: Ներողամիտ, հումորով, ակտիվ, ժամանակակից տղա էր, անպայման ուզում եմ շեշտել բարությունը...»:*

Էդուարդը վայելում էր ծառայակիցների ու սպայական անձնակազմի հարգանքը, 2020 թ. մայիսին պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալով:

Էդուարդի հետ ծառայողներից շատ քչերն են այսօր մեր կողքին, քանի որ Ջրականի զորամասը 2020 թ. սեպտեմբերի 27-ին առաջիններից էր, որ հրետակոծության ենթարկվեց. հոկտեմբերի 1-ին Էդուարդը վիրավորվեց, հոկտեմբերի 9-ին՝ անմահացավ...

Նրանք, ովքեր ողջ են մնացել, իրենց զոհված ընկերների մասին խոսելիս արցունքները չեն թաքցնում. *«Մեր ընկերների արյան վրեժը լուծելու ենք...»:*

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» և «Կապան» մեդալներով:

Ոսկանյան Խաչիկ Ծատուրի

Ծնվել է 1963 թ. հոկտեմբերի 3-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցում, Կապանի պրոֆտեխնիկական ուսումնարանում, ստացել ավտոմբարձիչավարի մասնագիտություն: Ծառայել է խորհրդային բանակում:

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

1988 թ. սկսվել էր Արցախյան շարժումը, շրջապատում ակտիվ ու խելացի երիտասարդի համարում ունեցող Խաչիկ Ոսկանյանը հայրենիքի ճակատագրի հանդեպ անտարբեր լինել չէր կարող. միացել էր շարժմանը:

1992 թ. միացավ Կապանում ձևավորվող ինքնապաշտպանական ջոկատներին ու մեկնեց Արցախ:

Պատերազմը տարիներ տևեց, բայց հայը գիտի, որ հաղթանակը հեշտ չի տրվում, որ անկախ պետություն ունենալն ամենօրյա դժվար ու ծանր պայքար է պահանջում...

Խաչիկը տուն վերադարձավ խաղաղության հետ. ընտանիք կազմեց, երեխաներ ունեցավ, աշխատեց ու արարեց:

2016 թ. ապրիլի 2-ին առանց հապաղելու միացավ ճակատ մեկնող ընկերներին: Մոտ երկու ամիս մնաց Մատաղիսում, վերադարձավ՝ ոգևորված ու հաղթողի ժպիտը դեմքին, խախտեց պատերազմներից չխոսելու սովորությունն ու իր հիացմունքը բարձրաձայնեց ժամկետային զինծառայողների վերաբերյալ. *«Մենք հրաշալի բանակ ունենք, հզոր տղերք ունենք, էն ինց են կռվում, ես նրանց ցավը տանեմ...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ի լուսաբացը խաղաղ չէր. Խաչիկին ամեն կերպ փորձեցին հետ պահել, համոզել, բայց նա իր որոշման մեջ հաստատակամ էր:

Մի քանի օր Կապանում զբաղվում էր ջոկատների ձևավորմամբ, իսկ հոկտեմբերի 2-ին մեկնեց Ջրական: Կամավորականների ջոկատը, որի կազմում էր, հոկտեմբերի 5-ին մարտի է բռնվել թուրքական հատուկ ջոկատի հետ:

Անհավասար մարտում ընկել է Խաչիկ Ոսկանյանը՝ համոզված լինելով, որ իր ու ընկերների արյամբ ազատագրված հայրենիքի պատառիկը միայն արյամբ ու նվիրումով է հնարավոր պահպանել:

Աճյունը հողին է հանձնվել դեկտեմբերի 20-ին Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի և «Կապան» մեդալներով:

Պետրոսյան Տիրան Անդրանիկի

Ծնվել է 2000 թ. հոկտեմբերի 10-ին Մոսկվա քաղաքում: 2001 թվականից ընտանիքը բնակություն է հաստատել Կապանում: 2006 թվականին հաճախել է Կապանի վարժարանը, այնուհետև ուսումը շարունակել և 2017 թ. ավարտել է Աճանանի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ:

Անձնական նախաձեռնությամբ մկրտվել էր հայրենի Քաջարանց գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցում՝ 2018 թվականի օգոստոսի 1-ին:

2019 թվականի հունվարի 13-ին զորակոչվել է հայկական բանակ: Ծառայությունն անց է կացրել Արցախի Հանրապետության Զրականի զորամասում: Շարքայինից դարձել է կրտսեր սերժանտ, հետո՝ սերժանտ: Ծառայության ընթացքում նույնպես զբաղվում էր ֆուտբոլով, ծառայակից ընկերների հետ մասնակցում զորամասերի միջև տեղի ունեցող ֆուտբոլային ընկերական խաղերին: 2021 թ. հունվարի 13-ին Տիրանը պիտի զորացրվեր...

2020 թ. սեպտեմբերի 27... Պատերազմի հենց առաջին րոպեներից արդեն պայքարի մեջ էր, քանի որ այդ առավոտյան մարտական դիրքում էր և իր հերթապահությունը դեռ չէր ավարտել: Նաև դիրքի ավագն էր:

Այդ առավոտից էլ սկսվեց Տիրանի և իր մարտական ընկերների պայքարը՝ հանուն հայրենի հողի պաշտպանության:

Արցախյան պատերազմին մասնակցեց 33 օր՝ սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 29-ը: Այդ ընթացքում նրան ու իր ծառայակից ընկերներին հաջողվեց պատվով կատարել մի շարք մարտական առաջադրանքներ: Դաժան էր պատերազմը, անհավասար էին ռեսուրսները: Ճակատագիրը Տիրանին և Զրականի զորամասի կենդանի մնացած մյուս զինվորներին բերեց Արցախի Մարտունու շրջանի Քերթ գյուղ: Այդտեղ հոկտեմբերի լույս 29-ի գիշերը տղերքը մոբիլիզացնում էին ուժերը և պատրաստվում հերթական մարտական առաջադրանքը կատարելու, բայց անօդաչու սարքը հարվածեց մեր ուժերին: Այդ ժամանակ էլ Տիրանը և նրա մարտական ընկերները զոհվեցին...

Տիրանը մահացավ՝ այդպես էլ չթողնելով հետնորդներ, որովհետև ընդամենը 20 տարեկան էր ու դեռ չէր հասցրել ամուսնանալ:

Տիրանի և նրա կողքին զոհված 15 մարտական ընկերների մարմինները մահացու վերքերից անճանաչելի էին դարձել, և Տիրանի մահվանից հետո 38-րդ օրը՝ դեկտեմբերի 6-ին, հնարավոր եղավ ԴՆԹ թեսթի միջոցով գտնել նրա մարմինը:

Տիրանի մարմինն ամփոփված է Կապան քաղաքի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Արիության» և «Կապան» մեդալներով:

Պողոսյան Արտեմ Հենրիկի

2020 թ. հոկտեմբերի 6-ին Արտեմը մեկնում է բանակ. պատերազմ էր... Մեկնեց ռազմաճակատի առաջնագիծ: Մարտնչում էր պաշտպանական գծի հարավային՝ Ջրականի ուղղությամբ:

Ծնվել է 1982 թ. ապրիլի 12-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցում: Ուշիմ, խելամիտ աշակերտ էր, ընկերասեր, նախաձեռնող և կազմակերպող: Ընկերական շրջապատի ոգին էր, սիրված էր դասընկերների կողմից:

2000-2002 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Բանակից վերադառնալուց հետո ինքնուս շինարարն աշխատում էր նախընտրած մասնագիտությամբ, որը նրան կարճ ժամանակում մեծ համբավ բերեց:

2020 թ. հոկտեմբերի 6-ին Արտեմը մեկնում է բանակ. պատերազմ էր... Մեկնեց ռազմաճակատի առաջնագիծ: Մարտնչում էր պաշտպանական գծի հարավային՝ Ջրականի ուղղությամբ:

2020 թ. հոկտեմբերի 13-ին Արտեմը զոհվեց թշնամու ականի պայթյունից:

Զինակից ընկերներն Արտեմին հիշում են որպես անվախ և անվեհեր մարտիկի...

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

Արտեմ Պողոսյանը հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Պողոսյան Մանուկ Արթուրի

Ծնվել է 1991 թ. հոկտեմբերի 20-ին Կապան քաղաքում: Սովորել է Սյունիք գյուղի միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Գորիսի զորամասում:

Զորացրվելուց հետո աշխատել է տարբեր տեղերում:

Քույրը քնքշանքով է հիշում եղբորը, պատմում, որ Մանուկը հրաշալի եղբայր էր. *«Միակ եղբայրս էր, նրա մահը ծանր է գիտակցել. ազնիվ էր, հոգատար, սիրված էր ընտանիքի ու ընկերների կողմից, լավ ընկերներ ուներ, ովքեր ամեն րոպե պատրաստ էին նրան օգնության հասնել, բայց չար պատերազմի դեմ բոլորս ենք անզոր: Հիմա միայն մի զգացողություն կա՝ կարոտ...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Մանուկը երկու օր սպասեց, որ իրեն կկանչեն զորահավաքի, անհամբեր էր, ընկերներն այնտեղ էին արդեն, ինքը՝ այստեղ մնալ չէր կարող, կամավորագրվեց...

Ձինկոմիսարիատի բակից զանգահարել էր քրոջը, տեղեկացրել, թե մեկնում է, քույրը համոզել էր, խնդրել, որ չգնա: Բայց Մանուկն անդրդվելի էր, քրոջը հիշեցրել էր, որ հայրն էլ է հայրենիքը կռվով պաշտպանել. *«Մենք Կապանում ենք ապրում, եթե կապանցի տղամարդը թուրքի դեմ չկանգնի, ո՞վ պիտի իրա տունը պահի...»:*

Նրանք, ովքեր Մանուկին տեսել են ռազմաճակատում, հպարտանում են. *«Լավ է, որ մեր մեջ դեռ էդ տեսակը կա, Մանուկը մի ուրիշ կերպ էր կռվում, իմ հանդիպած տղերքի մեջ նա առանձնանում էր բացառիկ անվախությամբ, հպարտ եմ, որ հայ ազգը Մանուկի պես տղերք ունի, նրանք հույս են ներշնչում, որ մեր ազգը կհաղթահարի դժվարություններն ու կհաղթանակի...»:*

Նոյեմբերի 9-ին Դավիթբեկ գյուղի ինքնապաշտպանական մարտերում Մանուկն անմահացել է...

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Պողոսյան Սարգիս Սամվելի

Ծնվել է 1990 թ. հունիսի 22-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցում: 2007 թ. ընդունվել և 2012 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական համալսարանը՝ տնտեսագետ-ֆինանսիստ մասնագիտությամբ: Ժամկետային ծառայությունն անցկացրել է Վարդենիսում:

2011 թ. ընդունվել է աշխատանքի ՀՀ ՊՆ N զորամասի զենիթային-հրթիռային դիվիզիոնի ռադիոլոկացիոն հետազոտության և տեղեկատվության արտացոլման բաժանմունքի ռադիոլոկացիոն կայանի ավագ օպերատոր:

Նրա վերահսկողության տակ էին Հադրութի, Հորադիզի, Ջրականի, Սանասարի, Սյունիքի բնակավայրերի օդային տարածքները:

Ապերը (նրան այդպես էին անվանում ընկերները) հմուտ ծառայող էր. նրա մասնագիտական բարձր հմտությունների շնորհիվ վերացվել են հակառակորդի բազմաթիվ ԱԹՍ-ներ:

Սարգիսն աշխատավայրում հարգված էր. ինչպես բնորոշում են գործընկերները, համեստ, լռակյաց, հարգալից երիտասարդ էր, մեծահոգի ու անշահախնդիր...

2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 9-ը՝ մոր ծննդյան օրը, Ապերը տուն չէր գնացել: Մայրը արցունքների միջից ժպտում է՝ տղան այդ օրն իրեն ամենամեծ նվերը մատուցեց իր ներկայությամբ և հետագայում դարձավ քաղցր հիշողություն ու հուշ:

2020 թ. հոկտեմբերի 10-ին հակառակորդի անօդաչուն հարվածում է Երիցվանքի ռադիոլոկացիոն կայանին, վիրավորվում են Սարգիսը, Գրիշան և նրանց օգնության եկած Ալիկը:

Սարգիսը, ներկաների պատմելով, իր ծանր վիճակը մոռացած, հանում է գոտին ու մեկնում Գրիշային: Խնդրում էր, որ առաջինը նրան վիրահատեն, որ չարնահոսի՝ չիմանալով, որ Գրիշան արդեն զոհվել է: Բժիշկները մի քանի ժամ պայքարել են Սարգիսի կյանքի համար, բայց՝ ապարդյուն: Վիրավորվելուց ժամեր անց զոհվեց Սարգիսը՝ ծնողների միակ արու զավակը, ով պիտի շարունակեր Պողոսյան գերդաստանի հարատևությունը, ում զավակները պիտի դառնային իր շարունակության ու հավերժանալու գրավականը, ափսո՜ս...

Հոկտեմբերի 12-ին Սարգիս Պողոսյանի աճյունը հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Վարդանյան Հարություն Սամվելի

Ծնվել է 1982 թ. հուլիսի 16-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Կապանի տարածաշրջանային պետական քոլեջում՝ մենեջմենթի մասնագիտությամբ: 2000-2002 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Բանակից վերադառնալուց հետո աշխատել է տարբեր ոլորտներում՝ փորձելով իր կարողություններն ու ընդունակությունները: Զբաղվել է շինարարական աշխատանքներով, տարիներ անց հիմնել քարի վերամշակման սեփական արտադրամաս, անհատ ձեռներեց էր: Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Ապրիլյան քառօրյային Հարութը զինկոմիսարիատ գնաց, ասացին՝ սպասի, պետք լինի, կկանչենք, կգնաս ռազմաճակատ: *«Բայց այդ անգամ պատերազմը կարճ տևեց, չհասցրեց մեկնել: Ինքն իրեն կարծես մեղավոր էր զգում, ասում էր՝ չթողեցին, որ գնամ մի քանի թուրք սպանեմ»*, – պատմում է ընկերը՝ Վարշամը՝ ավելացնելով, որ 2020-ի սեպտեմբերյան պատերազմում, երբ կամավորագրվեց, հպարտությամբ եկավ, ասաց՝ տղերք, գնում եմ…

Հարութն ու Էրիկը Կապանից էին, բայց իրար հետ մտերմացան առաջնագծում: *«Գորիսի հավաքակայանում պարզվեց, որ մի ջոկատում ենք լինելու ու առաջնագծում: Երբ բաժանեցին խմբերի, Հարութի հետ միասին նույն դիրքն էինք հսկում»*, – պատմում է Էրիկը: Վերջինիս խոսքով՝ Հարութն իրենց հրահանգում էր՝ խրամատից դուրս չգալ, մինչև ինքը չհետախուզի: Ասում էր՝ էս տարածքներին ես ծանոթ եմ, մի հատ տեսնեմ՝ ոնց ա վիճակը, նոր դուրս եկեք: Մարտական ընկերոջ խոսքով՝ հենց մի քիչ հանգիստ վիճակ էր լինում՝ առաջարկում էր բլոտ խաղալ: *«Հարութն ասում էր՝ տղերք, թուրքին պիտի չվստահենք, էս հանգստությունը վտանգավոր է, հեռախոսով չենք կարա զբաղվել, գոնե բլոտ խաղանք, որ հոգնածությունից չքնենք»*, – վերհիշում է Էրիկը:

Ամեն օր զանգահարում էր՝ հարցուփորձ անում տնեցիներից, հորդորում ուժեղ մնալ ու սպասել իրեն: Վերջին անգամ հոկտեմբերի 12-ին զանգահարեց: Ասաց, թե ինքը լավ է, իր համար չանհանգստանան ու չվախենան, քիչ մնաց՝ կվերադառնա: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 13-ին, զոհվեց Ջրականում:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ հոկտեմբերի 16-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Փարամազյան Արշակ Հրաչիկի

Ծնվել է 1983 թ. մայիսի 5-ին Կապան քաղաքում: Սովորել և ավարտել է Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցը, այնուհետև ընդունվել և ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը՝ ստանալով տնտեսագետ բակալավրի աստիճան:

2004-2006 թթ. ծառայել է հայոց բանակում: Յոթ տարի աշխատել է բանկային համակարգում՝ վաստակելով հարգանք՝ քաղաքակիրթ ու մարդկանց հանդեպ բարյացակամ վերաբերմունքով: 2014-ին տեղափոխվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերություն՝ տնօրենի օգնական, ապա՝ ճաշարանի վարիչ՝ ամենուր հարգանք ու սեր վայելել:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Կնոջ՝ Ստելայի պատմելով ուշադիր էր իր և երեխաների հանդեպ, անմնացորդ նվիրված էր ընտանիքին: Պատերազմի բոթն առնելով՝ խնդրեց պատրաստել անհրաժեշտ իրերը և զինվորական գրքույկը: Հրաժեշտ տալիս էլ խոստացավ՝ անպայման վերադառնալ: Ավա՜ղ...

N զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արթուր Մարտիրոսյանը պատմում է. *«Ինձ բախտ է վիճակվել պարտադիր զինծառայության օրերից ճանաչել Արշակին, և ի սկզբանե նա մեջս տպավորվեց՝ առնական, շիտակ, շրջապատին նվիրված անձնավորություն: Դասակի հրամանատար էր, բայց իր ստորաբաժանումն ավելի կարգապահ և օրինակելի էր, քան որոշ սպայական ուսադիրներով զինվորականներինը: Կարճ ժամանակում կարողացավ վայելել հրամատարների ու ծառայակիցների սերն ու հարգանքը: Հանգամանքների բերումով 2-րդ անգամ Արշակին հանդիպեցի 2020 թ. հոկտեմբերին, երբ մեր երկրի վրա սպառնալիք էր կախված: Վերհիշեցինք 15 տարվա վաղեմության մեր բանակային ծառայության օրերը: Ո՞վ իմանար, թե դա մեր վերջին հանդիպումն էր լինելու»:*

2020 թ. հոկտեմբերի 13-ին Ջրականի մատույցներում ընկավ հակառակորդի անօդաչուի հարվածից:

Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

Օհանյան Արման Մայիսիկի



Ծնվել է 1996 թ. հունիսի 30-ին Կապան քաղաքում: Սովորել է Կապանի թիվ 1 դպրոցում: 2011-2015 թթ. սովորել և ավարտել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջը՝ «Բաց լեռնային աշխատանքներ» մասնագիտությամբ:

2014 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Լուսակերտում:

Հայրենիք հասկացությունը նրա համար վերացական չէր: Նա զարկերակով էր զգում հայրենիքի սիրո ուժը:

Աշխատում էր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում՝ վարորդ:

Ամուսնացած չէր, չհասցրեց. 2020 թ. մարտի 13-ին նշանվել էր գեղեցկուհի Ռայիսայի հետ, հարսանիքը դեկտեմբերին պիտի լիներ…

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արմանն առանց հապաղելու միացավ հայրենիքի պաշտպաններին:

44-օրյա պատերազմի բովով անցած Ավետ Հակոբյանն է պատմում. *«Արմանի հետ վաղուց էինք ծանոթ, բայց պատերազմն ամրացնում է հարաբերությունները՝ ծանոթությունն ընկերության վերածելով: Սկզբում Գեղիում էինք՝ Նախիջևանի հետ սահմանին, հոկտեմբերի 14-ին մեկնեցինք Արցախ, գնում էինք՝ գիտակցելով, թե ուր ենք գնում և ինչու: Մարտական բոլոր առաջադրանքները կատարել ենք անսխալ, Արմանն «Ուրալի» վարորդ էր, իր զգուշավորության ու տրամաբանության շնորհիվ անձնակազմին ու զենքը շատ անգամներ է անվնաս տեղ հասցրել: Հոկտեմբերի 17-ի գիշերն Այգեհովիտում էինք: «Մարտի» հրամանից հետո դիրքավորվեցինք, և հակառակորդի անօդաչուն սկսեց նպատակային հարվածներ հասցնել: Պատկերը դաժանությամբ աննախադեպ էր, շատերն աչքիս առաջ ընկան, նրանցից մեկն էլ Արմանն էր: Ես էլ բոլոր մարդկանց պես ապրում եմ, երբեմն ժպտում, բայց հիշողությունիցս ջնջել աչքիս առաջ զոհված տղերքին՝ չեմ կարող…»:*

Անօդաչուի հարվածից զոհված մեր տղաներից շատերի մարմիններն անճանաչելի էին դարձել… Արմանի նշանածը՝ Ռայիսան, մինչ օրս թաքուն հույս է փայփայում. *«Չեմ հավատում, որ Արմանը չկա, մենք շատ նպատակներ, երազանքներ ունեինք, պատկերացնում էինք մեր հարսանիքը, մեր ապագա ընտանիքը, նրան կորցնելու մտքի հետ չեմ հաշտվում, մինչև այսօր երազներ եմ տեսնում, որ նա ողջ է…»:*

Արման Օհանյանի աճյունը զինվորական պատիվներով հողին է հանձնվել հոկտեմբերի 20-ին՝ Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Կապան» մեդալներով:

ԳՈՐԻՍԻ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Աղամալյան Ազնիվ Արգամի

Ծնողների Սանկտ Պետերբուրգ տեղափոխվելուց հետո՝ 2001 թ. օգոստոսի 13-ին, ծնվել է Ազնիվը: Սերտորեն կապված է եղել հոր ծննդավայր Շինուհայրին:

Դպրոցական կրթությունը ստացել է Երևանի թիվ 178 հիմնական դպրոցում: 9-ամյա կրթություն ստանալուց հետո ընդունվել է Հայ-ամերիկյան բժշկական քոլեջ: Ուսմանը զուգահեռ 9 տարի սովորել է մարզադպրոցում՝ հմտանալով «Ուշու սանդու» մարզաձևում: Տարիների ընթացքում տիրապետել է սպորտի այդ ձևին և մասնակցել մրցումների՝ արժանացել մի շարք մեդալների, պատվոգրերի ու խրախուսանքների:

Կարմիր դիպլոմով ավարտել է քոլեջը՝ ստանալով ատամնատեխնիկի մասնագիտություն: Գործող օրենքի համաձայն՝ արտոնյալ կարգով ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտի երկրորդ կուրս:

2019 թ. դեկտեմբերի 28-ին զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Ծառայում էր Արցախի Հանրապետության Մատաղիսի զորամասում:

Զինվորական ծառայության ժամանակ աչքի է ընկել և նկատվել հրամանատարության կողմից: Առաջադրանքները կատարել է ժամանակին և անթերի, կարճ ժամանակում տիրապետել է գործածության մեջ մտած նոր զինատեսակների:

27 սեպտեմբերի 2020 թվական…

Դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Ազնիվը առաջնագծում էր, մարտերը թեժ էին: Կրակ էր թափվում ոչ միայն դիմացից, այլև գլխավերևից…

Հոկտեմբերի 12-ին վերջին խոսակցությունն է ունեցել հարազատների հետ, մասնավորապես՝ Շինուհայրում բնակվող Խիկար հորեղբոր հետ:

Հոկտեմբերի 13-ին զոհվեց թշնամու գնդակից:

Հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» և ԱՀ ՊԲ «6-րդ ՊՇ Անձնուրաց պաշտպան» մեդալներով:

Աղաջանյան Անդրանիկ Սուրենի

Տասը տարեկան էր Անդրանիկը, երբ «ի՞նչ ես դառնալու» հարցին վստահ պատասխանեց՝ զինվորական:

Ճակատարագրական էր պատանի Անդրանիկի և փոխգնդապետ Վոլոդյա Կարապետյանի հանդիպումը: Անդրանիկն իմացել էր, որ Կորնիձոր եկած զինվորականը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանից է, համոզել էր մայրիկին՝ իրենց հանդիպումը կազմակերպել: Փոխգնդապետը մեկ ժամից ավելի առանձնազրույց է ունեցել Անդրանիկի հետ, տպավորված դուրս եկել, ձեռքը դրել պատանու ուսին և համոզված հայտարարել. *«Այս ուսերը գեներալի ուսադիրներ կրելու համար են»:*

Ծնվել է 1991 թ. սեպտեմբերի 12-ին Կորնիձոր գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Կորնիձորի Ա. Բալասանյանի անվան միջնակարգ դպրոցում: 2008 թ. ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

2012 թ. ռազմական համալսարանն ավարտելուց հետո ծառայության է անցել Ջրականում:

2020 թ. սեպտեմբերի 27, Արցախյան նոր պատերազմ... Անդրանիկ Աղաջանյանը Ջրականից դուրս է բերում ընտանիքը՝ տեղավորում առաջնագծից հեռու մի գյուղում, զանգահարում տուն, ծնողներին խնդրում գնալ և տեղափոխել կնոջն ու երեխաներին, ինքը վերադառնում է Ջրական:

Հոկտեմբերի 3-ին զանգահարում է տուն՝ ասում, որ ինքը Կարմիր շուկայում է՝ վիրավորներ է բերել: Հետո մի զինվոր պիտի պատմեր, թե կապիտան Աղաջանյանն էլ է վիրավոր եղել, բայց զենքը՝ որպես հենակ, հողի մեջ խրելով՝ մնացել է իր զինվորների կողքին:

Վերջին անգամ զանգահարել է տուն հոկտեմբերի 5-ին, ասել, թե ծանր մարտեր են...

Հերոս հրամանատարի ու յոթ զինվորի մարմինները հայտնաբերվեցին որոնողական աշխատանքների շնորհիվ...

Ծառայության ընթացքում պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «ՀՀ զինված ուժեր 20 տարի», «Մարտական հերթապահության համար» 1-ին աստիճանի, «Ծովակալ Հ. Ս. Իսակով» մեդալներով:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Աղասյան Գարիկ Արարատի

Ծնվել է 2001 թ. մարտի 7-ին Խնձորեսկ գյուղում:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո տեղափոխվել է Երևան, ընդունվել թիվ 1 արհեստագործական ուսումնարանի մեքենաշինության բաժինը:

Ավարտելով ուսումը՝ 2019 թ. հուլիսի 12-ին զորակոչվել է բանակ:

Ծառայության ժամանակ արժանացել է «Քաջարի մարտիկ» շքանշանի, մասնակցել է դիպուկահարների մրցույթի, որտեղ էլ գրավել է 1-ին տեղը:

Երբ սկսվեց պատերազմը, Գարիկը մեկ տարի երկու ամսվա ծառայող էր: Պատերազմի հենց առաջին օրվանից առաջնագծում էր՝ որպես դիպուկահար:

Բոլորը նրան Գարո էին ասում: Պատերազմի թեժ օրերին էլ ժամանակ էր գտնում և մոր հետ մի պահ խոսում. շատ բան չէր ասում, միայն՝ լավ եմ ու ամեն ինչ կարգին է, հանգիստ եղեք և իմ մասին մի մտածեք:

Ընկերների պատմելով՝ հոկտեմբերի 7-ին վիրավորվել է, բայց հրաժարվել բժշկական օգնությունից՝ ասելով՝ թեթև քերծվածք է, չի կարող լքել դիրքերը և մենակ թողնել ընկերներին…

Հոկտեմբերի 10-ին իրենց ջոկատով հադրութում 200 հոգանոց դիվերսիոն խումբ են ոչնչացրել:

Վերջին հեռախոսազանգը հոկտեմբերի 18-ին էր. խոսեց բոլորի հետ, գաղտնաբառով հասկացրեց, թե որ տարածքում է գտնվում՝ նորից կրկնելով, որ լավ է…

Երկու օր չզանգահարելուց հետո ընկերների միջոցով լուր է ուղարկում, որ հանգիստ լինեն, ուղղակի կապ չլինելու պատճառով չի կարողանում զանգել: Եվ այդպես էլ ընտանիքն այդ օրվանից մնում է հերոսի զանգին սպասող…

Ութ ամիս փնտրում էին՝ հույս ունենալով, թե գերի կլինի ու մի օր կվերադառնա…

2021թ. հունիսի 22-ին ԴՆԹ-ի անալիզի միջոցով գտնում են հերոսի մարմինը…

Վերջին տվյալներով՝ Գարիկը փորձել է հրամանատարի մարմինը դուրս բերել մարտի դաշտից, բայց հակառակորդի դիպուկահարի կրակոցից հոկտեմբերի 21-ին զոհվել է. Վարանդայում էր:

Հուղարկավորվել է Խնձորեսկի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Առաքելյան Համլետ Ռաֆիկի



Պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցել է հայրենիքի փրկության համար մղվող մարտերին: Նա եղել է պատերազմի ամենաթեժ կետերում՝ Ջրականում, Մատաղիսում, Հադրութում:

Ծնվել է 1972 թ. հոկտեմբերի 13-ին Սյունիքի մարզի Կորնիձոր գյուղում: Սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Մեղրիի զորամասում: Հետո վերադարձել է հայրենի գյուղ, զբաղվել գյուղատնտեսությամբ:

Ամուսնացած էր, ունի չորս զավակ:

2016 թվականի օգոստոսին տեղափոխվել է Քաշաթաղի շրջանի Աղավնո գյուղ, որտեղ ևս շարունակում էր զբաղվել գյուղատնտեսությամբ ու շինարարությամբ:

Պատերազմի հենց առաջին օրվանից մասնակցել է հայրենիքի փրկության համար մղվող մարտերին: Եղել է պատերազմի ամենաթեժ կետերում՝ Ջրականում, Մատաղիսում, Հադրութում: Հենց Հադրութից վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 14-ին: Դրանից հետո երկար ժամանակ լուր չկար, ընտանիքը սկսում է փնտրել... 2021թ. մայիսի 20-ին հաստատվում է ԴՆԹ անալիզի պատասխանը:

Համլետ Առաքելյանը զոհվել է հոկտեմբերի 16-ին՝ Ջրականի համար մղվող թեժ մարտերի ժամանակ՝ մինչև վերջ լինելով կռվի դաշտում:

Հուղարկավորվել է Կորնիձորի գերեզմանատանը՝ 2021թ. մայիսի 24-ին:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Ասյան Սերոբ Սարմենի

...կար մեկը, ում Սերոբն աշխարհում ամենաշատն էր սիրում՝ Ավոն՝ երկու տարեկան եղբայրը: Մեկ անգամ նույնիսկ փախել է Ասկերանի զորամասից, որ գա ու տեսնի նորածին Ավոյին:

Ծնվել է 1998 թ. սեպտեմբերի 1-ին Տեղ գյուղում: Կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Ասկերանում: Ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես խիզախ, պատասխանատու զինվոր, արժանացել շնորհակալագրերի:

Համագյուղացիներն ափսոսանքով են հիշում ժպտերես, հումորով, աշխույժ, հայրենասեր պատանուն, պատմում, որ նա պատրաստակամ էր օգնելու յուրաքանչյուրին:

Սերոբն ընտանիքի ավագ զավակն էր, կրտսեր քույրերը շատ-շատ էին կապված իրենց պաշտպան, թև ու թիկունք եղբոր հետ, բայց կար մեկը, ում Սերոբն աշխարհում ամենաշատն էր սիրում՝ Ավոն՝ երկու տարեկան եղբայրը: Մեկ անգամ նույնիսկ փախել է Ասկերանի զորամասից, որ գա ու տեսնի նորածին Ավոյին:

Ընտանիքի ավագ որդին ցանկանում էր ինքնուրույն գումար վաստակել, բացի այդ կարոտում էր զինվորական ծառայությունը և 2020 թ. օգոստոսից պայմանագրային ծառայության է անցնում Խնձորեսկի զորամասում:

2020 թ. սեպտեմբերի 27-ից հետո Սերոբը զորամասի կազմում մեկնեց Ջրական: Հարմար որպե գտնելիս տուն էր զանգահարում, հանգստացնում ընտանիքի անդամներին, համոզում, որ ինքը լավ է:

Հոկտեմբերի 11-ին վերջին անգամ զանգահարում է հորեղբորը՝ անկեղծանում. «Վիճակը լավ չէ...»:

Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 12-ին, հարազատները լսում են բոթը՝ Սերոբը զոհվել է...

Ջրականի տարածքն անգիր իմացող հորեղբայրը երկու օր անց գտնում է եղբորորդու մարմինը:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ավետիսյան Հովհաննես Նիկոլայի

Ծնվել է 1967թ. փետրվարի 7-ին Գորիս քաղաքում: Սովորել և ավարտել է Գորիսի թիվ 2 դպրոցը: 1983 թվականին ավարտելով դպրոցը՝ մեկնել է խորհրդային բանակ: Ծառայել է Իվանովոյում: Ավարտելուց հետո ընդունվել է Իվանովոյի պետական համալսարանի նախապատրաստական բաժինը: Սակայն անսալով ծնողների համառ պնդումներին՝ վերադարձել է հայրենիք և ընդունվել Երևանի Ճարտարագիտական համալսարանի Գորիսի մասնաճյուղի էլեկտրամեխանիկայի ֆակուլտետ: Ավարտելով աշխատել է տարբեր ոլորտներում: Հիմնական աշխատավայրը եղել է Տաթևի ճոպանուղին:Արցախյան 1-ին պատերազմին Հովիկը մասնակցել և անմնացորդ կատարել է իր պարտքը հայրենիքի նկատմամբ:

2005 թվականին, ամուսնանալով Հասմիկ Խոյլունցի հետ, կազմել է օրինակելի ընտանիք: Եթե հարցնելու լինենք նրա ամենակարևոր հատկանիշների մասին, բոլորը երևի կնշեն՝ Հովիկն անտարբեր չէր կյանքի ոչ մի դրսևորման նկատմամբ: Ընկերները նշում են նրա յուրահատուկ ազնվական վարքն ու բարքը, հարազատները նշում են նրա ջերմությունը, հումորը, մարդկայնությունը, պարզությունն ու համեստությունը:

Առանձնահատուկ պետք է նշել գեղարվեստի նուրբ զգացողությունը՝ նկարում էր, երգում, պարում, փայտից գեղեցիկ իրեր էր պատրաստում:

Ապրում էր հայոց երկրի ամենափոքր հաջողությամբ, բառացիորեն տանջվում՝ հայրենիքի ամենափոքր անհաջողությունից, և պատահական չէր, որ կամավոր կերպով, հաշվի չառնելով սրտի հետ կապված վիրահատությունները, մեկնեց պատերազմ...

Գիշերներն անկողին մտնելուց, մինչ մեկնելը, ասում էր. *«Մենք դավաճաններ ենք, մենակ ենք թողել 18-20 տարեկան երեխաներին, մինչդեռ հայրենիքի պաշտպանությունը մեր անձնական պարտականությունն է»*: Այնուհետև կնոջը, մորն ու քույրերին հավատացրեց, թե գործով Երևան է մեկնում ու գնաց...

Նա գնաց՝ որպես տղամարդ և միացավ անպարտների, հայրենիքի նահատակների երկնային լուսավոր գնդին:

Հուղարկավորվել է Գորիսի «Թոզկապ»-ի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Արզանյան Արթուր Սամվելի

Ծնվել է 1987 թվականի հունվարի 7-ին Գորիս քաղաքում:

Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում:

2005 թ. զորակոչվել է հայկական բանակ: Ավարտելով ծառայությունը, վերադարձել է Գորիս, ամուսնացել Մարիաննա Մարությանի հետ. ունեցել են մեկ որդի:

2011 թ. աշխատատանքի է ընդունվում ՀՀ ՊՆ N զորամասում՝ ռադիոհեռագրող:

Մասնակցել է 2016 թ. ապրիլյան պատերազմին: 2018թ. տեղափոխվում է ՀՀ ՊՆ հատուկ նշանակության N զորամաս, աշխատում որպես հետախույզ:

Արթուրին ճանաչողները նրան բնութագրում են լավագույն բառերով, առանձնացնում խիզախությունը, որով օժտված էր մանկության տարիներից:

«Արթուրի համար զինվորական լինելը կենսաձև էր, նա կիրթ ու խելացի զինվորական էր, պահանջկոտ ու պարտաճանաչ: Մարդկային լավագույն հատկանիշներ ուներ, մենք լավ ընկեր ենք կորցրել, հայրենիքը՝ անվախ պաշտպան: Ծառայության ընթացքում շատ անգամ է պարգևատրվել իր արիության ու անմնացորդ ծառայության համար, աննկարագրելի ցավ է նման ընկեր կորցնելը...», – պատմում են ծառայակից ընկերները:

Արթուրն ամենուր սպասված և սիրված էր, ընկերասեր էր, ընտանիքի համար օրինակելի որդի, լավ ամուսին և լավ հայր, հայրենասեր էր ու միշտ պատրաստ իր կյանքը տալ հայրենիքին:

Ծառայության ընթացքում, բարձր ցուցանիշների և օրինակելի զինվորական կարգապահության համար, բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հենց առաջին օրը, իր զինակից ընկերների հետ, մեկնում է Մեխակավան՝ պաշտպանելու հայրենի սահմանները:

Զոհվել է 2020թ. սեպտեմբերի 30-ին՝ մարտական առաջադրանք կատարելու ժամանակ:

Միայն ամիսներ անց՝ 2021 թ. փետրվարի 20-ին, ԴՆԹ-ի անալիզը հաստատեց Արթուրի զոհվելու փաստը:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով:

Արզումանյան Արտուշ Արարատի

Ծնվել է 1979 թվականի ապրիլի 17-ին Գորիսում: Սովորել է տեղի թիվ 5 միջնակարգ դպրոցում, կրթությունը շարունակել Գորիսի պետական քոլեջում, հետո ուսանել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանում:

Ամուսնացած էր, ունի երեք որդի:

1997 թվականից մինչև 1999 թ. ՊԲ-ում ժամկետային զինծառայող էր: 1999-ից մինչև 2020 թվականը ծառայել է Կուբաթլիում, Մարջալիում, Արա լեռում, Ջրականում: 2015թ. սովորել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում, ստացել լեյտենանտի կոչում: 2016 թ. ծառայել է N զորամասում և մասնակցել է Քառօրյա պատերազմին:

2019 թ. ստացել է կապիտանի կոչում:

2020 թ. սեպտեմբերի 27-ից սկսված պատերազմում թշնամու կողմից ոչնչացվել էին գումարտակի բոլոր մեքենաները. իր անձնական մեքենայով իրականացրել է զինամթերքի տեղափոխումը և զուգահեռաբար մասնակցել մարտական գործողություններին: Մարտական գործողություններից մեկի ժամանակ ընկել է շրջափակման մեջ՝ մոտ 40 րոպե մարտավարական հնարքների կիրառությամբ դուրս է եկել շրջափակումից՝ փրկելով մի շարք զինծառայողների կյանք: Իրականացրել է նաև դիերի տեղափոխում...

Կապիտան Արզումանյանն իր ծառայության ընթացքում արժանացել է պատվոգրերի և անձնվեր ծառայության համար ստացել մի շարք մեդալներ՝ 2006 թվականին՝ «Անբասիր ծառայության» առաջին աստիճան, 2013 թվականին՝ «Անբասիր ծառայության» երկրորդ աստիճան, 2016 թվականին՝ «Դրաստամատ Կանայան», 2017 թվականին՝ «Հայաստանի երկրապահ» հուշամեդալ, 2017 թվականին՝ «ՀՀ Զինված ուժեր-20 տարի» հոբելյանական մեդալ, 2019 թվականին՝ «Անբասիր ծառայության» երրորդ աստիճանի մեդալ:

Հոկտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը, զինամթերք տեղափոխելիս, կանգ է առնում, որպեսզի օգնի վիրավոր զինվորներին, այդտեղ էլ զոհվում է՝ փրկելով մի շարք զինվորների կյանք:

Հուղարկավորվել է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Արչունց Արման Արտուշի

Ծնվել է 2001 թ. հունվարի 26-ին Խնձորեսկ գյուղում: Սովորել է Որոտան գյուղի միջնակարգ դպրոցում: 2019 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Մարտակերտի Գանձասար գյուղում:

Ութ տարեկանում կորցրել է հորը: 11 տարեկանում ինքնակամ ստանձնել էր մորը ֆինանսապես օգնելու պարտավորությունը: Արմանի մայրը մեզ հետ խոսելիս մղկտում է որդու որբության, կյանքում տեսած դժվարությունների ու կրած զրկանքների համար. *«Որդիս երբեք հեշտ չի ապրել, 11 տարեկանում, դպրոց գնալուց առաջ, դեռ լույսը չբացված գնում էր ձուկ որսալու, բռնած ձկները 300-400 դրամով վաճառում էր, գումարը դնում սեղանին, թե հաց կառնես երեխաների համար: Գնում էր 1000-2000 դրամով ցեմենտ բեռնաթափում, գումարն ինձ տալիս: Իր աշխատավարձով բանակի քեֆ արեց:*

Բանակում բոլորիս կարոտում էր...

Մանկություն չունեցավ, պատանեկությունն անցավ ծանր աշխատանքով, կյանք չտեսած՝ զոհվեց:

Հրաշալի ծառայող էր: Բազմաթիվ պատվոգրեր է ստացել, նաև շնորհակալագրեր, «Բանակի գերազանցիկ» ու «Մարտիկ» մեդալներով է պարգևատրվել: Հրամանատարներն ասում են՝ բանակում աշխատասիրության օրինակ է եղել:

Կարոտ կա, որ թևերդ կոտրում է, որ խեղդում է, որ ստիպում է քեզ անզորությունից եղունգներդ կրծել, հենց այդպիսի կարոտ եմ զգում...»:

Արմանի մասին համագյուղացիներն առանց արցունքների խոսել չեն կարողանում. *«Տանջված երեխա էր: Հարգալից էր, օգնող, աշխատասեր, նվիրված: Մեծի պես աշխատում էր, մի քանի տղամարդուց ավելի պատասխանատու էր: Սիրված երեխա էր, գյուղում բոլորը նրան սիրում էին իր համեստության, լսելու ունակության համար: Ափսոս, կյանքը չափազանց անարդար գտնվեց Արմանի նկատմամբ...»:*

Հոկտեմբերի 18-ին Արմանը զանգահարել էր, ասել, թե ամեն ինչ լավ է: Ժամեր անց թշնամու անօդաչուի ռմբակոծումից զոհվել է, նրա հետ նույն խրամատում զոհվել են ութ զինվոր ևս: Համեստության ու աշխատասիրության շնորհիվ ձեռք էր բերել հավատարիմ ընկերներ, ովքեր, իրենց կյանքը վտանգելով, դուրս են բերել նրա անշնչացած մարմինն ու ժամեր անց հասցրել Գորիս:

Հուղարկավորվել է 2020 թ. հոկտեմբերի 21-ին Որոտան գյուղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Ափյան Արա Յուրիկի

Նա մեծ հայրենասեր էր, իրեն տեսնում էր զինվորական համազգեստով: Այդ էր պատճառը, որ 2019 թ. անցավ պայմանագրային զինծառայության:

Ծնվել է 1983 թ. մայիսի 12-ին Գորիս քաղաքում: Հաճախել է Գորիսի թիվ 4 միջնակարգ դպրոցը (1990-1998): Ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ: 2001 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Տավուշի զորամասում: Երկու տարի պատվով ծառայելով՝ զորացրվել է 2003 թ.: Շարունակելով ուսումը՝ ավարտել է 2005 թ.: Ապա անցել է աշխատանքի «Գրանդ Տոբակո» ընկերության Գորիսի մասնաճյուղում:

Նա մեծ հայրենասեր էր, իրեն տեսնում էր զինվորական համազգեստով: Այդ էր պատճառը, որ 2019 թ. անցավ պայմանագրային զինծառայության:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը սանձազերծեց լայնամասշտաբ պատերազմ… Արա Ափյանը առաջին օրվանից առաջնագծում էր՝ պաշտպանելու հայրենիքի սահմանն ու հայոց հողը: Իր ջոկատով առաջիններից էր, որ կանգնեցին թշնամու դեմ: Մարտն առավել քան թեժ էր, բայց քաջ մարտիկի համար դա հաղթահարելի էր: Ու նա անզիջում պայքար էր մղում թշնամու դեմ…

Արա Ափյանը Ջրականում էր. հոկտեմբերի 1-ին և 2-ին վիրավոր ընկերոջը մենակ չթողնելով, մինչև վերջ պայքարեց քաջաբար ու ընկավ՝ չծնկելով թշնամու առաջ:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով:

Բաբայան Վահագն Վահանի

Ծնվել է 1990 թ. օգոստոսի 28-ին Տեղ գյուղում: Հաճախել է գյուղի դպրոցը, բարձր դասարաններում սովորել Ստեփանակերտի Քրիստափոր Իվանյանի անվան ռազմական վարժարանում: Բարձրագույն կրթությունը ստացել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: Ամուսնացած էր, ունի երկու երեխա:

Նրա գիտակցական կյանքը նվիրված էր բանակին. մտքին բանակաշինությունն էր, երազներում՝ տարածաշրջանի լավագույն բանակն ունենալու տեսլականը:

Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանն ավարտելուց հետո սպայական ծառայության է անցել Արցախում՝ Մարտունիում: Զինվորներն ու ընկերները Վահագնին նկարագրելիս ասում են. «*...Իսկական սպա էր, նրան հնարավոր չէր ծուղակը գցել, երբ իմացանք զոհվել է, հասկացանք, որ գիտակցաբար է արել և ուրիշ ելք չի ունեցել, բայց նա այն քչերից էր, որ սեփական կյանքը զոհաբերելով՝ դիրքը չհանձնեց*»:

Պատերազմի սկզբում մայոր Բաբայանն իր սխրագործությունների համար փոխգնդապետի կոչում է ստացել և Արցախի ՊԲ հրամանատարի կողմից պարգևատրվել «Մարտական խաչ» շքանշանով:

Քույրն արցունքները կուլ է տալիս, հպարտություն ու անմորմոք ցավ կա ձայնի մեջ. «*Եղբայրս հերոս է՝ այդ բառի լրիվ իմաստով, ինձ շատերն են պատմել, թե ինչպես է ընդդիմացել բոլորին, ոտքով 40 կմ քայլել, գտել ու շրջափակումից դուրս բերել բազմաթիվ զինվորների: Երբ 7 տարեկան դուստրը խնդրել է տուն գալ, եղբայրս պատասխանել է, թե դուք ապահով եք, այստեղ այնքան 18 տարեկան երեխաներ կան, որ կրակի տակ են ու նրանց մենակ չի կարելի թողնել*»:

Կնոջ հետ բազմաթիվ հեռախոսազրույցներ է ունեցել պատերազմի ամբողջ ընթացքում, հույս է տվել, որ հաղթանակած տուն է վերադառնալու...

Նոյեմբերի 9-ին՝ հրադադարից ընդամենը ժամեր առաջ, թշնամին նկատել էր Վահագնի դիրքը և խնդիր դրել՝ ամեն կերպ ոչնչացնել առյուծի պես կռվող հայ սպային ու նրա ջոկատը: Հրադադարից երկու ժամ առաջ թշնամին՝ օդային անդադար կրակով, հասնում է նպատակին՝ զոհվում է Վահագնը...

Հուղարկավորված է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի:

Բաբայան Վահան Գագիկի

Ծնվել է 1987 թ. նոյեմբերի 26-ին Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է ՀՀ զինված ուժերում: Հայրենիքի նկատմամբ զինվորական պարտքը կատարել է Արցախում՝ Մարտունիի պաշտպանական դիրքերում: Ծառայությունից հետո ամուսնացել և բնակության է տեղափոխվել Ռուսաստանի Դաշնություն: Շուրջ վեց տարի աշխատել է Սուրգուտ քաղաքում: Այնուհետև վերադարձել է գյուղ և, իբրև պայմանագրային զինծառայող, աշխատանքի անցել ՀՀ բանակում: Երկու տարի Նախիջևանի սահմանային գոտում իրականացրել է մարտական հերթապահություն, ապա՝ զորամասի շտաբում աշխատել վարորդ: Սեպտեմբերյան պատերազմի ծանր օրերից մի օր, երբ մեր զինվորները կյանքի ու մահվան միջև մարտեր էին մղում ռազմաճակատի հարավային թևում՝ Ջրականի մատույցներում, արկերով բարձված երկու բեռնատարն անհրաժեշտ էր հասցնել առաջնագիծ: Տեղանքին ծանոթ մարդիկ քիչ էին: Այդ գործը կամովին իր վրա վերցրեց Վահանը: Հոկտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը բեռնատարներից մեկի խցում՝ զինամթերքն ուղեկցում է մարտադաշտ: Հենց մեր դիրքերի մոտ սկսվում է հրետակոծությունը: Այդտեղ էլ կտրվում է նրա կյանքի թելը:

Բարձրաստիճան զինվորականներից մեկը, ում հետ վերջին տարիներին աշխատել է Վահան Բաբայանը, պատմում է.

– Դժվար է բառեր գտնել բնութագրելու Վահանին, եզակի մարդ էր՝ անկեղծ, պարզ, անմիջական... Ծառայության մեջ ոչ միայն պատասխանատու էր, այլև՝ պատրաստակամ, ընկերոջը, զինվորին հասնող, չէր տրտնջա նույնիսկ 24-ժամյա աշխատանքային ռեժիմից... Զինմասում էլ, եթե ազատ ժամանակ ունենար, նորեկների կողքին էր. օգնում էր, քաջալերում, հուսադրում... Կատարվածն էլ իր նվիրվածության ու ազնվության արդյունքն էր...

Հուղարկավորվել է Վերիշենի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով:

Բաբայան Վանիկ Վահանի

Ծնվել է 1988թ փետրվարի 9-ին Տեղ գյուղում, որտեղ և միջնակարգ կրթություն է ստացել:

Ընտանիքով տեղափոխվել են Քաշաթաղի շրջան՝ Բերձոր, որի պատճառով էլ Տեղում ուսումը կիսատ է թողել և այն շարունակել Բերձորում: Դպրոցն ավարտելուց հետո՝ 2009 թ. ընդունվել է Գորիսի պրոֆ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը, որտեղ էլ ստացել է «Լայն պրոֆիլի տրակտորիստ մեքենավարի» մասնագիտություն:

2012 թ. փետրվարի 13-ին ամուսնացել է:

2013 թ. հունվարի 8-ին ծնվել է ավագ որդին՝ Վահանը:

Վանիկն ընտանիքն ապահով պահելու համար՝ զբաղվել է տարբեր աշխատանքներով:

Շատ բարի, մեծահոգի, բոլորին հասնող ու բոլորի ցավով ապրող մարդ էր:

2020 թ. սեպտեմբերի 27-ին, երբ սկսվեց պատերազմը, առանց մեկ վայրկյան մտածելու կամավորագրվում է և մասնակցում պատերազմին՝ մինչև կյանքի վերջին օրը:

Եղել է տարբեր տեղերում, օգնել է շատերին՝ փրկելով կյանքեր... Պատերազմի վերջին օրը՝ նոյեմբերի 9-ին, հրադադարից ժամեր առաջ է զոհվել՝ չտեսնելով երկար սպասված երկրորդ որդու ծնունդը: Նրա զոհվելուց հետո ծնվում է երկրորդ որդին՝ Արեգը. դա 2020 թ. նոյեմբերի 30-ին էր:

Պատերազմի օրերին էր: Վանիկը զանգահարում է տուն և խոսում իր տղայի հետ՝ ասելով, թե շատ է կարոտել, որ ինքը խաղալիք է ստացել: Խաղալիք... Իսկ փոքրիկ Վահանը հորն ասում է՝ այդ խաղալիքը պահի այնքան, մինչև հանդիպենք ու միասին խաղանք...

Նա այնքան լավատես էր: Ի՞նչ իմանար՝ ճակատագիրն ու Աստված ինչ են նախատեսել իր համար: Նա զենքին խաղալիք անվանեց, զենքը խաղալիք ներկայացրեց: Թերևս այս պատերազմում զենքը հենց խաղալիք էր որ կար...

Հուղարկավորված է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Բազունց Բաբկեն Արսենի

Լինելով հայրենիքի նվիրյալ զավակ՝ Բաբկենը մեկնեց պաշտպանելու հայրենի հողը, մեկնեց իր ցանկությամբ:

Ծնվել է 1995 թ. դեկտեմբերի 14-ին Գորիս քաղաքում: Ավարտել է Գորիսի թիվ 4 ավագ դպրոցը, որից հետո ուսումը շարունակել Երևանի պետական բժշկական համալսարանում: Վերապատրաստվել է արտասահմանյան ճանաչված բուժհաստատություններում:

Իսկական ասպետ էր Բաբկենը՝ տաղանդավոր, խելոք ու խելացի, մանկան պես պարզ էր, բայց նաև վճռական ու հաստատակամ իր ամեն որոշման մեջ: Գիտեր անխնա նվիրվել հայրենիքին, ընտանիքին և սիրած գործին, այդ պատճառով էլ ընտրել էր մշտապես նվիրում պահանջող մասնագիտություն՝ դառնալ բժիշկ:

Համակուրսեցիներն ու դասախոսական կազմը ցավով են կիսում սիրելի ընկերոջ և ուսանողի կորստյան վիշտը: Հասարակագիտական առարկաների ամբիոնի դասախոս Հայարփի Սահակյանը տարիներ առաջ դասավանդել է Բաբկեն Բազունցին: Դասախոսը վաղուց գործընկեր է համարել նախկին ուսանողին, և նշում է. *«Նրա մեջ էի տեսնում մեր երկրի առողջապահության ոլորտն առողջացնողներից մեկին: Կորցրինք պրոֆեսիոնալ մասնագետի, խելացի, մտածող, վերլուծող, ըմբոստ անհատի»,* – ասում է ԵՊԲՀ դասախոսը՝ հավելելով, որ պատերազմը բոլորիս սրտերին ու հոգիներին շատ ծանր հետք է թողել:

Լինելով հայրենիքի նվիրյալ զավակ՝ Բաբկենը մեկնեց պաշտպանելու հայրենի հողը, մեկնեց իր ցանկությամբ:

Պատերազմի ժամանակ եղել է N զորամասի բուժկետի պետ:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 21-ին՝ Հադրութի Դրախտիկ գյուղի շրջակայքում՝ մասնագիտական պարտքը կատարելիս:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Բազունց Սևակ Ռուբիկի

Ծնվել է 1995 թ. հոկտեմբերի 30-ին Խնձորեսկ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 2013 թ. ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան: Դեռ համալսարանի ուսանող էր, երբ մասնակցություն ունեցավ 2016 թ. քառօրյա պատերազմին՝ լինելով Հադրութի պաշտպանության առաջնագծում: 2017 թ. նորավարտ լեյտենանտը վիճակահանության ժամանակ դիմել է պաշտպանության նախարարին՝ ցանկություն հայտնելով ծառայել Ջրականի զորամասում: Ծառայության կարճ ժամանակահատվածում նվիրյալ սպան դասակի հրամանատարի պաշտոնից առաջխաղացման կարգով ստանձնել է վաշտի հրամանատարի պաշտոնը:

Ընտանիքում հիշում են, թե ինչպես էր ամեն անգամ անակնկալ տուն վերադառնալիս, ձեռքը կրծքին խփելով, ասում. «Էս տղեն ժամանեց». մայրը հորդորում էր մտածել ամուսնանալու մասին, որին ի պատասխան ժպտալով ասում էր. *«Մամ, ես զենքի հետ եմ ամուսնացել»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Սևակ Բազունցն արձակուրդում էր, պատերազմի բոթը լսելուն պես մեկնել է առաջնագիծ և միացել իր վաշտին: Մարտի թեժ պահերին եղել է ամենավտանգավոր հատվածներում: Հմուտ ղեկավարել է իր ստորաբաժանումը, վաշտի կազմով պաշտպանողական մարտեր է մղել Նարինջի /Նյուգեր/ հատվածում, կարողացել անվնաս դուրս բերել վաշտը շրջափակումից՝ Արա լեռան, Ջրականի տարածքներում: Նրա ղեկավարած վաշտը հակառակորդին հասցրել է կենդանի ուժի և զինտեխնիկայի մեծաթիվ կորուստներ: Արդեն Հադրութ քաղաքում ստանձնել է գումարտակի հրամանատարի տեղակալի պաշտոնը և հմտորեն ղեկավարել ստորաբաժանումը:

Հոկտեմբերի 10-ին մեկնել է պաշտպանության այլ շրջան...

Հոկտեմբերի 12-ին հակառակորդը հրթիռահրետանային հուժկու գրոհով հարձակման է անցել այն հատվածում, ուր գտնվում էր Սևակ Բազունցը. երիտասարդ, հայրենասեր սպան բեկորային վիրավորում է ստացել, որն էլ ճակատագրական է եղել նրա համար:

Զոհվել է երիտասարդ, առյուծասիրտ սպան՝ վստահ, որ իր հողի համար է պայքարում, որ արդար է իր կռիվը, որ հայրենիքն արյունով պահելու իր հերոսական օրինակը պիտի ոգեշնչի սերունդներին:

Հուղարկավորվել է Խնձորեսկի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Բակունց Վահե Վահագնի

Ծնվել է 2001 թ. մարտի 24-ին Գորիսում: Սովորել է Վերիշենի միջնակարգ դպրոցում: Միջնակարգն ավարտելուց օրեր անց զորակոչվել է բանակ, ծառայել է Արա լեռան զորամասում:

Վահեի մասին զրուցում ենք համագյուղացիների հետ, նրանք չեն կարողանում զսպել արցունքները. *«Մեր գյուղի լույսերից մեկն էր, մի տեսակ երեխաներ կան, չէ՞, ում բոլորը սիրում են, ինքն այդ տեսակ երեխա էր: Հարգալից, բարի, ականջը թեթև: Պատերազմի առաջին օրվանից նրանից լուր չկար, ինչքան ենք աղոթել, որ գտնվի, բայց չէինք պատկերացնում, որ զոհված կգտնեն, Աստված ուժ տա նրա ծնողներին, որ դիմանան...»:*

Վահեի մայրը մինչ օրս ուշքի չի գալիս. հիմա բակերում ծաղկել են ծաղիկները, որոնք նրան իր որդուն են հիշեցնում: Վահեն սիրում էր պոկել ծաղիկներն ու բերել մայրիկին:

Վահեն ինքն էր ցանկացել Արցախում ծառայել, քանի որ ավագ եղբայրն Արա լեռան զորամասում էր ծառայում: Եղբայրը զորացրվել էր պատերազմը սկսելուց երկու ամիս առաջ ու ընտանիքը սպասում էր, որ Վահեն էլ շուտով կավարտի ծառայությունն ու կվերադառնա տուն: Մայրը բազմաթիվ երազանքներ ուներ, որոնք կապում էր իր Վահեի հետ, երազում էր մայրն ու հաշվում որդու վերադարձին մնացած օրերը:

Ընտանիքի անդամները Վահեի հետ վերջին անգամ հեռախոսով խոսել են սեպտեմբերի 26-ին. պատերազմի գույժը լսելուց հետո անհանգստացել էին, ցանկացել կապ հաստատել, բայց...

...Հարազատները հետո պիտի իմանային, որ իրենց որդին զոհվել է պատերազմի առաջին օրը: Պիտի իմանային անսպասելի. հարազատներից մեկը դիահերձարան բերված զոհերի մեջ հանդիպել է Վահեի անունը, կարծել ու հուսացել է, թե սխալմունք է՝ ստուգել է ու ավա՜ղ...

Բակունց Վահեն զոհվել է սեպտեմբերի 27-ին. այդ ողբերգությունը հավերժ դադարեցրեց նրա երազանքների ճախրանքը...

Հուղարկավորվել է հոկտեմբերի 3-ին Վերիշենի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Բաղդագյուլյան Աշոտ Վարազդատի

Ծնվել է 1973 թ. փետրվարի 20-ին Խնձորեսկ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի Գարեգին Սևունցի անվան դպրոցում:

1990 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: 1996 թ. զորակոչվել է բանակ:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

2015 թ. աշխատանքի է անցել զինված ուժերում՝ որպես սպա, ստացել ավագ լեյտենանտի կոչում, եղել է տանկային դասակի և տանկային վաշտի հրամանատար: 2019թ. արժանացել է «Ծովակալ Հ. Ս. Իսակով» մեդալի:

2016 թ. ապրիլին զորամասի կազմով մասնակցել է քառօրյայի մարտերին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Աշոտը հոսպիտալում էր՝ վիրահատվել էր շնչառական խնդիրների պատճառով: Հաջորդ օրն արդեն հոսպիտալում վիրավոր զինվորներ կային: Եվ նա, առանց լրիվ բուժվելու, դուրս է գրվում հիվանդանոցից՝ տանը բուժումը շարունակելու հանձնառությամբ: Բժշկի թուղթը, որում նշված էր՝ տասնօրյա տնային խնամք, թողնում է զորամասում. հաջորդ առավոտյան ծառայության վայրում էր...

Անհամբեր սպասում էր իր ծառայակից ընկերներին, ովքեր սեպտեմբերի 15-ին մեկնել էին Վոլգոգրադ՝ մասնակցելու «Կովկաս 2020» զորավարժություններին: Սեպտեմբերի 29-ին նրանք վերադարձան ու նրանց հետ շտապեց մարտադաշտ...

Հոկտեմբերի 8-ին Ջրականի հետգրավման մարտերում գործել է բազում սխրանքներ, ոչնչացրել թշնամու բազմաթիվ կրակակետեր: Աշոտը, իր անձը մոռացած, օգնության է հասել շրջափակման մեջ գտնվող զինվորներին՝ տանկով միայնակ մխրճվելով թշնամու շրջափակման մեջ գտնվող տարածք՝ իր վստահ քայլերով, հրամանատարի քաջությամբ, հմուտ սպայի հնարքներով փրկելով նրանց: Կռիվներից մեկի ժամանակ վերջին արկը մնացել է տանկի փողի մեջ (չի կրակել), Աշոտը դուրս է եկել տանկից, թշնամին պայթեցրել է տանկը: Հրաշքով փրկված սպան երկու անսարք տանկ է գտել, երկու օր վերանորոգել, որպեսզի գոնե դրանք զորամաս հասցնի:

Հոկտեմբերի 16-ին թշնամին խոցել է տանկը. Աշոտը զոհվել է տանկի անձնակազմի հետ:

Աշոտ Բաղդագյուլյանը մինչև վերջ հավատարիմ մնաց սպայի կոչմանը... Հուղարկավորվել է Խնձորեսկի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գասպարյան Դավիթ Սերգեյի

2011 թ. ծառայել է ԱՀ զինված ուժերում՝ պայմանագրային զինծառայող:
2020 թ. սեպտեմբերի 27-ից մասնակցել է Արցախյան պատերազմին...
2020 թ. հոկտեմբերի 22-ին հայրենիքի պաշտպանության ժամանակ անմահացել է:
Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 25-ին Ստեփանակերտում:

1980 թ. ընդունվել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը:

1993-1998 թթ. ծառայել, հետո աշխատել է ԼՂՀ զինված ուժերում՝ սակրավոր:

1998 թ. աշխատել է Արցախի Հանրապետության փրկարար ծառայությունում, իսկ 2000 թ. տեղափոխվել է «Hello trast» կազմակերպություն:

2011 թ. ծառայել է ԱՀ զինված ուժերում՝ պայմանագրային զինծառայող:

2020 թ. սեպտեմբերի 27-ից մասնակցել է Արցախյան պատերազմին...

2020 թ. հոկտեմբերի 22-ին հայրենիքի պաշտպանության ժամանակ անմահացել է...

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Գրիգորյան Կարեն Արբենի

Մերօրյա պատերազմի նահատակներից է. ծննդավայրը Հարթաշեն գյուղն է, որտեղ աչք է բացել 2001թ. օգոստոսի 19-ին: 2008-2019 թթ. սովորել և ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ:

Հարազատները, մտերիմները, ընկերները նրա հետ բազում հույսեր էին կապում երկրային կյանքում: Բայց Կարենին բաժին հասավ երկնային կյանքը: Եվ այժմ խորը կսկիծով և ափսոսանքով են հիշում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարան:

Չորս ամիս սովորելուց հետո, ուսումը կիսատ թողնելով, 2020 թ. հունվարի 19-ին զորակոչվել է զինծառայության, որի առաջին վեց ամիսն անցկացնելով Լուսակերտի ուսումնական գումարտակում՝ ճանաչվել է լավագույն հրետանավորներից մեկը և ստացել սերժանտի կոչում: Այնուհետև տեղափոխվել է Տավուշի մարզի Մեհրաբի զորամաս և շարունակել ծառայությունը՝ կատարելով իր առջև դրված պարտականությունները: Մասնակցել է 2020թ. հուլիսի 12-ին տեղի ունեցած տավուշյան մարտերին և, փայլուն կատարելով մարտական առաջադրանքները, արժանացել է «Արիության համար» մեդալի:

Հայրենասեր և նվիրված զինծառայող էր, բավականին կայացած՝ հայրենիքի պաշտպանության գործի համար: Մեծ հեղինակություն էր վայելում զինակից ընկերների և հրամանատարական կազմի կողմից:

2020 սեպտեմբերի 27-ին, երբ Արցախյան ճակատում սկսվեցին լայնամասշտաբ մարտեր, Կարենն իր մարտական ընկերների և հրամանատարների հետ տեղափոխվեց Արցախ ու ներգրավվեց մարտական գործողությունների մեջ: Պատերազմի օրերին զանգահարում, խոսում էր ծնողների հետ: Բարձր տրամադրությամբ փորձում էր հանգստացնել մայրիկին՝ ասելով, թե հաղթանակը մերը կլինի: Մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն և հնարամտություն: Հրետանային կրակ վարելով՝ ոչնչացրել է հակառակորդի չորս տանկ եվ կասեցրել թշնամու առաջխաղացումը:

Հոկտեմբերի 28-ի օրը ճակատագրական եղավ նրա համար. հակառակորդի դիպուկ հարվածը կտրեց հայրենիքի պաշտպանի կյանքի թելը...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Դանիելյան Ավետիք Ավշարի

«...Համեստ, ընկերասեր, պատրաստակամ երիտասարդ էր Ավետիքը: Սիրում էր սպորտը, հատկապես՝ֆուտբոլ... Նա չէր կարող առաջինների շարքերում չլինել: Մասնակցեց հայրենական նոր պատերազմին և հերոսացավ...

Ծնվել է 1978 թ. հունիսի 23-ին Գորիսի տարածաշրջանի Բռուն (Ակներ) գյուղում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո սովորել է տրակտորիստ-գյուղմեխանիզատորի մասնագիտություն:

1996-1998 թթ. զինվորական պարտքը կատարել է ՀՀ ազգային բանակում՝ Տավուշի մարզում տեղակայված զորամիավորումում: Ծառայությունից հետո աշխատել է տարբեր կազմակերպություններում: Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

2020 թ. սեպտեմբերի 27-ին առաջիններից էր, որ ներկայացավ՝ մեկնելու մարտադաշտ, պաշտպանելու վտանգված հայրենիքը: Մինչև ատամները զինված թշնամու դեմ պայքարի է դուրս եկել Ջրականի մատույցներում:

Ահեղ մարտերում զոհվել է հոկտեմբերի 14-ին:

«...Համեստ, ընկերասեր, պատրաստակամ երիտասարդ էր Ավետիքը: Սիրում էր սպորտը, հատկապես՝ֆուտբոլ... Նա չէր կարող առաջինների շարքերում չլինել: Մասնակցեց հայրենական նոր պատերազմին և հերոսացավ... Փառք քեզ, հերոս: Ցավում ենք, բայց և հպարտանում...», – գրում է նրա մասին ուսուցիչը՝ Էմմա Սահակյանը:

Իսկ ակներցի բանաստեղծ Լևոն Սահակյանը, որին խնդրել էինք գտնել Ավետիքի լուսանկարը, այդ պատկերի տակ տեղադրել էր դեռևս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ գրած բանաստեղծության մի քառատողը.

Խորանի մեջ երգեհոնն է լալիս,
Կանթեղներից տխրություն է ծորում,
Եվ նահատակ ամեն քաջի համար
Իմ սրտի մեջ գերեզման եմ փորում...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Դանիելյան Արամիկ Կամոյի

Ծնվել է 1991 թ. մարտի 25-ին Տեղ գյուղում, որտեղ ստացել է միջնակարգ կրթություն:

2009 թ. զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, ծառայել Արցախի Հանրապետության մայրաքաղաքում՝ Ցորի զորամասում:

Զինվորական երդում տալու օրվանից ինքն իրեն խոստացել է անձնվիրաբար ծառայել հայրենիքին և չխնայել կյանքը: Երդում, որին հավատարիմ մնաց…

Կինը՝ Մարիաննան, վերհուշն այսպես է սկսում. *«2012 թ. տեր ու հնազանդ լինելու երդումներ տալով՝ ամուսնացանք: Հենց այդ բարձր զգացմունքն էր, որ մեզ ամեն օր ավելի կատարյալ էր դարձնում: Արամը զինվորական էր, զինվորական կյանքը բավականին փոխել էր նրան՝ լրջացրել: Տուն հոգնած էր վերադառնում, բայց փորձում էի պահել ընտանեկան խաղաղությունը: Ուշադրությունը եռապատկվեց, երբ ծնվեց մեր առաջնեկը՝ Նարեն: Արդեն հետախույզ էր, անասելի զբաղված, բայց ամեն ինչ անում էր, որ ինձ միայնակ չզգամ:*

2015 թ. ծնվեց մեր երկրորդ դուստրը՝ Նանեն: Իրեն փորձառու հայրիկ էր համարում: Երջանկությունն այլ կերպ չի լինում, այո՛, երջանիկ էինք…

Եկավ անիծյալ սեպտեմբերի 27-ը:

Այդ օրվա տագնապն առաջին պահին որպես սովորական տագնապ ընդունեցի… Ժամեր անց, սակայն, քարանում էր հայացքս, վախը քայքայում էր ներսս: Անընդհատ կորցնելու վախ, ցասում, անհանգստություն, որ փարատանք չունի, սևեռված հայացք ու աղիողորմ խնդրանք, որ այս անգամ էլ հետ գա:

Ամեն անգամ գլուխս բարձին դնելիս կյանք եմ խնդրել: Հավիտենությունը երկուսիս համար միաժամանակ, միասին եմ ցանկացել, միշտ վստահ եմ եղել, որ կկործանվեմ առանց նրա: Միշտ եմ զգացել, որ գոյությանս միակ երաշխիքն է:

Արամի զոհվելու մասին լուրը կայծակնային արագությամբ տարածվեց Գորիսում…

Նա անպարտելի էր, իմ անպարտ հետախույզը, ում կինը լինելու հպարտությունիցս մի կաթիլ անգամ երբևէ չպիտի պակասի…»:

Արամիկ Դանիելյանը նահատակվեց 2020 թ. սեպտեմբերի 30-ին: Հուղարկավորվել է 2021 թ. հունվարի 10-ին՝ Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Դանիելյան Լևոն Գրիգորի

Ծնվել է 2001 թ. օգոստոսի 30-ին Տաթև գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 2019 թ. ընդունվել է Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետ:

2020 թ. հունվարի 8-ին զորակոչվել է բանակ, ծառայության ուսումնական վեցամսյա փուլն անց է կացրել Գյումրիում: Հիմնական ծառայության վայրը Հադրութի զորամասն էր, որում կրտսեր սերժանտը հակատանկային ջոկի հրամանատար էր:

Դեռ Գյումրիի զորամասում Լևոնն արժանացել էր երկու մեդալի՝ լավ ծառայության ու վարքի համար: Հադրութի զորամասում հասցրել էր աչքի ընկնել առաջին օրերին՝ նրան էր վստահվել նորակոչիկներին զինվորական երդմանը պատրաստելու պատիվ-պարտականությունը, որի համար կարճ ժամանակով տեղափոխվել էր Մարտունու զորամաս:

Սեպտեմբերի 27... Արցախի հերոս Դավիթ Ղազարյանի հրամանատարությամբ Լևոնն ու ընկերները մարտեր են վարել Հադրութում: Լևոնի՝ հակատանկային զենքի վարժ տիրապետման շնորհիվ հակատանկային ջոկը տեխնիկայի ու մարդուժի մեծ կորուստներ է հասցրել թշնամուն:

Նոյեմբերի 6-ին Լևոնը միացել է Շուշիի պաշտպանության մարտերին, նոյեմբերի 7-ին զանգահարել է քրոջը, ասել, թե Քարին տակում շրջափակման մեջ են, սպասում են օգնության...

Նոյեմբերի 17-ին Տաթևը ցնցվեց բոթից՝ Լևոնը զոհվել է: Դատաբժշկական փորձաքննությունը մահվան ամսաթիվ նշել է նոյեմբերի 9-ը...

Լևոնին սիրում էին բոլորը, Տաթևում հիմա էլ առանց արցունքների նրա անունը չեն արտասանում: *«Լևոնի զոհվելու լուրը լսելուց հետո մի ամբողջ օր չեմ կարողացել խոսել, հիմա էլ չեմ կարող ասել, թե դա ինչ ցավ է, այդ ցավն անուն չունի ու դա նկարագրելու համար բառեր չկան: Նրան բոլորն էին սիրում՝ փոքրից մեծը: Տաթևը զավակ չէ՝ գանձ է կորցրել...»,* – պատմում է համագյուղացի երիտասարդներից մեկը:

Հուղարկավորվել է Տաթևի գերեզմանատանը նոյեմբերի 19-ին: Պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով՝ հետմահու:

Դավթյան Սերյոժա Արթուրի

Ծնվել է 2001 թ. օգոստոսի 16-ին Տեղ գյուղում: Սովորել է գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 2019 թ. զորակոչվել է բանակ, ծառայում էր Արցախի Հանրապետության Մարտունու զորամասում:

Դպրոցն ավարտելուց հետո ծնողները պնդել էին, որ շարունակի ուսումը, քանի որ մաթեմատիկա շատ էր սիրում ու լավ էր սովորում, բայց Սերյոժան որոշել էր բուհ ընդունվել բանակից հետո:

Բանակում լավ մաթեմատիկա իմանալն ու բնատուր տրամաբանությունը շատ էին օգնում նրան՝ հրետանու կրակոցները հաշվարկելիս: Հրաշալի զինվոր էր, իր համեստությամբ, խելքով ու քաջությամբ բազմիցս էր աչքի ընկել ծառայության ընթացքում:

Սերյոժայի մասին հայրն է պատմում՝ *«Երեք տղաներից ամենափոքրն էր, մեր տան ամենասիրելին: Կորոնավիրուսի պատճառով ծառայության ընթացքում չենք կարողացել տեսնել նրան: Հասկանու՞մ եք՝ մեր տղային չենք տեսել, մեր տղան մեր կարոտը սրտում զոհվեց, մենք էլ մնացինք նրա ծիծաղկոտ դեմքին, նրա ձայնին կարոտ:*

Հերոս, հզոր տղա եմ ունեցել: Շատերն են պատմում, թե ինչպես է կռվել, ասում են, որ ոչ մի վտանգավոր առաջադրանքից չի հրաժարվել, նաև բազմաթիվ թիրախներ է խոցել: Նրա անձնվիրության ու հերոսության վկայությունը ստացած մեդալներն են, նաև իր պահած մարտական դիրքի չընկնելը: Մինչև հոկտեմբերի 10-ը, զանգահարում էր, ասում, թե ամեն ինչ լավ է լինելու: Հոկտեմբերի 11-ից հետո լուր չունեինք: Հրամանատարները գիտեին, որ զոհվել է, բայց ոչ մեկը ոչինչ չէր ասում:

Ամիսներ շարունակ փնտրել ենք նրան: Հետո ենք իմացել, որ 72 հոգով հրաման են ստացել մտնել Հադրութ, որն արդեն թշնամու ձեռքում էր, ընկել են շրջափակման մեջ և բոլորը զոհվել: 2021 թ. փետրվարի 6-ին ստացել ենք ԴՆԹ-ի անալիզի պատասխանը... Շատ բաներ չեմ հասկանում. իհարկե, մեղավորներ կան, բայց եթե անգամ բացահայտվեն, որդիս հետ չի գալու: Մենք մեր կյանքի իմաստն ենք կորցրել, նաև ապրելու ցանկությունը...»:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով և «Արիության» մեդալով:

Իսայան Հայկ Սասունի

Միշտ ծիծաղը դեմքին էր, միշտ ուրախ: Երազանքներ ուներ, բայց ոչ մեկին չէր ասում, գյուղի յուրաքանչյուր աշխատանք էլ կատարում էր՝ անասուն էր պահում, հող մշակում, ծնողներին օգնում...

Ծնվել է 2000 թ. սեպտեմբերի 4-ին Գորիսի Սվարանց գյուղում: 2015-2018 թթ. սովորել և ավարտել է Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջի «Տրանսպորտային միջոցների շահագործում և վերանորոգում» բաժինը: Լուսե ժպիտը դեմքին, գորիսյան համ ու հոտով սիրված պատանին ուսանելու տարիներին հետաքրքիր հուշեր է թողել թե՛ կուրսեցիների, թե՛ դասախոսների շրջանում:

2019 թ. հունվարի 9-ին զորակոչվել է հայոց բանակ՝ հայրենիքի հանդեպ պարտքը կատարելու: Ծառայել է Արցախի Հանրապետության Ջրականի շրջանում, գնդացրորդ էր, անվրեպ տիրապետում էր զենքին: Նրան էր վստահված Ջրականի անհավասար մարտերի առաջնագծի դիրքերից մեկի պաշտպանությունը:

Տուն զանգահարելիս մայրը հարցնում էր, թե ի՞նչ կրակոցների ձայն է գալիս, պատասխանում էր. *«Ոչ մի կրակոց էլ չկա, հեռուստացույցին մի հավատացեք, ոչինչ էլ չկա, մի անհանգստացեք»:* Միշտ ծիծաղը դեմքին էր, միշտ ուրախ: Երազանքներ ուներ, բայց ոչ մեկին չէր ասում, գյուղի յուրաքանչյուր աշխատանք էլ կատարում էր՝ անասուն էր պահում, հող մշակում, ծնողներին օգնում...

Վերջին անգամ զանգահարել էր հոկտեմբերի 12-ին, խոսել ծնողների հետ, հետո ասել, թե հեռախոսը փոխանցում է ընկերներին, որ նրանք էլ զանգահարեն, ու այլևս չզանգեց...

Ուղիղ 100 օր անց՝ 2021թ. հունվարի 23-ին, ԴՆԹ անալիզը հաստատեց, որ Հայկ Իսայանը զոհվել է: Զոհվել է ընկերների հետ՝ մարտական հանձնարարություն կատարելիս՝ թշնամու դեմ մղված անհավասար մարտում:

Հուղարկավորվել է 2021թ. հունվարի 25-ին Սվարանց գյուղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով:

Իսունց Գևորգ Ռաֆիկի

Ծնվել է 2000 թ. դեկտեմբերի 13-ին Տեղ գյուղում: Սովորել է գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 2019թ. հունվարի 20-ին զորակոչվել է բանակ, ծառայել Մատաղիսում:

Գևորգը եղբայր չուներ, ընտանիքի միակ որդին էր, ծնողները սիրով ու գուրգուրանքով էին մեծացրել նրան: Ընտանիքում ստացած սերն ու քնքշանքն աչք էր զարնում առաջին հայացքից՝ Գևորգն ինքն էլ լցված էր սիրով ու քնքշությամբ:

Ծառայության ընթացքում պարգևատրվել է բազմաթիվ պատվոգրերով:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Գևորգը մարտական դիրքում էր: Պատերազմի սկզբից մինչև նահատակվելու պահը, ընկերների խոսքով, ինքնամոռաց կռվել է: Բնույթով մարդասեր տղան դժվարությամբ էր համակերպվում ընկերների կորստին: Պատմում են՝ երբ ընկերներից մեկը զոհվում էր, չխոսկան ու համեստ այդ տղան անասելի բարձր, կարելի է ասել՝ անբնական, գոռոց էր արձակում:

Ընկերներից յուրաքանչյուրի մահը նրան առավել էր լցնում վրեժով ու ցասմամբ...

Ընտանիքում դողով ու աղոթքով էին սպասում մարտադաշտում գտնվող միևուճար որդու զանգերին: Հոկտեմբերի 13-ի առավոտյան վերջին զանգն է եղել Գևորգից, հետո ծնողներին պատմել են, թե իրենց հերոս որդին խրամատից դուրս է բերել վիրավոր ընկերներին: Դիտարկվող տարածքում մի քանի անգամ մտել է խրամատ, վերջին անգամ ընկերները խնդրել են չգնալ, բայց պնդել է՝ «Խրամատում վիրավոր կա, պիտի գնամ»:

Զոհվել է վիրավոր ընկերոջը դուրս բերելիս՝ դիպուկահարի կրակոցից:

Համագյուղացիների աչքերը լցվում են, երբ խնդրում ենք պատմել Գևորգի մասին. *«Ասում են չէ՝ լույսի պես տղա, Գևորգը հենց լույսի նման տղա էր: Համեստ, սիրալիր, մեծին հարգող, փոքրերի հանդեպ հոգատար: Փորձում ենք չմտածել նրա մասին, որովհետև, երբ հիշում ենք ժպտուն դեմքն ու պատկերացնում, որ այդքան ջահել տղան էլ չկա, սրտներս մղկտում է...»:*

Գևորգ Իսունցի աճյունը հողին է հանձնվել 2020 թ. հոկտեմբերի 17-ին՝ Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ՊԲ «6-րդ ՊՇ Անձնուրաց պաշտպան» մեդալով:

Խաչատրյան Արա Ադոլիկի

Ծնվել է 1985 թ. հոկտեմբերի 3-ին Գորիսի շրջանի Խնածախ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Շամշադինում:

Արան պայմանագրային զինծառայող էր Սիսիանի զորամասում. ընկերները նրա մասին ցավով ու ափսոսանքով են խոսում. *«Արան լավ մարդ էր, վստահելի ընկեր, մարդ, ում կարող էիր դիմել առանց ժամին նայելու, Արցախն էլ էր հատուկ սիրով սիրում, մի քանի տարի Քաշաթաղի շրջանում էր ապրել ու հարազատ ծննդավայրի չափ սիրում էր Բերձորը: Ծրագրեր շատ-շատ ուներ, դրանցից ամենակարևորն էլ երեխաներ ունենալն էր. բոլոր նպատակներից ու երազանքներից ընկերս նախընտրեց հայրենիքը կյանքով պաշտպանելը, չհասցրեց նույնիսկ ամուսնանալ»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին պայմանագրային զինծառայող Արան միացավ Արցախը պաշտպանելու շտապող ծառայակիցներին: Արայի հայրը Արցախյան առաջին պատերազմի ազատամարտիկներից էր, ու նրանց ընտանիքում հայրենիքի համար պայքարելը պատվի խնդիր էր: Ընտանիքի անդամների հետ հեռախոսազրույցներում գոտեպնդում էր բոլորին, ասում, թե ինքն ու ընկերները թուրքին ներս չեն թողնի, թե քանի հայ զինվորն Արցախում է, բոլոր հայ ընտանիքները պիտի հանգիստ լինեն: Ընտանիքի անդամների հետ վերջին հեռախոսային խոսակցությունը հոկտեմբերի 16-ին է տեղի ունեցել, հետո շուրջ հինգ ամիս հարազատները լուր չունեին, նրանց տեղեկացրել էին, թե Արան զոհվել է, բայց քանի դեռ մարմինը չկար, հարազատները հրաշքի հույս ունեին…

Ավա՜ղ, հրաշք տեղի չունեցավ, 2021թ. մարտի 6-ին ԴՆԹ անալիզի պատասխանը հաստատեց՝ Արա Խաչատրյանը նահատակվել է…

Պատերազմից ամիսներ անց՝ 2021թ. մարտի 8-ին Գորիսի զինվորական պանթեոնում տեղի ունեցավ հերոսացած Արա Խաչատրյանի հուղարկավորությունը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Խաչատրյան Արթուր Արարատի

Արթուրի մեծ պապը (պապի պապը)՝ Խաչատուրը, ով Գորիսի հայտնի տոհմից էր, մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին. հարավային ռազմաճակատում կռվել է թուրքերի դեմ:

Ծնվել է 1992 թ. հունիսի 16-ին Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղում:

Ավարտել է Վերիշենի միջնակարգ դպրոցը:

2010-2012 թթ. պարտադիր զինվորական ծառայությունն իրականացրել է Արցախի տարածաշրջանում, արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և շնորհակալագրերի: Ապրիլյան պատերազմի (2016) ժամանակ առաջիններից մեկն է զենք վերցրել և դուրս եկել ոսոխի դեմ: Աշխատել է Գորիսի «Հայկ-Ժոս» ձեռնարկությունում: Սեպտեմբերյան պատերազմում էլ Արթուրը կամավորականների շարքերում էր առաջին օրվանից: Նա զոհվեց Արցախյան ռազմաճակատի հարավային հատվածի՝ Ջրականի թեժ մարտերում 2020 թ. հոկտեմբերի 14-ին:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Արթուրի մեծ պապը (պապի պապը)՝ Խաչատուրը, ով Գորիսի հայտնի տոհմից էր, մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին. հարավային ռազմաճակատում կռվել է թուրքերի դեմ: Նրա որդին՝ Արտաշը, Մեծ հայրենականում գերվել է ֆաշիստների կողմից: Պապի ընտանիքը 1949-ին ենթարկվել է բռնաքսորի, արտաքսվել Ալթայի երկրամաս: Արդարացնելուց հետո վերադարձել են գյուղ: Բոլոր որդիները հայտնի արհեստավորներ էին: Արթուրի կրտսեր եղբայրը՝ Սաշան, ևս կռվում էր ճակատային գծում:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Խաչատրյան Գավրուշա Զոնիկի



Ծնվել է 2001 թ. մայիսի 6-ին Շինուհայր գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել Գորիսի գյուղատնտեսական քոլեջում: 2019 թ. հուլիսի 26-ին զորակոչվել է բանակ: Որպես շարքային ծառայել է Արցախի պաշտպանության դիրքերում:

Գավրուշա անունը գրված էր միայն փաստաթղթերում. նրան շրջապատում Կոլյա էին անվանում, ծանոթներից ու հարազատներից շատերն անգամ տեղյակ չէին նրա անձնագրային անվանը:

«Ես եմ» ծրագրով էր ծառայում, որոշել էր բանակից վերադառնալ և վաստակած գումարով թեթևացնել ընտանիքի հոգսը: Ծառայությունից երբեք չի դժգոհել, ընկերները պատմում են, որ նույնիսկ պատերազմի օրերին նրանից ոչ մեկը դժգոհություն չի լսել...

Պատերազմի օրերին մշտապես կատարել է հրամանատարության առաջադրանքները: Նռնականետաձիգ զինվորականը հպարտացել է, որ Մոնթեի անվան զորամասում է ծառայում: Մարտունի 2-ում թեժ ու աննահանջ մարտեր էին մղվում... Մոնթեի անվան զորամասի զինվորականները, այդ թվում՝ Գավրուշա Խաչատրյանը, դիմադրում ու չէին նահանջում: Հենց այդտեղ էլ թշնամու գնդակը խոցում է զինվորականի կուրծքը... Ընկել է նոյեմբերի 3-ին՝ մարտական առաջադրանք կատարելիս...

Կոլյայի քույրը՝ Հասմիկը, մինչև հիմա չի հավատում, որ եղբայրը զոհվել է, ասում է, թե բոլորն իրենց տանը սպասում են ու դեռ հույս ունեն, որ նա կգա. *«Ինձանից երկու տարով փոքր էր, բայց ավագ եղբոր պես էր, այնքան հասուն էր, այնքան խելացի, որ ցանկացած իրավիճակում կարող էիր նրա խորհրդին դիմել և իմանալ, որ նա ճիշտ խորհուրդ կտա, որ նա կլուծի խնդիրներդ: Համոզված էի, որ նրա հետ վատ բան չի պատահի, բայց... Հիմա էլ նրա վերադարձի հույսը չենք կորցրել, հուղարկավորությունն արել ենք, բայց հույսը, որ մի օր նա կվերադառնա, որ ողջ է, մեզ չի լքում»:*

Համարձակ զինվորը խփել էր թշնամու երեք տանկ և հակառակորդին պատճառել մոտ 50 զոհ: Հրամանատարության կողմից արժանացել էր խրախուսանքների...

Հուղարկավորվել է 2021 թ. հունվարի 6-ին՝ Շինուհայրի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Խաչատրյան Տիգրան Արթուրի



Ծնվել է 1998 թ. հունիսի 8-ին Գորիսում:

Սովորել է քաղաքի թիվ 2 և թիվ 5 դպրոցներում, ապա Գորիսի պետական քոլեջի ատաղձագործական բաժնում:

2016 թ. զորակոչվել է բանակ, ուսումնական փուլում ծառայել Մուղնու զորամասում, այնուհետև տեղափոխվել Շուշի:

Զորացրվելուց հետո զբաղվել է քանդակագործությամբ:

Տիգրանի մասին մեզ մորաքրոջ աղջիկն է պատմում. *«Բացառիկ մարդ էր, նրան կարելի էր վստահել ցանկացած գաղտնիք, նրա հետ կարելի էր գնալ ամենուր, նրանից կարելի էր ակնկալել միայն դրականը:*

Նոր էր պայմանագրային ծառայության անցել, դեռ ոչ մի անգամ դիրքեր չէր բարձրացել: Տիգրանն ուզում էր անպայման զինվորական դառնալ: Լավ քանդակագործ էր, կարող էր քանդակագործությամբ գումար աշխատել, բայց ինքն իրեն ավելի շատ զինվորական էր համարում:

Երբ սկսվել է պատերազմը, ինքնակամ գնացել է զորամաս, պահանջել, որ իրեն Արցախ ուղարկեն:

Մեկնել է Հադրութ, Կարմիր շուկա...

Հոկտեմբերի 12-ին զանգահարել էր, ասել, որ երեք օր կապի դուրս չի գալու: Օրեր անց նրա սոցցանցային էջից ադրբեջանցիները սկսել էին իրենց լուսանկարները հրապարակել: Այդ փաստն ավելի էր ծանրացրել առանց այդ էլ անտանելի վիշտը:

Գիտեինք, որ զոհվել է, բայց մարմինն ամիսներ շարունակ գտնել չէր հաջողվում:

2021թ. հունվարին տեղեկացանք, որ ԴՆԹ-ի անալիզի պատասխանը հաստատել է մահվան մասին տեղեկությունը:

Զոհվելու հանգամանքները մեզ հայտնի չեն: Ոչինչ հաստատ չէ, միայն ենթադրություններ են: Ենթադրաբար որոշել են, որ զոհվել է հոկտեմբերի 15-ին:

Տիգրանը հայրենասեր էր: Էությամբ տարբերվում էր հասակակիցներից: Բոլորի սիրելին էր, ինքն էլ կարողանում էր բոլորին սիրել:

Նա մեր հպարտությունն էր, նրա մասին հուշերն անմոռանալի են, նրա խոսքերն այսօր էլ ապրեցնող ուժ ունեն...»:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում՝ 2021 թ. հունվարի 19-ին՝ զոհվելուց երեք ամիս անց: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Կիզիրանց Գարիկ Քաջիկի

...Մասնակցել է թե՛ քաղաքային, թե՛ հանրապետական օլիմպիադաների, ստացել բազում պատվոգրեր: Վայելում էր ուսուցիչների և շրջապատի սերն ու հարգանքը: Հաճախում էր UCAN մոդելային դպրոց:

Ծնվել է 2000 թ. հունիսի 6-ին Գորիս քաղաքում, երկու տարեկանից ապրել է Մոսկվա քաղաքում, սովորել է Շոլկովո քաղաքի Ջանիբեկովի անվան թիվ 13 դպրոցում: Դեռ մանկուց աչքի է ընկել բարձր առաջադիմությամբ ու կարգապահ պահվածքով: 2009 թ. ընտանիքը տեղափոխվել է Հայաստան, ուսումը շարունակել է Երևանի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 95 միջնակարգ դպրոցում: Մասնակցել է թե՛ քաղաքային, թե՛ հանրապետական օլիմպիադաների, ստացել բազում պատվոգրեր: Վայելում էր ուսուցիչների և շրջապատի սերն ու հարգանքը: Հաճախում էր UCAN մոդելային դպրոց: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ՀԱՊՀ-ի տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի բաժինը:

2019 թ. հուլիսի 15-ին զորակոչվել է բանակ, վեց ամիս ծառայել է Լուսակերտում, հետո որպես կրտսեր սերժանտ տեղափոխվել Մարտակերտի Հորաթաղի զորամաս:

Պատերազմի առաջին օրից եղել է թեժ կետերում, եղել է հրետանու հաշվարկի հրամանատար, ճիշտ հաշվարկների ու հմտության շնորհիվ ոչնչացրել թշնամու բազմաթիվ զինտեխնիկա ու կենդանի ուժ, մասնակցել է Մարտունու, Ճարտարի և Գիշիի թեժ մարտերին: 43 օրում 2000-ից ավել արկ էր կրակել:

Անմահացել է նոյեմբերի 8-ին, զինադադարից ընդամենը մեկ օր առաջ, Գիշիում... Ընկավ՝ մինչև վերջ կատարելով՝ իրեն վերապահված առաջադրանքը: Ընկավ, որ Մարտունին չընկնի...

Հարազատներն ասում են, որ Գարիկը շատ էր ուզում գիրք գրել, ասում էր՝ *«Ինձ ճանաչելու են, իմ մասին բոլորը լսելու են...»:*

Հուղարկավորվել է Սովետաշենի գերեզմանատանը: Հետմահու արժանացել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ուսանողական խորհրդի, ԼՂՀ «Արիության համար», ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալների:

Հայրապետյան Աշոտ Արտուրիկի

Ծնվել է 1998 թ. ապրիլի 4-ին Գորիսի շրջանի Խոտ գյուղում: Սովորել է տեղի դպրոցում, ապա Գորիսի ավագ դպրոցի տնտեսագիտական հոսքում: Պարտադիր ժամկետային ծառայությունն անց է կացրել Արցախի Հանրապետությունում՝ Քարվաճառի զորամասում:

Զորացրվելուց հետո պայմանագրային ծառայության է անցել Գորիսի զորամասում:

2016 թ. Գոհարի ու Արթուրի ընտանիքում պատահում է առաջին դժբախտությունը՝ մահանում է նրանց միջնեկ դուստրը: Դա Աշոտին անասելի ցավ է պատճառում, դառնում է լռակյաց ու ինքնամփոփ...

«Լույսի նման տղա էր, մի տեսակ անհավատալի է, որ նա այլևս չկա: Տարբերվում էր իր դաստիարակությամբ, իր վարքով, մեծերի հանդեպ հարգանքով: Մի ուրիշ տեսակ քնքշությամբ էր վերաբերվում իր քույրիկին, քրոջ մահից հետո, կարծես, ուրիշ մարդ դարձած լիներ: Մինչև հիմա արցունքներս չեն չորանում, հիշում եմ նրան էլ, մյուսներին էլ, ովքեր հայրենիքի պաշտպանության համար չխնայեցին իրենց կյանքը»: Աշոտի ուսուցչուհին խոսքը շարունակել չի կարողանում, մեզ խնդրում է իր անունը չգրել, քանի որ իր մյուս գործընկերներն էլ նույն վիճակում են. *«Դասամիջոցներին մեկ էլ տեսնում ենք ուսուցչուհիներից մեկի աչքերը կարմրած են՝ պարզվում է՝ մեր զոհված աշակերտներից մեկին է հիշել: Բոլորն են ցավում...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Աշոտն արդեն Ջրականում էր...

Սեպտեմբերի 29-ին ծանր վիրավորվել է, նրան խրամատից դուրս բերել չի հաջողվել:

Աշոտի մարմինը գտել ու հողին են հանձնել խրամատում վիրավոր մնալուց ու մահանալուց 72 օր անց: Դատաբժիշկն իր եզրակացությունում նշել է, որ մահը վիրավորվելուց շատ ժամեր անց է վրա հասել, մահացել է արյունահոսությունից:

Երկու զավակ կորցրած տիկին Գոհարը հեկեկալով մեզ պատմում է, թե սարսափում է, երբ պատկերացնում է, թե ինչքան է տանջվել որդին՝ վիրավոր ու միայնակ մնալով խրամատում:

Հուղարկավորվել է Խոտ գյուղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալներով:

Հայրապետյան Կարեն Վարդգեսի

Ծնվել է 1979 թ. հուլիսի 24-ին Գորիս քաղաքում: Հիմնական կրթությունը ստացել է Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցում: 16 տարեկանում ընդունվել է Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարան, ապա Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան:

Որպես սպա ծառայել է Արցախի Մարտունու և Ջրականի զորամասերում:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

2016 թ. ապրիլյան պատերազմին եղել է Ջրականի գնդի շտաբի պետը: Արժանացել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճան, «Մարտական ծառայության», «Անբասիր ծառայության համար», «Գարեգին Նժդեհ», «Դրաստամատ Կանայան», «Վազգեն Սարգսյան», «Սուրբ Պողոս-Պետրոս», «Լեռնահայաստանի արծիվ» և այլ մեդալների ու պատվոգրերի:

2020թ. հունվարից փոխգնդապետ Հայրապետյանը նշանակվել է Սիսիանի գնդի հրամանատարի տեղակալ՝ մարտական գծով:

Կարեն Հայրապետյանի մասին զրուցում ենք ընկերոջ՝ Արթուր Քոչարյանի հետ. *«Կարենն ու ես ռազմական ինստիտուտում միասին ենք սովորել, երկար տարիներ Արցախում միասին ենք ծառայել, միշտ եմ հպարտացել մեր ընկերությամբ, հիմա կարող եմ ասել, որ տիտղոս է նրա ընկերը լինել: Կարենը Մոնթե Մելքոնյան վարժարանի սան էր. Վազգեն Սարգսյան համալսարանում արդեն առանձնանում էր իր հայրենասիրական գաղափարներով: Նա հայրենասեր ու նվիրված սպա էր, մեր բանակի հիմքն են այդպիսի տղաները: Հերոս ընկեր եմ ունեցել, ցավում եմ, որ այսօր իր զավակների ու մեր կողքին չէ, ափսոս...»:*

Սեպտեմբերի 27... Հոկտեմբերի 8-ին Կարեն Հայրապետյանի գլխավորությամբ Սիսիանի զորամասի գրեթե բոլոր ստորաբաժանումները մեկնեցին Արցախ:

Մարտերը ծանր էին, անհավասար...

Հոկտեմբերի 13-ին Կարեն Հայրապետյանը հադրութից էր զանգահարել կնոջը, փորձում էր հույս ներշնչել, ուժ հաղորդել, որ կինը չվհատվի՝ շարունակի խնամել իրենց երեխաներին, բայց դա վերջին զանգն էր. խոսակցությունից րոպեներ անց զոհվել է փոխգնդապետ Կարեն Հայրապետյանը: Երեք երեխա ունի, կրտսերը՝ Դանիելը, հայրիկի հետ նկարներով է ծանոթանում, նա պիտի մեծանա հերոսի որդու գիտակցությամբ, ու հայրիկի ընկերներն ու ծանոթները նրան պիտի պատմեն, որ ինքը քաջարի զինվորականի որդի է...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով:

Հայրապետյան Միեր Ռադիկի

Մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին: Վերադարձել մեր հաղթանակով հպարտ, մեր հավերժության ու անկոտրում լինելու հավատով...

Ծնվել է 1985 թվականի ապրիլի 1-ին Գորիս քաղաքում: Հաճախել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2003-2005 թթ. պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Սովետաշենի N զորամասում: Ծառայությունն ավարտելուց հետո մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:

Բայց օտարության մեջ ապրելը Միերի համար չէր, ուզում էր իր հայկական օջախը ստեղծել՝ Գորիսի կարգով ու ավանդույթներով, այդ պատճառով էլ վերադարձավ հայրենի քաղաք ու ամուսնացավ Լիլիթ Հովսեփյանի հետ:

2014 թվականին պայմանագրային ծառայության է անցել Գորիսի N զորամասում՝ որպես պահեստապետ, այնուհետև՝ հետախույզ-վարորդ:

Մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին:

Վերադարձել է մեր հաղթանակով հպարտ, մեր հավերժության ու անկոտրում լինելու հավատով...

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսած պատերազմի առաջին օրվանից Միերը միացել է Արցախի պաշտպանությանը: Կյանքը վտանգելով՝ փրկել է բազմաթիվ վիրավորների, տեղափոխել զոհվածների աճյուններ...

Միերն ու Լիլիթը երկու զավակ ունեն՝ Մարկը և Սոֆին: Մարկը շատ է կարոտում իր հայրիկին, անընդհատ ասում է մայրիկին, որ հոգնել է նկարներից, սպասում է հայրիկին գրկելու: Փոքրիկ Սոֆին չի հիշում հայրիկին:

Միերը զոհվել է Ջրականում՝ 2020 թ. սեպտեմբերի 30-ին՝ անօդաչուի հարվածից:

Ամիսներ անց՝ 2021 թ. փետրվարի 19-ին, ԴՆԹ հետազոտությամբ հաստատվեց՝ Միերը նահատակվել է:

2021 թ. փետրվարի 21-ին Գորիսի զինվորական պանթեոնում հողին հանձնվեց հերոսացած զինվորի աճյունը:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալներով:

Հարությունյան Գոռ Յուրիի

Ծնվել է 1996 թ. հունիսի 22-ին Գորիսի շրջանի Կորնիձոր գյուղում: 2006 թ. ընտանիքը տեղափոխվել է Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Ծաղկաբերդ գյուղ: Միջնակարգ կրթությունը ստացել է Ծաղկաբերդի դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Հադրութում:

Ամուսնացած էր, ունի մեկ զավակ:

Գոռն Ապրիլյան պատերազմի ժամանակ ժամկետային զինծառայող էր Հադրութում. մասնակցել է մարտական գործողություններին: Բանակից վերադարձել էր ու ասել. *«Կյանքում պատերազմից ավելի զզվելի ոչինչ չի կարող լինել»:*

Համագյուղացի տղաներից մեկը հիշում է, որ ռազմաճակատ մեկնելիս (2020 թ. սեպտեմբերի 28-ին) մի տեսակ մարգարեացել է՝ *«Այս անգամ հետ չեմ գալու»*. ընկերն այն ժամանակ բարկացել է, սաստել, բայց հիմա կարծում է, որ Գոռը հաստատ ինչ-որ բան կանխազգում էր...

Նոր էր հայր դարձել, դեռ չէր հասցրել վայելել մանկան թոթովանքը, փոքրիկն էլ դեռ չէր ճանաչում հայրիկին, բայց ասում են՝ ձայնը տարբերում էր:

Աշխատում էր Ծաղկաբերդի ՀԷԿ-ում. երիտասարդը, ում մանկությունն ու պատանեկությունն անցել է գյուղի վերակառուցման շրջանում, մեծ ոգևորությամբ էր մասնակցել ՀԷԿ-ի շինարարությանը, հույս ուներ տեսնել գյուղը զարգացած, իր նորաստեղծ ընտանիքը պահել հավուր պատշաճի ու վայելել խաղաղությունը, բայց խաղաղությունը կարճ տևեց, ու կորսվեցին ոչ միայն նրա, այլ շատերի երազանքները:

Մայրը, ով պատերազմի հետևանքով կորցրել է թե՛ միակ արու զավակին, թե՛ տունը, հիմա խաղաղության համար է աղոթում, որ Գոռի երեխան գոնե խաղաղ երկրում մեծանա...

Զոհվել է 2020 թ. սեպտեմբերի 29-ին՝ Ջրականում. դիպուկահարի կրակոցը կիսատ է թողել խաղաղ ապրող ու արարող հայ երիտասարդի կյանքը և նորածին մի մանկան զրկել հայր ունենալու երջանկությունից... Հուղարկավորվել է Կորնիձորի գերեզմանատանը:

Հարությունյան Հարություն Կառլենի

Ծնվել է 1984 թ. դեկտեմբերի 7-ին Գորիսում: Հաճախել է Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Տավուշի մարզի Պառավաքար գյուղում: 2008 թ. անցել է զինվորական ծառայության՝ որպես պայմանագրային զինծառայող: Աշխատել է տարբեր պաշտոններում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

2018 թ. աշխատում էր Գորիսի հետախուզական ծառայությունում՝ հետախույզ:

Պատերազմի առաջին օրվանից սկսած՝ որպես հայոց պանծալի բանակի հզոր զինվորական, իր կարևորագույն առաքելությունն էր կատարում պատերազմական գոտու այնպիսի հատվածում, ուր դեռ չէր ձևավորվել ռազմաճակատը: Նախքան «Բայրաքթարների» մահաբեր աղետը, Հարութն իր ջոկատով մարտական խնդիրը կատարեց գերազանց... Երբ պետք է վերադառնար... Թշնամին վիրավորեց մարտական ընկերներից ոմանց: Հարութը հասցրեց ընկերոջը փրկել, և իրենց մնաց ընդամենը 10 մետր, որպեսզի գլորվեր դեպի փրկարար Ազատության ձորափը, ու... ավա՜ղ. թուրք դիպուկահարը գտավ անորսալի հային ու նրան ծանր վիրավորեց թևից... Հարութն արնաքամ եղավ... նրան օգնելն անհնար էր. ընկերներից ոմանք զոհված կամ մահամերձ հայտնվեցին այնտեղ, իսկ ոմանք՝ հրաշքով փրկվեցին... նաև Հարութի անձնազոհ արարքի շնորհիվ:

Հարութից ոչ մի լուր չկար սեպտեմբերի վերջից: Դեկտեմբերի 30-ին անքուն գիշերներ լուսացրած, հարազատ եղբորը գիշերուզօր որոնելով, Էդուարդը՝ Արայիկ Հարությունյանի, գեներալ Մուրադովի, մյուս որդեկորույս ծնողների աջակցությամբ, ի վերջո, կարողացավ գտնել Հարութի անկենդան, արդեն անճանաչելի դարձած մարմինը: Հրաշքի նման գործողությունն անձամբ նախաձեռնեց և իրականացրեց Հարութի լավագույն բարեկամներից մեկը՝ նրա անվանակից Հարութը՝ Գորիսից. առանց որի, Հարութի դին գտնել անհնար կլիներ...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի և «Մարտական ծառայության» մեդալներով:

Հարությունյան Հունան Պարգևի

Նրա մասնակցությամբ հավաքույթները մի առանձնահատկություն էլ ունեին՝ դրանք բոլորը վերածվում էին հայրենասիրական երգերի ինքնաբուխ համերգի:

Ծնվել է 1989 թ. սեպտեմբերի 21-ին Գորիս քաղաքում: Սովորել է Գորիսի N 2 դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Մատաղիսում:

Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

2018 թ., որպես պայմանագրային հետախույզ, ծառայության է անցել Գորիսի զորամասում:

Ծառայությանը երբեք որպես աշխատանքի չէր վերաբերվում, այլ հայրենիքին ծառայություն, որ պատիվ ու ճակատագիր էր համարում:

Ընկերները հիշում են իրենց հավաքույթները, որտեղ հյուրասիրողի դերում մեծամասամբ Հունանն էր:

Նրա մասնակցությամբ հավաքույթները մի առանձնահատկություն էլ ունեին՝ դրանք բոլորը վերածվում էին հայրենասիրական երգերի ինքնաբուխ համերգի:

Հունանի մասին խոսելիս ընկերները հուզվում են. *«Ափսոս էր մեր ախպերը, գոնե կարողանայինք հաղթել, մի տեսակ ամաչում ենք, որ նա զոհվեց, իսկ մենք չկարողացանք իր դիրքը պահել: Մի կողմից էլ՝ նա հաղթող է, որովհետև չիմացավ, որ հողերն անցան թուրքին»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին դիրքեր գնալուց առաջ Հունանը հրաժեշտ տվեց ու կեսկատակ ասաց. «Մեկ էլ տեսար՝ չգամ...»:

Սեպտեմբերի 30-ին թեժ մարտերում՝ կարևոր առաջադրանք կատարելիս, զոհվեց Հունանը. ևս մի նորաստեղծ ընտանիք փլվեց, էլի մի մանուկ որբացավ...

Հունանի դուստրը հայրիկին նկարով է ճանաչում, բայց արդեն գիտի՝ ինքը հերոսի զավակ է:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել «Մարտական ծառայության» մեդալով:

Հարությունյան Մեսրոպ Վաչեի



Մեսրոպը կենքը ձեռքին կռվում է Ֆիզուլիի տարածքում՝ համառ դիմադրություն ցույց տալով հակառակորդին...

Ծնվել է 1996 թ. փետրվարի 10-ին Շինուհայր գյուղում: Ծննդավայրում միջնակարգ կրթությունը ստանալուց հետո զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Պատվով ծառայել է հայոց բանակում ու զորացրվել: Տիրապետել է ռազմական գործին ու տեխնիկային: Հստակ գիտեր՝ ինչ է պատերազմը, ինչ է հայրենիքի պաշտպանությունը...

Իմանալով սկսված պատերազմի մասին՝ երիտասարդ Մեսրոպը զինվորագրվում և ջոկատի հետ մեկնում է Արցախ՝ հասնելով Ֆիզուլի:

Արցախին սպասվող վտանգը մեկ ուրիշ ռազմավարություն և նպատակ ուներ: Կայծակնային պատերազմով Ադրբեջանն ու Թուրքիան ցանկացել են կարճ ժամանակում ծնկի բերել Արցախի բանակը՝ մարտի դաշտ նետելով տարբեր երկրների վարձկանների, օգտագործելով անօդաչու թռչող սարքեր, ժամանակակից այլ ռազմական տեխնիկա:

Մեսրոպը զենքը ձեռքին կռվում է Ֆիզուլիի տարածքում՝ համառ դիմադրություն ցույց տալով հակառակորդին: Կրակ էր թափվում անօդաչու սարքերի ռմբահարումից և թշնամու կողմից օգտագործվող բազմաթիվ զինատեսակներից: Ռմբահարումների և «Գրադ» կայանքներից արձակած արկերի բեկորները հասնում են հերոսաբար կռվող Մեսրոպ Հարությունյանին... Զոհվում է մարտի դաշտում:

Դժվարությամբ են հայտնաբերել նրա դին... Երկար փնտրտուքից հետո Երևանի դիահերձարաններից մեկում հարազատների կողմից ճանաչվել է՝ թևին կապած ժամացույցով:

Հերոսաբար զոհված Մեսրոպ Հարությունյանը 2021 թ. հունվարի 10-ին հողին է հանձնվել Եռաբլուր պանթեոնում... Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Ղուկասյան Գևորգ Կորյունի

2001 թ. մայիսի 12-ին Գորիսի շրջանի Քարաշեն գյուղում ծնվեց Գևորգը:

Գորիսի թիվ 6 հիմնական դպրոցը գերազանց ավարտելով՝ տեղափոխվել էր Գորիսի թիվ 4 ավագ դպրոց և սովորել տնտեսագիտական հոսքում:

Ընդունվել էր ԵՊՀ-ի «Կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա» բաժինը: Եվ չհասցնելով ուսանողական կյանքը վայելել, ամռանը զորակոչվեց բանակ: Վեց ամիս Գյումրիում սերժանտական պատրաստություն անցնելուց հետո արժանացել էր կրտսեր սերժանտի կոչմանը և գերազանց ծառայության համար ստացել «3-րդ կարգ» մեդալ: Այնուհետև տեղափոխվել էր Արցախ և ծառայությունը շարունակել Մատաղիսի զորամասում:

Բանակում օրագիր էր պահում, որտեղ գրառումներ էր կատարում: Օրագիրը մնաց պատերազմում, Գևորգը նույնպես... Սեպտեմբերի 27-ի առավոտյան նա իր ընկերների հետ Թալիշ-Մատաղիս հատվածի մարտական դիրքերում իր վրա է վերցնում թշնամու առաջին հարվածները: Հաջողությամբ խոցելով թշնամու 3 զրահատեխնիկա՝ շարունակում է դիրքի պաշտպանությունը նաև զենքի այլ տեսակներով: Ժամեր տևած անհավասար մարտում Գևորգն անմահանում է՝ հավատարիմ մնալով հայրենիքի հանդեպ իր պարտքին ու տված երդմանը:

Թերթում ենք Գևորգի շարադրությունների տետրը...

«Իմ սիրած արվեստագետը» վերնագրով շարադրության մեջ Գևորգն անդադար հարցեր է տալիս Կոմիտասին, որոնցից թերևս իր սրտին մոտը սա է. *«Ի՞նչ եք փնտրում ու դեռ չեք գտել»:* Երևի այդ հարցը Գևորգը հենց մեզ է ուղղում և իր շարադրանքում արթնանալով երազից, ասում է. *«Դրսում աշուն էր, իրար հաջորդող բազմաթիվ աշուններից մեկը: Բայց այս աշունը նման չէր նախորդներին: Նման չէր իր ջերմությամբ, իր գույներով և երբեմն մոլեգնող քամիներով: Այդ քամիները պատմում էին աշնան հեքիաթը, որը բերել էին հեռավոր անցյալից: Այդ աշունը ստիպում էր զգալ այն, ինչ երբեք չէի զգացել»:* Վերահաս պատերա՞զմն էր զգում, իր նահատակվե՞լն էր կանխազգում... *«Հորիզոնից այն կողմ»* շարադրության մեջ այլ աշխարհ էր տեսնում, որը գոյություն ունի մեր հոգիներում, երազներում ու ապագայում՝ *«Հորիզոնից այն կողմ էլ խաղաղ չէ. ռումբերը պայթում են ու պայթեցնում՝ շուրջը կրկին դժոխք դարձնելով: Օդի մեջ արկերի բեկորներ են, հորիզոնից այն կողմ Նոյյան աղավնին է սփոփում մարդկանց հոգիները»:*

Հուղարկավորվել է Քարաշենի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Ղուկասյան Նաիրի Կամոյի

Ծնվել է 2001 թ. հունվարի 14-ին Գորիսում: Ընդունվել է Գորիսի թիվ 3 հիմնական դպրոցը, այնուհետև տեղափոխվել և ավարտել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցը: Դպրոցից հետո ընդունվել է Գորիսի պետական համալսարանի «Իրավագիտություն» ֆակուլտետը: Առաջին կուրսն ավարտելուց հետո՝ 2019 թ. հունիսի 12-ին, զորակոչվել է բանակ՝ ծառայել Մարտունի 2 զորամասում:

Նաիրին մինուճար էր, որբ մեծացած:

Պատերազմի առաջին օրերից մասնակցել է Արցախի պաշտպանության մարտերին: Հերոսաբար մարտնչել է Ջրականում, Վարանդայում, Մարտունիում:

Նաիրին վիրավոր էր, 250-300 հոգանոց ջոկատը Ֆիզուլիի տարածքում հայտնվել էր ծուղակում և ռմբակոծվել թշնամու կողմից: Երբ թշնամին արդեն գերեվարում էր ողջ մնացած 40-50 մեր զինվորներին, Նաիրին, ով թեթև վիրավոր էր, կարող էր դեռ փրկվել, հրաժարվեց գերի ընկնելուց, հասցրեց հեռախոսը փոխանցել գերության մեջ ընկած ընկերոջն ու ասել.

– Եթե ողջ վերադառնաս, կտաս մորս, կասես՝ ներիր, որ չկարողացա վերադառնալ...

Թշնամու զինվորները տեղում գնդակահարեցին Նաիրիին և մյուս վիրավորներին, ապա գերեվարվածների աչքի առաջ 200 զոհի վրա բենզին լցրեցին, այրեցին: Մարմինների մնացորդները փաթաթեցին ցելոֆանի մեջ, հողի մեջ թաքցրին:

Ամիսներ շարունակ հարազատները նրան փնտրում էին ողջ մնացած գերիների մեջ, սպասում վերադարձին:

Օրեր անց նրանցից մեկը, ում հեռախոսն էր տվել Նաիրին, վերադարձավ գերությունից և պատմեց եղելությունը: Երկար փնտրելուց հետո՝ 2021 թ. մարտի 4-ին գտան մասունքները:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Ղուշունց Գեղամ Սարմենի

Կարողանում էր միայն իր մարդկային հատկանիշներով հարգանք վայելել թե ենթակաների, թե ծառայակիցների, թե ավագ սպայակազմի մոտ, կարգապահ ու հասկացող սպա էր...

Ծնվել է 1984թ. փետրվարի 8-ին Գորիս քաղաքում: Ավարտելով թիվ 3 միջնակարգ դպրոցը՝ 2001 թ. զորակոչվել է բանակ: Ծառայել է Գյումրիի սահմանապահ զորքերում: Ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո անցել է պայմանագրային ծառայության նույն զորամասում՝ մինչև 2009 թ.:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

2011-2018թթ. ծառայել է Գորիսի N զորամասում: Ավարտելով հրետանավոր սպայի դասընթացները՝ տեղափոխվել է Կուբաթլիի N զորամաս՝ որպես կառավարման դասակի հրամանատար:

Արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և խրախուսանքների:

Սեպտեմբերի 27-ից, որպես հակատանկային դասակի հրամանատար, մասնակցել է պատերազմին:

Դասակի հրամանատար Գեղամ Ղուշունցին ծառայակից ընկերները բնութագրում են ամենադրական գծերով. *«Կարողանում էր միայն իր մարդկային հատկանիշներով հարգանք վայելել թե ենթակաների, թե ծառայակիցների, թե ավագ սպայակազմի շրջանում, կարգապահ ու հասկացող սպա էր, նրա բացակայությունը զորամասում շատ բան է փոխում»:*

Զոհվել է հոկտեմբերի 3-ին Ջրականում:

Հուղարկավորությունը կատարվել է 2021 թ. հունվարի 31-ին Գորիսի զինվորական պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մալինցյան Արսեն Սամվելի

Ծնվել է 1973 թ. մայիսի 10-ին Գորիս քաղաքում: Հիմնական կրթությունը ստացել է Գորիսի թիվ 6 միջնակարգ դպրոցում: Մասնագիտական կրթությունը ստացել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումում:

Հայոց բանակի առաջին զորակոչով՝ 1992 թվականին, զորակոչվել է, ծառայել Սիսիանում, մասնակցել Արցախյան առաջին պատերազմին:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Արսենը հայոց բանակաշինության առաջին օրերից բանակի մաս է կազմել, ծառայել թերևս ամենածանր ժամանակաշրջանում՝ 1992-1994 թթ., բայց զորացրվելուց հետո էլ չի դադարել բանակի մի մասնիկը լինել՝ 20 տարի աշխատել է Գորիսի զորամասում, եղել կորպուսի լավագույն վարորդներից, նրան էին վստահում հրամանատարության վտանգավոր, երբեմն գաղտնի առաջադրանքները:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արսենն իր տեղում էր՝ մեքենայի ղեկին, իր պարտականություններն էր կատարում՝ իրեն հատուկ հանգստությամբ ու ճշտապահությամբ:

Արսենի մասին ընկերն է պատմում՝ Արմանը. *«Քաջ զինվոր էր, այնպիսին, ինչպիսին պիտի լինի հայ տղամարդը: Նրա քաջությունը խոսքերով չէր արտահայտվում, այլ վստահ պահվածքով, անվախ քայլերով, չկար մի երթուղի կամ տեղանք, ուր գնալն Արսենի համար խնդիր լիներ: Ընկերներ էինք, նա նվիրվելու յուրահատուկ կենսակերպ ուներ. նվիրվում էր անմնացորդ՝ գործին, ընկերներին, իր երեխաներին, այդ մարդն ապրում էր բոլորին գոհ տեսնելու համար: Ցավում եմ...»:*

Կինը պատմում է, թե ամուսնու հետ պատերազմի օրերին հաճախ չի կարողացել խոսել, քանի որ զբաղված էր, բայց գիտեր, որ ամուսինը հարավային թևում էր, գիտեր, որ մարտերն այդ հատվածում թեժ են, գիտեր նաև՝ իր ամուսինը դժվարություններից վախեցող չէ ու վտանգի առաջ կանգ չի առնելու, հույսն ամուսնու՝ մեքենա վարելու բացառիկ կարողությունն էր, որի շնորհիվ անհաշիվ փորձությունների միջով Արսենն անվնաս էր անցել...

Հոկտեմբերի 13-ին Արսենի վարած մեքենան, որն օրեր շարունակ կանգ չէր առել, խափանվում է, թշնամու անօդաչու սարքը նկատում է կանգնած մեքենան և թիրախավորում. զոհվում է Արսեն Մալինցյանը. հայոց բանակը կորցնում է իր նվիրյալներից ևս մեկին...

Հուղարկավորվել է Գորիսի պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի և «Արիության» մեդալներով:

Մալինցյան Գագիկ Արամի

Ծնվել է 2001 թ. փետրվարի 11-ին Գորիսում:

2018 թվականին ավարտել է քաղաքի 4-րդ ավագ դպրոցը և ընդունվել ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

Ծառայության է անցել 2020 թ. հունվարի 8-ին Հադրութում:

Պատերազմի առաջին օրերից մասնակցել է Հադրութի և Մարտունիի թեժ մարտերին: Իր մարտական ընկերների հետ շրջափակումից դուրս են հանել տասնյակ զինվորների: Կռվել է անձնուրաց՝ հանուն վաղվա հաղթանակի:

Քաջի մահով ընկել է նոյեմբերի 8-ին:

Հայրը՝ Արամ Մալինցյանը, պատմում է, որ հոկտեմբերի 7-ին, երբ որդու շրջափակման մեջ գտնվող զորամասը Հադրութից նահանջել է, նրա գտնվելու վայրը չի իմացել: Մալինցյանն այդ պատճառով Ստեփանակերտից է սկսել Գագիկի որոնումները: Նրանց սկզբում հայտնել են, թե որդին անհետ կորած է: Հայրը զենքի համարով է գտել Գագիկին: Արամ Մալինցյանը պատմում է Գագիկի և Դավիթի զոհվելու մասին. *«Սկզբում նրանք դիրքի վրա են եղել, որտեղ կատարել են թեթև ինժեներական աշխատանքներ: Հետո տեղափոխել են դիրք, որտեղ լրիվ բացակայել է հակաօդային պաշտպանությունը, ինչի պատճառով էլ անօդաչու սարքից զոհվել են»:* Գագիկի մայրը՝ Սոնա Վարդանյանը, ակնածանքով է պատմում որդու մասին. *«Ծնվել է Գորիսում, սովորել Յուրի Բախշյանի անվան դպրոցում, 2018-ին ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Սովորել է նաև Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ «Պատիվ ունեմ» ծրագրով»:*

Պատերազմի առաջին օրվանից կռվել է առաջնագծում, որտեղ էլ Հադրութի զորամասն ընկել է շրջափակման մեջ, ապա թշնամուն հետ մղելով՝ դուրս է եկել շրջափակումից և տեղափոխվել Մարտունի-2 զորամասի դիրքեր: Այստեղ էլ Գագիկն զոհվել է պատերազմի ավարտից ընդամենը չորս ժամ առաջ: Սոնա Վարդանյանն ասում է, որ որդու հետ վերջին անգամ խոսել է նոյեմբերի 6-ին: *«Միշտ երկար էր խոսում, բայց վերջին անգամ կարճ խոսեց՝ հազիվ մեկ վայրկյան. «Ասաց՝ մամ, տեղ հասնեմ, կզանգեմ»:* Մայրը դեռ սպասում է որդու խոստացած զանգին...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Մաշուրյան Արման Արմենի

Ծնվել է 2000 թ. հոկտեմբերի 26-ին Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղում: 2018-ին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և ձմեռային զորակոչին՝ հունվարի 9-ին, մեկնել պարտադիր զինվորական ծառայության, որն իրականացրել է Հադրութ քաղաքում: Օրինակելի վարքի, մարտական պատրաստության, կամային բարձր հատկությունների համար հունիսին ուղարկել են Արմավիրի՝ զինվորական հրամկազմի պատրաստման ուսումնական կենտրոն, որն ավարտելուց հետո ստացել է կրտսեր սերժանտի կոչում, վերադարձել նշանակման վայր:

Պատերազմի հենց սկզբից 5-րդ ուսումնական գումարտակի 23 հոգանոց ջոկատում էր, որը «Հադրութի ջոկատ» անունն էր կրում, հրամանատար Գեղազ Տոնոյանի (Ապարանից) ղեկավարությամբ, մասնակցել է Հադրութի, ապա Հորադիզի և Մարտունի 2-ի ծանր մարտերին:

Նոյեմբերի սկզբին Շուշիի պաշտպանական շրջանի մարտական գործողություններին մասնակցելու ուղարկվող ջոկատի հրամանատար է նշանակվել Արման Մաշուրյանը:

Ջոկատը մարտական գործողությունների մեջ է մտել Քարին տակ գյուղում: Ռազմամարտը, ուժերի անհավասար հարաբերակցության պայմաններում, թշնամուն դիմակայելու անօրինակ սխրանքի դրսևորում էր:

Այդտեղից Արմանի ղեկավարած ջոկատի տղաներն անցել են Շուշի քաղաքի պաշտպանությանը: Նոյեմբերի 7-ին ծավալված ահեղ մարտերի ժամանակ՝ հրանոթային արկի բեկորներից, հրամանատարը ծանր վիրավորվել է թևերից ու ոտքերից: Ջոկատն ընկել է շրջափակման մեջ, և նրան մարտադաշտից դուրս բերելու հնարավորություն չի եղել... Արնաքամ մարմինը հանել են միայն մի քանի օր անց...

Ճանաչողների բնութագրմամբ՝ Արմանը համեստ էր, լրջախոհ, ավելի շատ սիրում էր լսել: Ծառայության ժամանակ սրտակից ընկեր էր, պատասխանատու՝ իր պարտականություններն անմնացորդ կատարելու գործում: Ժամանակավոր կայանատեղի լիներ, խրամատ, թե՝ բլինդաժ, առաջինը ձեռնամուխ էր լինում զինվորների համար աղոթատեղի ստեղծելու գործին... Ջոկատի բոլոր անդամների մասին մանրամասն տեղեկություններն էլ պահում էր կրծքին մոտ՝ մի քանի անգամ ծալված, մաշված թղթի վրա...

Հուղարկավորվել է Վերիշենի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով և ՀՀ զինված ուժերի «Լավագույն զինվոր-մարզիկ» կրծքանշանով:

Մարության Վրեժ Արտավազդի



Ծնվել է 1970 թ. օգոստոսի 9-ին Տեղ գյուղում: Հիմնական կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում: Ապա ուսումը շարունակել է Կապանի շինարարական տեխնիկումում: Զորակոչվել է խորհրդային բանակ: Նրա պարտադիր զինվորական ծառայությունը պիտի անցներ Խաղաղօվկիանոսյան ռազմածովային նավատորմում. մեկ ու կես տարվա ծառայող Վրեժը տեղեկացել էր Բաքվի ու Սումգայիթի ջարդերի, Արցախում ու Երևանում թափ առնող շարժման մասին և վերադարձել Հայաստան ու կամավորագրվել: Մելիքսեթ Պողոսյանի ձևավորած կամավորական ջոկատի կազմում էր...

Նրան մարտական ընկերները Սարիբեկ անունմականունն էին տվել, ու քչերն էին իր անձնագրային անունով ճանաչում:

Ամուսնացած էր, ունի չորս զավակ:

2016 թ. ապրիլի 3-ին Սարիբեկը մեկնեց Ջրական ու այնտեղից վերադարձավ միայն մայիսի 9-ին, երբ համոզված էր, որ թշնամին հայոց բազկի ուժից ազդված հետ է քաշվել:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան իր բեռնատարով օգնության էր շտապել: Գիտեր, թե առաջնագիծ զենք ու սնունդ հասցնելն ինչքան կարևոր է: Կամավորագրվելու պահից սկսած բեռնատարը չէր կանգնեցրել:

Կինը՝ Անգին Ավետիսյանը, ամուսնու մասին խոսքը գովեստով սկսել չի ուզում. *«Ախր, եթե պատմեմ, թե ինչպիսի մարդ էր, պիտի ասեք՝ ամուսինն է՝ գովում է: Նա վախ չուներ, ոչ մեկս չէինք պատկերացնի, որ կզոհվի, այնքնան ինքնավստահ էր, այնքան հանգիստ: Օրը երկու-երեք անգամ հասցնում էր գալ Գորիս՝ զենք տանելու: Մինչև հոկտեմբերի 11-ը հասցրել էր 28 անգամ բեռ տեղափոխել առաջնագիծ, հոկտեմբերի 11-ին 29-րդ անգամ էր զենք տեղափոխում, այդ անիծյալ օրվանից հետո նրանից տեղեկություն չունեինք:*

Փետրվարի 11-ին մեզ տեղեկացրին, որ զոհվել է: Մարմինը գտանք Մեծամորի դիահերձարանում՝ չորս ամիս անց էլ, բայց ճանաչելի էր: Մեր ցավը մերն է, բայց մեր հպարտությունն էլ է մերը, ամուսինս անխոս հերոս է, ու հպարտ եմ, որ նրա հետ կյանքի ճանապարհ եմ անցել, որ նրա զավակների մայրն եմ...»:

Հուղարկավորվել է Տեղի գերեզմանատանը 2021 թ. փետրվարի 14-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մարտիրոսյան Միեր Կամոյի

Ծնվել է 1989 թ. հոկտեմբերի 16-ին Գորիսի տարածաշրջանի Հարժիս գյուղում: Սովորել է գյուղի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսումը ավարտելուց հետո մեկնել է պարտադիր զինվորական ծառայության, ծառայում էր Մարտունի-2-ում:

2018 թվականից, որպես պայմանագրային, ծառայել է ոստիկանության զորքերում: Այդ ընթացքում պաշտպանել է Տավուշի սահմանները, հերթապահել Չինարիի դիրքերում: Սեպտեմբերի 29-ից միացել է Քարվաճառի պաշտպանությանը, նոյեմբերի 3-ին տեղափոխվել է Շուշի: Զոհվել է քաջի մահով նոյեմբերի 7-ին՝ Շուշիի մատույցներում:

Նոյեմբերի 16-ին Հարժիս գյուղում հողին հանձնվեց անմահացած երիտասարդը՝ քաջարի զինվորը, ոստիկանության զորքերի զինծառայողը, շարքային Միեր Մարտիրոսյանը:

Երբ սեպտեմբերի 27-ին ադրբեջանաթուրքական զորքերը պատերազմ սանձազերծեցին Արցախի դեմ, Միերը ոստիկանության զորքերի կազմում իր մասնակցությունն ունեցավ հայրենիքի պաշտպանության սուրբ գործին:

Կռվելով ռազմաճակատի տարբեր ճակատներում՝ իր զինակիցների հետ արժանի հակահարված էր տալիս հակառակորդի զորքերին:

Շուշիի ուղղությամբ կենտրոնացվել էին մեծաքանակ ուժեր և զինտեխնիկա: Թուրքական հատուկ ջոկատայինների գրոհները հետ էին մղվում անձնազոհ հայ մարտիկների կողմից:

Ականատեսները փաստում են՝ իմանալով հանդերձ, որ ռմբահարվածներից զոհվում են նաև իրենց զինվորները, թշնամին գնդակոծում էր այն տարածքները, որտեղ տեղի էին ունենում մերձամարտեր:

Արկի բեկորներից ոտքից վիրավոր Միերը, կապելով վերքը, շարունակեց մարտը: Ընկերների հորդորին՝ թողնել դիրքը և հեռանալ անվտանգ տեղ, նա մերժեց՝ դուք գնացեք, ես կգամ: Շարունակվող մարտի ընթացքում վիրավորվեց նաև երկրորդ ոտքը: Վիրակապելով վերքերը՝ անվեհեր զինվորը շարունակել է կռիվը՝ միգուցե ապահովելով նաև ընկերների նահանջը: Շարունակվող ռմբահարումներից նոր հարված ստացավ, որը և կտրեց քաջ հայորդու կյանքի թելը:

Հուղարկավորվել է Հարժիսի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական զորակցություն» և ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալներով:

Մարտիրոսյան Նարեկ Ճիրազի

Ծնվել է 1993 թ. հունիսի 18-ին Գորիսի տարածաշրջանի Քարաշեն գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 2011 թ. ընդունվել, 2018 թ. ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության բաժինը: 2012-2014 թթ. ծառայել է հայոց բանակում:

Համագյուղացիները հպարտությամբ են պատմում Նարեկի մասին, հիշում են, որ պատանեկան տարիներին շատ չարաճճի էր, գյուղում իրեն հետևող պատանիների մի խումբ ուներ: Հիշում են նրան արդեն երիտասարդ տարիքում՝ հարգալից շրջապատի հանդեպ, բարի, մեծերին հարգող, օգնող...

2016 թ. կամավոր մասնակցել է Ապրիլյան պատերազմին, պարգևատրվել պատվոգրով, ինչպես նաև՝ «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով:

2020 թ. սեպտեմբերի 27-ին բազմաթիվ սյունեցիներ մեկնեցին Արցախ: Նարեկը մեկն էր այն քաջարի երիտասարդներից, ով չսպասեց նույնիսկ զորահավաքի, այլ մեկնեց կամավոր, մեկնեց գիտակցաբար, գնաց պաշտպանելու պապերի՝ հազարավոր տարիներ պահածն ու իր արյունը խառնեց հերոս նախնիների՝ հողը պահելու համար թափած արյանը...

Մայրը պատմում է, թե որդին զանգահարում էր՝ իրենց հույս տալիս, ասում՝ անպայման հաղթելու ենք, որ թուրքից վախենալ պետք չէ, քանի դեռ իր նման տղերքը կանգնած են թուրքի դեմ...

Մայրը հավերժական թվացող յոթ օրը սովորել էր ապրել որդու զանգից զանգ, սովորել էր ու կարծում էր, թե այդ զանգերը երբեք չեն դադարելու: Հոկտեմբերի 8-ին, սակայն, Նարեկը չզանգահարեց, մայրը տագնապեց, մի տեսակ վատ կանխազգացում ունեցավ, հետո ինքն իրեն հանգստացրեց, բարկացավ իր չար մտքերի վրա, բայց տագնապալի ժամերը, որ նրան տարիներ էին թվում, անցնում էին, ու հեռախոսը լռում էր: Մեկ օր՝ 24 ժամ, անհաշվելի վայրկյաններ. մայրը հուսաց, սպասեց, աղոթեց, բայց...

Հոկտեմբերի 9-ին եկավ հաստատված բոթը՝ 2020 թ. հոկտեմբերի 8-ին դիպուկահարի կրակոցից զոհվել է Նարեկ Մարտիրոսյանը...

Հուղարկավորվել է Քարաշեն գյուղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մելքումյան Սամվել Արտակի

Ծնվել է 1997 թ. սեպտեմբերի 21-ին Գորիս քաղաքում: Սովորել է Գորիսի թիվ 1 հատուկ միջնակարգ դպրոցում: 2015 թ. ընդունվել և ավարտել է Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը: 2016 թ. հունվարի 12-ին զորակոչվել է հայկական բանակ: Ծառայության է անցել Լեռնային Ղարաբաղում՝ Մատաղիսի զորամասում: Ստացել է կրտսեր սերժանտի կոչում:

Մասնակցել է Ապրիլյան պատերազմին, որի ժամանակ ստացել է բեկորային վիրավորում:

2018 թ. պայմանագրային ծառայության է անցել Գորիսի զորամասում՝ դիպուկահար: 2020 թ. փետրվար-հունիս ամիսներին վերապատրաստվել է ՀՀ ՊՆ թիվ N զորամասի դիպուկահարների դպրոցում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին, մարտական գործողությունները սկսվելուց ժամեր անց, Սամվելն արդեն Ջրականում էր: Ծանր ու դաժան մարտեր էին: Սեպտեմբերի 30-ին Սամվելն ու ընկերները տեղեկանում են իրենց հրամանատարի վիրավորվելու մասին և շտապում օգնության: Վիրավոր հրամանատարին դուրս բերելիս Սամվելը ստանում է առաջին վիրավորումը, բայց շարունակում մնալ շարքում: Ժամեր անց ստանում է երկրորդ և ծանր վիրավորումը՝ բեկորներ գլխուղեղում, թոքում և մարմնի այլ մասերում:

Նրա ծառայակից ընկերները պատմում են, թե ինչպես է Ջրականում շուրջը հավաքել բոլորին, քննարկել հրամանատարին դուրս բերելու պլանն ու ի կատար ածել: Սամվելին նկարագրելիս ընդգծում են համարձակությունն ու որոշումներ կայացնելու ընդունակությունը:

Սամվելի մասին խոսելիս քույրը չի կարողանում զսպել արցունքները. *«Ես նրան վստահում էի այնպես, ինչպես հորն են վստահում: Հրաշալի եղբայր եմ ունեցել, մենք երկու քույր և մեկ եղբայր էինք, հիմա մնացել ենք առանց նրա, առանց մեր սրտի մի կտորի: Այս ցավը չի անցնում, ժամանակը չի բուժում, ոչինչ չի կարող սփոփել որդեկորույս ծնողներիս կամ իմ ու քրոջս զգացած անտանելի կսկիծը, ոչինչ ու ոչ ոք չի կարող փոխարինել նրան: Մեզանից պատերազմը հարազատ հոգի է խլել...»:*

Մահացել է 2020 թ. դեկտեմբերի 15-ին՝ Երեբունի բժշկական կենտրոնում:

Հուղարկավորվել է դեկտեմբերի 17-ին՝ Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Միրաքյան Կարապետ Ծավարշի

Ծնվել է 2001 թ. սեպտեմբերի 20-ին Գորիս քաղաքում: Սովորել է Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: 2019 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մաթեմատիկա և մեխանիկա բաժինը: 2020 թ. հունվարին զորակոչվել է ազգային բանակ. ծառայության ուսումնական փուլն անց է կացրել Գյումրու հակատանկային գումարտակում: Ուսումնական փուլն ավարտելուց հետո տեղափոխվել է Արցախի Հանրապետություն, Մարտունու 2-րդ պաշտպանականում ծառայում էր որպես հակատանկային դասակի հաշվարկի հրամանատար:

Ծառայությունից գոհ էր, կորոնավիրուսի համավարակի պատճառով սահմանափակվել էին զինվորների և ծնողների տեսակցությունները, բայց Կարապետն ամեն կերպ հուսադրում էր ծնողներին, ասում, թե համավարակը նահանջելու է ու իրենք հանդիպելու են:

Ծառայության ընթացքում արժանացել է ՀՀ ԶՈՒ պարտադիր ժամկետային զինծառայողների դասային որակավորման 3-րդ կարգի և ՀՀ զինված ուժերի հրթիռահրետանային զորքերի ուսումնական զորամասերի ավարտական կրծքանշանների:

2020 թ. սեպտեմբերի 27… Ծնողների անհանգիստ զանգերին ի պատասխան՝ Կարապետը համոզում էր, որ իրենց մոտ ամեն ինչ հանգիստ է: Մայրը հետո միայն պիտի հասկանար, որ որդին ծանր մարտերից առաջ էր զանգահարում ու ասում. *«Գնում եմ քնելու, հեռախոսս անջատում եմ…»:*

Հոկտեմբերի 23-ին հակատանկային դասակը, որի կազմում էր Կարապետը, առաջադրանք է ստանում մտնել Վարանդա, որն արդեն իսկ թշնամու ձեռքում էր: Ծանր ու դաժան մարտի ընթացքում զոհվում են դասակի բոլոր տղաները՝ բացի մեկից: Փորձեցինք կապ հաստատել միակ փրկված զինվորի հետ, բայց մեզ ասացին, որ ընկերների կորստի ցավն ու պատերազմում տեսածը դեռ թարմ են նրա հոգում. նա խոսել, որևէ բան պատմել չի կարող:

Ամիսներ շարունակ ծնողները, հարազատներն ու Կարապետին ճանաչողները սպասել ու աղոթել են…

2021թ. մարտի 20-ին ԴՆԹ հետազոտությունը փաստեց՝ Կարապետ Միրաքյանը զոհվել է…

2021թ. մարտի 22-ին Գորիսի զինվորական պանթեոնում զինվորական պատիվներով հողին հանձնեցին 19-ամյա զինվորին: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Միրզոյան Արեն Կարենի

Ծնվել է 2002 թ. հունվարի 2-ին Գորիսում: 2004 թ. ընտանիքը տեղափոխվել է Արցախ՝ Շուշի: Սովորել է Ստեփանակերտի Աշոտ Ղուլյանի անվան դպրոցում, Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ:

2020 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Արա լեռան զորամասում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արենը հենց այն դիրքում էր, որն առաջիններից մեկը գրոհեց թշնամին:

Արա լեռան անկումից հետո Արենը մասնակցել է Հադրութի և Դրախտիկի պաշտպանությանը:

Արենի դասընկերուհի Օլեսյան հուզվում է ընկերոջ մասին խոսելիս. *«Ես դեռ Արենին անձամբ չէի ճանաչում, բայց լսել էի նրա մասին, գիտեի, որ հրաշալի սովորող է, մաթեմատիկայից ու ֆիզիկայից նրա ունեցած գիտելիքների, մասնակցած մրցույթների ու հաղթանակների մասին լեգենդներ էին պատմում: Երբ առաջին անգամ մտա այդ դասարան՝ հայացքով փնտրում էի Արենին, կարծում էի՝ պիտի տարբերվի մյուսներից, բայց պարզվեց այդ չափազանց խելացի տղան չարաճճի, շփվող, ոչնչով չտարբերվող մարդ է, նույնիսկ չարություններ էր անում ու գույք փչացնում, զվարճալի խոսքեր ասում, դասը չէր լսում, նույնիսկ չէր լսում, թե իրեն ինչ են հարցնում, բայց, զարմանալի կերպով, միշտ ճիշտ պատասխաններ էր տալիս: Նրա մարդկային հատկանիշները լավագույնս դրսևորվում էին դժվար պահերին, չէր սպասում, որ իրեն դիմեին, օգնում էր բոլորին: Հատուկ շարմ ուներ, որով իրեն ճանաչողներին գերում էր ու բարեկամանում բոլորի հետ: Երբ արդեն ֆիզմաթում էր սովորում, իմացանք, որ կիթառ է նվագում, հիմա հաճախ ենք հավաքվում, լսում նրա կատարումների ձայնագրությունները: Նա այս երկրին այնքան շատ բան կարող էր տալ, նա կարող էր և, համոզված եմ, դառնալու էր հռչակավոր գիտնական, որովհետև այդպիսի մարդիկ դարը մեկ են ծնվում...»:*

Պատերազմի հենց առաջին օրից ծանր մարտեր է մղել Հադրութի և Մարտունու պաշտպանության համար:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 20-ին Ամարասի վանքի մատույցներում:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Միրումյան Լևոն Սամվելի

Երբ խոսվում էր սիրած աղջիկ ունենալու, աշխատանք գտնելու կամ այլ ծրագրերի մասին, ասում էր՝ «Ես պարտք եմ հայրենիքիս, առաջինը պարտքս պիտի կատարեմ»:

Ծնվել է 1998 թ. նոյեմբերի 21-ին Գորիս քաղաքում:

2004թ. ընդունվել է Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց, այնուհետև ուսումը շարունակել Գորիսի թիվ 1 ավագ դպրոցում:

«Համեստ, դաստիարակված, խելացի տղա էր մեր Լևոնը», – ասում են ուսուցիչները, ովքեր հպարտությամբ են նշում, որ դասավանդել են նրան, նույն հպարտությամբ ընկերներն ու հարևաններն են Լևոնին հիշում, ափսոսում, բնորոշում որպես հարգալից, հայրենասեր, բարի, խելացի, տաղանդավոր երիտասարդի: Բոլորը Լևոնի մասին խոսում են բացառապես ներկայով:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Գորիսի պետական համալսարանի մաթեմատիկայի բաժինը, եղել լավագույն ուսանողներից: Ընկերները զորակոչվել ու զորացրվել էին, ինքն օգտվում էր տարկետումից՝ զորակոչվելու էր ավարտելուց հետո: Երբ խոսվում էր սիրած աղջիկ ունենալու, աշխատանք գտնելու կամ այլ ծրագրերի մասին, ասում էր՝ *«Ես պարտք եմ հայրենիքիս, առաջինը պարտքս պիտի կատարեմ»:*

2020 թ. օգոստոսի 27-ին Լևոնը զորակոչվեց բանակ. ուրախ էր, հպարտ, որ Արցախում է ծառայելու:

Սեպտեմբերի 27-ին Լևոնը Ջրականում էր. երիտասարդը, ով խուսափում էր վեճ ու կռվից, հիմա կենաց մահու կռիվ էր տալիս, դարձել էր անողոք ռազմիկ և պահանջում էր չխնայել թուրքին:

Նորակոչիկ ռազմիկը զոհվեց հոկտեմբերի 2-ին. աճյունն ամփոփված է Գորիսի զինվորական պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մուրադյան Հարութ Ֆրիկի

Երբ սկսվեց պատերազմը, Հարութը Ջրականում էր: Հրաշքով փրկվել ու նորից Մեղրի է վերադարձել: Ու թվում էր՝ վերջ, ամեն ինչ լավ է լինելու:

Ծնվել է 2000 թ. նոյեմբերի 24-ին Տաթև գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Գորիսում՝ ցանկանալով դառնալ խոհարար: Ուսումը կիսատ թողնելով՝ 2019 թ. հունվարին զորակոչվել է ծառայության՝ Ագարակում: Պատերազմի օրերին տեղափոխվել է Ջրական, ապա շարունակել պայքարը Կովսականում:

Հարութի ծառայությանը հաշված օրեր էին մնացել: *«Բան չմնաց»,* – ասում էր քրոջը, – *«Կգամ ու քո դպրոցական վերջին զանգն անմոռաց կդարձնեմ»:* Եկավ, ավելի ճիշտ՝ բերեցին: Անողորմ պատերազմը չխնայեց 19-ամյա տղային: Վեց ամիս Գյումրիում ծառայելուց հետո տեղափոխվել էր Մեղրի: Ամեն ինչ լավ էր. ծառայությունը հիանալի էր անցնում: Հարութին, որպես ազնիվ, խելացի երիտասարդի, գիտեին թե ընկերները, թե հրամանատարները: Զանգահարում էր, խոսում, շատ էր սիրում քրոջ հոգու հետ խաղալ, բարկացնում էր, հետո ծիծաղում, ու ամեն ինչ հարթվում էր: Երբ սկսվեց պատերազմը՝ Հարութը Ջրականում էր: Հրաշքով փրկվել ու նորից Մեղրի է վերադարձել: Ու թվում էր՝ վերջ, ամեն ինչ լավ է լինելու: Բայց նրանց գունդը մասնակցեց Կովսականի համար մղվող մարտերին ևս: Ու այդտեղ կատարվեց ամենաանդառնալին. Հարութը զոհվեց:

Զոհվել է հերոսաբար՝ հոկտեմբերի 24-ին, անօդաչուի հարվածից:

Իսկ մայրը պատրաստվում էր որդու քսանամյակին. պիտի գնար որդու ծննդին…

Նշեցին տղայի քսանամյակը, նշեցին առանց Հարութի, նշեցին՝ շիրմի առջև խնկարկելով:

– *Մենք կշարունակենք մեր կյանքը,* – ասաց Հարութի հայրը, – *բայց չենք ապրի: Խորտակված երազանքներ, փշրված հույսեր…*

Հուղարկավորվել է Տաթևի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պետրոսյան Խաչիկ Հրաչիկի

Ծնվել է 1987թ. հուլիսի 22-ին Խոտ գյուղում:

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը:

Խաչիկը գյուղի երևելի երիտասարդներից էր: Թեև միջին մասնագիտական կրթություն էր ստացել Գորիսի պետական քոլեջում դեռևս 2004-ին, բայց նախընտրել էր գյուղմեխանիզատորի, արարող գյուղաբնակի և մշակի պատվավոր ու երկրաշեն ուղին:

2020 թ. նոյեմբերի 9-ին Խոտ գյուղում հողին հանձնվեց անմահացած մեր երիտասարդներից ևս մեկը՝ քաջարի զինվոր Խաչիկ Պետրոսյանը:

Երբ սեպտեմբերի 27-ին ադրբեջանաթուրքական զորքերը պատերազմ սանձազերծեցին Արցախի դեմ, Խաչիկը հրաժարվեց գյուղական մենատնտեսի իր առօրյայից և մեկ-երկու օրում կարգի բերեց սեփական «Կամազ» ավտոմեքենան ու ներկայացավ Սյունիքի զինկոմիսարիատ՝ ռազմական գործողությունների մեջ ներքաշված հայոց բանակին իր համեստ աջակցությունը բերելու պատրաստակամությամբ:

Եվ օրեր շարունակ իր մեքենայով զենք ու զինամթերք էր հասցնում առաջնագիծ՝ այդ կերպ նպաստելով հայրենյաց հողի պաշտպանության համար մղվող մարտերին:

Խաչիկը՝ մինչև ծանր վիրավորվելը, կենաց-մահու կռիվ է տվել հանուն հայրենիքի: Նա իսկական հայրենասեր էր և արիաբար կատարեց իր պարտքը՝ ակտիվ մասնակցություն ունենալով Կուբաթլիի տարածքում ընթացող մարտական գործողություններին:

Սակայն հոկտեմբերի 23-ին Կուբաթլիի տարածքում՝ հերթական անգամ կրակագիծ զինամթերք տեղափոխելիս, դարձավ թշնամու անօդաչու թռչող սարքի թիրախ՝ ստանալով բազմաթիվ վերքեր:

Օրեր շարունակ Երևանի «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերականգնողական բաժնում պայքար էր մղվում նրա կյանքի փրկության համար:

Նոյեմբերի 7-ին Խաչիկ Պետրոսյանի երկրային կյանքն ընդհատվեց…

…Ասում են՝ մանկահասակ երեխան բնազդով զգում է իր ծնողի վերահաս մահը, և իր տագնապն արտահայտում չդադարող լացով: Խաչիկ Պետրոսյանի՝ դեռևս մեկ տարին չբոլորած դուստրը սկսել էր լացել, որն այդ պահին իսկական ողբ էր հիշեցնում. դա տեղի էր ունենում այն պահին, երբ նրա հայրը մահվան շեմին էր արդեն…

Հուղարկավորվել է Խոտի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պողոսյան Արշավիր Աշոտի

Արցախը պիտի մնա հայկական ոչ միայն պատմական արդարության, այլև Սյունիքի անվտանգությունը երաշխավորելու համար: Այդ համոզմունքն էր նրան ստիպել 1990-ին և 2016-ին հասնել մարտադաշտ:

Ծնվել է 1966 թ. սեպտեմբերի 17-ին Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Երկար տարիներ աշխատել է ՀՀ ՊՆ-ում՝ վարորդ: Երկու դուստր և երկու թոռ ունի:

Ամենուր սպասված ու սիրված էր Արշավիրը, կարողանում էր լեզու գտնել բոլորի հետ, նրա հետ ծանոթությունն անպայման վերածվում էր ընկերության:

Տեղ գյուղի զավակը գիտեր՝ Արցախն իրենց վահանն է, չլինի հայկական Արցախը, գող ու ավազակ ադրբեջանցին կգա՝ կմոտենա իր գյուղին, մի օր անասուն կգողանա, մի օր կկրակի գյուղի կողմը, կխաթարվի գյուղի անդորրը: Ուստի և Արցախը պիտի մնա հայկական ոչ միայն պատմական արդարության, այլև Սյունիքի անվտանգությունը երաշխավորելու համար: Այդ համոզմունքն էր նրան ստիպել 1990-ին և 2016-ին հասնել մարտադաշտ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրքը նորից ոտքի ելավ՝ հայկական հողից հերթական կտորը պոկելու. Արշավիրը տեղը չէր գտնում, զավակները հազար պատճառ գտան, խնդրեցին, համոզեցին, որ ռազմաճակատ չմեկնի, բայց հողը տնքում էր, ու Սյունիքի զավակը տանը մնալ չկարողացավ: Սեպտեմբերի 28-ին կամավորագրվեց...

Հոկտեմբերի 1-ին թշնամու հարվածային անօդաչուն թիրախավորեց Արշավիրի զինամթերք տեղափոխող մեքենան. զոհվեց քաջ սյունեցին՝ հայրենիքը կյանքով պաշտպանելու իր հերոսական օրինակն ավանդելով մեզ...

Հուղարկավորվել է Տեղի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պողոսյան Հրաչյա Վաչիկի



Ծառայության ընթացքում ցուցաբերելով բարձր կարգապահություն՝ արժանացել է շնորհակալագրերի, խրախուսանքների: Զորակոչվելուց հետո աշխատանքի է անցել ԱԱԾ սահմանապահ զորքերում: 2016 թ. մասնակցել է քառօրյա պատերազմին:

Ծնվել է 1995 թ. մարտի 19-ին Կորնիձորում: 2002-2012 թթ. սովորել է Կորնիձորի միջնակարգ դպրոցում: Էությամբ խիզախ էր, պայքարող: Ուներ մեկ սկզբունք. կյանքում լինել մարդկային, բարոյական արժեքներ կրող, ապրել ազատության մեջ, մերժել ստրկական կյանքը, լինել նպատակասլաց, կառուցողական գաղափարների կրող:

2013-2015 թթ. զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության:

Ծառայել է Դիլիջան քաղաքի ՀՀ ԶՈՒ N զորամասի զրահասայլային (տանկային) գումարտակում:

Ծառայության ընթացքում ցուցաբերելով բարձր կարգապահություն՝ արժանացել է շնորհակալագրերի, խրախուսանքների: Զորակոչվելուց հետո աշխատանքի է անցել ԱԱԾ սահմանապահ զորքերում:

2016 թ. մասնակցել է քառօրյա պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին բռնկված պատերազմի ժամանակ մասնակցել է Արցախի Ջրականի պաշտպանական մարտերին: Մահացու վիրավորում ստանալով՝ անմահացել է հոկտեմբերի 14-ին՝ իր հրամանատարի հետ, անօդաչու թռչող սարքից արձակված հրթիռի հարվածից՝ մարտական գործողության ժամանակ:

Հուղարկավորված է Գորիսի զինվորական պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սաթունց Տիգրան Մարտունի



Ծնվել է 1963 թ. մարտի 23-ին Գորիսում: Սովորել է Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցում, 1981-1986 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում՝ ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտությամբ:

Ծառայել է խորհրդային բանակում: 1989-1993 թթ. աշխատել է Գորիսի թիվ 73 ՄՊՏՈՒ-ում՝ որպես զինղեկ: 1995-2015 թթ. եղել է «Սաթունց» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրենը:

2016-2017 թթ. աշխատել է «Բիոտեքս» ՍՊԸ-ում, այնուհետև շարունակել աշխատանքային գործունեությունը՝ որպես անհատ ձեռներեց:

1992 թ. անդամակցել է «Մխիթար Սպարապետ» կամավորական ջոկատին, իսկ 1993-1994 թթ.՝ ծառայելով N զորամասի 3-րդ պայմանագրային գումարտակում, մասնակցել է Շուռնուխի, Կորնիձորի, Կուբաթլիի մարտական գործողություններին: Ականի պայթյունից ստացել է ծանր մարմնական վնասվածքներ, սակայն վերքերի փոքր-ինչ ապաքինումից հետո վերադարձել է մարտադաշտ և մինչև պատերազմի ավարտը մասնակցել Գորիսի սահմանների պաշտպանությանը:

1993 թվականին՝ Արցախյան առաջին պատերազմում, զոհվել է Տիգրանի հայրը՝ Մարտուն Սաթունցը:

1999 թվականին ամուսնացել է, ունի երկու որդի:

Տիգրան Սաթունցի ու նրա ընտանիքի մասին Գորիսում միայն դրական կարծիքներ են հայտնում. *«Հարգված մարդ էր, աշխատող, ստեղծող, լավ ընտանիք ունի՝ խելացի տղաներ, նվիրված կին: Տիգրան Սաթունցը հայտնի էր իր հայրենասիրությամբ: Ամեն անգամ, երբ հայրենիքը վտանգի մեջ է եղել, Տիգրանը զենք է վերցրել և պաշտպանել մեր երկիրը»:*

2016 թ. ապրիլին թշնամին նորից գլուխ էր բարձրացրել, Տիգրան Սաթունցը ԵԿՄ կազմում մեկնել է Արցախ, ամիսներ շարունակ կանգնել ժամկետային զինծառայողների կողքին՝ իր փորձով, գիտելիքներով ու ներկայությամբ նպաստել 18-20 տարեկան տղաների բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը:

2020 թ. սեպտեմբերի 29-ին Տիգրանը կամավորագրվեց և մեկնեց Մարտակերտ: Շտապում էր հասնել ժամկետային զինծառայող որդուն, ում կողքին մարտնչել է 25 օր:

Զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 27-ին՝ անօդաչուի հարվածից: Նահատակված քաջորդու աճյունը հողին է հանձնվել հոկտեմբերի 29-ին Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «ԵԿՄ» հուշամեդալով, «Մարտական ծառայության» մեդալով:

Սահակյան Արմեն Արմանի

Ծնվել է 2000 թ. հուլիսի 13-ին Գորիս քաղաքում:

2006 թ. Արմենն ընդունվել է Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց. առաջավոր էր ուսման մեջ, գերազանցիկ, ընկերասեր: 2015 թ. ավարտելով 9-րդ դասարանը՝ ընդունվել է Գորիսի գյուղատնտեսական քոլեջ: 2019 թ. հունիսի 16-ին զորակոչվել է զինվորական ծառայության, ծառայել է Ջրականում: Հավասարակշռված բնավորության շնորհիվ հարգված էր բոլորի կողմից: 2020 թ. հուլիսի 18-ին պարգևատրվել է «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանով:

Երկկողմանի ծնողազուրկ էր:

«Սեպտեմբերի 12-ին բարձրանում է դիրքեր, «զամպալիտը» չի թողնում, բայց ինքը համառում է. ամսի 27-ին սկսվում է պատերազմը: Ամեն օր զանգում էինք, ծիծաղելով հուսադրում էր՝ լավ եմ, հաղթելու ենք: Ջրականից հասել է Վարանդա, ծառայում էր առաջնագծում, ոչնչացրել է թշնամու հինգ տանկ: Արմենը թշնամու դեմ կռվել է մեկ ամիս 5 օր: Հոկտեմբերի 20-ին վիրավորվում է, բայց ոչ մեկին տեղյակ չի պահում: Հոկտեմբերի 26-ին զանգահարում է տուն՝ թե լավ եմ, հարցնում են՝ կրակում ե՞ն, ասում է՝ հաղթելու ենք, պիտի կռվենք հանուն հայրենիքի, ներկա սերնդի և մեր բալիկների համար, որ նրանք ապրեն խաղաղ ու երջանիկ: Ամսի 27-ին մորաքույրները և քեռին զանգում են Արմենին, զանգը գնում է, բայց նա չի պատասխանում: Առավոտյան հայտնում են, որ Արմենը ոտքից վիրավոր է: Ամսի 27-ին Արմենը մտնում է կռվի դաշտ՝ փրկելու իր ընկերներին: Ընկերներն ասում են. «Արմեն, միակ տղան ես մնացել, չգնաս՝ վերևից խփում են»: Բայց վիրավոր մարտադաշտ է մտնում և խոցվում թշնամու գնդակից», – պատմում է տատը:

Արմենին հոկտեմբերի 27-ին տեղափոխում են Երևան: Հոկտեմբերի 29-ին կնքում է մահկանացուն:

Երբ «զամպալիտը» իմացավ, զանգահարեց և ասաց. «Մի Ջրական էր, մի Արմենչիկ»՝ հարգված բոլորի կողմից: Նույնը կրկնում էին գորիսեցիները:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Սարգսյան Մայիս Կոլյայի

Ծնվել է 1991 թ. օգոստոսի 24-ին Գորիս քաղաքում: Սովորել է Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցում: 2009 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Տավուշի մարզի Չինարի գյուղի զորամասում՝ հակաօդային պաշտպանությունում:

Զորացրվելուց հետո ընդունվել է Գորիսի պետական համալսարանի տնտեսագիտության բաժնի բակալավրիատ, ապա՝ մագիստրատուրա:

Մայիսը պայմանագրային զինծառայող էր Գորիսի զորամասում: Տասը տարվա անընդմեջ ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես խելացի ու բանիմաց ավագ սերժանտ: Դասակի հրամանատարի տեղակալ էր, իր մարդկային որակների շնորհիվ սեր ու հարգանք էր վայելում թե՛ ծառայակիցների, թե՛ հրամանատարների շրջանում:

Մայիսի մասին հայրն է պատմում. *«Մինուճար տղաս էր, ասում էր՝ պատերազմն ավարտվի՝ ամուսնանալու եմ: Ապրեց ավտոտնակում՝ տան մասին երազելով, տունն իսկապես երազանք էր նրա համար:*

Նվիրված զինծառայող էր, պարտաճանաչ աշխատող, հրաշալի որդի, օգնող ընկեր: Մարդ էր, լավ մարդ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին մի քանի րոպեով տուն եկավ, մեզ հրաժեշտ տվեց, խոստացավ վերադառնալ ու գնաց Ջրական, աշխատում էր ամեն ինչ հասցնել, չէր ցանկանում թերանալ ոչ մի բանում, դա նրա տեսակն էր՝ թերություններ տանել չէր կարող, ինքն էլ անթերի մարդ էր, նաև անթերի զինվորական: Ծառայության ընթացքում արժանացել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալի և բազմաթիվ պատվոգրերի:

Հոկտեմբերի 16-ին՝ Ջրականում է զոհվել, եղել է զենք տեղափոխող բեռնատարում, երբ անօդաչու սարքը սկսել է հրթիռակոծել:

Տղաս զոհվել է մարտի դաշտում՝ մարտական առաջադրանք կատարելիս:

Ուզում եմ հարգանք լինի զինվորականների հանդեպ, որ սերունդները հասկանան, թե ինչ է նշանակում կռվել ու զոհվել հանուն հայրենիքի:

Զինվորական հագուստ կրող մարդուն պիտի տեղ տան, նրանք պիտի հարգանք վայելեն ամենուր:

Հպարտ եմ իմ Մայիսով, հպարտ եմ, որ նման տղա եմ դաստիարակել, անասելի, անչափելի ցավ եմ զգում, որը բացատրել կամ նկարագրել չեմ կարող...»:

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սաֆյան Սենիկ Սերյոժայի

Ծնվել է 1970 թ. հունվարի 1-ին Խնձորեսկում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում, այնուհետև կրթությունը շարունակել Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում:

1992 թ. պատերազմին զուգընթաց ձևավորվում էր ՀՀ բանակը. Սենիկն առաջին զորակոչի զինվորներից էր...

Գեղեցիկ, օրինակելի ու երջանիկ ընտանիք ուներ՝ երկու որդի և մեկ դուստր, մանկավարժ կինը զբաղվում էր երեխաների կրթությամբ...

Արցախն ազատագրված էր, արյունով վերադարձրածը խելքով ու քրտինքով են պահում. Սենիկն ընտանիքը տեղափոխեց Քաշաթաղ...

Հող էր մշակում, մասնակցում դպրոցի կայացման գործին՝ միայն մեկ համոզմունքով, որը կրկնում էր հեքիաթի փոխարեն՝ երեխաներին բարի գիշեր մաղթելուց առաջ՝ *«Էս հողում պիտի գերեզման ունենանք, որ պատմություն ունենանք, էս հողում պիտի ծառ տնկենք, որ արմատավորվենք, պիտի եկեղեցի կառուցենք, որ հայի հավատով կառչենք հողին...»:*

Հատուկ վերաբերմունք ուներ դեպի զինվորական համազգեստը և որդիներին պարտադիր զինվորական ծառայությունից հետո համոզեց ծառայության մտնել...

Դուստրն այլ մոլորակ էր նրա համար, ում ամեն քայլին ուշադիր էր, ում դաստիարակության հիմքում դրեց հայրենիքի արժանապատվությունը գիտակցելու գաղափարը: Նանեն պատմության ուսուցչուհի դարձավ, հայրը նրա բոլոր դասաժամերին «ներկա էր», քանի որ դասի նախաբանը պիտի պլանավորեր հոր խորհրդով՝ *«Մի քանի րոպե նվիրիր մեր ազատագրական շարժումներին ու հերոսներին, թող երեխաների հոգում մշտական տեղ գտնեն Տիգրան Մեծը, Արտավազդը, Վարդանը, Դավիթ Բեկը, Նժդեհը, Անդրանիկը, Վազգենը, Մոնթեն...»:*

2016 թ. ապրիլի 2-ին առանց հապաղելու մեկնեց Մատաղիս՝ որդու կողքին կռվեց ու հաղթանակած, ոգևորված տուն վերադարձավ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Երիցվանքում՝ պատերազմի գույժից րոպեներ անց, զորահավաք էր... Սենիկը ջոկատի գլուխն անցավ, քանի որ համոզված էր, որ ի զորու է առաջնորդել ու պահպանել իր կողքին կռվողների կյանքը: *«Ջրականն ինձանից լավ իմացող չկա»,* – ասաց ու հաղթանակի համոզմունքով գնաց Ջրական:

Զոհվել է Ջրականում, հոկտեմբերի 3-ին, ականի պայթյունից:

Սենիկ Սաֆյանը հուղարկավորվել է Խնձորեսկի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սինանյան Նարեկ Սերգեյի

Ծնվել է 1992 թ. մայիսի 26-ին Գորիս քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գորիսի թիվ 3 միջնակարգ դպրոցում: Ավարտել է Գորիսի պետական համալսարանը, մասնագիտությամբ իրավաբան էր:

2012-2018 թթ. աշխատել է ոստիկանությունում:

2019 թ. պայմանագրային ծառայության է անցել՝ սպայի ուսադիրներով, Խնձորեսկի զորամասում, զբաղեցրել հետախուզական դասակի հրամանատարի պաշտոնը:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Նարեկի մասին պատմել ընկերները դժվարանում են. *«Ցավալի է, նրա մասին հիշելն արդեն ցավոտ է, ինչ ծրագրեր ուներ, ինչպես էր սիրում կյանքը, ինչքան էր լցված կյանքով: Ամենալավ բառերն եմ ուզում ասել, բայց մի այդպիսի բառ միտս չի գալիս, որը ցույց կտա, թե ինչքան լավ, նվիրված, հայրենասեր երիտասարդ ենք կորցրել...»:*

...Նարեկի որդին նոր էր ծնվել: Նա երազել էր տղա ունենալու մասին ու աշխարհի չափ ուրախացել, որ իր 5-ամյա դուստրն աշխարհում պաշտպան ու հենարան եղբայր կունենա:

Սեպտեմբերի 26-ի առավոտյան էր Նարեկը վերադարձել հերթապահությունից, գիշերը զանգահարել էին, ու նա գնացել էր...

Զինվորականների ընտանիքներում գիշերային զանգերը, ուսումնական ու մարտական տագնապները, մի քանի օրով բացակայելը սովորական էին:

Միայն առավոտյան Նարեկի կինը պիտի իմանար, որ պատերազմ է սկսվել, աղոթեր, տագնապեր, զանգահարեր ամուսնուն՝ իմանար, թե որտեղ է:

Նարեկը զանգահարում էր կնոջը՝ խոսում, հարցնում իր նորածին որդուց, հինգ տարեկան աղջկանից, հույս տալիս, որ ամեն ինչ լավ է լինելու: Միայն մի անգամ, ինչ-որ բան կանխազգալով, թե իրավիճակի ծանրության պատճառով, անկեղծացավ. *«Հնարավոր է, որ չվերադառնամ, դու մեր երեխաներին լավ նայիր, հնարավոր է՝ միայնակ, բայց պիտի հասցնես բոլոր այն նպատակներին, որ նախատեսել ենք միասին»:*

Լեյտենանտ Նարեկ Սինանյանը կռվել է Արա լեռան տարածքում, Ջրականում և Հադրութում:

Հոկտեմբերի 12-ին թշնամու անօդաչու սարքի հարվածից զոհվում է Նարեկը՝ անավարտ թողնելով բազմաթիվ նպատակներ...

Հուղարկավորվել է Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Վանեսյան Գարիկ Միշայի

Ականատեսները պատմում են, որ կապիտան Գարիկ Վանեսյանը մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն՝ հմտորեն օգտագործելով տարբեր զինատեսակներ:

Ծնվել է 1975 թ. սեպտեմբերի 5-ին Գորիս քաղաքում: 1981-1991 թթ. սովորել է Գորիսի թիվ 4 միջնակարգ դպրոցում: 1991 թ. ընդունվել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումի «Էկոնոմիկա և պլանավորում» բաժինը՝ էկոնոմիստ մասնագիտությամբ: 1999 թ. անցել է ժամկետային ծառայության ՀՀ ԶՈՒ-ում: Ծառայությունն ավարտելուց հետո անցել է աշխատանքի ՀՀ ԶՈՒ N զորամասում՝ որպես նռնականետային դասակի հրամանատար: Կոչումով սպա էր:

2005-2010 թթ. ընդունվել և ավարտել է Գորիսի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը:

Ամուսնացած էր, ունի երկու տղա և երկու աղջիկ:

2015 թ. ՀՀ ՊՆ կողմից պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով, ունի բազմաթիվ պատվոգրեր: 2018 թվականից ծառայել է Որոտանի (Կուբաթլի) N զորամասում՝ որպես ծառայության պետ: Պատերազմը դիմավորել է Ջրականում: Սկզբում իրականացրել է թիկունքային ծառայություն, այնուհետև՝ նույն զորամասի նռնականետային դասակի հրամանատարի վիրավորվելուց հետո, անմիջապես մեկնել է նրան փոխարինելու: Հոկտեմբերի 2-ին վիրավորվել է դիպուկահարի կրակոցից: Շարունակելով մարտը՝ զոհվել է հոկտեմբերի 2-ի լույս 3-ի առավոտյան՝ Անանուն բարձունքը պաշտպանելիս: Մարմինը գտնվել է պատերազմից մոտ վեց ամիս անց: Ճանաչվել է ԴՆԹ-ի անալիզի արդյունքում:

Ականատեսները պատմում են, որ կապիտան Գարիկ Վանեսյանը մարտերի ժամանակ ցուցաբերել է խիզախություն՝ հմտորեն օգտագործելով տարբեր զինատեսակներ:

Հուղարկավորվել է 2021թ. մարտի 19-ին Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Տատինցյան Էյներ Արթուրի

Դասընկերների խոսքով՝ Էյները դասարանի ուրախությունն էր: Բարի, համեստ, խելացի, խիզախ, կյանքով լեցուն պատանին սիրում էր ընտանիքը, հայրենիքը, ընկերներին:

Ծնվել է 2001թ. հունվարի 31-ին Գորիս քաղաքում: Գորիսի Սերո Խանզադյանի անվան թիվ 6 դպրոցում հիմնական կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է տեղի թիվ 4 ավագ դպրոցում: Դասընկերների խոսքով՝ Էյները դասարանի ուրախությունն էր: Բարի, համեստ, խելացի, խիզախ, կյանքով լեցուն պատանին սիրում էր ընտանիքը, հայրենիքը, ընկերներին: Նրա համար չկար առավել բարձր և սրբազան պարտականություն, քան հայրենիքի պաշտպանությանը ծառայելը:

2019 թվականին զորակոչվել է հայոց բանակ…

Նրան վիճակված էր մասնակցելու Արցախյան նորօրյա պատերազմին, որը սկսվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին՝ թուրք-ազերիների և միջազգային ահաբեկիչների ագրեսիայով՝ ընդդեմ հայոց Արցախի:

Պատերազմի ընթացքում մասնակցել է Ջրականում տեղի ունեցող մարտական թեժ գործողություններին՝ առաջնորդվելով սկզբունքով, որով մարտի են ելել մեր նախնիներն Ավարայրում և Սարդարապատում, նաև Արցախյան 1-ին և 2-րդ պատերազմներում՝ «Մահ կամ ազատություն»:

Ճակատամարտերից մեկում, ցավոք, կտրվեց Էյների կյանքի թելը՝ դառնալով հավերժի ճամփորդ: Նա զոհվեց՝ հայրենիքին նվիրելով իր կյանքը՝ անկատար թողնելով իր երազանքները: Սեպտեմբերի 29-ին վերջին զանգն էր կատարել տուն… Եվ միայն 122 օր անց ծնողները կարողացան գտնել անմահացած հերոսի աճյունը:

Էյներն իր հաղթական ոգով ու ժպիտով ապրեցնում էր բոլորին:

Հուղարկավորվել է 2021թ. փետրվարի 1-ին Գորիսի զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Քյարունց Գագիկ Ռազմիկի

Ծառայությունն ավարտել է 2018-ին և վերադարձել հայրենի գյուղ: Հայրենիքի նկատմամբ սերը նրան կրկին տարել է հայոց բանակի շարքերը: 2020 թ. ծառայության է անցել Խնձորեսկի զորամասում

Ծնվել է 1998 թ. հունիսի 16-ին Գորիսի տարածաշրջանի Տեղ գյուղում: Ընտանիքի երրորդ զավակն էր: Ավարտել է Տեղի Արամայիս Սարգսյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը:

Մինչև բանակ գնալն աշխատել է գյուղում, զբաղվել անասնապահությամբ:

Հայոց բանակի շարքերը համալրել է 2016 թ.: Մարտակերտում եղել է դիպուկահար: Ծառայությունն ավարտել է 2018-ին և վերադարձել հայրենի գյուղ:

Հայրենիքի նկատմամբ սերը նրան կրկին տարել է հայոց բանակի շարքերը:

2020 թ. ծառայության է անցել Խնձորեսկի զորամասում՝ որպես պայմանագրային զինծառայող: Պատերազմի ժամանակ եղել է հրահանգիչ, հրետանավոր էր: 15 օր թեժ մարտեր վարելով ու պայքար մղելով թշնամու դեմ՝ վիրավորվել է դիպուկահարի կրակոցից՝ հոկտեմբերի 12-ին:

Զոհվել է հոկտեմբերի 15-ին:

Հուղարկավորված է Գորիսի զինվորական պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

ՍԻՍԻԼՆԻ
ՏԼՐԼԵԼԵՐՋԼՆ



Ազարյան Արեգ Բորիկի

Ծնվել է 1988 թ. մայիսի 1-ին ԼՂՀ Շահումյանի շրջանի Վերիշեն գյուղում:

Շահումյանից բռնի տեղահանված ընտանիքը հանգրվանեց Սիսիանի շրջանի Նժդեհ (Սոֆլու) գյուղում:

Սկզբնական կրթությունը ստացել է Սոֆլուի ութամյա դպրոցում, այնուհետև ավարտել Դաստակերտի միջնակարգ դպրոցը:

2006 թ. զորակոչվեց բանակ, լավ զինվոր էր, հրետանին պատերազմի աստվածն է, ինքը՝ աստծո գործակալ՝ հրետանավոր՝ Արցախի Մարտունիում:

Ընտանիքի ավագ որդին բանակ էր գնում. ինչամյա Արեգը լսել էր, որ միայն բանակն ու զինվորը կազատեն իրենց հարազատ Շահումյանն ու համոզում էր եղբորը՝ իրեն էլ հետը տանել:

«Թուրքը մի քանի մետրի վրա էր, բայց հրաման չկար, էդ անտեր հրամանը գար՝ մերոնց վրեժը կլուծեի», – ափսոսանքով պատմել էր դասընկերներին, երբ արձակուրդ էր եկել՝ ավագ եղբորը հողին հանձնելու, ով Շահումյանից գաղթելիս հիվանդացել էր, չէր բուժվել... Արեգը մնացել էր Ազարյան ազգանունը շարունակող միակ հույսը...

2010 թ. ամուսնացավ բախտակից ընտանիքից Հերիքնազի հետ: Երկուսն էլ Շահումյանից էին, երկուսն էլ հողին ու գյուղին նվիրված, անխոնջ աշխատանքի սովոր: Արեգը գիտեր, որ հզոր ազգ ունենալու համար պետք է շատանանք. չորս զավակ ունեցան:

Սեպտեմբերի 27-ին, սովորության համաձայն, վաղ էր արթնացել, անցել էր առօրյա հոգսերին, միայն երեկոյան իմացավ պատերազմի մասին. առավոտյան արդեն Սիսիանի զինկոմիսարիատում էր, 29-ին՝ հարազատ Մարտունիում:

– *Հանգում էր,* – պատմում է կինը, – *զոհվելուց մեկ օր առաջ հարցրեցի, թե ե՞րբ է տուն գալու, ասաց. «3600 սնարյադ եմ կրակել, 60 հատ է մնում, դրանց 10 տարվա «պասիլկա» եմ ուղարկում»: Աչքերս խոսելիս լցվում էին, ձայնս փոխվում էր, բարկանում էր. «Հերիքա լացես, վեշերդ հավաքի, հեսա մերոնք Շահումյանը մաքրում են, գնալու ենք մեր տանն ապրենք»:*

Հոկտեմբերի 20-ի լուսաբացին թշնամին թեժ գրոհ սկսեց, Արեգն ընկավ իր զենքի կողքին, ընկավ՝ հավատալով, որ հայրենի Վերիշենն ազատ է, որ իր զավակներն իրենց պապական տանն են մեծանալու:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ամարյան Սամսոն Ռաչիկի

Ծնվել է 1988 թ. նոյեմբերի 15-ին Գորիսի շրջանի Բռուն (Ակներ) գյուղում: Տասը տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Սիսիանի տարածաշրջանի Շաքի գյուղ: Ընտանիքի միակ որդին էր, երկու քրոջ և մոր միակ հենարանը, քանզի հայրը վաղաժամ էր հեռացել կյանքից:

2006 թ. Շաքիի դպրոցն ավարտելուց հետո ծառայության անցավ Ստեփանակերտ քաղաքում: Ցորի զորամասում կապավոր էր: Սիրեց կապավորի ծառայությունը, լավ էլ գլուխ էր հանում և 2008 թ. զինվորական ծառայության ավարտից հետո որոշեց պայմանագրային ծառայության անցնել Սիսիանի զորամասում: Հետո տեղափոխվեց Նորավանի զորամաս:

2010 թ. ընդունվել և 2015 թ. ավարտել է Ազգային ագրարային համալսարանի անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն բաժինը:

Պայմանագրային Սամսոնը բազմաթիվ ծրագրեր ուներ. ընտանիքի անդամներին ասել էր, որ 10-օրյա արձակուրդ է վերցնելու, հարսանիք է անելու, բայց...

Սեպտեմբերի 27-ից հետո Սամսոնը ևս միացավ Արցախին օգնության շտապող զինվորներին:

Քույրը, ով անհանգստանում էր թե՛ եղբոր, թե՛ ամուսնու համար, չի դիմացել, խնդրել է եղբորը՝ վերադառնալ, Սամսոնը բարկացել է. *«Մենք փախչողների վրա ենք ծիծաղում, դու ասում ես վերադարձիր, ես պիտի կռվեմ մինչև վերջ...»:*

Սամսոնն անհանգստանում էր, որ մայրը կիմանա իր Արցախում գտնվելու մասին ու չի դիմանա, զանգահարում էր ամեն օր՝ հիշեցնում դեղերի ընդունման ժամը, խնդրում, որ մայրն ուշադիր լինի իր առողջության հանդեպ:

Հոկտեմբերի 10-ին Սամսոնը նկատում է թշնամու անօդաչուն, դուրս է գալիս ապահով թաքստոցից, որ զգուշացնի ընկերներին, հասնում է՝ փրկում նրանց, բայց անօդաչուի հարվածից զոհվում է:

Հուղարկավորվել է հոկտեմբերի 12-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Արիության» մեդալներով:

Առաքելյան Արթուր Արայիկի

Արթուրը նվիրված զավակ էր, սիրված և հոգատար ամուսին, գորովագութ հայր, իր երկու զավակին սիրում էր պաշտելու չափ:

Ծնվել է 1986 թ. օգոստոսի 25-ին Բռնակոթ գյուղում: Մինչև 8-րդ դասարանը սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Սիսիանի թիվ 3 միջնակարգում: Դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում՝ ստանալով բժիշկ-ստոմատոլոգի որակավորում: Ավարտելուց հետո զորակոչվել է հայկական բանակ: Զորացրվելուց հետո ամուսնացել է Նոննայի հետ և ստեղծել գեղեցիկ ընտանիք: Ունեցել են երկու հրաշք բալիկ՝ Միքայել և Մարիամ: Արթուրը նվիրված զավակ էր, սիրված և հոգատար ամուսին, գորովագութ հայր, իր երկու զավակին սիրում էր պաշտելու չափ: Հոգատար եղբայր էր, բարեկիրթ, կազմակերպված, հավաք ու համեստ երիտասարդ: 2012 թ. Արթուրը պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում՝ որպես դեղատան տնօրեն: Արժանացել է բազմաթիվ պատվոգրերի, «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալի:

Երբ սկսվեց 44-օրյա պատերազմը, առաջին օրից դիմեց հրամանատարին, որ իրեն ուղարկեն Արցախ, սկզբից մերժեցին՝ ասելով, թե պետք է մնա զորամասում՝ Սիսիանում: Ռազմաճակատ մեկնել է հոկտեմբերի 8-ի գիշերը՝ զորամասի հետ: Մասնակցել է Հադրութի շրջանի թեժ մարտերին: Հոկտեմբերի 14-ին դիրքեր է բարձրացել՝ վիրավորներին իջեցնելու, բայց այդ ճանապարհը թուրքերինն էր արդեն: Ֆիզուլիի ճանապարհին նրանց մեքենան ընկնում է շրջափակման մեջ:

Վերջին զանգը հոկտեմբերի 14-ին էր… Նրա աճյունը գտնվեց 2021-ի հունվարի 25-ին՝ երկար ժամանակ փնտրելուց հետո: Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021 թ. հունվարի 27-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Առաքելյան Արտակ Սեյրանի

Հայրենասեր զինվորն առաջինն էր շարքից դուրս եկել և ինքնակամ պատրաստակամություն հայտնել՝ իրեն տանելու Արցախ:

Ծնվել է 2000 թ. նոյեմբերի 1-ին Բռնակոթ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Երևանի թիվ 52 դպրոցում: Ուսումն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի Ագրարային համալսարանի քոլեջ՝ «Կենտրոնացված գրունտի կենսատեխնոլոգիա» բաժինը:

2018 թ. զորակոչվել է բանակ, ծառայում էր Իջևանի զորամասում:

Արտակն օգնում էր թույլերին, ինչով կարողանում էր, իրենից մեծերին հասնում էր, միայն թե՝ մի բանով սատարի...

Հունվարին պետք է զորացրվեր ու պատվով հրաժեշտ տար զինվորական համազգեստին, բայց սկսվեց պատերազմը... Հայրենասեր զինվորն առաջինն էր շարքից դուրս եկել և ինքնակամ պատրաստակամություն հայտնել՝ իրեն տանելու Արցախ: Գիտակցելով գնաց, բայց ոչ թե մահվանն ընդառաջ, այլ՝ իր զինակից ընկերներին օգնելու համար... Հոկտեմբերի 17–ին Արտակն արդեն Արցախում էր, հրետակոծությունների տակ, կյանքի ու մահվան պայքարի մեջ: Նա պիտի գար ու բոլորին պատմեր իր սխրանքների մասին, զարհուրելի պատերազմի մասին...

Ուժեղ հրետակոծության ժամանակ զինակից ընկերը վիրավորվում է. առանց մի վայրկյան իսկ մտածելու՝ շտապում է ընկերոջն օգնության՝ փորձելով փրկել կյանքը: Բավական երկար տարածություն ընկերոջը գրկած՝ ականանետներից խուսափելով՝ մի կերպ հասնում են բարձունքին, որտեղից մի քանի քայլն արդեն փրկությունն էր, բայց թշնամու գնդակը երկուսին էլ գտավ ու... Երկար փնտրելուց հետո նրանց աճյունը գտան կողք-կողքի...

2020թ. դեկտեմբերի 12-ին հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Առաքելյան Միեր Սասունի

Ծնվել է 2000 թ. օգոստոսի 18-ին Բռնակոթ գյուղում:

Սովորել է Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոցում, այնուհետև տեղափոխվել է Երևանի թիվ 52 հիմնական դպրոց, որն ավարտելուց հետո ընդունվել է Հայաստանի ագրարային համալսարան:

Միերը մեծացել էր զինվորականի ընտանիքում: Հայրը՝ Սասուն Առաքելյանը, 20 տարի աշխատել է ռազմական ոստիկանությունում, զավակներին մեծացրել և դաստիարակել զինվորական կարգ ու կանոնին համապատասխան, վարք ու բարքով: Ավագ որդուն Դավիթ էին կոչել, կրտսերին՝ Միեր՝ Սասնա դյուցազունների անուններով:

Ուսումը կիսատ թողնելով 2019-ի հունվարի 16-ին զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Մարտունու 3-րդ պաշտպանականում: Կարճ ժամանակում կարողացել էր արժանանալ հրամանատարների հարգալից վերաբերմունքին:

2020 թ. սեպտեմբերի 27... Միերը զանգահարում էր տուն, հորդորում իր համար չանհանգստանալ, ասում, թե ամեն ինչ լավ է լինելու:

Մարտունու գնդի կազմում 15 օր մասնակցեց պատերազմին. դիմակայեց նենգ թշնամուն, սակայն հոկտեմբերի 11-ին հրաման են ստացել տեղափոխվել Հադրութ: Ողջ գունդն ընկել էր շրջափակման մեջ, հրամանատարությանը տեղեկացրել են, որ այլևս չեն կարողանում թշնամուն դիմակայել... Դա եղել է վերջին տեղեկատվությունը Միերի գտնվելու վայրի մասին:

Հետո՝ սպասում, հույս, աղոթք, հուսահատություն... ԴՆԹ նմուշառումից հետո հակասական զգացողություններ էին՝ Առաքելյաններն արդեն հողին էին հանձնել Միերի հորեղբոր որդուն՝ Արտակին: Արտակն ու Միերը տարեկիցներ էին, հաճախել էին նույն դպրոցը, նույն մարզաձևով էին զբաղվում, նույն օրն էին զորակոչվել բանակ, նույն սենյակում էին ապրում: Ու մայրը դողում էր. *«Մի՞թե նույն կերպ պիտի ընդհատվեր նրանց կյանքը»:*

2021 թ. հունվարի 24-ին ԴՆԹ հետազոտությունը փաստեց՝ Միերը զոհվել է, Միերը գնացել է եղբոր հետևից, հերոսացել է...

2021 թ. հունվարի 26-ին հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Ավանեսյան Վահիկ Սերյոժայի

Ծնվել է 1992 թ. սեպտեմբերի 15-ին Սիսիանի շրջանի Աշոտավան գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: 2010-2012 թթ. ծառայել է բանակում, պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արցախում:

Ֆիզիկական և մտավոր գերազանց տվյալների, ինչպես նաև ծառայության ընթացքում ցուցաբերած օրինակելի վարքի համար ընդգրկվել էր պատվո պահակախմբում, մասնակցել է զորահանդեսների թե՛ Արցախի Հանրապետությունում, թե՛ Հայաստանի Հանրապետությունում: Ծառայության ընթացքում բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով ու մեդալներով:

Զորացրվելուց հետո ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղ: Հայրենի Աշոտավանում ապրելու, գյուղն ավելի զարգացած ու ավելի ծաղկուն տեսնելու ձգտումը Վահիկն արտահայտել էր գյուղում արտադրություն հիմնելով:

Նրա մասին մորաքրոջ ամուսինը՝ Արայիկն է պատմում. *«Լուսավոր, լույս երիտասարդ էր, երբ մեր տուն էր գալիս, կարծես, արևը մեր տուն մտներ, հումորով, խելացի, բոյ-բուսաթով, հարգալից... Սիրում էր իր գյուղը, օգնում էր համագյուղացիներին ինչով կարողանում էր՝ մեկի հեռուստացույցն էր նորոգում, մի ուրիշի սառնարանը: Նաև նախաձեռնող էր, գյուղում խանութ էր բացել, ընկերոջ հետ եվրոպատուհանների արտադրություն հիմնել: Տունը նորոգել էր, որ հոկտեմբերին ամուսնանար: Բազմաթիվ բարի նպատակներ ուներ, որոնք անկատար մնացին...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ից միացավ Սյունիքի պաշտպանության համար սահման մեկնող հայրենակիցներին:

Արցախում իրավիճակը ծանր էր. հոկտեմբերի 14-ին Վահիկը Մեղրիից մեկնել է Ջրական, որտեղ հոկտեմբերի 15-ին բեկորային ծանր վիրավորում է ստացել: Ընկերները նրան հասցրել են Իշխանաձորի դաշտային հոսպիտալ, բայց կյանքը փրկել չի հաջողվել:

42 օր հարազատները փնտրել են Վահիկի մարմինը. գտել են Արտաշատի դիահերձարանում՝ մի լուսանկարի օգնությամբ:

Աճյունը հողին է հանձնվել 2020 թ. նոյեմբերի 27-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Արզումանյան Հասմիկ Սմբատի

Իր գործին նվիրված, պատասխանատու և ճշտապահ անձնավորություն էր: Իր դրական կերպարով վարակում էր բոլորին, ամենուր աչքի էր ընկնում ազնվությամբ և բարձր կուլտուրայով:

Ծնվել է 1985 թ. հունիսի 16-ին Սիսիանի տարածաշրջանի Նորավան գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 2012 թ. ընդունվել է Նորավանի զորամաս՝ ԱԿՀ օպերատոր, կրտսեր սերժանտի հաստիքով: 2014 թ. տեղափոխվել է Կապանի տանկային զորամաս, որպես ԱԿՀ պետ, իսկ 2017 թ.տեղափոխվել է հրետանային զորամաս և ամեն տարի աշնանը մասնակցում էր զորավարժությունների:

2020 թ. սեպտեմբերի 18-ին մեկնել էր Ջրական՝ զորավարժությունների: Գտնվելով Ջրականի շրջանում և իր վրա վերցնելով հակառակորդի առաջին հարվածը, 2020 թ. սեպտեմբերի 27-ին հակառակորդի հրթիռահրետանային հարվածներից ստացավ մահացու բեկորային վիրավորում…

Սերժանտ Հասմիկ Արզումանյանը մշտապես աչքի է ընկել իր կարգապահությամբ, բարեխիղճ և օրինակելի ծառայությամբ, անձնվիրությամբ և խիզախությամբ: Իր գործին նվիրված, պատասխանատու և ճշտապահ անձնավորություն էր: Իր դրական կերպարով վարակում էր բոլորին, ամենուր աչքի էր ընկնում ազնվությամբ և բարձր կուլտուրայով: Վայելում էր կոլեկտիվի և վերադաս հրամանատարության սերն ու հարգանքը:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Արիստակեսյան Կոլյա Ռաֆիկի

Ծնվել է 1990 թ. նոյեմբերի 22-ին Սիսիանի տարածաշրջանի Վաղատին գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 2008 թ. ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան: 2012 թ. որպես սպա ծառայության է անցել Կապանի զորամասում:

Կոլյայի հայրը՝ Ռաֆիկը, որդու մասին պատմելիս հուզվում է: Ասում է, որ որդին մանկուց է երազել զինվորական դառնալու մասին. *«Դպրոցն ավարտելու տարում դիմել էր Վազգեն Սարգսյանի անվան համալսարան, բայց չէր ընդունվել: Փորձում էինք այլ ուղղությամբ տանել, այլ մասնագիտությունների մասին խոսել, լսել անգամ չէր ուզում: Երկրորդ անգամ դիմեց ու հաջողեց: Այն զորամասերում, որտեղ սպա է եղել՝ իրեն այնքան լավ է դրսևորել, այնպիսի մարդկային արժանիքներ է ցուցաբերել, որ մինչև օրս նրա ենթականերն ու վերադաս հրամանատարությունը միայն շնորհակալական խոսքեր են ասում:*

Կոլյայիս զոհվելուց հետո ամեն ինչ փոխվեց. երկու երեխա ունի: Հարսս ու թոռներս առանձին են ապրում, շատ-շատ ենք կարոտում նրանց:

Շատ խելացի էր, դպրոցում էլ էր լավ սովորում: Նպատակասլաց էր, անզիջում, անվախ:

Երբ սկսվեց պատերազմը, որդիս Վայքի զորամասում վաշտի հրամանատար էր: Հիմա այդ զորամասի զինվորները հաճախ են այցի գալիս իրենց հրամանատարի շիրիմին: Զրուցում եմ նրանց հետ, որդուս կարոտն այդ կերպ եմ փորձում առնել, բայց իզուր: Ասում են՝ մեր կամանդիրը հերոս էր, մեզանից չհեռացավ, մի քայլ չնահանջեց:

Հոկտեմբերի 9-ին որդիս իր վաշտով Ջրական էր գնացել, հոկտեմբերի 10-ից հետո նրանից լուր չունեինք: Հոկտեմբերի 14-ին գնացի Վայքի զորամաս, հետո Գորիսի դիահերձարան, որտեղ էլ գտա տղայիս մարմինը:

Անտանելի ցավ եմ զգում, բայց միևնույն ժամանակ գիտեմ, որ հայրենիքը պաշտպանելը նրա ընտրությունն էր:

Ես հերոսի հայր եմ, իմ որդին մեր երկրի ազատության համար է նահատակվել...»:

Աճյունը հողին է հանձնվել 2020 թ. հոկտեմբերի 16-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Բաբայան Անդրանիկ Մանասերի

Զինակից ընկերները հետո պատմել են, թե որքան խիզախ ու համարձակ էր կռվում դիպուկահար Անդրանիկը: Առաջ էր գնում առանց վախենալու:

Ծնվել է 1986 թ. հուլիսի 28-ին Սիսիանի տարածաշրջանի Բալաք գյուղում: Սովորել է Բալաքի միջնակարգ դպրոցում, այնուհետև կրթությունը շարունակել Շաղատ գյուղի միջնակարգ դպրոցում:

Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է հայոց բանակում՝ Շամշադինի զորամասում, ապա տեղափոխվել է Կրասնոսելսկի շրջան: Զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ, օգնել ծնողներին տնտեսության մեջ:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

2017 թ. պայմանագրային ծառայության է մտել Սիսիանի զորամասում:

2020 թ. սեպտեմբերի 27-ից մեկնել է Արցախ, մասնակցել Կարկա-Բազար գյուղի մարտական գործողություններին: Հոկտեմբերի 13-ին զանգահարել է մորը, ասել, որ ինքը լավ է, իր համար չանհանգստանա... Դա եղել է նրա վերջին զանգը: Զինակից ընկերները հետո պատմել են, թե որքան խիզախ ու համարձակ էր կռվում դիպուկահար Անդրանիկը: Առաջ էր գնում առանց վախենալու: Ու երբ գնդացիրը լիցքավորելու համար դուրս էր եկել խրամատից, թշնամին հենց այդ պահին էլ խփել է նրան: Մարտական ընկերներն Անդրանիկի դին դրել են մի ծառի տակ, ծածկել, որ վերադառնալիս վերցնեն իրենց հետ, բայց տեղանքն անցել էր թշնամուն...

Նրա աճյունը դուրս է բերվել խաղաղապահ ուժերի կողմից և հողին հանձնվել 2021թ. ապրիլի 12-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու արժանացել է «Մարտական ծառայության» մեդալի:

Բաբայան Աշոտ Մանասերի

Ծնվել է 1983 թ. դեկտեմբերի 15-ին Շաղատ գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է հայոց բանակ: Զորացրվելուց հետո զբաղվում էր իր տունն ու գյուղը սեփական քրտինքով շենացնելու գործով:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Գյուղում շատ աշխատանք կար՝ հող, անասուն, տուն ու տեղ, այգի ու բանջարանոց, բայց այդքանով չբավարարվեց և 2016-ին պայմանագրային ծառայության անցավ Սիսիանի զորամասում:

Նրա ունակություններն ու աշխատանքին նվիրվածությունը հաշվի առնելով՝ հրամանատարությունը Աշոտին ուղարկել էր սերժանտական դասընթացների, որի ավարտից հետո շարունակել է ծառայությունը՝ որպես պայմանագրային սերժանտ:

2013 թ. ամուսնացել է Անահիտի հետ: Համերաշխ, աշխատող, ստեղծող ընտանիքի համբավ ունի Աշոտի ընտանիքը: *«Շատ նվիրված էր իր աշխատանքին, պարտաճանաչ, բարեխիղճ, այդ տարիների ընթացքում չի եղել մի օր, որ մեկ որպեով ուշանար աշխատանքից, երբ ամեն օր Շաղատից գնում էր Սիսիան: Նրա պարտաճանաչության և պատասխանատվության մեծ զգացումի մասին բոլորը կվկայեն: Շատ ուրիշ մարդ էր, ուրի՞շ... Հարգանքով էր բոլորի հանդեպ, անթերի էր նրա ձեռքի գործը...»,* – հիշում է կինը:

Համագյուղացիները, որ փոքրիկ գյուղից Արցախյան երրորդ պատերազմում երեք հերոս են հողին հանձնել, Աշոտի ու Անահիտի մասին պատմելիս արցունքները չեն զսպում՝ *«Լավ տղա էր, լավ ընտանիք են, ջահել էին, երեք երեխա ունեն, էդ երեխեքը անհայր ո՞նց են մեծանալու, քանի կին այրիացավ, քանի հոգու երջանկություն կիսատ մնաց...»:*

2020 թ. սեպտեմբերի 27. Արցախն էլի թշնամու առաջ մենակ էր, էլի պաշտպանության ու փրկության կարիք ուներ. Աշոտը մեկնեց Արցախ՝ գնաց կռվելու, պապերի հողն ու զավակների ապագան պաշտպանելու:

Տուն զանգահարելիս հույս էր տալիս, ասում, որ ամեն ինչ լավ է լինելու... Հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուի հարվածից այրվում է Կարմիր շուկայից Ջրական զինծառայողներ տեղափոխող բեռնատարը. զոհվում է նաև Աշոտ Բաբայանը:

Հուղարկավորվել է հոկտեմբերի 28-ին՝ Շաղատի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Բաբայան Նարեկ Աշոտի

Ծնվել է 1996 թ. փետրվարի 7-ին Սիսիանի շրջանի Իշխանասար գյուղում: Սովորել է Իշխանասարի հիմնական դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արցախի Հանրապետության Մարտունու զորամասում:

Մասնակցել է Ապրիլյան (2016թ.) պատերազմին:

Զորացրվելուց հետո ցանկանում էր հոգալ իր ու բազմանդամ ընտանիքի հոգսերը, այդ նպատակով մեկնել է ՌԴ, բայց մեկ տարի չանցած վերադարձել է հաստատակամ որոշմամբ՝ պետք է աշխատել ու ապրել միայն հայրենիքում:

Նարեկը որոշեց ոչ միայն աշխատել հայրենիքում, այլ նաև ծառայել հայրենիքին՝ պայմանագրային ծառայության անցնելով Սիսիանի զորամասում:

Ծառայակից ընկերները նրա մասին երկար ու հուզված են խոսում, ափսոսում են, որ չկարողացավ իրականացնել նպատակները, որոնցից մեկն էլ ամուսնանալն էր. *«Շատ ցավալի է, որ Նարեկն այսօր մեր կողքին չէ, լավ մարդ ու ընկեր էր, նաև լավ որդի, բարի, նվիրված, հասկացող ու նպատակասլաց»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին Նարեկը միացավ Արցախ մեկնող ծառայակիցներին: Հոկտեմբերի 8-ին Սիսիանի ջոկատի հետ իջել էին դիրքերից: Արցախ գնալուց առաջ քրոջը պատմել էր, որ ինչ-որ երկաթի կտոր է մտել ոտքը՝ վնասել, բայց հանկարծ մորը չասի... Իսկ հոկտեմբերի 9-ին արդեն Հադրութում էր: Հոկտեմբերի 14-ին զանգահարել է մորը, ասել, որ չանհանգստանա, չզանգի, ինքը կզանգահարի... Հետո զանգերը լռել էին...

Բայց հոկտեմբերի 16-ին նրա հեռախոսահամարից զանգահարողն ինքը չէր, ընկերն էլ չէր, ընդհանրապես հայ չէր... Զանգահարողն ադրբեջանցի էր, ով իր վայրագությանը հագուրդ տալու համար՝ սրտատրոփ հեռախոսը վերցրած Նարեկի մորը զվարթաձայն ներկայացնում էր, թե ինչ դաժանությամբ է սպանել ու քառատել Նարեկին... Մայրն այդ զանգին չէր դիմացել...

Պատերազմը վերջացել էր, բայց Նարեկը չէր վերադարձել, մարմինն էլ չկար. մայրը մինչև 2021 թ. փետրվարի 10-ը հույս էր փայփայում, աղոթում ու սպասում... Փետրվարի 10-ին ԴՆԹ հետազոտությունը փաստեց՝ Նարեկ Բաբայանը զոհվել է:

2021 թ. փետրվարի 12-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում նրա աճյունը հանձնվեց հողին: Հետմահու պարգևատրվել «Մարտական ծառայության» մեդալով:

Բաբաջանյան Գևորգ Արտուրի

Ծնվել է 1996 թ. հոկտեմբերի 17-ին Սիսիանի շրջանի Բնունիս գյուղում: Սովորել է Բնունիսի հիմնական դպրոցում: 9-րդ դասարանն ավարտելուց հետո Սիսիանի մշակույթի պալատում մեկ տարի ծրագրավորում է սովորել:

Ծառայել է Արցախի Հանրապետությունում՝ Ասկերանի զորամասում: Պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մասնակցել է Ապրիլյան (2016թ.) պատերազմին:

Գևորգը մեծ ու համերաշխ ընտանիքում էր ծնվել, մայրը՝ տիկին Լիլիթը, զսպում է արցունքները որդու մասին խոսելիս. *«Գևորգս վեց երեխաներից երկրորդն է, այո՝ է, ես նրա մասին միշտ ներկայով եմ խոսում... Գևորգս թասիբով, հարգանքով տղա է: Նրա մասին հուշերն այնքան շատ են: Բանակին շատ էր նվիրված, շատերից եմ լսել, որ ասում են՝ գործ է էլի, բայց տղաս բանակն իր տունն էր համարում, ես էլ նրա ծառայակից ընկերներին եմ իմ որդիները համարում: Նրա՝ պայմանագրային ծառայության մտնելու առաջին օրվանից ես առանձնացրել եմ մեր բերքի՝ պոստ տանելու բաժինը: Գևորգս հավանած աղջիկ ուներ, պատերազմը չլիներ՝ դեկտեմբերին հարսանիք էինք անելու: Մեր սրտերը նմանվել են մոմի, լույս ու ջերմությունը լքել են մեզ, մնացել են թանկ ու հարազատ հիշողությունները...»:*

Գևորգի եղբայրը 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախում էր, Գևորգը շտապում էր օգնության հասնել ժամկետային զինծառայող եղբորը, այդ պատճառով էլ հրաժարվում է պատերազմին չմասնակցելու հրամանատարության առաջարկից, բացի այդ՝ այնքան կապված էր ընկերներին, որ նրանց միայնակ թողնելու միտքը դավաճանություն էր համարում. հոկտեմբերի 8-ին մեկնում է Արցախ:

Կարմիր շուկայի մոտակայքում թշնամու անօդաչուն խոցում է բեռնատարը, որը զինվորներ էր տեղափոխում, զոհվում են 27 հայորդի, նրանցից մեկն էլ Գևորգ Բաբաջանյանն էր:

Գևորգի մարմինը հողին է հանձնվել 2020 թ. հոկտեմբերի 28-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Բալյան Արտաշես Ալբերտի

Ծնվել է 1985 թ. հունվարի 5-ին Բռնակոթ գյուղում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Այնուհետև զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, ծառայում էր Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքի զորամասում:

Զորացրվելուց հետո պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Արտաշեսի մասին հայրն է պատմում. *«Տղաս փոքրամարմին, կատակասեր ու անսահման բարի մարդ էր: Ընկերասեր էր, հարգալից, մեծ ու փոքր ճանաչող:*

Հրաշալի ընտանիք ուներ, լավ հարս ունեմ, հրաշալի թոռներ, նրանք տղայիցս մնացած ամենաթանկն են: Արտաշեսս գնդացրորդ էր, 13 տարվա ծառայության ընթացքում բազմաթիվ պատվոգրեր է ստացել:

Պատերազմի առաջին օրն են նրան Արցախ տարել: Մինչև հոկտեմբերի 2-ը զանգահարում էր, դրանից հետո նրանից լուր չունեինք: Վեց ամիս հետո՝ 2021 թ. ապրիլի 5-ին, մեզ տեղեկացրին, որ ԴՆԹ-ի անալիզի պատասխանը համընկել է:

Ծանր է, իմ տղան կյանք չտեսած հեռացավ... Տառապանք է տեսնել այրիացած հարսիդ ու թոռներիդ կարոտը...»:

Արտաշեսի ընկերները ափսոսանքով են խոսում նրա մասին. *«...Մաքուր ու բարի հոգի ուներ: Երբեք ու ոչ մեկի օգնության խնդրանքը չէր մերժում: Մարտական դիրքերում հազար ու մի դժվարություն էր լինում, տասը տարուց ավելի էր ծառայել, բայց ոչ մի անգամ չի բողոքել դժվարություններից... Նրա տեղը երևում է, պատերազմից հետո ինչքան էլ ծիծաղում ենք, միևնույն է լիաթոք ուրախանալ չենք կարողանում, քանի որ նրանք՝ մեզ հետ դիրք պահած, նույն բլինդաժում տարիներ ապրած տղերքը, մեզ հետ չեն...»:*

Տնեցիների հետ Արտաշեսը վերջին անգամ խոսել էր հոկտեմբերի 2-ին Ջրականից... Հետո ոչ մի լուր, ոչ մի տեղեկություն... Շատ փնտրեցին... Ցավի ու ցասման վեց ամիս... 2021-ի ապրիլի 6-ին եկավ այդ լուրը, որ և՛ աղետ էր, և՛ մխիթարանք...

Հողին է հանձնվել 2021 թ. ապրիլի 7-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Բաղինյան Լևոն Սամվելի

Ծնվել է 1993 թ. հունիսի 21-ին Երևանում: Հաճախել է Երևանի ծովակալ Իսակովի անվան 132 դպրոցը:

Բարի էր, նրբանկատ, միևնույն ժամանակ՝ զինվորականի վճռականության և պատասխանատվության մարմնացում: Կապիտան Լևոն Բաղինյանը հայրենիքի հանդեպ սերն արտահայտեց դեռ մանկուց կատարած ընտրությամբ՝ դառնալով անձնվիրության ամենավառ օրինակներից մեկը: Այդ էր պատճառը, որ 2008 թ. ընդունվել է ՀՀ պաշտպանության նախարարության Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան: 2010-2014 թթ. սովորել է ՀՀ պաշտպանության նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի «Մոտոհրաձգային ստորաբաժանումների ղեկավարում» բաժնում: Նրան շնորհվել է ճարտարագետ բակալավրի աստիճան՝ բարձրագույն ռազմամասնագիտական կրթությամբ սպայի որակավորմամբ: Ավարտելով համալսարանը, ծառայության է անցել Սիսիանի N զորամասում, միշտ հպարտացել է, որ ինքն իր զինակից ընկերների հետ անառիկ է պահում Սյունիքի դարպասները:

2019 թ. գործուղվել է ՌԴ՝ մարշալ Ժուկովի անվան ակադեմիա՝ լեռնային պատրաստության հետախույզի եռամսյա դասընթացի: Բարձր ցուցանիշներով ավարտելուց հետո ՀՀ պաշտպանության նախարարության N զորամասում նշանակվել է հրաձգային վաշտի հրամանատար: Մեկ տարի եղել է դիպուկահարների հրամանատար:

2020 թ. ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով:

Ծառայության ընթացքում զորամասի հրամանատարի, 4-րդ ԲԿ հրամանատարի և ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է պատվոգրերով:

Պատերազմի հենց առաջին օրերից եղել է ռազմական գործողությունների կիզակետում՝ մասնակցել է Հադրութի պաշտպանության թեժ մարտերին: Ջոկատը չորս օր մնացել է շրջափակման մեջ, և կապիտան Բաղինյանի շնորհիվ անվնաս դուրս եկել:

Զոհվել է հոկտեմբերի 14-ին՝ վիրավոր ընկերներին ռազմադաշտից դուրս բերելիս: ԴՆԹ անալիզը հաստատվել է 2021թ. հունվարի 23-ին:

Հուղարկավորվել է 2021թ. փետրվարի 28-ին՝ Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գաբրիելյան Իգոր Գրիշայի

Ծնվել է 1977 թ. հունիսի 28-ին Բաքու քաղաքում: 12 տարեկան էր, երբ գաղթեցին արնախում Բաքվից ու հանգրվանեցին Սիսիանի Շաքի գյուղում: Բաքվում զբաղվել էր սպորտով, թեթև ատլետ էր, լավ հաջողություններ ուներ, բայց ամեն ինչ թողեցին այնտեղ: Շաքիից մյուս «փախստականների» հետ նա էլ հաճախեց Սիսիանի ռուսական դպրոց, սովորեց, ավարտեց: 1995-97 թթ. ծառայեց հայոց բանակում, հենց Արցախում՝ Կովսականի (Զանգելան) սահմանապահ զորամասերից մեկում, դիպուկահար էր:

Զորացրվելուց հետո ամուսնացավ, ունի չորս երեխա:

2001 թ. պայմանագրային ծառայության էր անցել Սիսիանի զորամասում, լրանում էր նրա ծառայության 20 տարին, և շուտով պիտի զինվորական թոշակ ստանար: Այդ ընթացքում մի անգամ դուրս է եկել ծառայությունից, երկու տարի աշխատել Ռուսաստանում, բայց վերադարձել ու 2015 թ. նորից ծառայության անցել Սիսիանի զորամասում: Հոկտեմբերի 8-ին իջել են Սիսիանի դիրքերից և մեկնել Արցախ: *«Ամեն օր զանգելխոսել է, ասել է՝ ամեն ինչ լավ է, վատ էլ լիներ՝ երբեք չէր ասի՝ վատ է: Միշտ ասում էր՝ ձեզ լավ պահեք: Վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 14-ին՝ հադրութից... Հոկտեմբերի 15-ից հետո էլ զանգ չենք ստացել...»*, – ասում է հայրը՝ Գրիշան: Ու հետո ահավոր ծանր ու դժվարին յոթ ամիս... Արդեն գիտեին, որ զոհվել է, բայց, գոնե, աճյունը գտնեին, հողին հանձնեին...

2021 թ. մայիսի 14-ին եղբորորդին լուր է տվել, որ Իգորի աճյունը Գորիսում է...

Զինակից ընկերները պատմում են, որ Իգորն ընկերոջ հետ վիրավորվել է, անշարժացրել են նրանց վիրավոր ոտքերը, մոտ 10 կմ իրենց հետ տարել այլ վայր, մեկին դրել են շտապօգնության մեքենայի մեջ, վերադարձել, որ Իգորին էլ տանեն, բայց... Անօդաչուն արդեն երկրորդ հարվածն էր հասցրել:

Ծառայության ընթացքում պարգևատրվել է ՀՀ ՊՆ և N զորամասի պատվոգրերով, շնորհակալագրերով, շքանշաններով:

Զոհվելուց ուղիղ յոթ ամիս հետո՝ 2021-ի մայիսի 15-ին, նրան հուղարկավորեցին Սիսիանի քաղաքային պանթոնում... Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գալստյան Արթուր Սուրենի

Ծնվել է 1964 թ. դեկտեմբերի 28-ին Սիսիան քաղաքում: 1971-1981 թթ. սովորել է Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1981-1986 թթ. ընդունվել և ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը: 1986 թ. աշխատել է Սիսիանի տնտեսաշվարկային տեղամասում՝ շինարար-ինժեներ: 1986 թ. աշխատանքի է անցել Սիսիանի շրջխորհրդին կից ճարտարապետական բյուրոյում՝ հեղինակ է մի քանի տասնյակ օբյեկտների նախագծերի: Փոխգնդապետ Գալստյանի մարտական ուղին սկսվել է 1988 թ. հունվարից. սկզբում անդամագրվել է Սիսիանի շրջանի ինքնապաշտպանական ջոկատին, իսկ 1992 թ. հոկտեմբեր ամսից՝ կամավոր մտել է ծառայության ՀՀ զինված ուժերում:

Իր գումարտակի զինվորների հետ մասնակցել է Կուբաթլիի մի շարք գյուղերի, Կովսականի, Ջրականի, Հորադիզի և Վարանդայի շրջանների ազատագրման համար մղվող մարտական գործողություններին: 1994 թ. ապրիլի 15-ին վիրավորվել է, հրաժարվել հոսպիտալացվելուց և չապաքինված վերադարձել ռազմի դաշտ: Այնուհետև՝ մինչև 1996 թ., գումարտակի կազմով մարտական հերթապահություն է իրականացրել Վարանդայի պաշտպանական հենակետերում, 1996-2000 թթ.՝ Սիսիանի պաշտպանական հենակետերում:

2000-2004 թթ. զբաղեցրել է Վայքի N զորամասի շտաբի պետի պաշտոնը: 2004-ին նշանակվել է ՀՀ զինվորական կոմիսարիատի զորակոչային բաժնի ավագ սպա, 2013-2015 թթ.՝ նույն բաժնի պետի պաշտոնակատար: 2015 թ. տեղափոխվել է ՀՀ ԶՈՒ պահեստազոր՝ փոխգնդապետի կոչումով:

Ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես գրագետ, կարգապահ և պարտաճանաչ զինծառայող, նրա ծառայությունը բարձր է գնահատվել:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին շտապեց առաջնագիծ՝ միանալու իր մարտական ընկերներին:

Հոկտեմբերի 2-ին Հադրութ քաղաքում իր վերջին ճակատամարտը տվեց... Հերոսական կյանքի վերջին սխրանքը կատարեց վերջին վայրկյանին՝ իր մարմնով ծածկելով մի զինվորի՝ իր երազանք-բանակի մի մատղաշ շիվ փրկելով սեփական կյանքի գնով:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Գալստյան Արմեն Անդրանիկի

Ծնվել է 1998 թ. մարտի 24-ին Սալվարդում: Սովորել է գյուղի հիմնական, այնուհետև Հացավանի միջնակարգ դպրոցներում: 2016-ին զորակոչվել է բանակ, ծառայել է Ասկերանի զորամասում:

Նահատակված որդու մասին մայրը՝ տիկին Սվետլանան, պատմում է անշտապ, փորձում է զսպել արցունքները, բառեր գտնել. *«Ճակատագիրը մեր նկատմամբ շատ դաժան գտնվեց: Արմենը մեր միակ հույսն էր, միակ որդին: Մի աղջիկ էլ ունեմ, բայց գիտեք՝ հայի ընտանիքի շարունակողը որդին է: Երբեք չի տրտնջացել, սիրով է խնամել մեզ: Միշտ ժպիտը դեմքին, աշխատասեր, համբերատար: Մանկուց տարբերվում էր իր հոգատարությամբ ու մարդասիրությամբ: Նա հոգատար որդի էր: Օգնելու մոլուցք ուներ, եթե մեկը մի խնդրանքով դիմում էր, չէր էլ սպասում, որ խոսքն ավարտի, գործի տիրոջից շուտ էր գործին կպչում: Բանակում էլ իր աշխատասիրությամբ, հարգալից վերաբերմունքով կարողացել էր կարճ ժամանակամիջոցում սիրված զինվոր դառնալ: Հրամանատարներից բազմաթիվ պատվոգրեր ու շնորհակալագրեր է ստացել: Ծառայության ժամանակ նաև պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» շքանշանով: Շատ նպատակներ ուներ, մենք էլ իր նպատակների ու երազանքների իրականացման սպասումով էինք ապրում, բայց...*

Սեպտեմբերի 27-ին ստացավ զորահավաքի ծրարը: Փորձում էինք համոզել, որ չգնա, մեր միայնակ մնալն էինք ընդգծում, բայց անդրդվելի էր: Պնդում էր, թե բոլորը պիտի գնան: Սկզբում Նորավանի զորամասում էր, հետո՝ Մեղրիում: Հոկտեմբերի 14-ին տեղափոխել են Ջրական: Հոկտեմբերի 15-ին վերջին անգամ խոսեցինք հետը, ասաց, որ ամեն ինչ լավ է լինելու, որ շուտով վերադառնալու է: Հետո կապն ընդհատվեց: Կյանքը մեզ համար կանգ է առել հոկտեմբերի 15-ից: Հիմա ապրում ենք նրա նկարի հետ զրուցելով, աղոթելով ու կարոտելով...»:

Աճյունն ամփոփվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2020 թ. հոկտեմբերի 17-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գալստյան Մարտին Վազգենի

Ծնվել է 1991 թ. օգոստոսի 2-ին Բռնակոթ գյուղում: Կրթությունը տեղի դպրոցում ստանալուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզմաթ ֆակուլտետը: Ուսանելու տարիներին ֆակուլտետում պոեզիայի օր էր կազմակերպել, ընթերցել իր և մյուս ստեղծագործող ուսանողների բանաստեղծությունները: Այնուհետև զորակոչվել է բանակ: Հայրենիքի նկատմամբ պարտքը պատվով կատարելուց հետո շարունակել է ուսումը: Ավարտելուց հետո մեկնել է ՌԴ, բայց շուտով վերադարձել է: 2017 թ. ծառայության է անցել Սիսիանի N զորամասում՝ պայմանագրային զինծառայող. պատվով է ծառայել ու մեծ նվիրումով: Որպես բարձրագույն կրթությամբ լավ զինվորականի, վերապատրաստման ուղարկեցին Լուսակերտ, որտեղ Մարտինը նաև իր ժամկետային ծառայությունն

Զինվոր Մարտինն էապես տարբերվում էր ստեղծագործող Մարտինից. երբ կենքը վայր էր դնում, գրիչն էր վերցնում, ու հանկարծ հզոր զինվորականը դառնում էր ներհուն ու խորհող...

էր անցել, ու ավագ սերժանտի կոչումով վերադարձավ և ծառայությունը շարունակեց Սիսիանի զորամասում:

Զինվոր Մարտինն էապես տարբերվում էր ստեղծագործող Մարտինից. երբ զենքը վայր էր դնում, գրիչն էր վերցնում, ու հանկարծ հզոր զինվորականը դառնում էր ներհուն ու խորհող, տողերում պատկերում մի խորունկ աշխարհ, որտեղ ապրում են Մարտինն ու իր երազանքները: Նրան միշտ թվում էր, թե ինքն ուշացել է, հետ է ընկել կյանքից... Նրա սիրտը սիրո կարոտ ու սիրաշատ էր...

Երբ սկսվեց պատերազմը, Սիսիանի դիրքերում էին: Հոկտեմբերի 8-ին իջան դիրքերից, իսկ հոկտեմբերի 9-ին մեկնեցին Արցախ՝ միանալով Կարմիր շուկայի պաշտպաններին:

Հոկտեմբերի 10-ին Կարմիր շուկայում ԱԹՍ-ը հարվածել էր ավտոշարասյանը... Ջոկատից փրկվել էին միայն երեքը, զոհվեց նաև Մարտին Գալստյանը...

Հուղարկավորվել է նոյեմբերի 6-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» և «Տիգրան Մեծ» մեդալներով:

Գևորգյան Դավիթ Աշոտի

Ծնվել է 1980 թ. փետրվարի 14-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 2 միջնակարգում: Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո մեկնել է ՌԴ:

Դավիթը չափազանց հայրենասեր ու ազգասեր էր, ուստի և վերադարձավ հայրենիք, պայմանագրային ծառայության անցավ Սիսիանի զորամասում:

Դավիթը դստեր ծնվելուց հետո երկար տարիներ որդու մասին էր երազել, չափազանց շատ էր ցանկանում տղա ունենալ: Երկար տարիների երազանքը նոր էր իրականացել…

Դավիթի եղբայր Մխիթարն է պատմում. *«Վրեժը դարձել է իմ ապրելու իմաստը, եղբորս տղան էլ զինվորական շորերը հագնում է, զինվորական կեցվածք ընդունում ու ասում, թե պիտի գնա թուրքերին կոտորելու: Եղբայրս սովորական մարդ չէր, նա էս երկիրը սեփական պատվի պես էր սիրում ու պահում, ընդհանրապես մեր ընտանիքում հայրենասիրությունն ամենամեծ արժանիքն է համարվում, մեր երեխաներին էլ, անկախ սեռից, առաջին հերթին որպես հայրենիքի համար պայքարող ու ապրող մարդ ենք դաստիարակում: Պատերազմը չի ավարտվել, քանի մեր եղբայրների արյան վրեժը լուծված չէ, քանի մեր հայրենի հողը թուրքի ձեռքին է...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ից սկսած Արցախում վիճակն ամեն օր ավելի ծանր էր դառնում, հողը կանչում էր իր որդիներին: Դավիթն առողջական խնդիրներ ուներ, որոնց պատճառով բժիշկներն արգելել էին Արցախ մեկնել, բայց ինքը մեկ պատասխան ուներ. *«Հողը կանչում է, պիտի գնամ»:* Արցախում միանում է «Հայդուկ» ջոկատին, պայքարում հայ տղամարդուն հատուկ քաջությամբ:

Հոկտեմբերի 15-ից հետո Դավիթն այլևս կապի դուրս չեկավ, հարազատներին հայտնել էին, որ զոհվել է ԱԹՍ-ի հարվածից, բայց նրանք մի թաքուն հույս էին փայփայում՝ Դավիթին ողջ գտնելու հույսը: Աղոթքի ու սպասումի տանջալից օրերն ավարտվեցին 2021 թ. հունվարի 8-ին, երբ ԴՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Դավիթը միացել է անմահների գնդին...

2021 թ. հունվարի 10-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում զինվորական պատիվներով հողին հանձնեցին նահատակված հերոսի աճյունը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գրիգորյան Արա Տարսեիչի

Ծնվել է 1984 թ. հուլիսի 26-ին Բռնակոթ գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, վերադառնալուց հետո սովորել Սիսիանի պետական քոլեջում, այնուհետև ուսումը շարունակել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում, որից հետո, որպես պայմանագրային զինծառայող, ծառայության անցել Սիսիանի զորամասում: Բռնակոթի լավագույն երիտասարդներից էր, գյուղի ամենալավ տղերքից: Ամուսնացել էր Վարսիկի հետ, ու դեռ չէին հասցրել ընդլայնել այնքան շատ երազած, մտքով հորինած ապագա ընտանիքը, երբ...

Սեպտեմբերի 27-ին կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը: Անիմաստ է ասել, թե որքան հայրենասեր էր. գործով ապացուցեց նվիրվածությունը հայրենիքին: Վարորդներից ոմանք հրաժարվել էին սնունդ տանել մարտական դիրքեր, ինքը նոր էր վերադարձել, բայց կրկին հանձն էր առել սնունդը դիրքեր հասցնելու կարևոր առաջադրանքը...

Արան զոհվել է Ջրականի կողմերում: Ծնողները հույս ունեին, որ ողջ է, գուցե՝ գերեվարված լինի, գուցե՝ մոլորված կամ անտառներում թաքնված, որովհետև նրա մեքենան խփված չէին գտել, իսկ դրանից հետո այդ տարածքներն ընկել են թշնամու հսկողության տակ, և մեր զորքերը չեն կարողացել առաջ գնալ ու անմիջապես զննում կատարել: Բայց, ամենայն հավանականությամբ, Արան հրազենային գնդակից է զոհվել, ոչ թե՝ մեքենային հասցված հարվածից, ինչը վկայում է, որ նա մինչև վերջ մարտնչել է, կռվել թշնամու զինյալների դեմ, որովհետև փորձաքննությունը հաստատել է հրազենային գնդակից զոհվելու հանգամանքը, գուցե մի քանի թուրք էլ ինքն է սատկացրել...

Ծնողները սկզբում ցանկացել են իրենց որդուն հուղարկավորել Բռնակոթի՝ ընտանեկան գերեզմանատանը, բայց վերջին պահին տվել են համաձայնություն՝ դեկտեմբերի 10-ին հուղարկավորել Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Գրիգորյան Արմեն Գրիգորի

Ծնվել է 1992 թ. օգոստոսի 27-ին Սիսիան քաղաքում: 1999-2009 թթ. սովորել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է Սիսիանի N 5 միջնակարգ դպրոցը: 2009 թ. ընդունվել և 2014 թ. գերազանց ավարտել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տնտեսագիտության բաժինը: 2014 թ. ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան, որն ավարտելուց հետո ծառայության է անցել Ջրականի զորամասում:

2016 թ. Ջրականի զորամասի հրետանային դասակի հրամանատար Արմեն Գրիգորյանը մասնակցել է ապրիլյան պատերազմին...

2018 թ. տեղափոխվել է Սիսիանի զորամաս, զուգահեռ սովորել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում:

2020 թ. սեպտեմբերի 28-ին մեկնեց Արցախ: Ջրականի թեժ մարտերում, իր զինվորների պատմելով, մասնակցում էր հուսադրող ժպիտով, խոստացել էր, որ բոլորը վերադառնալու են և իր խոստման տերը եղավ...

Նահատակ սպային կարոտով, ցավով ու հպարտությամբ է հիշում կրտսեր սերժանտ Գևորգ Խուրշուդյանը՝ *«Դեռ ճանապարհին նրա ժպիտը մեզ ուժ էր տալիս, ամեն վայրկյան խոստանում էր, որ ամեն ինչ լավ է լինելու: Ավագ լեյտենանտ Գրիգորյանը լավ մասնագետ էր ու մարտում իրեն դրսևորում էր պրոֆեսիոնալ, դա մեզ հույս էր ներշնչում, մենք մի տեսակ ապահով էինք զգում նրա ներկայությունից: Մեր մարտկոցը 17 հոգուց էր բաղկացած, և երևի բացառիկ երևույթ է, որ բոլորս էլ ողջ ենք, միայն մեկ վիրավոր ենք ունեցել: Բայց կրեցինք ամենամեծ կորուստը՝ մեր փառապանծ հրամանատարը զոհվեց: Հիշելու ենք բոլորս՝ կարոտով, հպարտությամբ, ափսոսանքով, երախտագիտությամբ...»:*

2020 թ. հոկտեմբերի 14-ի գիշերն էր. չցանկանալով վտանգի ենթարկել իր զինվորների կյանքը, լավ գիտենալով, որ բեռնատարներն անօդաչուների նշանառության տակ են, Արմեն Գրիգորյանն ինքն է մոտենում զինամթերք բերած բեռնատարին՝ զինամթերք ընտրելու: Թշնամու անօդաչուի հարվածից ռազմամթերքով բեռնված մեքենան պայթում է՝ զոհվում է կյանքով, ավյունով ու հերոսական ընթացքը շարունակելու մղումով լցված հայ սպան...

Հոկտեմբերի 15-ին Ջրականն ընկավ... 2020-ի դեկտեմբերի 23-ին նրա աճյունն ամփոփվեց Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գրիգորյան Գագիկ Հայկազի

Ծնվել է 1990 թ. օգոստոսի 20-ին Սիսիանի շրջանի Շաքի գյուղում: Սովորել է գյուղի միջնակարգում: 2008-2010 թթ. պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արցախի Հանրապետության Հադրութի զորամասում: Ժամկետային ծառայության ընթացքում աչքի էր ընկել զինվորական գործի հանդեպ ընդգծված հետաքրքրասիրությամբ ու զորացրվելուց անմիջապես հետո պայմանագրային ծառայության էր անցել:

2013 թ. Արարատի զորամասի պայմանագրային Գագիկ Գրիգորյանը ճանաչվել էր «Լավագույն զինծառայող» և մեկնել ԱՄՆ՝ վերապատրաստման: 2014 թ. մասնակցել է սերժանտական դասընթացների, դարձել պայմանագրային՝ սերժանտի ուսադիրներով:

2015 թ. ամուսնացել է, ունի երկու երեխա:

Գագիկի մասին քույրն է պատմում. *«Ուզում եմ իմանաք, որ նա ամեն տեղ լավագույնն էր, ամենալավ ընկերը, ամենալավ հայրը, ամենալավ ամուսինը, ամենալավ եղբայրը, դա բոլորը կփաստեն: Եղածով բավարարվող չէր, ամեն օր ձգտում էր ավելի լավը դառնալ: Մենք միշտ ենք հպարտացել Գագիկի արարքներով: Այսօր էլ մեզ մնացին կարոտն ու հպարտությունը...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Հոկտեմբերի 8-ին Գագիկը մեկնեց Արցախ: Թեժ մարտերի մասնակցեց Ջրականի դիրքերում: Ամիսներ հետո միայն հրամանատարից իմացան այն սխրանքների, քաջագործության և անձնազոհության մասին, որ կատարել է Գագիկը՝ մարտական ընկերներին փրկելիս: Հրամանատարը պատմել է, որ ավագ սերժանտ Գագիկ Գրիգորյանը կրակների տակ կարողացել է իր մեքենայով դուրս բերել չորս վիրավոր զինվորի ու փրկել նրանց կյանքը:

Հոկտեմբերի 15-ից, սակայն, զանգերն առհավետ լռեցին:

Սկսվեցին սպասման տանջալից օրերը...

2021 թ. փետրվարի 1-ին ԴՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Գագիկ Գրիգորյանը նահատակվել է: Փետրվարի 3-ին նրա աճյունը հուղարկավորվեց Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով:

Գրիգորյան Գրիգոր Արայիկի

Ծնվել է 1993 թ. փետրվարի 13-ին Բռնակոթ գյուղում:

Սովորել և ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ուսուցիչները նրա մասին խոսելիս հուզվում են, հպարտանում, որ դասավանդել են նրան, պատմում, որ Գրիգորի հայրենասիրության հիմքում հայոց պատմությունից ունեցած գիտելիքներն էին:

Նա՝ տակավին մանուկ, մեծահասակներին օգնում էր թե՛ գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս, թե՛ ներտնային գործերում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Ստեփանակերտում...

Զորացրվելուց հետո ընդունվել է Երևանի Եվրասիա միջազգային համալսարանը, ավարտել, բայց դիպլոմը չհասցրեց ստանալ:

2017 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ընկերները Գրիգորի մասին խոսում են անթաքույց ցավով: Բոլորի համար են ցավում, բայց Գրիգորն իրենց ընկերախմբի վառ աստղն էր՝ լայն ժպիտով, հյուրասիրությամբ ու հասնել-օգնելու պատրաստակամությամբ:

2020 թ. սեպտեմբերի 27... Գրիգորն Արցախ մեկնելուց առաջ մի քանի րոպեով տուն էր մտել, անհրաժեշտ իրերը վերցրել: Ծնողների հարցին, թե ո՞ւր է գնում, հանգիստ պատասխանել էր. *«Այնտեղ, որտեղ պետք է լինեմ»:* Տնեցիներն օրեր շարունակ կարծել էին, թե Գրիգորը Սյունիքին մոտ գտնվող դիրքերում է:

Ընտանիքի անդամներն ու ընկերները համոզված էին, որ Գրիգորին ոչինչ չի պատահի, համոզված էին, որովհետև քաջ, առույգ երիտասարդը մանկուց սովոր էր դժվարությունների: Նրա հետ ռազմադաշտում կռված ժամկետայինները հիշում են, թե քանի անգամ է Գրիգորը հակառակվել նահանջելու հրամանին, փակել նահանջողների ճանապարհը, պահանջել կռվել մինչև վերջ...

Հոկտեմբերի 14-ին ընկել է Գրիգորը...

Ամիսներ շարունակ ընտանիքն աղոթում ու սպասում էր... 2021-ի փետրվարի 23-ին ԴՆԹ հետազոտության արդյունքում հաստատվեց՝ Գրիգոր Գրիգորյանը նահատակվել է...

Փետրվարի վերջին օրը նրա աճյունը Սիսիանի քաղաքային պանթեոնում հանձնեցին մայր հողին... Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գրիգորյան Լևոն Միերի

Ծնվել է 2001 թ. մայիսի 5-ին քաղաք Սիսիանում: Սովորել է Սիսիանի թիվ 5 դպրոցում, ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան, սովորել Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոցում:

2019 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Ստեփանակերտի Ցոր զորամասում: Վարորդ էր: Ավագ քույրը՝ Լիլիթը, պատմում է, որ իր ուրախ, շփվող, կատակասեր բնավորության շնորհիվ ծառայությունն էլ էր դարձրել հաճելի: Պատերազմից հինգ օր առաջ ինչ-որ ալերգիայի պատճառով հոսպիտալ էր ընկել, բայց ուշքն ու միտքն իր մեքենան էր, ասում էր՝ շուտ գնամ, մեքենայիս տիրություն անեմ... Սովորել էր նաև Սիսիանի ավտոդպրոցում, ու մեքենան իր անբաժան մասն էր համարում: Ժպիտը միշտ խաղում էր դեմքին. այդ ժպիտով էլ հիշում են բոլորը: 2020 թ. ահասարսուռ պատերազմն սկսվելուն պես առաջնագծում էր: Սկզբում տարան Վազգենաշեն, հետո՝ թշնամուն դիմակայում էին Ֆիզուլի–Հադրութ հատվածում: Զանգելիս սփոփանքի խոսքեր էր ասում, հանգստացնում բոլորին՝ ասելով, որ հետ է գալու: Հոկտեմբերի 12-ին Ֆիզուլի–Հադրութ տարածքի Ուխտաձոր հատվածում Լևոնը վիրավորվել է ոտքից, փորձել է հեռանալ կրակի տակից, բայց ոչ ոք նրան չի տեսել:

Հետո սկսվել է դժոխային մի կյանք, անվերջ որոնումների, անհույս փնտրտուքների, սպասումների անվերջանալի թվացող մի հավերժություն, որ ձգվեց ինը ամիս...

Քույրը պատմում է, որ պատերազմի ժամանակ Լևոնը երկու անգամ փրկվել է մահից. առաջին անգամ բեկորը, այրելով Լևոնի մազերը, անցել է գլխի վրայից, և Լևոնը ողջ է մնացել: Երկրորդ անգամ, երբ Լևոնի վարած մեքենան անցել է կամուրջը, հաջորդ վայրկյանին այն պայթեցվել է, ու կրկին ողջ է մնացել: Էլի նման միջադեպեր են եղել, ու Լևոնի ծնողները, քույրերը հավատում էին, որ նա կա: Սակայն ԴՆԹ թեսթն 2021թ. ապրիլի 4-ին հաստատվել է, հնարավոր կասկածները փարատելու համար ԴՆԹ թեսթ են արել նաև Դանիայում, որը նույնպես հաստատվել է, ու հունիսի 29-ին ստացել են պատասխանը:

2021թ. հուլիսի 3-ին Լևոն Գրիգորյանի աճյունն ամփոփվեց Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով և «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Գրիգորյան Հայկ Դավիթի

Հայկին տանը երեք կավակներն էին սպասում. նրանք համոզված էին, որ հայրիկն անպայման տուն է վերադառնալու...

Ծնվել է 1985 թ. փետրվարի 17-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, այնուհետև Արցախի պետական համալսարանի «Նախնական զինվորական պատրաստություն և ֆիզկուլտուրա» բաժնում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Վարդենիսի զորամասում:

2011 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի գնդում, մասնակցել զինվորական դասընթացների և ծառայությունը շարունակել որպես պայմանագրային սպա՝ մոտոհրաձգային դասակի հրամանատար:

2006 թ. ամուսնացած էր, ունի երեք զավակ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Հայկ Գրիգորյանն իր աշխատանք-ծառայությունն էր կատարում Վայքի զորամասում. զինվորականին հատուկ հանգստությամբ ու սառնասրտությամբ ընդունեց պատերազմը սկսվելու մասին բոթը: Ընտանիքի անդամներն էլ էին սովոր Հայկի աշխատանքին՝ անհանգստանում էին, հարցնում, բայց նա հանգստացնում էր, ասում, թե ամեն ինչ լավ է լինելու...

Հայկի դասակը հոկտեմբերի 9-ին մեկնում է Արցախի հարավ՝ Ջրական: Ականատեսները պատմում են, որ նա սառնասրտությունը չէր կորցրել, իրեն վստահված հատվածի պաշտպանությունն իրականացնում էր գրագետ, վստահ ու առանց խուճապի:

Հայկին տանը երեք զավակ էին սպասում. նրանք համոզված էին, որ հայրիկն անպայման տուն է վերադառնալու, բայց հայրիկի գործուղումն այս անգամ սպասված վերադարձի ուրախությամբ չավարտվեց. հայրենանվեր սպան հոկտեմբերի 14-ին զոհվեց Ջրականում՝ իր զավակների սպասումը վերածելով մորմոքուն կարոտի...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գրիգորյան Հովհաննես Կառլենի

Ծնվել է 1995 թ. հոկտեմբերի 28-ին Սիսիան քաղաքում: Բարձր առաջադիմությամբ ավարտել է Սիսիանի ավագ դպրոցը և ընդունվել Երևանի ճարտարագիտական համալսարան, զուգահեռ վերապատրաստվել Արմենակ Խանփերյանցի անվան ավիացիոն ինստիտուտում, որն ավարտելուց հետո ծառայության է անցել ԼՂՀ ՊԲ զորամասում՝ ռադիոդասակի հրամանատար:

Ծառայության ընթացքում վայելել է թե՛ ծառայակից ընկերների, թե՛ ավագ սպայակազմի, թե՛ ենթակաների սերն ու հարգանքը: Նրա մասին ընկերներն ակնածանքով են խոսում, նաև հպարտությամբ՝ *«Հերոս բառը վերջերս շատ է օգտագործվում, այ Հովհաննեսի մասին կարող ենք ասել, որ իսկական հերոս էր, մարդ, ում հայրենասիրության, ծառայության ու կարճատև կյանքի մասին արժե և պետք է ֆիլմ նկարահանել...»:*

2020 թ. սեպտեմբերի 27-ին պայթեց պատերազմը. Հովհաննեսը Եղնիկներում էր՝ կատարում էր ծառայությունը, ինչպես միշտ՝ գերազանց և առանց հանգստի:

Պատերազմի օրերին եղել է նաև Մատաղիսում, Աղդամում, Արցախի հարավային հատվածում:

Պատմում են, որ տանկերից մեկը վթարվել ու մնացել էր մարտադաշտում, Հովհաննեսը մի ընկերոջ հետ մտել է մարտադաշտ՝ մեկ օրից ավելի փնտրել, գտել տանկը, նորոգել են ու դուրս եկել՝ փրկելով թե՛ անձնակազմը, թե՛ տանկը:

Հոկտեմբերի 9-ին Վարանդայում թշնամու անօդաչուի հարվածից այրվում էր բեռնատարը, Հովհաննեսը շտապում է օգնության՝ օգնում է շատերին, քիչ անց լինում է երկրորդ հարվածը և անմահանում է ավագ լեյտենանտ Հովհաննես Գրիգորյանը. ազգը կորցնում է հավասարակշռված, մասնագիտական հմտություններով ու ամենակարևորը՝ մարդկային բարձր որակներով օժտված հայ սպայի...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով:

Գրիգորյան Վահագն Արտուշի

Ծնվել է 1996 թ. նոյեմբերի 16-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի գիշերօթիկ դպրոցում, ապա Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցում: Իններորդ դասարանն ավարտելուց հետո մտադիր էր սովորել Սիսիանի ավագ դպրոցում, բայց նախընտրեց Սիսիանի պետական քոլեջը: Նպատակը Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում սովորելն էր: *«Չստացվեց… Ասացի՝ ես այդ հնարավորությունները չունեմ: Երևանում էր, ընկերներից մեկի մոտ, զանգահարեց և ասաց՝ մամ, շնորհավորիր ինձ, վաղվանից սովորելու եմ «Պահապան արծիվներ» թիկնապահների դպրոցում, Արկադի Տեր-Թադևոսյանի ղեկավարությամբ»,* – հիշում է մայրը:

Թիկնապահների դպրոցն ավարտելուց հետո ծառայել է հայոց բանակում՝ Նոյեմբերյանի զորամասերից մեկում: Բանակից հետո մեկնեց Ռուսաստան, մոտ մեկ տարի աշխատելուց հետո վերադարձավ: Այդ ժամանակ ծառայությունն ավարտել և տուն էր վերադարձել նաև ավագ եղբայրը՝ Նարեկը, ով աշխատանքի էր անցել Սիսիանի զորամասում: Վահագն էլ աշխատանքի անցավ Նորավանի զորամասում: Իր վաստակածով մի մեքենա էր գնել, շատ բանի կարող էր հասնել, ձգտումները մեծ էին…

Բայց սկսվեց պատերազմը… Հանրակացարանի առաջին հարկի հարևանուհին պատմել է, որ երբ մուտքի մոտ տեսել է Վահագնին, հարցրել է՝ մայրդ գիտի՞, որ պատերազմ ես մեկնում: Շտապելիս բոյով մեկ գետնին փռված Վահագնը վեր է կացել, թափ տվել շորերը և ասել՝ հաջող, Սիրուշ տոտա, պատերազմ եմ գնում…

Վահագնի հետ վերջին շաբաթները չեն խոսել, ոչինչ չգիտեն նրա ապրումների, տրամադրության մասին, բայց, ինչպես ասում է մայրը, պատերազմ էր, շատ լավ են պատկերացնում, թե ինչեր կարող էին լինել:

«Վահագնս էնքան ընտանիքասեր էր, ծնողասեր, հարազատասեր, անհամբեր սպասում էր՝ հոպար դառնար, բայց՝ զոհվեց, էդպես էլ չտեսնելով եղբոր դստերը՝ Լյուսիին, չտեսավ նաև քրոջ՝ Ասյայի բալիկին… Բայց Վահագնս երկնքից տեսնում է և ուրախանում: Նա էդպիսի տղա էր, նա ուրիշ զավակ էր… 24 տարեկան էր, բայց իր տարիքից շատ հասուն և առողջ էր մտածում ու դատում», – ասում է մայրը:

Զոհվել է հոկտեմբերի 20-ին: Հուղարկավորվել է հոկտեմբերի 23-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Գրիգորյան Վլադ Ալբերտի

Ծնվել է 1999 թ. օգոստոսի 11-ին Սիսիանի Աղիտու գյուղում: Հիմնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում, ապա սովորել Սիսիանի պետական քոլեջում, մասնագիտությամբ շինարար էր: 2018-2020 թթ. ծառայել է ազգային բանակում՝ Արցախի Հանրապետության Վարանդայի շրջանում:

2020 թ. հունվարին էր զորացրվել: Պարտադիր զինվորական ծառայությունն ավարտելուց մի քանի ամիս անց պայմանագրային ծառայության է անցել Նորավանի զորամասում: Ընկերները պատմում են, որ չնայած շատ երիտասարդ տարիքին, Վլադը լուրջ նպատակներ ուներ, որոնց հասնելու միակ ճանապարհն իր աշխատասիրությունն էր:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Վլադը միացավ Արցախ մեկնող ընկերներին: 44-օրյա պատերազմում նրա կողքին մարտնչած ընկերը՝ Հայկն է պատմում. *«Սեպտեմբերի 29-ին ենք գնացել Արցախ, ամբողջ ընթացքում միասին էինք, Վլադն արագաշարժ, կատակասեր տղա էր, հեշտ ու արագ էր կողմնորոշվում: Նրա մասին միայն լավը կարող եմ ասել, ուզում եմ առանձնացնել նրա հայրենասիրությունն ու լավատեսությունը: Հոկտեմբերի 20-ին Ադրբեջանն ավիացիոն հարձակման անցավ այն հատվածում, ուր մենք էինք: Զոհվեց նաև Վլադը, նա ծնողների միակ որդին էր, ծանր, շատ ծանր է վերհիշել այդ օրը, ընկերներիս նահատակվելու ցավն անտանելի է»:*

Վլադն ընտանիքի միակ արու զավակն էր, նպատակ ուներ ամուր հայկական ընտանիք կազմել ու մոր՝ թոռներով շրջապատված լինելու փափագը կատարել: Ծնողները հիմա մենակ են, նրանց այս կյանքի հետ կապողը Վլադի լուսանկարներն ու նրանից մնացած ջերմ հիշողությունները. *«Իմ բալան բոլորին հասնում էր, մեկին մի վատ բան չի արել, մեկի վատը չի ցանկացել, իմ մի հատիկն էր, իմ մինուճարն էր: Նկարներին նայելով եմ ապրում...»*, – հուսահատ հեկեկում է մայրը:

Վլադի աճյունը հողին է հանձնվել 2020 թ. հոկտեմբերի 23-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Դանիելյան Դավիթ Հմայակի

Ծնվել է 2000 թ. սեպտեմբերի 27-ին Սիսիանի շրջանի Շաքի գյուղում: Դավիթը բազմազավակ ընտանիքում էր ծնվել, ամենակրտսերն էր՝ տասներորդը, նրան հատուկ խանդաղատանքով էին վերաբերվում բոլորը: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 2019 թ. զորակոչվել է՝ ծառայում էր Դիլիջանի զորամասում՝ հրետանու նշանառու:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Դավիթի 20-ամյակն էր. հարազատների զանգերը սակայն անպատասխան էին մնում, քանի որ Դավիթին վաշտի կազմում տեղափոխում էին Արցախ: Երեկոյան Դավիթն ինքն էր զանգահարել, ասել, որ չանհանգստանան...

Դավիթի մասին ծառայակից ընկերն է պատմում. *«Մենք երկար ճանապարհ ենք անցել, հիմա, որ հետ եմ նայում, Դավիթը զոհվել է պատերազմի սկզբից 18 օր անց, միայն 18 օր, բայց այդ օրերի ընթացքում մենք Ջրականից մինչև Մատաղիս ենք հասել, պատերազմում օրերը խաղաղ օրերի պես չեն հաշվում: Այդ ընթացքում եղել են հաղթանակի ուրախություններ, վերքերի ցավ, սպասում, վախ, ընկերների կորուստ, ընկերներ, ովքեր չկան, բայց մեր սրտերում են, ընկերներ, որոնց առաջ մի տեսակ մեղավոր ենք զգում, որ կանք, պատերազմը սկիզբ ունեցել է, բայց վերջ չունի, ամիսներ են անցել, բայց իմ պատերազմը դեռ չի ավարտվել, որովհետև այդ պատերազմի ամեն վայրկյանն ինձանից մի մասնիկ է տարել... Մասնիկ չէ, աշխարհ էր մեր Դավիթը, ուրախ, հասուն, վստահ իր ուժերին: Դավիթից ինձ ժպիտն է մնացել ու ձայնը, որ գոռում էր զենքի մոտ, զենքի մոտ էլ զոհվեց, մի փոքրիկ բեկոր նրան խլեց մեզանից, աշխարհը կանգ է առել այդ օրն ու մինչև օրս ուրիշ ձև է պտտվում, ուզում եմ, որ նրա՝ էս երկրի համար թափած արյունը ոչ մի հայ չմոռանա...»:*

Դավիթ Դանիելյանը հերոսաբար ընկել է հոկտեմբերի 16-ին Մատաղիսում՝ ընկել է իր զենքի կողքին, ընկել է հավատով, որ հաղթանակը մերն է լինելու, որ իր արյամբ պահված հողի վրա հայ մանուկներ են մեծանալու...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում հոկտեմբերի 18-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Դավթյան Վարդան Վահանի

Ծնվել է 1985 թ. օգոստոսի 25-ին Սիսիան քաղաքում: 2002 թ. ավարտել է Սիսիանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, նույն տարում ընդունվել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանը, այնուհետև լեյտենանտի կոչումով ծառայության է անցել Գորիսի զորամասում՝ հրետանու դասակի հրամանատարի պաշտոնով:

2011 թ. ստացել է կապիտանի կոչում, շարունակել ծառայությունն Արցախում՝ Մարտունու զորամասում:

Ծառայության տարիներին աչքի է ընկել ռազմական գիտելիքներով, սպային պատշաճող մտածելակերպով ու անբասիր վարքով. պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Մասնակցել է Ապրիլյան պատերազմին՝ ցուցաբերել գրագետ, հրետանավորին հատուկ սառնասրտություն և հակառակորդին պատճառել տեխնիկայի ու մարդուժի մեծ կորուստներ, պարգևատրվել «Արիության» մեդալով: Արի էր հոգով, արի էր սրտով, արի էր էությամբ…

Արդեն զինվորականի փորձառու ճանապարհ անցած ու մեծ վաստակ ունեցող կապիտան Վարդան Դավթյանը տեղափոխվել էր հայրենի Սիսիան և ծառայության անցել Սիսիանի գնդում…

2020 թ. սեպտեմբերի 27-ին սյունեցի սպան շտապեց օգնության հասնել Արցախում օրհասական կռիվ տվող իր ընկերներին: Զանգահարում էր տուն, հուսադրում, հորդորում պինդ մնալ, ասում, որ ինքը պարտություն թույլ չի տա, որ ինքն ու իր ընկերները փառքով են պահելու հայրենի հողը: Վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 21-ին և վստահեցրել, որ իր դիրքն անառիկ է մնալու, որ ինքը հաղթանակած է վերադառնալու:

Վարդանը սովոր չէր խոստումը դրժել. իր բնավորությանն ու տեսակին հարազատ մնաց՝ հոկտեմբերի 21-ին ընկավ հերոսի մահով, բայց պահեց իրեն վստահված դիրքը, վերադարձավ վահանի վրա…

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ հոկտեմբերի 24-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ելուղյան Նարեկ Յուրիկի

Ծնվել է 1997 թ. ապրիլի 21-ին Սիսիանում: Եղբայրներից կրտսերն էր: Ավարտելով Սիսիանի թիվ 1 դպրոցը՝ ուսումը շարունակել է Սիսիանի պետական քոլեջում: Գերազանց ավարտելով քոլեջը՝ 2014 թ. ամռանը զորակոչվել է բանակ, ծառայում էր Մարտակերտում: Որպես օրինակելի, կարգապահ ու քաջ զինվոր՝ պարգևատրվել էր «Քաջարի մարտիկ» և «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշաններով, ինչպես նաև բազմաթիվ պատվոգրերով: Մի քանի ամիս էր մնացել Նարեկի զորացրվելուն, երբ սկսվեց 2016 թ. ապրիլյան պատերազմը: Ծառայակից ընկերների հետ միասին պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը, և, ինչպես հայրն է պատմում, հրաշքով էր փրկվել: Զորացրվելուց հետո ուսումը շարունակել է Հայաստանի պետական ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում, եղել լավագույն ուսանողներից, այնուհետև ծառայության անցել Սիսիանի զորամասում՝ պայմանագրային զինծառայող:

Նարեկի մասին ասում են, թե բծախնդիր զինվորական էր, միշտ կոկիկ, միշտ մաքուր, զինվորական համազգեստը՝ միշտ հարդարված, զենքը՝ կողքին, զենքից անբաժան: Կյանքն այս տեսակ սիրելու, հայրենիքն այս կերպ ապրեցնելու համար էր, որ պայմանագրային Նարեկ Ելուղյանը և՛ գնաց պատերազմ: Հոկտեմբերի 8-ին իջավ Սիսիանի դիրքերից, և տղաների հետ գնացին «այնտեղ», ինչպես գնալուց առաջ հայացքով ցույց էր տվել հորը: Կռվել է Կարմիր շուկայում...

Նրա հետ վերջին անգամ խոսել են հոկտեմբերի 14-ին: Զանգահարել էր ծնողներին, որ իրենց տեղը փոխում են, գուցե հետո էլ կապ չլինի, չանհանգստանան, եթե չզանգահարի...

Գրեթե չորս ամիս տևած որոնումներից, փնտրտուքներից հետո 2021թ. հունվարի 25-ին նրա աճյունը գտան...

Նարեկի երազանքը և նպատակը սպա դառնալն էր, այնքան շատ էր սիրում զենքն ու զինվորական համազգեստը... Սակայն, ինչպես անկատար մնաց այդ երազանքը, այնպես էլ՝ ապրելու, սիրելու, սիրվելու իղձը...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021թ. հունվարի 27-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Եսայան Պարույր Արամայիսի

Ծնվել է 1972 թ. հոկտեմբերի 14-ին Անգեղակոթ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

Հայկական բանակի առաջին զորակոչի զինվորներից էր:

Հետախուզական ջոկի հրամանատար էր, սեղմ ժամկետներում կարողացել էր լավ հետախույզի համբավ վաստակել...

«Մենք իրար համար ու իրարով էինք ապրում... Չկա մեկը, որ ասի՝ դիմել է Պարույրին ու օգնություն չի ստացել: Չափազանց հայրենասեր էր, Ռուսաստանում էր ապրում, երբ լսեց պատերազմը սկսվելու մասին, վերադարձավ ու մեկնեց Մարտակերտ՝ Եղնիկներ: Գիտեինք, որ ընկերներին խոստացել էր՝ վտանգի պահին միանալ իրենց, այդ պատճառով էլ չառարկեցինք:

Երիտասարդ տարիներին ցանկանում էր ռազմական օդաչու դառնալ, նույնիսկ դիմել էր, հետո մորս հորդորով հրաժարվեց այդ մտքից:

Զանգերից մեկի ժամանակ ավիացիոն հարձակում սկսվեց, լսում էի՝ ինչպես էր եղբայրս գոռում՝ մտեք թաքստոցները, ապա նրա հառաչը լսեցի՝ զինանոցին խփեցին: Հասկացա, որ այդ պահին նրա համար ամենաթանկն իր կողքին կռվողների կյանքն է:

Վերջին անգամ զանգեց, ասաց, որ գործողության է գնում ու մի քանի օր անհասանելի է լինելու: Հոկտեմբերի 26-ին լսեցինք զոհվելու բոթը...», – պատմում է եղբայրը:

Պարույրի մասին բոլորն են ցանկանում մի բան պատմած լինել. բոլորի խոսքում կարմիր թելի պես անցնում է մի միտք՝ *«Պարույրը թիկունք էր իրեն ճանաչողների համար»:*

Նրանք, ովքեր տեսել են Պարույրին մարտադաշտում, նշում են, որ նրա կողքին վստահ ու ապահով էին զգում. *«Հետախուզության միայնակ էր գնում, վերջին անգամ էլ միայնակ էր գնացել, կատարել էր մարտական խնդիրն ու վերադառնալիս դիտարկվող տարածքում թշնամին նկատել էր նրան և դիպուկահարները կրակ էին բացել, ծանր վիրավորվել էր: Նա ազատ Արցախի գաղափարը վեր էր դասում ամեն ինչից: Ինձ ճիշտ հասկացեք՝ մարդու մահը միշտ է ցավալի, բայց առավել ցավալի է, երբ հայրենիքն այդքան սիրող, հայրենիքի համար ոչինչ չխնայող մարդիկ են զոհվում...»:*

Զոհվեց 2020 թ. հոկտեմբերի 26-ին: Աճյունն ամփոփված է Անգեղակոթի գերեզմանատանը:

Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» և «Մարտական ծառայության» մեդալներով:

Թևանյան Դավիթ Սամվելի

Ծնվել է 1989թ. մայիսի 30-ին Սիսիան քաղաքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Սիսիանի թիվ 1 դպրոցում: Այնուհետև ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան: 2010 թ. ավարտելով համալսարանը՝ ծառայության է անցել Քաշաթաղի շրջանի Որոտան քաղաքի զորամասերից մեկում, որպես դասակի հրամանատար: Փայլուն ծառայության համար արժանացել է բազմաթիվ պատվոգրերի և 2012 թ. նույն զորամասում նշանակվել վաշտի հրամանատար: Իր գործի նվիրյալն էր, ծառայության ժամանակ շատ խիստ էր և պահանջկոտ, բայց միևնույն ժանանակ՝ շատ ընկերական զինակից ընկերների հետ, ու երևի դա էր պատճառը, որ իրեն շատ սիրում ու հարգում էին:

2014 թ. ամուսնանում և տեղափոխվում է Կապան, ծառայությունը շարունակում այնտեղի զորամասերից մեկում: Նրան վստահվում է զորամասի շտաբի պետի պաշտոնը: 2019 թ. տեղափոխվում է Վարդենիս, նշանակվում հրամանատարի մարտական գծով տեղակալ, ընդամենը մի քանի ամիս ծառայելուց հետո կրկին տեղափոխվում է Քաշաթաղի շրջանի Որոտան քաղաքի զորամասերից մեկը, որպես շտաբի պետ:

Դավիթը երկու անչափահաս երեխայի հայր էր, շատ նվիրված էր ընտանիքին, ճիշտ է աշխատանքի բերումով տանը շատ քիչ էր լինում, բայց երբ տուն էր գալիս, ամեն ինչ անում էր որպեսզի երեխաները բավականություն ստանային իր ներկայությունից:

Երբ չարաբաստիկ պատերազմը սկսվեց՝ մայոր Թևանյանն իր ողջ անձնակազմով մեկնեց մարտի դաշտ. թեժ մարտերից մեկի ժամանակ զոհվում է իրենց հրամանատարը: Զորամասի հրամանատար է նշանակվում մայոր Թևանյանը: Այդ ծանր ու պատասխանատու գործն իր ուսերին վերցնելով՝ ամեն ինչ անում է, որպեսզի հասնեն հաջողությունների: Մի քանի անգամ շրջափակման մեջ են ընկնում, բայց կարողանում է զորքի մեծ մասին անվնաս դուրս բերել այդ ծանր վիճակից:

Մայոր Թևանյանը վիրավորվելուց հետո էլ չլքեց մարտի դաշտը, մենակ չթողեց իր զինվորներին, հրաժարվեց հոսպիտալ գնալուց՝ պատճառաբանելով. *«Էդքան զինվորների ընտանիքներին հետո ի՞նչ պատասխան պիտի տամ»:* Այրվածքներով, ցավերի մեջ կռիվ տվեց մինչև վերջին րոպեները, բայց, ցավոք, հոկտեմբերի 8-ին՝ թեժ մարտերում անմահացավ հերոսի մահով՝ Ջրականում:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Թովմասյան Օգսեն Խաչատուրի

Ծնվել է 1979 թ. սեպտեմբերի 14-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 4 միջնակարգ դպրոցում: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Նոյեմբերյանում: Սովորել է Սիսիանի N 68 ուսումնարանում, ստացել տրակտորիստ-մեքենավարի մասնագիտություն:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Օգսենի մասին զրուցում ենք կնոջ՝ Նաիրայի հետ. *«Ամուսինս ոսկի ձեռքեր ուներ, ամեն ինչ կարողանում էր անել՝ կահույք, էլեկտրական սարքավորումներ էր նորոգում, իսկ մեքենաների մասին խոսելն ավելորդ է՝ առավոտյան ամբողջությամբ քանդում էր մեքենան, երեկոյան՝ հավաքում: Բարի, խաղաղ մարդ էր, վիճել չէր սիրում, երբ ինչ-որ հարցում համաձայն չէի լինում, երկար-բարակ խոսելու փոխարեն ասում էր. «Այ բալա, գնա մի կոֆե դիր», ու վեճը չսկսված՝ ավարտվում էր: Երկու աղջիկ ունեինք, երազում էր տղա ունենալ, երեք տարի առաջ ծնվեց մեր որդին՝ Նարեկը: Ուզում էր, որ որդին ամեն ինչ ունենա, բայց չհասցրեց նրան մեծացնել»:*

2014 թ. ծառայության է անցել Սիսիանի զորամասում՝ վարորդ: Ծառայակից ընկերները նրա մասին միայն լավն են պատմում. *«Լավ վարորդ էր Հովոն (Օգսենին այդ անունով էին կոչում), հանգիստ, բարի, պարզ մարդ էր, ձեռքից ամեն ինչ գալիս էր...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Հոկտեմբերի 8-ին Սիսիանի դիրքերից իջան և գնացին Արցախ՝ հայրենիքի փրկության կանչին... Օգսենը Կարմիր շուկա է մեկնում իր վարած մեքենայով. զանգահարելիս հույս էր տալիս, ասում, որ ինքը լավ է, որ հաղթելու են: Հոկտեմբերի 14-ին ընտանիքի անդամներն Օգսենից վերջին զանգը ստացան: Հետո հեռախոսը լռեց՝ տեղը զիջելով տագնապին...

Տագնապ ու սպասում, որ տևեց 154 օր...

Հինգ ամիս անց ԴՆԹ-ի անալիզի պատասխանը հաստատեց՝ Օգսեն Թովմասյանը նահատակվել է... Շատերին է փրկել, բայց չի կարողացել փրկել իրեն...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021թ. փետրվարի 21-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Թունյան Սարո Միքայելի

Ծնվել է 1999 թ. հոկտեմբերի 8-ն Սիսիանի շրջանի Աղիտու գյուղում: Նույն տարում տեղափոխվել են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Լեռնահովիտ գյուղ: Միջնակարգ կրթությունը ստացել է Լեռնահովիտում:

2018 թ. զորակոչվել է բանակ, ծառայել է Մարտունիի զորամասում, մեկ տարի հետո նրան է միացել եղբայրը, միասին են ծառայել ու աչքի ընկել: Ծառայության ընթացքում պարգևատրվել է պատվոգրերով, ծնողներին ուղղված շնորհակալական նամակներով, ինչպես նաև գերազանցիկի շքանշանով, ստացել ավագ սերժանտի կոչում:

2020 թ. զորացրվել է, վերադարձել Լեռնահովիտ՝ երկու տարի մտքում պտտվող նպատակներն իրականացնելու հաստատ որոշմամբ:

Զորացրվելուց մի քանի ամիս էր անցել, Սարոն դեռ նոր էր հարմարվում քաղաքացիական կյանքին, երբ սկսեց պատերազմը… Պատերազմի բոթը լսելուց ժամեր անց կամավորագրվեց՝ քաջ գիտակցելով՝ ուր է գնում:

Սարո Թունյանը ժամկետային ծառայության ժամանակ հմուտ դիպուկահար էր դարձել: Նրանք, ովքեր տեսել են Սարոյին մարտի դաշտում, նրա պրոֆեսիոնալիզմի ու թշնամու մարդուժին պատճառած վնասների մասին ասում են՝ Սարոյի զենքից մի ժամում ավելի շատ թուրք է սպանվել, քան տանկի կրակոցից:

Սարոյի մասին բոլոր ճանաչողներն են ցավով ու արցունքներով պատմում…

Սարոն համոզված էր, որ մենք պարտվել չենք կարող, հակառակը պնդողներից նեղանում էր, նույնիսկ բարկանում. *«Ես չեմ կարող տեսնել, թե թուրքն ինչպես է մեր տուն մտնում…»:*

Հոկտեմբերի 26-ին՝ 28 օր անընդմեջ կռվելուց, 28 օր կողքին կռվողներին հույս տալուց ու կողքին կռվողների հույսը լինելուց հետո ընկել է Սարոն:

Ընկել է ու չի տեսել, թե ինչպես է Քաշաթաղն անհասկանալի հանգամանքներում հանձնվել թուրքին, ինչպես է եղբայրը վիրավորվել: Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2020թ. հոկտեմբերի 29-ին:

Իսրայելյան Կարեն Զորավիկի

Ծնվել է 1990 թ. հունվարի 2-ին Շաքի գյուղում: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Մարտակերտում: Բանակից հետո երկու տարի աշխատեց ՌԴ-ում, բայց չէր սիրել օտար ափերը և վերադարձել էր հայրենի գյուղ:

Այնուհետև պայմանագրային ծառայության էր մտել Սիսիանի զորամասում: Բայց դա էլ, կարծես, իրենը չէր: Գնաց Արցախ, շինարարություն էր անում, Կարմիր շուկայում դպրոցի ու մանկապարտեզի շենք էր սարքում, ձեռքով ամեն գործ գալիս էր: Ընկերները մականունը «Հերոս» էին դրել: Հանկարծ մեկի մատը փուշ մտներ, մեկի գործը մի քիչ լավ չլիներ, կանչում էին՝ էն սիսիանցի «Հերոսին» ասեք թող գա, մենակ ինքը կարա օգնի:

«Կարենը մեր գյուղը շատ էր սիրում, ամուր կապված էր մեր հող ու ջրին, արմատները շատ խորն էին: Իր բոլոր նպատակներն ու երազանքները գյուղի հետ էր կապում: Պատրաստվում էր վերանորոգել տունը, ամուսնանալ... Դիրքերից իջնում էր, հորը խնդրում պատերի անկյունները նշել, մնացած ամեն ինչն ինքն էր անում: Հորից սովորել էր մեխանիզմի, մեքենայի, քարի, պատի հետ աշխատելու «լեզուն», անգամ՝ կոշկակարություն ու չէր զիջում նրան: Հերիք էր մի բանը մի անգամ տեսներ, արագ յուրացնում էր, ու ինքնուրույն անում: Տունն իրենից հետո ենք կարգի բերել, բայց բոլորն իր նախագծերով, իր գծագրերով: Գնալուց առաջ տան մուտքի դուռը դրեց... Հիմա ամեն անգամ տան դուռը բացել-փակելիս մեզ հետ տուն է մտնում, մեզ հետ դուրս գալիս, միշտ ներկա է», – հիշում է մայրը:

Սեպտեմբերի 27-ին Կարենը տանն էր: Պատերազմի բոթը լսելուն պես արագ զգեստափոխվեց, գնաց գյուղապետարան, այնտեղ ասել են՝ իր անունով ծանուցագիր չկա, գնացել է զինկոմիսարիատ, հետ են ուղարկել՝ հիմա գնա, քո ժամանակն էլ կգա...

Կարենը միացավ Նորավանի զորամասին: Մեկ շաբաթ մնաց այնտեղ, հետո տարել են Մեղրի, իսկ հոկտեմբերի 13-ին՝ Ջրական: Զոհվեց հոկտեմբերի 15-ին:

Հոկտեմբերի 18-ին հուղարկավորվեց Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Խաչատրյան Անուշավան Վարուժանի

Ծնվել է 1985 թ. ապրիլի 8-ին Սիսիանի տարածաշրջանի Շաղատ գյուղում: Գյուղի լավագույն երիտասարդներից էր՝ հաստատակամ, ինքնավստահ: Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է Արցախի հայտնի՝ Եղնիկներ զորամասում, հետախույզ էր:

Բանակից վերադառնալուց հետո մի քանի տարի աշխատեց Երևանում, ապա գնաց Վլադիվոստոկ, հորեղբոր մոտ: Նորից վերադարձավ Երևան, աշխատեց «Գրանդ Քենդի» ընկերությունում, կրկին մեկնեց Ռուսաստան, բայց չգտավ իր տեղը ու կատարեց իր կյանքի համար վճռորոշ քայլը՝ վերադարձավ հայրենի գյուղ՝ Շաղատ, ու Ապրիլյան քառօրյայից հետո պայմանագրային ծառայության անցավ Սիսիանի զորամասում՝ նոր ձևավորված հակատանկային դասակում…

Սեպտեմբերի 27-ից առաջ զինակից ընկերների հետ Շաղատի դիրքերում էր:

Հոկտեմբերի 8-ին զանգահարեց դիրքերից ու ասաց, որ իրերը պատրաստեն, Արցախ են տանում: Եղբայրը՝ Դավիթը, արդեն տանը չէր, զորահավաքով նա էլ դիրքերում էր, և եղբայրներն այդպես էլ իրար հրաժեշտ չտվեցին…

Հոկտեմբերի 10-ի լուսադեմին տեղի է ունեցել չարաբաստիկ դեպքը… Երեք օր հետո Դավիթն իջավ դիրքերից, ընկերների հետ գնացին փնտրելու եղբորը. փնտրել են բոլոր հիվանդանոցներում, անգամ բոլոր դիահերձարաններում, հուսով, որ ողջ կլինի կամ գուցե վիրավոր, բայց հոկտեմբերի 25-ին ստացան ԴՆԹ անալիզի պատասխանը…

Անուշավանը չափազանց ընկերասեր էր ու ծնողասեր: Իր հագի բաճկոնը հանել-տվել էր ընկերոջը, ում հետ միասին էին թրջվել անձրևից ու մրսել: *«Ծնողներն Անուշավանի սրբությունն էին, հետո՝ հայրենիքն էր, բայց արի ու տես, որ Անուշավանը հայրենիքն ավելի սիրեց և առաջին տեղում դրեց հայրենիքն ու նահատակվեց հանուն հայրենիքի… Ճիշտ է՝ Անուշավանն անժառանգ հեռացավ կյանքից, բայց մեր գալիք հաղթանակները, ինչին ես հավատում եմ, լինելու են նրա զավակները, նրա ժառանգները և նա հենց դրանով էլ հավերժանալու է…»*, – ասում է Դավիթի կինը՝ Շահանդուխտը:

Հուղարկավորվեց հոկտեմբերի 27-ին Շաղատի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Խաչատրյան Դավիթ Հովնանի

Ծնվել է 1991 թ. սեպտեմբերի 4-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 1, այնուհետև՝ թիվ 3 դպրոցներում:

Ծնվել է ազատամարտիկի ընտանիքում, ընտանիքի միակ որդին էր: Դավիթը մեծացել է անսահման սիրո ու գուրգուրանքի մեջ:

2007 թ. զորակոչվել է բանակ, ծառայել հատուկ նշանակության ջոկատում՝ դիպուկահար:

2014 թ. ավարտել է Երևանի պետական ճարտարագիտական համալսարանը՝ ճարտարագիտության բակալավրի աստիճանով: 2016-ին ավարտել է նույն բուհի ճարտարագիտություն մասնագիտության մագիստրատուրան:

Բայց հատուկ ջոկատայիններին միանալու, զինվորական դառնալու միտքը հանգիստ չէր տալիս Դավիթին: Դեռ մագիստրատուրան չավարտած՝ 2015 թ. դեկտեմբերին, ծառայության է անցնում որպես պայմանագրային սպա:

Հատուկ նշանակության ջոկատի սպա, լեյտենանտ Դավիթ Խաչատրյանը մասնակցել է 2016 թ. քառօրյա պատերազմին, պարգևատրվել բազմաթիվ պատվոգրերով:

2018 թ. օգոստոսի 18-ին ամուսնացել է:

2020 թ. սեպտեմբերի 27-ին հատուկ նշանակության ջոկատի ավագ լեյտենանտ Դավիթ Խաչատրյանն իր զինվորներով առաջնագծում էր. մասնակցել է Քարվաճառի, Ջրականի, Հադրութի մարտերին:

2020 թ. հոկտեմբերի 10-ին Հադրութում հակառակորդի դիվերսիոն խումբը ոչնչացնելու ժամանակ ծանր վիրավորվում է: Մարտական ընկերների ու իր զինվորների օգնությամբ դուրս է բերվել մարտադաշտից:

Բժիշկների՝ Դավիթի կյանքը փրկելու բազմաթիվ փորձերը, ցավոք, ապարդյուն էին. հոկտեմբերի 20-ին մահանում է հատուկ նշանակության ջոկատի ավագ լեյտենանտ Դավիթ Խաչատրյանը:

Երջանիկ ընտանիք ուներ, սիրելի կին, հոգատար քույրեր: Նրա կյանքին նոր գույն ու իմաստ էր հաղորդել դուստրը՝ Արփին, ով ծնվել է 2020 թ. օգոստոսի 4-ին: Դավիթը դստեր շուրթերից իրեն ուղղված «հայրիկ» բառը լսելու երջանկությունն ու մնացած բոլոր ուրախությունները նվիրաբերեց հայրենիքին, որպեսզի իր Արփին ու մյուս բոլոր մանուկները խաղաղ ու անվտանգ երկրում մեծանան:

Դավիթ Խաչատրյանի աճյունն ամփոփված է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Կարապետյան Արման Ռուդիկի

Մայրը պատմում է, որ առանց իրենց տեղեկացնելու գնացել քննություն էր հանձնել և ընդունվել: Երբ ցանկություն են հայտնել հետը գնալ, ասել է՝ «Տղան պիտի տղա մեծանա»:

Ծնվել է 2001 թ. հոկտեմբերի 14-ին Սիսիան քաղաքում: Աշխույժ ու մարդամոտ, ընկերասեր ու կենսասեր էր Արմանը: Ավարտելով Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոցը՝ ուսումը շարունակել է ավագ դպրոցում: Դպրոցից հետո ընդունվել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի ֆուտբոլի բաժին ու մեկնել ծառայության: Մայրը պատմում է, որ առանց իրենց տեղեկացնելու գնացել քննություն էր հանձնել և ընդունվել: Երբ ցանկություն են հայտնել հետը գնալ, ասել է՝ «Տղան պիտի տղա մեծանա»:

2020 թ. անցել է ծառայության ՀՀ զինված ուժերում: Վեց ամիս ծառայել է Գյումրու զորամասում, ապա Ջրականի Արա լեռ զորամասում: Բոլորի պաշտպանն էր, բոլորի ուրախությունն ոչ միայն դպրոցում, այլև ծառայության ժամանակ: Այնպիսի բնավորություն ուներ, որ անհնար էր նրան չսիրել:

Մի քանի ամսվա ծառայող էր, երբ սկսվեց պատերազմը: Վերջին անգամ տուն է զանգահարել սեպտեմբերի 26-ին: Հաջորդ օրն ընդմիշտ լռել է Արմանի զանգը, սառել՝ «Մամ» կանչող բառը…

Որոնումների, հույսերի, սպասումների չորս ամիս, որի ընթացքում փորձեցին կամաց-կամաց առերեսվել ծանր իրականության հետ, կամաց-կամաց իրենց նախապատրաստել ամենաանհավանականին՝ Արմանի զոհվելուն…

Արման Կարապետյանի աճյունը ծնողներին հանձնեցին 2021-ի հունվարի 16-ին:

Հուղարկավորությունը տեղի ունեցավ հունվարի 18-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Կարապետյան Հրահատ Փայլակի

Ծնվել 1983 թ. դեկտեմբերի 2-ին Սիսիան քաղաքում: Տեղի թիվ 2 դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է ԴՕՕՍԱՖ-ի դասընթացներում: Այնուհետև՝ 2001 թ. զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Էջմիածնում:

Զորացրվելուց հետո որոշ ժամանակ աշխատել է Շաքիի քարի արտադրամասում: Սոցիալական խնդիրների պատճառով մեկնել է ՌԴ , երկու տարի այնտեղ աշխատելուց հետո վերադարձել հայրենիք: Գտնում էր, որ օտար հողում մարդ մնում է օտար, հայրենիքն է մարդուն ուժ տվողը:

Ամուսնացել է Հասմիկ Կարապետյանի հետ և ունեցել երեք զավակ:

Հասմիկի ու Հրահատի ընտանիքն օրինակելի են բնորոշում հարևանները՝ *«Ափսոս, Հրոն լավ տղա էր, երեխաների համար շատ ենք տխրում՝ հորը շատ էին սիրում, կինն էլ էր նրան շատ նվիրված. դաժան է պատերազմը, շատ-շատ տներ քանդեց, երանի խաղաղությունը հարատև լինի...»:*

2013 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ընթացքում հազար ու մի դժվարություն է տեսել, բայց երբեք չի բողոքել ծառայությունից, համարում էր, որ դժվարությունը տղամարդու համար է, միայն ընտանիքի անդամների համար էր անհանգստանում...

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց... Սիսիանի զորամասի ծառայողները խումբ-խումբ մեկնում էին Արցախ՝ Սյունիքի դարպասն ու իրենց տունը պաշտպանելու:

Հոկտեմբերի 10-ին Արցախ մեկնող մեքենաներից մեկում էր Հրահատը: Ընկերների պատմելով՝ հրամանատարը դիրքում Հրոյին ասել է, թե կարող է Արցախ չգալ, քանի որ երեք երեխա ունի, բայց նա հակադարձել է. *«Ձեզ մենակ չեմ կարող թողնել...»:*

Մեքենան, որում գտնվում էր Հրահատը, առաջնագիծ չհասավ. Կարմիր շուկայի մոտակայքում թշնամու անօդաչուի հարվածից պայթում է՝ զոհվում է Հրահատը՝ կնոջն ու երեք երեխաներին թողնելով իրեն հավերժ կարոտելու ցավն ու հերոսացած հայի ընտանիք լինելու հպարտությունը:

Հուղարկավորվել է հոկտեմբերի 28-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Կիրակոսյան Արայիկ Էդիկի

Ծնվել է 1991 թ. մայիսի 16-ին Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: Միջնակարգ կրթություն ստանալուց հետո 2008-2010 թթ. ծառայել է բանակում: Ծառայությունն անցել է Ջրականում՝ Արա Լեռ զորամասում: Բանակից զորացրվելուց հետո գնացել է Ռուսաստան, որոշ ժամանակ աշխատել այնտեղ, ապա վերադարձել հայրենի գյուղ, ամուսնացել և պայմանագրային ծառայության անցել Սիսիանի զորամասում: Ձինակից ընկերների հետ Շաղատի դիրքերն էին հսկում:

Պատերազմին նախորդող երեք ամսում դիրքերից գրեթե չիջավ: Ամենից շատ երեխաներին էր կարոտում՝ էդիկին և Խաչիկին:

Արայիկը վարորդ էր. Սիսիանի մերձակա դիրքեր տանող ճանապարհները ծանր ու դժվարանցանելի են, բայց երբեք դիրքապահ տղաներին կես ճանապարհի չի թողել: Դիրքապահ ընկերներից Տիգրանն է պատմում՝ *«Մեզ հետ բարձրանում էր դիրքեր, մնում էր մեզ հետ, փորձում էր օգնել յուրաքանչյուրին: Օգնող, հասնող մարդ էր, համեստ, բարի, ընկերասեր, գյուղում հարգված, բոլորիս կողմից սիրված: Միակ տղան էր, քույրեր ուներ, բայց եղբայր չուներ: Արայիկը երկու տղա ունի, հիմա ինչքան գիտեմ, գյուղում չեն, ծնողների հետ էին, բայց հիմա ծնողները երեխաների կարոտով են ապրում: Արայիկի նման տղաները պիտի շատ լինեն, որովհետև մարդ պիտի կարողանա պահանջված լինել, Արայիկը բոլորի համար և ամենուր կարողանում էր իրեն դրսևորել՝ հմուտ վարորդ էր, լավ զինվորական, բանիմաց հողագործ, հասնող-օգնող համագյուղացի ու ընկեր: Մի խոսքով՝ հրաշալի մարդ էր: Հոկտեմբերի 7-ին գնաց Արցախ, մի քանի օր անց իմացանք, որ զոհվել է. անասելի ցավ է տեսնել, թե ինչպես է պատերազմը խլում երիտասարդ տղաների կյանքը՝ ծնողներին հավերժ սգավոր, երեխաներին՝ որբ թողնում. անիծվի պատերազմը...»:*

Արայիկ Կիրակոսյանը զոհվել է հոկտեմբերի 10-ին Կարմիր շուկայի մոտակայքում: Հուղարկավորվել է հոկտեմբերի 29-ին՝ Անգեղակոթի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հակոբջանյան Մարատ Մարտունիկի

Ծնվել է 1982 թ. ապրիլի 26-ին Սիսիանի շրջանի Շամբ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Բազմազավակ ընտանիքում էր ծնվել՝ տասը երեխա ունեցող: Մարատի բաժին սերն առանձնահատուկ էր, որովհետև տասներորդ երեխան էր՝ ամենափոքրը. ավագ քույրերը հիմա էլ նրա մասին խանդաղատանքով են խոսում: Շամբի դպրոցն ավարտելուց հետո ծառայել էր բանակում՝ նույն Մարտակերտում, որտեղ էլ հետո պիտի անմահանար՝ նահատակվելով նրա պաշտպանության համար մղված մարտերում:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Հայն իր հողը սեփական զավակի պես է սիրում: Մարատն աշխատում էր Տատնիի ջրերի գործարանում: Կինը պատմում է, որ Մարատը սիրում էր խնամել հողը, սիրում էր մշակել ու բերք ստանալ, աշխատասեր էր ու իր եռանդն ամբողջությամբ օգտագործում էր բարիք ստեղծելու համար, բայց նրա խաղաղ աշխատանքն ընդհատեց պատերազմը. սեպտեմբերի 27-ին՝ պատերազմի առաջին իսկ օրը, միացավ Սիսիանի պաշտպանությունն իրականացնող զինվորականներին, երկու օր անց կամավոր մեկնեց Արցախ՝ մասնակցելու Մարտակերտի մարտերին:

Մարատի մասին ընկերը՝ Արամն է պատմում. *«Բառեր չեմ գտնում նրա արժանիքների մասին խոսելու համար, իսկական ընկեր էր, նրան հարգում էին բոլորը, հասնող, օգնող, հարգալից, մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր: Պատերազմի օրերին համարյա ամեն օր խոսում էինք հեռախոսով. մեր վերջին խոսակցության ժամանակ Մարտունիում էր, ասում էր, որ ամեն ինչ լավ է, որ վախ բոլորովին չկա...»:*

Այունեցին ի ծնե ռազմիկ է, անձնվեր ռազմիկ... Խաղաղության օրերին անխոնջ աշխատող այունեցին գիտի, որ հայրենի հողը քրտինքով ծաղկում է, բայց արյունով է պահվում, գիտի, որ պապերից ժառանգածն անվնաս որդիներին ժառանգելն է իր առաջին ու սուրբ պարտականությունը, գիտի ու անվարան է՝ իր հողը թուրքից պաշտպանելն այլընտրանք չունի:

Մարատը զոհվել է հոկտեմբերի 20-ին:

Մարմինն ամփոփված է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հակոբջանյան Տիգրան Դրաստամատի

Ծնվել է 1978 թ. ապրիլի 28-ին Բաքու քաղաքում: Երեք տարի այնտեղ ապրելուց հետո տեղափոխվել են Հայաստան, հաստատվել Սիսիանի Որոտան բնակավայրում: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: Տուն են դրել, հույս փայփայել, հող հերկել, դաշտ ցանել, ազգին զավակ պարգևել, բայց այդ ամենն էլի համարում էր քիչ, քիչ՝ հայրենիքի համար: Երկու տարվա պարտադիր ծառայությունը համարում էր քիչ, այդ իսկ պատճառով աշխատանքի է անցել Նորավանի զորամասում՝ որպես հրանոթի վարորդ:

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

Նելլին ամուսնու մասին խոսելիս հեկեկում է. *«Տիգրանին նկարագրող ամենաճիշտ հատկանիշն ազնվությունն է, նա ազնիվ էր բոլոր հարաբերություններում, ազնիվ ամուսին էր, ազնիվ ընկեր, ազնիվ աշխատակից, ազնիվ եղբայր ու որդի:*

Սեպտեմբերի 27-ի չարաբաստիկ առավոտը զանգահարեցին զորամասից, ասացին, որ տագնապ է, հավաքեց պայուսակն ու դուրս եկավ, սկզբում Սիսիանի մերձակա դիրքերում էր: Մի օր էլ զանգահարեց ու ասաց, թե Մարտակերտ է գնում: Պատերազմից առաջ էլ գիտեի, որ նա քաջ տղամարդ է, բայց պատերազմի օրերին նրա արիությունը զարմացնում էր ինձ: Ես բուժքույր եմ հոսպիտալում, հազարավոր կյանքեր ենք փրկել. համոզված էի, որ Տիգրանին ոչինչ չի լինի: Նրա հետ հեռախոսային յուրաքանչյուր խոսակցությունից հետո մի տեսակ առույգանում էի, որովհետև նա կարողանում էր վստահություն ներշնչել: Հոկտեմբերի 20-ին նրանք պիտի վերադառնային, սպասում էի: Ականատեսները պատմում են, որ արդեն պատրաստվում էին ճանապարհ ընկնել, երբ անօդաչուն նկատել է նրանց: Անձնակազմից 6 հոգի զոհվել են: Մեր համար ողբերգությունը կրկնակի էր, քանի որ Տիգրանի հետ զոհվել է նաև հորեղբոր որդին՝ Մարատ Հակոբջանյանը»:

Նորավանի զորամասում Տիգրանին կարոտով ու ափսոսանքով են հիշում. *«Մի տեսակ մարդիկ կան, որ պատրաստ են ցանկացած դժվարության, որ երբեք չեն բողոքում, այդ տեսակի մարդ էր Տիգրանը»:*

Տիգրան Հակոբջանյանը զոհվել է հոկտեմբերի 20-ին Մարտակերտում:

Աճյունը հողին է հանձնվել 2020 թ. հոկտեմբերի 23-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հայրապետյան Արշակ Վանուշի

Երկրի, հողի, հայրենիքի պաշտպանն իր պարտքը կատարելիս երբեք չէր թերացել, հարգված զինծառայող էր ու սիրող հայր, ով որդիների դաստիարակության հիմքում սեփական հայրենիքի ու տան պաշտամունքն էր դրել:

Ծնվել է 1977 թ. հոկտեմբերի 14-ին Սիսիանի շրջանի Տոլորս գյուղում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

Ամուսնացած էր, ունի երկու որդի:

2013 թվականից պայմանագրային զինծառայող էր, գիտեր հայրենիքի գինն ու խաղաղության հարգը:

Երկրի, հողի, հայրենիքի պաշտպանն իր պարտքը կատարելիս երբեք չէր թերացել, հարգված զինծառայող էր ու սիրող հայր, ով որդիների դաստիարակության հիմքում սեփական հայրենիքի ու տան պաշտամունքն էր դրել:

Պատերազմի առաջին օրերից առաջնագծում էր, եղբորորդին ժամկետային զինծառայող էր, ու պայմանագրային հիմունքներով ծառայող հորեղբայրն իր պարտքն էր համարում նրա դեռատի կյանքը պահպանելը: Ձանգահարում էր եղբորը՝ հանգստացնում, ասում, որ ամեն բան լավ է ու անհանգստանալու ոչինչ չկա: Վերջին հեռախոսազանգը հոկտեմբերի 10-ին էր...

Հոկտեմբերի 14-ին Արշակի ծննդյան օրն էր, ավա՜ղ, շնորհավորանքների փոխարեն ցավակցություններ, ուրախության փոխարեն՝ մորմոքալից կսկիծ...

Միայն ամիսներ անց՝ 2021թ. հունվարի 30-ին, հողին հանձնվեց Արշակի աճյունը: Հուղարկավորությանը ներկա էին նույն խրամատում կռված ընկերները, ովքեր եկել էին իրենց երախտագիտության խոսքն ասելու հերոսին՝ իրենց կյանքը փրկելու համար:

Հուղարկավորվել է 2021թ. հունվարի 30-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հարությունյան Նարեկ Սենիկի

Ծնվել է 1988 թ. մայիսի 26-ին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում: 1995-2005 թթ. սովորել է Սիսիանի թիվ 2 դպրոցում: Այնուհետև ուսումը շարունակել է Արցախի պետական համալսարանի ճանապարհատրանսպորտային բաժնում: Առաջին կուրսից զորակոչվել է բանակ:Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Գորիսի զորամասում:

Զորացրվելուց հետո պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում՝ որպես ենթասպա:

Ամուսնացած էր, ունի երկու դուստր:

Նարեկի ու Լիլիթի ընտանիքը Սիսիանում լավ օրինակ էր հանդիսանում:

Երկուսն էլ վաղ տարիքից զրկված են եղել հայրական ջերմությունից, երկուսն էլ ամեն ինչից վեր էին դասում իրենց երեխաներին անհոգ ու պայծառ մանկություն նվիրելը:

Լիլիթի ձայնը հուզմունքից խզվում է. *«Մենք մինչև հիմա սպասում ենք, չենք հավատում, չենք ցանկանում հավատալ, երեխաներս էլ են սպասում: Այսօր էլ սպասում եմ, որ դուռը կբացվի, ու Նարեկը ներս կմտնի: Նարեկը շատ հոգատար ամուսին էր, երեխաների համար սիրող և ուշադիր հայր»:*

Պայմանագրային զինծառայողի կյանքում ընտանիքին հատկացվող ժամանակը շատ-շատ քիչ էր. Լիլիթը հիշում է, որ Տավուշում 2020 թ. հուլիսին սահմանային իրավիճակի լարումից հետո ամուսինը գրեթե տանը չէր եղել՝ անընդհատ մարտական տագնապներ, ուժեղացված ծառայություն, լարված ու անհանգիստ օրեր...

Սեպտեմբերի 27-ին Նարեկը բարձրացել էր Սիսիանի մերձակա դիրքեր, իսկ հոկտեմբերի 8-ին մեկնել Արցախ:

Մեկնելուց առաջ մի քանի րոպեով տուն էր մտել. երեխաներին չէր արթնացրել՝ հրաժեշտ չէր տվել, քանի որ համոզված էր, որ վերադառնալու է...

Զոհվել է Կարմիր շուկայի տարածքում՝ անօդաչուի հարվածից:

Այս պատերազմն առանձնացավ իր դաժանությամբ, ամենացավոտ հարցերից մեկն էլ մարմինների անճանաչելի լինելն է. 2020 թ. նոյեմբերի 28-ին ԴՆԹ հետազոտությունը հաստատել է՝ Նարեկ Հարությունյանը նահատակվել է, բայց ընտանիքում նրան դեռ սպասում են...

Աճյունն ամփոփված է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հովակիմյան Սամսոն Միշայի



Ծնվել է 1992 թ. օգոստոսի 22-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 2 հիմնական դպրոցում: Ավարտելուց հետո ծառայել է Կապանի N զորամասում: Աչքի էր ընկել իր կարգապահությամբ, արդարամտությամբ…

Պատվով պարտքը կատարելով հայրենիքի նկատմամբ՝ առաջնորդվել է այն գիտակցումով, որ հայրենիքին դեռ էլի պարտք ունի տալու, այդուհանդերձ անմիջապես ծառայության է անցել Նորավանի զորամասում՝ որպես հաշվարկի հրամանատար, ստացել՝ կրտսեր սերժանտի կոչում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան Սամսոնին կանչեցին: Սեպտեմբերի 29-ին տարան Արցախ՝ Մարտակերտ: *«Զանգում էր, երեխաներից էր հարցնում, կռվից ոչինչ չէր ասում, ասում էի՝ վերադարձիր տուն, հանդիմանում էր՝ ես իմ հայրենիքն եմ պաշտպանում, զինվորը չի կարող լքել դիրքերը: Հարցնում էինք՝ ի՞նչ կա, ասում էր՝ ցենտր ա, դա իր սիրած բառն էր, ասում էր, որ գամ, շատ բան եմ պատմելու»,* – պատմում է կինը՝ Լիլիթը:

Ընկերները պատմում են, թե ինչ խիզախությամբ և ինչ անձնազոհությամբ են տղաները պահել իրենց դիրքը: Թե ինչպես է Սամսոնն իր ջոկի վեց տղայի հետ անվրեպ կրակել թշնամուն, չեն լքել դիրքերը, չեն փախել, կռվել են մինչև վերջ: Այնքան են կրակել, որ հրանոթի փողը շիկացել էր, այնպես հմտորեն են պաշտպանվել ԱԹՍ-ների հարվածներից, որ ոչ մի զոհ չեն ունեցել, բայց թշնամին, տեսնելով, որ դիրքն անառիկ է, սկսել է ինքնաթիռից ռմբակոծել տղաների պաշտպանած դիրքը, ու վեցն էլ զոհվել են, մնացել հողի հաստ շերտի տակ…

Ընկերները կարողացել են օգնության հասնել միայն այն ժամանակ, երբ երկարատև հրետակոծությունը դադարել է, որից հետո միայն հողի տակից դուրս են բերել տղաների անշնչացած մարմինները…

Հոկտեմբերի 22-ին վեց նահատակի աճյունները հանձնվեցին հարազատներին:

2020-ի հոկտեմբերի 23-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում վեց նահատակ միաժամանակ հանձնվեց հայրենի հողին…

Սամսոն Հովակիմյանն արժանացել է բազմաթիվ շնորհակալագրերի, հետմահու պարգևատրվել «Մարտական ծառայության» մեդալով:

Հովակիմյան Վահագն Հրաչյայի

Ծնվել է 2000 թ. հուլիսի 22-ին Սիսիան քաղաքում: Մանկությունն անցել է Անգեղակոթում: Երկու տարեկանում ընտանիքի հետ տեղափոխվել է Ռուսաստան՝ Չիտա քաղաք: 2006 թ. վերադարձել է Հայաստան: Սովորել է Սիսիանի Վուրգ Ոսկանյանի անվան թիվ 4 հիմնական, այնուհետև՝ ավագ դպրոցում: Վայելել է ընկերների և ուսուցիչների սերը: Ավարտելուց հետո ընդունվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժինը: Դեռ ուսանող չդարձած՝ դեռ չվայելած ուսանող լինելու բերկրանքը՝ զորակոչվել է բանակ, դարձել զինվոր, Մատաղիսին արժանի զինվոր…

Ծառայության ընթացքում աչքի է ընկել իր ռազմական գիտելիքներով ու զարմանալի համարձակությամբ, այդ իսկ պատճառով հրամանատարությունը նշանակել է հրետանու նշանառու, որից հետո սերժանտական դասընթացների մասնակցելով՝ ստացել է կրտսեր սերժանտի կոչում, նշանակվել դիրքի ավագ:

Պատերազմի առաջին իսկ օրը Վահագնը առաջիններից էր, ով տեսավ պատերազմի ահավոր դեմքը, առաջ սլացող թշնամու բանակը. «Հադրութ» պոստում փառահեղ պայքարում էր թշնամու դեմ: Սպետեմբերի 29-31-ին Վահագնի հրաձգային վաշտն ընկել է շրջափակման մեջ: Մնալով միայնակ՝ հրամանատարի հետ երկու օր ապահովել են ծառայակից ընկերների նահանջը՝ հետ շպրտելով թշնամու 200 հոգանոց խմբի գրոհը և շրջափակումից դուրս բերել մի ողջ վաշտ: Հրամանատարական կազմը, նկատելով Վահագնի հերոսական գործողությունները, որոշել էր հենց մարտի ժամանակ նրան շնորհել լեյտենանտի կոչում, բայց ինքը հրաժարվել է՝ առավել կարևորելով մարտական գործողությունները, քան՝ կոչումները…

Հոկտեմբերի 13-ին Վահագնը մարտնչում էր՝ չհանձնվելու ու մինչև վերջ կռվելու գաղափարը որդեգրած: Ծանր կորուստներ կրելով, սակայն, ստացել է նահանջի հրաման… Ոչնչացնելով թշնամու լուրջ ռազմական տեխնիկան, ապահովել է զինակիցների նահանջը՝ հորդորելով՝ դուք գնացեք, ես կպահեմ… Ու՝ պահել է… Ինքն ընկել է, բայց Մարտակերտը հիմա մերն է…

Վիրավորված և թուրքի շունչը թիկունքին զգացող Վահագնը, չցանկանալով ընկնել նրա ձեռքը կամ գերեվարվել, վերջին նռնակով պայթեցրել է իրեն…

Աճյունն ամփոփված է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի և ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալներով:

Հովհաննիսյան Վարդան Գևորգի

Ծնվել է 2001 թ. հոկտեմբերի 4-ին Սիսիան քաղաքում: Փոքր հասակից էլ շատ է սիրվել շրջապատի կողմից, բոլորի նկատմամբ բարի էր ու կամեցող, հասնող էր ու օգնող: Սովորել է Սիսիանի թիվ 1, այնուհետև թիվ 4 դպրոցներում, որից հետո՝ Սիսիանի ավագ դպրոցում: Ավարտելուց հետո զորակոչվել է բանակ և նպատակ ուներ զորացրվելուց հետո շարունակել զինվորականի ուղին… Ավաղ, հավերժ զինվորագրվեց՝ իր հետ տանելով զինվորականի համազգեստն ու սպա դառնալու երազանքը…

Ծառայել է Ներքին Հոռաթաղի զորամասում:

Հոկտեմբերի 4-ին ծննդյան օրն էր, 19 տարեկան էր դարձել, բարի, անփորձանք, խաղաղ ծառայության մաղթանանքներ ստացել, բայց… Պատերազմն արդեն սկսված էր… Ու նոյեմբերի 3-ին ընդամենը երեք ամսվա զինծառայող Վարդանն ընկավ Մարտակերտում՝ հաղթանակի հավատով, կռիվ մղելով ոսոխի դեմ:

Մի վերջին անգամ հասցրեց զանգահարել ու մոր ձայնը լսել, հասցրեց ասել, որ չանհանգստանան հանկարծ, որ կարող է էլ չզանգի, զգում էր, որ չի հաղթահարելու մահացու վերքը, բայց մայրական սերն ավելի ուժգին էր, ու կարողացավ ուժերը հավաքել ու զանգել… Մարեց Վարդանի զանգը, կտրվեց նրա կյանքի զարկերակը…

«Վարդանը շտապում էր բանակ գնալ, դեռ զինվորական չդարձած, արդեն զինվոր էր… Փոքր տարիքից ինձ հետ զորամաս էի տանում, շփվում էր զինվորների հետ, նվագախմբի տղաների հետ կատակներ էր անում, հետներն ուրախ, աշխույժ երգեր էր նվագում, բոլորը սիրում էին Վարդանին, ինքն էլ բոլորի հետ էր կապված ու հոգով արդեն զինվոր էր, իմ հերոս զինվորս…Իսկ այսօր նույն նվագախումբը Վարդանիս համար պետական օրհներգն է հնչեցնում», – ասում է Վարդան Հովհաննիսյանի հորաքույրը՝ Արուսը, ով աշխատում է Սիսիանի զորամասի գրադարանում:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ նոյեմբերի 5-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Հովսեփյան Արամ Բենիկի

Ծնվել է 1980 թ. հունիսի 19-ին Սիսիան քաղաքում: 1987 թ. հաճախել է Սիսիանի Անդրանիկ Չորավարի անվան թիվ 3 դպրոցը, ապա ուսումը շարունակել Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

1998 թ. զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Արցախի Հանրապետությունում՝ Մարտակերտի շրջանի Եղնիկներ կոչվող զորամասում: Ծառայության ընթացքում աչքի է ընկել մարտական բարձր պատրաստվածությամբ և նվիրվածությամբ, կարգապահությամբ ու առաջադիմությամբ:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Ծառայությունից հետո, երջանկահիշատակ հոր՝ Սիսիանում հայտնի վարպետ Բենիկից սովորեց պատ շարել, սվաղ անել, սովորեց նվիրվել ձեռնարկած գործին, նրա հետ եկեղեցի, տուն կառուցեց, ինքն էլ դարձավ վարպետ, ու այնպիսին, որ Տաթևի վանքի վերանորոգման ժամանակ վանահայրը նրան էր վստահել բեկորված, փշրված խաչքարի վերականգնումը, ինչն Արամն արել էր անթերի:

6-7 տարի աշխատեց Հադրութում, հավանեցին ձեռքի գործը, առաջարկեցին մնալ և ապրել այնտեղ, բայց չցանկացավ հեռանալ Սիսիանից, որ իրենցն էր, թանկ էր ու նվիրական:

2009 թ. Արամն ընդունվել է Սիսիանի տնտեսագիտական քոլեջի «Ֆերմային տնտեսության կազմակերպում» բաժին, որտեղ դրսևորել է բարձր առաջադիմություն:

2017 թ. ընդունվել է ՀՀ ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղի «Հաշվապահական հաշվառում» բաժինը: Երրորդ կուրսում էր, երբ սկսվեց պատերազմը:

2020 թ. սեպտեմբերի 30-ին Նորավանի զորամասում էր, իսկ հոկտեմբերի 3-ին տեղափոխվել էր Ջրական:

Հոկտեմբերի 9-10-ը հերթափոխ պիտի լիներ, տղաները պիտի վերադառնային: Վերջին զանգը հոկտեմբերի 9-ին եղավ… Հոկտեմբերի 10-ից հետո այլևս ոչ մի լուր…

Անլուր տառապանքներից ու երկարատև փնտրտուքներից հետո Արամի մասունքները հողին է հանձնվել 1 տարի 3 ամիս անց՝ 2022 թ. հունվարի 18-ին: Հարազատներն ու ընկերները, նրա հետ առնչված յուրաքանչյուր ոք ջերմագին սիրով ու ափսոսանքով են հիշում Արամին, բարձր գնահատում նրա արիությունը, հերոսական սխրանքը, մարտի դաշտն ու իր հրամանատարին չլքելու խիզախությունն ու անկոտրում կամքը:

Հուղարկավորված է Սիսիանի քաղաքային պանթեոնում:

Մայիլյան Ռուբիկ Հովհաննեսի

Ծնվել է 1969 թվականի մայիսի 21-ին Սիսիանի շրջանի Մուցք գյուղում: Սովորել է տեղի միջնակարգում, ապա՝ Սիսիանի քոլեջում: Ծառայել է խորհրդային բանակում:

Ամուսնացած էր, ունի երկու որդի:

Արցախյան շարժման սկզբում 20-ամյա երիտասարդ էր:

Ռուբիկ Մայիլյանը ևս միանում է շարժմանը: Հետո, երբ շարժումը վերածվում է զինված պայքարի, միանում է ընկերներին՝ մասնակցում Քարվաճառի ու Մարտակերտի ազատագրման մարտերին:

Ռուբիկ Մայիլյանի մասին Անդրանիկ Մայիլյանն է պատմում. *«Ես ու Ռուբիկը միշտ միասին ենք եղել. միասին 89-ին միացանք շարժմանը, միասին կամավորագրվեցինք, միասին մեկնեցինք Մոսկվա՝ մասնակցելու բարձրագույն սպայական դասընթացներին, միասին սպայական ծառայության անցանք Սիսական գնդում: Պատերազմի ամբողջ ընթացքը միասին ենք անցել, հետո հարաբերական խաղաղության տարիներին երկուսս էլ զբաղված էինք բանակաշինությամբ, երկուսիս նպատակը հզոր բանակ ունենալն էր: 2011 թվականին Ռուբիկը զինվորական թոշակի անցավ: 2016-ի ապրիլին թշնամին կրկին գլուխ բարձրացրեց, էլի երկուսով մեկնեցինք մարտադաշտ:*

Սեպտեմբերի 27-ին երկուսս էլ Երևանում էինք, միասին եկանք Սիսիան, ցանկանում էինք կամավորական ջոկատներում ընդգրկվել, բայց զինկոմիսարիատից մեզ կանչեցին ու որպես սպաներ հանձնարարություններ տվեցին: Սկզբում Սիսիանի մերձակա դիրքերում էինք: Հոկտեմբերի առաջին օրերին էլ միասին մեկնեցինք Արցախ: Մարտական հանձնարարություն ունեինք՝ հասնել Հադրութ: Մի քանի անգամ փորձեցինք, բայց չհաջողվեց: Հոկտեմբերի 10-ին Հադրութ տանող առաջին ոլորաններն անցանք, երկրորդն անցնելիս մեզ վրա գրոհ սկսվեց: Հրաման ստացանք հետ վերադառնալ: Վերադարձի ճանապարհին թշնամու անօդաչուները սկսեցին ռմբակոծել մեր մեքենաները... Մեր շարասյան դեմ թշնամին «Սմերչ» համակարգ կիրառեց: Մեքենաներից իջանք... Երբ զորքն արդեն պատսպարված էր, վերադարձել եմ մեքենաների մոտ, ուսումնասիրել տարածքը, ոչ մի կենդանի մարդ չեմ տեսել. հասկացա, որ Ռուբիկը զոհվել է... Հավաքել եմ բոլոր մասունքները՝ մարմինների կտրված, այրված, ածխացած մասեր: Գտա Ռուբիկի մարմինը, նստեցի կողքին... Երբ Ռուբիկը զոհվեց, կյանքում ամբողջ ունեցածս միանգամից կորցնելու զգացողություն ունեցա, մեջքս կոտրվեց...»:

Մայոր Ռուբիկ Մայիլյանի աճյունը հողին է հանձնվել նոյեմբերի 6-ին՝ Սիսիանի քաղաքային պանթեոնում: Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով:

Մանուկյան Իգոր Համլետի

Ծնվել է 1977 թ. օգոստոսի 3-ին Բաքու քաղաքում: 1988 թ. ընտանիքը տեղափոխվել է Սիսիան: Ավարտելով թիվ 4 հիմնական դպրոցը, զորակոչվել է բանակ՝ ծառայել Սովետաշենում, զորացրվելուց հետո կազմել ընտանիք: Այնուհետև սկսվել է նրա կյանքի ոդիսականը: Մեկնել է ՌԴ՝ աշխատել շինարարական կազմակերպություններում, տարիներ անց վերադարձել է հայրենիք և անմիջապես ծառայության անցել ՀՀ ԶՈՒ-ում՝ պայմանագրային զինծառայող: Ունեցել է չորս զավակ, ապրում ու արարում էր նրանց համար, յուրաքանչյուր զավակի հետ կապված բազում ծրագրեր ու նպատակներ ուներ, շատ էր ուզում տեսնել ու ապրել այդ օրերը… Կապրեր ու կտեսներ, եթե չլիներ պատերազմը… *«Գնամ, որ երեխաներիս հերթ չհասնի»*, – Իգորն ուզում էր, որ պատերազմն իրենով ավարտվեր, որ իր տղաներին պատերազմը բաժին չընկնի:

Ազնիվ, շիտակ, անկեղծ, մարդամոտ բնավորության համար սիրվեց, հարգվեց, գնահատվեց: Ամեն ինչ անում էր և՛ հայրենիքի, և՛ ընտանիքի, և՛ զավակների համար:

«Իգորը նվիրյալ, բարեխիղճ, պարտաճանաչ զինվորական էր, ընտանիքի հրաշալի հայր, լավ ընկեր ու լավ մարդ: Պատերազմի ժամանակ կռվել ենք Հադրութ-Ջրական-Ֆիզուլի հատվածներում: Կռվում էր ոչ միայն հայրենիքի, այլև՝ իր ընտանիքի, իր հարազատների և հայրենակիցների համար, պաշտպանում էր նրանց խաղաղ ապրելու իրավունքը: Թեև շարքային զինվորական էր, և որևէ կոչում չուներ, նրա ամենաբարձր կոչումը հենց զինվորական լինելն էր, գնդացրորդ էր, ու բարձր պահեց այդ կոչումը: Իր զավակները կարող են հպարտանալ իրենց հայրիկով, իր ընտանիքը թող պատվով կրի նահատակի ընտանիքի խաչը», – պատմում է մայոր Հարություն Հակոբյանը:

Ծառայության մեջ էր, երբ պատերազմը սկսվեց: Հետո ծանր, մղձավանջային օրեր եկան, հետո նրա զոհվելու գույժը եկավ, ու գրեթե երեք ամիս նրա աճյունը գտնելու տառապանքը…

Իգորի վերջին զանգը հոկտեմբերի 15-ին էր՝ Հադրութից: Չցանկանալով նահանջել՝ նա իր ընկերների հետ միացել է ֆիդայիների ջոկատին և պայքարել մինչև վերջ:

Նրա դին Հադրութից դուրս են բերել դեկտեմբերի 4-ին, իսկ 2021-ի հունվարի 11-ին ԴՆԹ անալիզի շնորհիվ պարզվեց նրա ինքնությունը:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021թ. հունվարի 14-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մանուկյան Նարեկ Սուրենի

Ծնվել է 2000թ. դեկտեմբերի 2-ին Սիսիանում:

Երկու տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Երևան: Սովորել է Երևանի թիվ 191 միջնակարգ դպրոցում:

Լավ ու չարաճճի աշակերտ լինելուց զատ, եղել է իր ուսուցիչների ու դասընկերների լավ ընկերն ու խորհրդատուն:

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Պոլիտեխնիկի քոլեջի ռադիոյի և էլեկտրոնիկայի բաժին: Սիրում էր անել ամեն բան՝ ինչ կապված էր տեխնիկայի հետ: Մեկ տեխնիկայի տարբեր մասեր ավելացնում էր մեկ այլ սարքի և ստեղծում նոր սարքավորում... Ցավոք ուսումը կիսատ մնաց:

2019 թ. հունվարից ծառայության է անցնում Դիլիջանում: Նարեկը մեքենա վարելուն վարժ տիրապետում էր և ծառայության ընթացքում «Գրադ» էր վարում... Բազում կյանքեր խլող պատերազմական գործողությունների սկսվելուն պես նրանց տեղափոխում են Ջրական:

Խոստացել էր, որ անպայման վերադառնալու է...

Ամեն անգամ հեռախոսով խոսելիս կոդավորված էր խոսում և ասում՝ «Մի քանի անգամ «անձրև» ա արել, մի անգամ էլ «կարկուտ...» եկավ»:

Բայց չնայած այդ «կարկուտներին», հույսով էր լցնում մոր սիրտն ու ասում.

– Մամ, չնեղվես ու լաց չլինես, ես գնացել եմ, որ գամ...

Հանձնվել չէր սիրում և դա դարձրել էր իր կյանքի կարգախոսը, դաջել էր իր մարմնին «Հանձնվել չկա» արտահայտությունը և կյանքի դժվարությունները հաղթահարել էր հենց այդ մտքով: Ու այդ մտքով էլ կռվել է թշնամու դեմ և առանց հանձնվելու կյանքը տվել հայոց հողի պաշտպանությանը:

Հոկտեմբերի 11-ին Նարեկը զոհվել է. կյանքում ընտրած կարգախոսը թույլ չէր տա հանձնվել...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մանուկյան Տիգրան Աշոտի

Ծնվել է 2000 թ. ապրիլի 12-ին Սիսիան քաղաքում: Հաճախել է Սիսիանի թիվ 1 հիմնական դպրոց, ապա ուսումը շարունակել տեղի ավագ դպրոցում:

Հաճախել է քիք-բոքսինգի Սիսիանի «Արիամարտ» կենտրոն, ճարպիկ էր ու ճկուն, ուզում էր բանակում էլ ցույց տալ իր ֆիզիկական ունակությունները…

Հայրը՝ Աշոտ Մանուկյանը, պայմանագրային զինծառայող էր Սիսիանի զորամասում, գուցե դա էր պատճառը, որ Տիգրանն ավելի վաղ էր իրեն նախապատրաստել զինվոր դառնալուն, հայոց բանակում իր սրբազան պարտքը կատարելու մտքին…

2017 թ. ընդունվել և սովորում էր Երևանի ճարտարագիտական համալսարանի ռադիոէլեկտրոնիկայի բաժնում:

2019 թ. անցավ զինվորական ծառայության հայոց բանակում՝ ծառայում էր Ջրականում: Գոհ էր ծառայությունից, նրան սիրում էին բոլորը՝ հրամանատարներից մինչև նորակոչիկներ…

2020 թ. աշնանը դաժան մարտեր են տեղի ունենում Ջրականի հենց այն հատվածում, որտեղ կռվել են Տիգրանն ու իր մարտական ընկերները: Դիմադրել են, կռվել մինչև վերջ, չեն ընկրկել, ձախողել են թշնամու՝ բլից-կրիգով պատերազմը հաղթելու զառանցանքը, զոհվել են, բայց չեն նահանջել:

Տիգրան Մանուկյանը վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 1-ին, խոսել էր բոլորի հետ…

Զոհվեց հոկտեմբերի 3-ին՝ մարտական առաջադրանք կատարելիս, զոհվեց դիրքում, հրամանատարների հետ՝ ապահովելով զինակից ու մարտական ընկերների անվտանգ նահանջը, փրկելով բազում կյանքեր…

Հետո սպասումի, փնտրտուքի ինը ամիս…

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021թ. հունիսի 14-ին: Արցախի հանրապետության պետական սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության և խիզախության համար Տիգրան Մանուկյանը հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Միրզոյան Համլետ Գրիշայի

Ծնվել է 1978 թ. հուլիսի 2-ին Անգեղակոթ գյուղում: Սովորել է Սիսիանի թիվ 3 դպրոցում, ապա տեղի պրոֆտեխնիկական ուսումնարանում, ստացել է տրակտորիստի մասնագիտություն: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Քարվաճառում: Երկու տարի ծառայելուց հետո համոզվեց, որ իր տեղը բանակում է. պայմանագրային ծառայության անցավ Սիսիանի գնդում...

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

Կապավոր Համլետ Միրզոյանին ծառայակից ընկերները կարոտով են հիշում. *«Լավ ընկեր ենք կորցրել, նրա համար հայրենիքին ծառայելուց ավելի պատվաբեր գործունեություն չկար, բարկանում էր, երբ ասում էին՝ պայմանագրայիններ-ը փողի համար են աշխատում, նրանց ընտանիքում բոլորը զինվոր էին՝ հայրը, քույրը. քույրն էլ էր այս պատերազմի ժամանակ Արցախում: Խորհուրդներ տալ չէր սիրում, բայց կրկնում էր, որ ծառայության մեջ պիտի ուշադիր լինենք, որ գործի ելքը մանրուքներից է կախված: Իր գործը գերազանց էր կատարում, մեր դիրքերում կապի խնդիրը հեշտ լուծվողներից չէր՝ ձյունն ու քամին հաճախ էին փորձում մեզ առանց կապի թողնել, բայց Համլետը եղանակին չէր նայում...»:*

2020 թ. սեպտեմբերի 27... Հոկտեմբերի 8-ին հայր ու որդի պատրաստակամ պատերազմ մեկնեցին: Արցախից զանգահարում էր, հուսադրում, հորդորում պինդ մնալ...

Համլետն ու քույրը՝ Շուշանը, Մարտունի 2-ի կռվի ամենաթեժ կետերում են եղել, կապավոր Համլետը կատարել է ոչ միայն կապավորի, այլև՝ ամեն հնարավոր ու անհնարին գործ, ինչ պատահել է: Մարտական ընկերները հետո են պատմել, որ նա ինչ ճարպկությամբ ու ինչ արագությամբ էր վիրավորներին դուրս բերել կրակի բերանից, տեղափոխել ապահով տեղ, օգնել բուժքույր քրոջը, ցուցաբերել առաջին բուժօգնություն... Քույր ու եղբայր անընդհատ միասին են եղել, իրար հետ ու իրար կողքի: Հետո եղբայրն անսպասելի անհետացել է քրոջ տեսադաշտից... Համլետը հանձնարարություն էր ստացել... Շուշանն ու Համլետն այլևս իրար չեն հանդիպել...

Վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 14-ին... Այդ օրվան հաջորդեցին ամիսներ, հարազատները հույսով ու աղոթքով բարի լուրի էին սպասում...

Չորս ամիս անց՝ 2021 թ. փետրվարի 21-ին, ԴՆԹ հետազոտությունը հաստատեց՝ Համլետ Միրզոյանը միացել է անմահների բանակին:

Աճյունը հողին հանձնվեց Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ 2021 թ. փետրվարի 23-ին: Հետմահու արժանացել է պատվոգրերի և «Մարտական ծառայության» մեդալի:

Միքայելյան Գեորգի Վարդանի

Ծնվել է 2001 թ. հունիսի 18-ին Սանկտ Պետերբուրգ քաղաքում: Երեք տարեկանում տեղափոխվել է Սիսիանի տարածաշրջանի Շամբ գյուղ: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: Շամբում բոլորը նրան «շտապ օգնություն» էին ասում, հասնում էր բոլորին, օգնում բոլորին, ու բոլորն էլ նրան էին սիրում՝ բարության, շիտակության, սրտաբացության համար: Շամբի լիճն ափից ափ լողում, անցնում էր ու գյուղի երեխաներին լողալ սովորեցնում:

Դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան, սովորել Երևանի թիվ 4 արհեստագործական ուսումնարանում՝ խոհարարական բաժնում, զուգահեռ աշխատում էր արագ սննդի կետում: 2019 թ. հուլիսի 9-ին զորակոչվեց բանակ՝ ծառայում էր Ջրականում: 2020 թ. փետրվարի 24-ից տեղափոխվեց Նուբարաշենի դիպուկահարների պատրաստման դպրոց, գերազանցությամբ հանձնեց կրակային պատրաստությունը, ստացավ երրորդ կարգի զինվորականի կոչում և հունիսի 24-ին տեղափոխվեց Արցախ՝ շարունակելու ծառայությունը:

Պատերազմի հենց առաջին օրն ընկերների հետ առաջինն իրենց վրա վերցրեցին գրոհը: Մարտի էր բռնվել ու անմիջապես էլ զոհվել…

Գեորգի Միքայելյանն ընկել է քաջի պես՝ 2020-ի սեպտեմբերի 27-ին, Ջրականի շրջանի Մաջալու գյուղի շրջակայքում: Պատմում են, որ երեք վիրավոր են եղել, երկուսին դրել են շտապ օգնության մեքենայում, ու երբ եկել են, որ Գեորգիին էլ վերցնեն, մեքենան պայթել է: Ընկերները նրա դին թաքցրել են եղեգնուտում՝ հուսալով, որ իրենց հետ կհանեն կրակագծից… Հետո միայն զինակից ընկերն է նկարագրել այն վայրը, որտեղ թաքցրել էին նրան: Յոթ ամիս հետո միայն կարողացան դուրս բերել նրա մասունքները: ԴՆԹ անալիզը հաստատվեց 2021թ. ապրիլի 23-ին:

2021թ. ապրիլի 25-ին Գեորգի Միքայելյանի մասունքներն ամփոփվեցին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Մնացականյան Նարեկ Լյովայի

Ծնվել է 1991 թ. մայիսի 17-ին Սալվարդ գյուղում: Սովորել է գյուղի հիմնական, այնուհետև Սիսիանի թիվ 4 դպրոցում: 2009 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Մատաղիսում:

2011 թ. զորացրվել և պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում:

Ամուսնացած էր, ունի մեկ որդի:

2019 թ. պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի մեդալով:

2020 թ. սեպտեմբերի 27-ին դասակի հրամանատարի տեղակալ էր, սկզբում Սիսիանի մերձակա դիրքերում էին, բայց հոկտեմբերի 8-ին՝ զինակից ընկերների հետ, մեկնեց Արցախ:

Կինը հիշում է, թե ինչ խանդավառությամբ էր ամուսինը պատրաստվում. *«Հագուստներն ու անհրաժեշտ պարագաները գնել էր, ամեն ինչը նոր, այնքան ուրախ էր, զվարթ, կատակելով, ասել-խոսելով գնաց Արցախ: Զանգահարում էր: Ասում էր՝ համոզված է, որ հաղթելու ենք, որ հաղթանակած տուն է գալու: Ամեն անգամ հորդորում էր մեր որդու՝ Էրիկի վրա չբարկանալ: Հրաշալի, հոգատար հայր ու ամուսին էր: Ասել ու ասում եմ՝ հպարտ եմ, որ Նարեկի կինն եմ, գլուխս բարձր եմ ապրելու, ամեն ինչ անելու եմ, որ մեր որդին լավ մարդ դառնա, լավ կրթություն ստանա, լավ ապրի, քանի որ համոզված եմ՝ այս կյանքում Էրիկի բարօրությունը Նարեկի ամենամեծ նպատակն էր:*

Նարեկի զոհվելու հանգամանքները պարզ չեն. վերջին անգամ նրա հետ հեռախոսով խոսել եմ հոկտեմբերի 14-ին, գիտեմ, որ պատրաստվում էր սնունդ տանել առաջնագիծ: Հեռախոսազանգերի վերլուծությունից պարզ է դարձել, որ հոկտեմբերի 15-ին էլ է զանգ կատարել: Արցախի ԱԱԾ-ից մեզ հայտնեցին, որ հոկտեմբերի 16-ին ևս Նարեկի հեռախոսից զանգահարելու ապարդյուն փորձեր են եղել: Հակված եմ մտածելու, որ զոհվել է հոկտեմբերի 17-ին, քանի որ տվյալ հատվածում այդ օրերին ինտենսիվ մարտեր չեն եղել, կարծում եմ, որ դիվերսիոն հարձակում է եղել»:

Հոկտեմբերի 14-ից հետո ընտանիքը հույսը չէր կտրում, սպասում էին ու աղոթում:

2021 թ. հունիսի 16-ին ԴՆԹ հետազոտությունը հաստատել էր. Նարեկը զոհվել է: Ընտանիքը վերջին հույսով կրկնակի հետազոտություն էր պահանջել, մեկ ամիս անց ընտանիքին ներկայացրել էին լուսանկարները: Դրանք տեսնելուց հետո ընտանիքը համոզվել էր:

Հուղարկավորվել է 2021թ. հուլիսի 23-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մնացականյան Վարդան Մուշեղի

Ծնվել է 1989 թ. հունիսի 19-ին Սիսիան քաղաքում: Սովորել է տեղի թիվ 5 դպրոցում, ապա Սիսիանի պետական քոլեջում՝ տուրիզմի կառավարում մասնագիտությամբ: 2007-2009 թթ. ծառայել է հայոց բանակում՝ Քարվաճառում :

Քոլեջն ավարտելուց հետո ծառայության է անցել 4-րդ բանակային կորպուսում՝ ավագ հետախույզ: Ստանալով կրտսեր սերժանտի կոչում, մասնակցել է դիպուկահարի դասընթացների և արժանացել մի շարք պարգևների:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

2012 թ. պայմանագրային ծառայության է անցել Եղեգնաձորի զորամասում՝ որպես հետախույզ:

2020 թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան պիտի ներկայանար Վայքի զորամաս՝ անցներ նոր աշխատանքի, ընտանիքը նրան ճանապարհեց ուրախ սրտով. միայն ժամեր անց տարածվեց բոթը՝ Ադրբեջանը պատերազմ է սկսել...

Մինչև հոկտեմբերի 9-ը Վայքի դիրքերում էր. կինը, ով իրենց երրորդ երեխային էր կրում կրծքի տակ, անհանգստանում էր, փորձում շուտ-շուտ տեղեկություններ իմանալ ամուսնու մասին. Վարդանը հանգստացնում էր՝ ամեն ինչ լավ է...

Հոկտեմբերի 9-ին Վարդանը մեկնում է Արցախ՝ խոստանալով անպայման վերադառնալ:

Ավմ՞ղ, վերջին խոստումն անկատար մնաց. հոկտեմբերի 13-ին անմահացավ. հարազատները կնոջից թաքուն էին պահում ամուսնու զոհվելու լուրը, բայց կինը զգում էր, որ Վարդանի հետ ինչ-որ բան այն չէ, զգում էր, բայց փորձում էր ինքն իրեն հուսադրել ու պայքարել երրորդ զավակի կյանքի համար...

Վարդանի նահատակվելուց հետո կինը վաղաժամ ծննդաբերել է՝ ծնվել է իրենց ընտանիքի երրորդ զավակը, ով կրում է հերոս հայրիկի անունը:

Վարդան Մնացականյանը հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ հոկտեմբերի 15-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Մովսեսյան Ներսես Պյոտրի

Ծնվել է 1990 թ. մարտի 4-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 4, ապա՝ թիվ 1 դպրոցում:

Ծառայել է Գորիսում:

Ազատամարտիկի ընտանիքում էր ծնվել, Արցախյան 1-ին պատերազմի հաղթական ընթացքն ու հաղթանակը մշտապես ոգեշնչել են Պյոտրին, իր զավակներին դաստիարակելիս փորձառու ազատամարտիկը հայրենասիրությունն է համարել գլխավոր գաղափարը:

Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո պայմանագրային ծառայության է անցել, ապա աշխատել Ռազմավարական զարգացման գործակալությունում:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Ներսեսի մասին խոսելիս բոլորն առանձնացնում են նրա ժպիտը, կինը ևս արցունքախեղդ ձայնով փորձում է պատմել, որ ամուսինը *«Մի այլ տեսակի՝ լայն ու երջանիկ ժպիտ ուներ»,* որով տարբերվում էր բոլորից:

2020 թ. սեպտեմբերի 28-ին կամավորագրվել է ու մեկնել Արցախ... Միայն Գորիսն անցնելուց հետո է զանգահարել ու տեղեկացրել կնոջը:

Արցախում, ընկերների վկայությամբ, խիզախորեն է կռվել, կատարել է ծանր առաջադրանքներ, չի երկնչել: Մեքենաներից, տեխնիկայից լավագույնս գլուխ էր հանում, պատերազմի ժամանակ դիրքից դիրք է անցել, հոսանքի գծերը սարքել, ռացիաները նորոգել, իրեն ոչինչ չի կանգնեցրել, թուրքի դիրքից զենք, 2 տանկ է քաշելով բերել, բայց դրանք մնացին կորցրած դիրքերում: Վտանգն աչքի առաջ մարտի է բռնվել իրենց զորամիավորմանը քանակով ու զինվածությամբ քառակի գերազանցող թշնամու հետ, զոհվել է հոկտեմբերի 19-ին՝ դիպուկահարի կրակոցից:

Կինը հուզվում է, չի կարողանում պատմել, բայց ուզում է շեշտենք, որ ինքը Ներսեսի կողքին չափազանց երջանիկ տարիներ է ունեցել, որ իր երեխաները հպարտանում են իրենց հայրիկով...

Ներսես Մովսեսյանի աճյունն ամփոփված է Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:

Մուրադյան Աշոտ Հովհաննեսի

Ծնվել է 2001 թ. դեկտեմբերի 30-ին Սիսիանի շրջանի Շաքի գյուղում: Չորս եղբայրներից կրտսերն էր: Գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է հայոց բանակ, որտեղ էլ աչքի է ընկել ռազմական գիտելիքներով, այնուհետև ստացել տանկիստի մասնագիտություն ու դարձել հմուտ տանկիստ: Հրամանատարական կազմն ու մարտական ընկերները սիրում ու հարգում էին Աշոտին, քանի քանիսին է փրկել թշնամու ճիրաններից, քանի ընտանիքի ծուխ է փրկել մարելուց…

Հայրենասեր գերդաստանի շառավիղ է Աշոտը, պատերազմի ահազանգին ընդառաջ նրա եղբայրը՝ Պարգևը, շտապեց զենք վերցնել ու կանգնել եղբոր կողքին, երկնքից թափվող կրակը թույլ չէր տալիս գտնել եղբորը, և Պարգևն իր հայ եղբայրների կողքին կանգնեց, մինչև կհանդիպեր Աշոտին, ով տանկով սխրանքներ էր գործում… Բայց ռազմաճակատի այլ հատվածում թշնամու անողոք կրակների դեմ պայքարելուց Պարգևը վիրավորվում է՝ այդպես էլ չհասցնելով հանդիպել Աշոտ եղբորը…

Մայրը՝ Ալինա Ղուկասյանը, Արցախյան գոյամարտի ազատամարտիկ է եղել ու հենց հայրենասիրությունն է սերմանել որդիների մեջ…Տիկին Ալինան Արցախյան գոյամարտի ժամանակ մարտնչել է հանուն հայ ժողովրդի: Եղել է հրաձիգ-դիպուկահար, անգամ՝ վիրավորվել է, բայց մնացել է շարքերում, շարունակել ծառայությունը: Մասնակցել է նաև Ապրիլյանին, այս պատերազմին էլ չէր կարող անմասն մնալ…

Ավաղ, հոկտեմբերի 24-ը վերջինը եղավ Աշոտի համար... Պարգևն այդպես էլ չհասավ եղբոր մոտ, մայրն էլ առաջնագծում զգաց, որ ծնկները թուլանում են, սիրտը տագնապում է, շունչը հատում՝ որդին էր զոհվել, հոգուց մի կտոր էր պոկվել...

Պատերազմի օրերին Աշոտ Մուրադյանը խոցել է 5 տանկ, 2 «Ուրալ», 1 ԱԹՍ, փրկել 3 վիրավոր...

Աշոտը թշնամուն ոչնչացնելու պլան ուներ ու հաղթած տուն վերադառնալու մեծ փափագ...

Հուղարկավորվել է 2020թ. հոկտեմբերի 26-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու արժանացել է ԼՂՀ «Մարտական ծառայություն», «6-րդ ՊՇ անձնուրաց պաշտպան» և ՌԴ-ի կողմից «Гвардейская звезда» մեդալների:

Մուրադյան Գարիկ Սերոբի

Ծնվել է 1964թ. հունվարի 16-ին Սիսիանի շրջանի Շաղատ գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում:

Նրան նկարագրելիս բոլորն են շեշտում բացառիկ հայրենասիրությունը, իսկ կապիտան Մուրադյանի և բանակի կապը վեր էր բոլոր տեսակի հարաբերություններից՝ բանակը նրա զավակն էր, նրա եղբայրը, պաշտամունքը:

1990 թ. սեպտեմբերին կազմավորվում էր Սիսիանի ՆԳՆ-ին կից հատուկ գունդը. Գարիկ Մուրադյանը կամավորագրվեց այդ գնդին: Եվ նշանակվում է հայրենի Շաղատ գյուղի ուղեկալի հրամանատար:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Փառահեղ է նրա մարտական ուղին. Արցախյան առաջին պատերազմում մասնակցել է Սպիտակաշենի (Աղքենդ), Քաշաթաղի (Լաչին), Հադրութի Ազոխ և Դրախտիկ գյուղերի, Ծաղկաբերդի (Գյուլիբերդ) և բազմաթիվ այլ բնակավայրերի ազատագրմանը: Մեկ համոզմունք ու հավատամք ուներ. *«Հայը պետք է իր հայրենիքն անկոտրում նվիրումով և հաղթանակի հավատով պահի»:*

1994 թ. Սիսիանի նոր կազմավորված գնդում վաշտի հրամանատար էր, հետո գումարտակի շտաբի պետ. բանակաշինության ու պետականաշինության ամենածանր օրերն էին. հայ սպան տեսնում էր ավերակների վրա կառուցվող բանակը, հավատում էր, որ ունենալու ենք հզոր ու անհաղթ բանակ...

2020 թ. սեպտեմբերի 27-ին Գարիկ Մուրադյանը կամավորագրվեց. այունեցին գիտի Արցախի գինը, գիտի թուրքին՝ տեսել է այդ ցեղի վայրագությունները, ծանոթ է դրա ձեռագրին...

Հաղթանակի հավատով էր կռվում, կռվում էր հանուն այն հողի, որն իր ու ընկերների արյունով է ազատագրվել:

Հոկտեմբերի 2-ին թշնամուն հաջողվեց դիրքային առավելություն գրանցել, Հադրութի մերձակայքում թեժ մարտեր էին՝ թուրքական հարվածային անօդաչուներն անդադար ռմբակոծում էին. ընկավ մեր հերոսը, անմահացավ՝ հաղթանակի անսասան հավատով...

Հայրենիքին մատուցած ծառայությունների համար արժանացել է ԼՂՀ «Արիության համար», ԼՂՀ «Մարտական ծառայություն», «Արցախի մայրերի երախտագիտության», ՀՀ ՊՆ «Մարշալ Բաղրամյան», «Անդրանիկ Օզանյան», «Անբասիր ծառայության համար» և այլ մեդալներով ու շքանշաններով, պատվոգրերով ու շնորհակալագրերով...

Հուղարկավորել է հոկտեմբերի 7-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ներսիսյան Պողոս Պարգևի

Ծնվել է 1969 թ. հունվարի 15-ին Սիսիանի Անգեղակոթ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետև ծառայել խորհրդային բանակում՝ Չելյաբինսկում: Զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ և ամուսնացել, ընտանիք կազմել, ունեցել երեք զավակ: 2003 թ. զինվորական ծառայության մեջ էր, պայմանագրային էր. 3 տարի ծառայել է Նորավանի զորամասում՝ վարորդ, այնուհետև 4 տարի Սիսիանի գնդում՝ դիրքերում հերթապահում էր: Յոթ տարի զենքը ձեռքին է եղել, յոթ տարի ապրել է զինվորի կյանքով:

«Բարի, կենսուրախ, հումորով»,- այսպես են բնութագրում նրան ճանաչողները:

Պայմանագրային ծառայությունից հետո անցել է աշխատանքի ՀԷՑ-ի «Տաթև» մասնաճյուղի «Սիսիան» էլեկտրացանցում՝ կռունկավար:

2020 թ. սեպտեմբերի 27-ին առավոտ վաղ Պողոսն աշխատավայրից զանգահարել է կնոջը՝ Թամարային, հայտնել պատերազմի լուրը և խնդրել զգույշ լինել: Պողոսի տղան՝ Պարգևը, Սիսիանի զորամասում պայմանագրային զինծառայող էր և պետք է սնունդ հասցներ Սիսիանի դիրքեր: Սեպտեմբերի 30-ին Պարգևի իրերն էին հավաքում, ուսապարկը դասավորում: Պողոսն աչքերը լցրեց, ասաց՝ մի դասավորի, ես չեմ կարող տեղս հանգիստ նստել, ես եմ գնալու: Երբ հիշեցրին տարիքը, ասաց՝ կապ չունի, ես չեմ կարա գլուխս հանգիստ դնել բարձին՝ իմ էրեխին ղրկեմ գյուլի բերանը:

Հոկտեմբերի 1-ին տնից դուրս է եկել, ուրախ տրամադրությամբ, հրաժեշտ տվել թոռներին, խոստացել երեկոյան գալ:

Վարորդ էր սկզբում Նորավանում, ապա Մեղրիում: Հետո Մեղրիից տեղափոխվեց Ջրական, որպես հրետանավոր: Վերջին զանգը հոկտեմբերի 14-ին էր:

Հարազատները նրան գտել են որոնումների 65-րդ օրը՝ Կարմիր Խաչի օգնությամբ: Ինքնաթիռի ռմբահարումից Պողոս Ներսիսյանն ու Էդգար Սարգսյանը մնացել էին հողի տակ...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ դեկտեմբերի 20-ին: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Նիկալյան Արմեն Սամվելի

...«Ախր շատ էր ասում, որ երկիրդ կյանքիցդ շատ պիտի սիրես, որովհետև մի օր հող ես դառնալու, այն հողը, որ թոռներդ պիտի սիրեն»:

Ծնվել է 1981 թ. փետրվարի 9-ին Սիսիանի շրջանի Ծղուկ գյուղում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ամուսնացել է Ծղուկում: Ջերմ սիրով էր սիրում իր բնօրրանը, աշխատանքի պատճառով տեղափոխվել էին Սիսիան, բայց չէր կտրվել գյուղից, երեք զավակի մեջ սեր էր դաստիարակում հայրենի գյուղի ու բնության հանդեպ:

«Էս ֆորմեն ամեն մեկի բանը չի, ֆորմեն հագար՝ երկրի տերը դու ես», – սիրում էր կրկնել Արմենը, ով 2009 թվականից պայմանագրային զինծառայող էր Սիսիանի զորամասում ու հայրենի Սյունիքն էր պաշտպանում:

Ծառայակիցներից երկու-երեք տարի էր մեծ, բայց ծանր հանձնարարություններն ինքն էր կատարում, որ «էրեխեքը» դժվարություն չունենան:

«Սովորեք, անընդհատ սովորեք», – հորդորում էր ընկերներին. ինքը պրպտուն միտք ուներ, դիրքում էլեկտրական հոսանք չկար, ու Արմենն ամեն օր մի հնար էր գտնում՝ հոսանք ստանալու: Դիրքապահ ընկերները հպարտանում էին՝ *«Մենք անլույս չենք մնա՝ Ծղուկի ֆիզիկոսը մեզ հետ է»:* Արմենի մասին խոսելիս մի հատկություն են շեշտում՝ սերը հողի հանդեպ՝ *«Ախր շատ էր ասում, որ երկիրդ կյանքիցդ շատ պիտի սիրես, որովհետև մի օր հող ես դառնալու, այն հողը, որ թոռներդ պիտի սիրեն»:*

Թոռներին չի տեսնի, բայց երեք զավակի սրտերում հասցրել է սերմանել անափ սեր դեպի հայրենի հողը, որի համար չխնայեց կյանքը:

Արմեն Նիկալյանը նահատակվել է 2020 թ. հոկտեմբերի 10-ին՝ Ջրականում. վերջին ժամերին նամակ էր գրել կնոջն ու խնդրել լավ նայել իրենց փոքր դստերը, եթե հանկարծ չվերադառնա...

Արմենի մարմինն ամփոփված է Սիսիանի քաղաքային պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Նիկոլյան Գարեգին Հազարապետի

Զինակից ընկերները մինչ օրս նրա սխրանքների մասին պատմություններ են պատմում: Պատմում են, թե ինչպես էր կյանքը վտանգելով՝ փրկում վիրավոր ընկերներին, թե ինչպես էր անձնազոհաբար կռիվ տալիս...

Ծնվել է 2000 թվականի փետրվարի 2-ին Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում: Երեք տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Էջմիածնի շրջանի Թաիրով գյուղ: Սովորել է Թաիրովի հիմնական դպրոցում, ապա՝ Մխիթար Սեբաստացի կրթահամալիրում:

2019 թ. ընդունվեց Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան՝ դեղագիտական ֆակուլտետ: Նույն թվականի հուլիսի 9-ին զորակոչվել է Արցախի Հանրապետության պաշտպանության բանակ: Ծառայում էր Մարտունու թիվ 2 զորամասում: Հաշված ամիսներ հետո պետք է տուն վերադառնար, սակայն ճակատագիրն այլ ուղի էր նախապատրաստել Գարեգինի համար: Արցախի դեմ սանձազերծված պատերազմի ժամանակ Գարեգինը հերոսաբար կռվել է Ֆիզուլիի շրջանում: Զինակից ընկերները մինչ օրս նրա սխրանքների մասին պատմություններ են պատմում: Հիշում են, թե ինչպես էր կյանքը վտանգելով փրկում վիրավոր ընկերներին, թե ինչպես էր անձնազոհաբար կռիվ տալիս՝ իմանալով, որ թիկունքում օգնական ուժեր չկան: *«Որդուս երազանքներն անկատար մնացին, շատ ծրագրեր ուներ ապագայի հետ կապված: Գարեգինս ծառայել է «ոչ մի քայլ հետ» սկզբունքով, մարտերի ժամանակ շատ-շատ կյանքեր է փրկել, երկու օր միայնակ է իրեն վստահված դիրքը պահել: Երբ խոսում էինք, միշտ բարձր տրամադրությամբ էր, «թշնամուն լավ ջարդ ենք տալիս»,* – ասում է մայրը: Վերջին զանգը հոկտեմբերի 25-ին էր: Գարեգինի աճյունը գտան նոյեմբերի 23-ին՝ Ֆիզուլիի տարածքում: Ծանրագույն ժամանակներ էին, երբ թույլ չէին տալիս տարածք մտնել, բայց հրամանատարը, ով լավ գիտեր Գարեգինի կռված տեղը, գտավ նրա դին...

Հուղարկավորեցին դեկտեմբերի 14-ին՝ Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով և «Արիության» մեդալով:

Պետրոսյան Արմեն Գևորգի

Ծնվել է 1995 թ. մայիսի 7-ին Սիսիան քաղաքում: Սովորել Լծենի ութամյա դպրոցում: Երեք եղբայրներից ավագն էր:

Գյուղի հիմնական դպրոցն ավարտելուց հետո սովորել է «Տիգրան Մեծ» ռազմական վարժարանում:

2012 թ. ընդունվել և 2016 թվականին ավարտել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը:

2016 թ. ծառայության է անցել Արցախի զինված ուժերում: Սկզբում՝ դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատարի պատասխանատվությունը ստանձնած Արմենը լեյտենանտի կոչումից հետո ստացել էր ավագ լեյտենանտի կոչում: Փայլուն ծառայության համար դարձել էր կապիտան, օրինակելի, խելացի, անմնացորդ նվիրումով զինվորական:

Հայրը՝ Գևորգ Պետրոսյանն ասում է, որ պատերազմից առաջ Արմենը մի քանի օրով արձակուրդ էր եկել, կապիտանի կոչում էր ստացել… Պատերազմից երեք օր առաջ վերադարձել էր ծառայության վայր: *«Պատերազմի ժամանակ կապը միշտ եղել է, զանգահարել-խոսել ենք, երբ հարցրել ենք իրավիճակից, միշտ ասել է՝ հաղթելու ենք, երբ խոսք է եղել հրադադարի մասին, Արմենն ասել է՝ թող իրենք մեզանից հրադադար խնդրեն, մենք հաղթելու ենք… Այդքան հավատում էր մեր հաղթանակին: Մեզ հետո պատմել են, որ երբ որոշ դիրքապահներ հարցրել են, թե դիրքից ո՞նց իջնեն, Արմենն ասել է՝ դիրքից չեն իջնում, դիրք բարձրանում են… Արմենս հավերժ մնաց իր դիրքում…»:*

Արմենի կրտսեր եղբայրը պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել հենց այն զորամասում, որտեղ աշխատում էր Արմենը:

Զոհվել է Մարտակերտում՝ աննահանջ պաշտպանելով իրեն վստահված դիրքը: Նա շատ մեծ դեր ունի Մարտակերտն անառիկ պահելու կռվում, քանի որ մարտը վարել է գրագետ, հաշվարկված, խելացի, ճիշտ ու նպատակային կրակահերթերով, ինչի արդյունքում կարողացել է տանկ խփել, զինամթերքն անտեղի չվատնել, իր մարտկոցից որևէ զոհ չտալ:

Արմենի զոհվելուց հետո էլ կրտսեր եղբայրը շարունակել է ծառայել նույն զորամասում և պահել հենց այն դիրքը, որը պաշտպանելիս հերոսաբար ընկել է Արմենը:

Հուղարկավորվել է 2020 թ. հոտեմբերի 17-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

Պետրոսյան Վաչե Արարատի



Ծնվել է 1996 թ. դեկտեմբերի 9-ին Սիսիանի շրջանի Իշխանասար գյուղում: Բարձր առաջադիմությամբ ավարտել է գյուղի դպրոցը, սովորել և գերազանցությամբ ավարտել ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Կովկասագիտություն» բաժինը, ապա շարունակել կրթությունը նույն բաժնի մագիստրատուրայում: Օգտվելով տարկետման հնարավորությունից՝ ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան. մեկ տարի անց՝ գերազանց ավարտելով ռազմական համալսարանը, զորակոչվել է բանակ՝ որպես սպա ծառայել Կապանի զորամասում:

Վաչեի մասին մեզ եղբայրն է պատմում՝ *«Իմ եղբայրն ամեն տեղ լավագույնն էր»:*

Կապանի զորամասի հրետանային մարտկոցի հրամանատար, կապիտան Արամ Մանուկյանը հուզվում է Վաչեի մասին խոսելիս. *«Մասնագիտության մեջ գերազանց, զարգացած ու պատրաստված սպա էր, չնայած, որ ինքը կադրային սպա չէր, մեկ տարի էր սովորել: Քաջատեղյակ էր պատմությանը, իր վարած դասերի ժամանակ թերություններ չէր հանդուրժում: Կոլեկտիվին նվիրված, գիտակ, հրամանատարության և զինվորների հարգանքը վայելող, կյանքով լի տղա էր: Սեպտեմբերի 27-30-ը անդադար, առանց քնելու վարել է մարտական գործողությունները, անսխալ ու հմուտ ղեկավարել մարտը: Մինչև սեպտեմբերի 30-ն ինքն ու իր դասակն անվնաս էին, բայց տեղափոխության ժամանակ թշնամու անօդաչուն նկատել է ու խփել մեքենային»:*

Պատերազմը խլում է լավագույններին. 2020 թ. սեպտեմբերի 30-ին զոհվում է լեյտենանտ Վաչե Պետրոսյանը՝ երիտասարդ հայ սպան, ով իր երկրին սիրահարված էր պատանու խենթությամբ և պատմաբանի իմաստնությամբ:

Հոկտեմբերի 3-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում մայր հողին հանձնվեց 24-ամյա Վաչե Պետրոսյանի աճյունը՝ զինվորական, ով փայլուն կերպով է կատարել զինվորի, սպայի ու հայի իր առաքելությունը... Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Պողոսյան Վրեժ Սեյրանի

Ծնվել է 1992 թ. հուլիսի 1-ին Սիսիանի շրջանի Ույծ գյուղում: 2000 թ. ընտանիքը տեղափոխվել է Արցախի Քաշաթաղի շրջանի Սարատակ գյուղ: Ավարտել է Սարատակի միջնակարգ դպրոցը և ընդունվել Արցախի պետական համալսարանի նախնական զինվորական և ֆիզիկական պատրաստության ֆակուլտետ: 2010 թ. զորակոչվել է բանակ, ծառայել Ջրականի զորամասում:

Ապրիլյան պատերազմի ժամանակ, երբ հայրը մեկնել է առաջնագիծ, ինքն հետևել է նրան: Հայրը որդուն հետ չպահեց, չարգելեց, ընդհակառակը՝ խրախուսեց... Ապրիլյանից հետո Վրեժն աշխատանքի է անցել Բերձորի դպրոցում՝ տնտեսվար, ապա աշխատել Բերձորի ոստիկանությունում, հետո տեղափոխվել փրկարար ծառայություն: Մասնագիտությամբ աշխատելու մղումը նրան տարել է Իշխանաձորի դպրոց, որտեղ էլ աշխատել է ռազմագիտության ուսուցիչ: 2018-ին տեղափոխվել է Սիսիան և ծառայության անցել Նորավանի զորամասում: Դիպուկահար էր, իր մասնագիտությանը տիրապետում էր գերազանց: Երկու տարի Նորավանի զորամասում աշխատելուց հետո վեց ամսով վերապատրաստվել է Երևանում և վերադարձել զորամաս: Նրան արդեն ներկայացրել էին լեյտենանտի կոչման, կոչումը ստացավ, բայց չկարողացավ վայելել...

Վրեժ Պողոսյանին ճանաչողների աչքերն ամիսներ անց էլ արցունքոտվում են նրա անունը լսելիս. *«Վրեժն իր կյանքը զոհել է հանուն բոլորիս, ու մենք՝ բոլորս, պիտի ապրենք հանուն նրա պես հերոսների հիշատակի, պիտի հզոր երկիր ունենանք, որ կարողանանք վրեժ լուծել»,* – ասում է ընկերը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին դիպուկահար Վրեժը զորամասի կազմում մեկնեց Արցախ:

Մարտադաշտում մորաքրոջ տղայի՝ Արայիկ Սաֆյանի հետ էր, նրա ծառայակիցները հիշում են Վրեժի մարտակոչը՝ *«Մեր մեջ հետ գնացող չպիտի լինի, ով հետ գնա՝ ամո՛թ...»:*

Հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուի հարվածից զոհվում է Վրեժը, բայց ընտանիքի ցավը բազմապատկվում է՝ նույն խրամատում, անմահանում է նաև մորաքրոջ որդին՝ Արայիկը:

2016 թ. ապրիլյան մարտական գործողությունների ժամանակ ընտանիքը Վրեժից մի քանի օր լուր չի ունեցել, բայց Վրեժն ու ընկերներն անվնաս վերադարձել են:

Ներկայումս, անգամ մասունքները հուղարկավորելուց հետո, ընտանիքը չի հավատում՝ սպասում է...

Հուղարկավորվել է հոկտեմբերի 12-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:

Սարգսյան Էդգար Դավիթի

Ծնվել է 1979 թ. հուլիսի 17-ին Դարբաս գյուղում: Սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, որից հետո ուսումը շարունակել Սիսիանի պետական քոլեջում: Նույն տարում էլ զորակոչվել է բանակ, պատվով ծառայելուց ու վերադառնալուց հետո զբաղվել է բազմանդամ ընտանիքի հոգսերով՝ երեք անչափահաս եղբայրների խնամքը նրա ուսերին էին: Էդգարը զբաղվել է տարատեսակ գյուղատնտեսական աշխատանքներով, ինչպես նաև զբաղվել Դարբաս համայնքի հոգսերով՝ ընտրվելով գյուղի ավագանու անդամ:

Պատերազմի հենց առաջին իսկ օրվանից կամավորագրվել է որպես հրետանու վարորդ, որպեսզի եղբորը չտանեն, ինքը շտապեց ռազմի դաշտ... Հոկտեմբերի 1-ին արդեն Նորավանի զորամասում էր, ապա զորամասի ջոկատներից մեկի հետ՝ Մեղրիի դիրքերում...

«Պատերազմի ընթացքում մեզ լուրեր էին հասնում, որ մարտադաշտից փախչողներ, դասալիքներ կան. Էդգարին ասում էի 14 օր մնացել ես, հերիք է, դու էլ վերադարձիր: Ինքն ասում էր՝ բա որ բոլորը վերադառնան, ո՞վ է պաշտպանելու երկիրը:

Էդգարը կարծես կանխազգում էր իր հետ կատարվելիքը, մեզ հիշեցրել էր 5-6 տարի առաջվա իր ծանր ավտովթարի մասին, երբ ոտքի մեջ երկաթ էին տեղադրել ու ասել, եթե իրեն ինչ-որ բան պատահի, էդ երկաթով կգտնեն: Ողջ դառնությունն այն է, որ այդպես էլ եղավ: Զոհվելուց երկու ամիս հետո է գտնվել նրա աճյունը: Որոնողներն առաջինը երկաթն են նկատել ոտքի մեջ, ու եղբայրները չեն էլ սպասել որևէ անալիզի պատասխանի. Էդգարի ոտքի մեջ ամրացված երկաթն անհերքելի պատասխանն էր», – պատմում է նրա կինը՝ Քրիստինեն:

Վերջին անգամ կնոջը զանգահարել է հոկտեմբերի 15-ի առավոտյան, ասել՝ Գորիսի մոտակայքում են, բայց արդեն Ջրականում էր: Ընկերները հետո պատմել են, որ նա իր զրահաբաճկոնը, գլխարկը, զինվորական սապոգները բաժանել է երիտասարդ զինվորներին, ասել՝ նրանք ջահել են, թող ապահով լինեն, ես մեքենայի մեջ եմ լինելու, ինձ բան չի պատահի...

Երկու ամիս նրան փնտրեցին ամեն հնարավոր ու անհնարին տեղերում, էլ դիահերձարաններում, էլ գերիների մեջ, էլ՝ զոհվածների, էլ՝ վիրավորների, բայց գտան հենց այն նույն վայրում, որտեղ զոհվել էր...

Դեկտեմբերի 20-ին Էդգար Սարգսյանի աճյունն ամփոփվեց Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Սարգսյան Նարեկ Ջիվանի

Ծնվել է 1993 թ. դեկտեմբերի 29-ին Սիսիան քաղաքում: Ավարտելով Սիսիանի թիվ 4 հիմնական դպրոցը՝ զորակոչվել է բանակ, իսկ զորացրվելուց հետո ծառայությունը շարունակել Սիսիանի զորամասում, պայմանագրային զինծառայող:

Նարեկի մայրը՝ տիկին Լուիզան, պատմում է՝ *«Նարեկս Սիսիանի գնդում էր աշխատում, սիրով էր գնում իր գործին, մայիսի 6-ին կլրանար վեց տարին, որ այդտեղ ծառայում է... 2020 թ. մայիսից դիրքերում էր, մի քանի անգամ էր տուն եկել: Սեպտեմբերի 27-ին էլ երկու օրով դիրքերից իջավ, որ մասնակցեր քեռու տղայի հոգեհանգստի և հուղարկավորության արարողություններին. նա էլ պատերազմի առաջին զոհերից էր: Մեկ այդ ժամանակ ենք Նարեկիս տեսել, մեկ էլ հոկտեմբերի 8-ի գիշերը: Եկավ տուն, ասաց՝ մեզ տանում են Արցախ. հաջորդ օրը՝ գիշերը, Հադրութում զոհվել է: Վերջին անգամ իր հետ խոսել ենք հոկտեմբերի 8-ին...»*, – պատմեց Նարեկի մայրը:

Նարեկը 2017 թ. դեկտեմբերին էր ամուսնացել, ունի երկու տարեկան դուստր:

«Ամսի 8-ին Սիսիանի դիրքերից իջնելուց զանգել ասել էր, որ տանելու են Արցախ, դե, քանի որ զորամասը մեր տանը մոտ է, վազելով եկել էր տուն: Ասել էր՝ երեխուն չքնացնեք, որ գամ, տեսնեմ, բայց մինչև եկավ, երեխան քնած էր...

Մինչև ժամը 3-ը մնաց տանը, մինչև զանգեցին ու ասացին՝ մեքենաները շարժվում են: Երեխան քնած էր, երկար նայեց ու գնաց...», – պատմում է զոհվածի կինը՝ Տաթևը:

«Հոկտեմբերի 13-14-ն էր, իմացանք, որ Նարեկը զոհվել է, մարմինը բերում են, հետո զանգել էին իրենց տուն, ասել՝ հազար ներողություն, ձեր տղան Ստեփանակերտի ռազմականում է, ողջ է: Հաջորդ օրն իմացանք, որ դա էլ է սխալ, մահացել է, ուղղակի դին չեն գտնում: Հոկտեմբերի 27-ին նոր մարմինը բերեցին», – պատմեց Նարեկի ընկերը՝ Արմենը:

Տաթևը ևս շեշտեց, որ ամուսնու մահվան գույժը լսելուց հետո սկսել են փնտրել նրան, հետո 17 օր սպասել են, մինչև կստանային ԴՆԹ-ի անալիզի պատասխանը:

Հուղարկավորված է հոկտեմբերի 28-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սաֆյան Արայիկ Հովհաննեսի

Ծնվել է 1989 թ. մայիսի 3-ին Բռնակոթ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Բռնակոթի միջնակարգ դպրոցում: 2006-2010 թթ. սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում: 2010 թ. գործուղվել է Արցախ, յոթ տարի ծառայել Մարտունու զորամասում: 2017 թ. նշանակվել է Նորավանի զորամասի հրաձգային վաշտի հրամանատար:

Զինվորական դառնալն Արայիկի մանկության երազանքն էր. եղբայրը պատմում է, որ դպրոցական տարիներին նրա դասընկերներից շատերն էին երազում զինվորական դառնալու մասին, և դեռ պատանի Արայիկն իր կյանքը պատկերացնում էր միայն որպես զինվորական:

2016 թ. վաշտի հրամանատար Արայիկ Սաֆյանը մասնակցել է Ապրիլյան պատերազմին:

2020 թ. հոկտեմբերի 3-ին Արայիկ Սաֆյանը մեկնեց ռազմաճակատի հարավային հատված՝ Ջրական:

Համարձակ, նախաձեռնող, խելացի զինվորական էր. նրա հրամանատարությամբ վաշտը թշնամու շրջափակման-ոչնչացման մի քանի գործողություն է կատարել, որոնք ավարտվել են հաջողությամբ: Հոկտեմբերի 9-ին կապիտան Սաֆյանի գլխավորած վաշտը վերադարձել է պաշտպանության տեղամաս: Մեկ շաբաթ առանց հանգստի մարտական գործողություններ վարած սպան եկել էր հանգստանալու, եկել էր հպարտ, որ կարողացել է թշնամուն մարդուժի մեծ վնաս պատճառել...

Հոկտեմբերի 10-ին թշնամու անօդաչուն թիրախավորում է այն խրամատը, որում կապիտան Սաֆյանն էր. զոհվում են շատերը, նահատակվում է նաև հայրենասեր, նպատակասլաց, խելացի կապիտան Արայիկ Սաֆյանը:

Երիտասարդ սպան բազմաթիվ երազանքներ ու նպատակներ ուներ, որոնցից մեկն էլ կին ու երեխաներ ունենալն էր...

Զինվորական ծառայության ընթացքում բազմիցս արժանացել է պատվոգրերի և մեդալների. 2011-ին՝ «ՀՀ զինված ուժեր 20 տարի», 2016-ին՝ «Անբասիր ծառայության համար»:

2020-ի սեպտեմբերի 18-ին պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով:

Հուղարկավորվել է հոկտեմբերի 12-ին Սիսիանի քաղաքային պանթեոնում:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սաֆյան Գեղամ Սերժիկի

Ծնվել է 1984 թ. ապրիլի 13-ին Բռնակոթ գյուղում:

Ընտանիքը հետագայում տեղափոխվել է Սիսիան քաղաք:

Կրթությունը ստացել է Սիսիանի թիվ 3 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո՝2001թ. ընդունվել է Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ: Ուսումնառության երկրորդ տարում զորակոչվել է բանակ՝ 2002-2004 թթ. ծառայել Արցախում՝Ասկերանի զորամասում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը՝ ստացել ատամնատեխնիկի մասնագիտություն, բայց իր կոչումը հայրենիքին ծառայելն էր: 2007թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում: Աշխատելուն զուգահեռ ուսում է ստանում Ագրարային համալսարանում: 2012-ից մինչև 2020-ի մայիսը ծառայություն է իրականացրել հետախուզությունում՝ կապի ավագ օպերատոր: Ծառայության հիմնական վայրը՝ Հադրութի և Մարտակերտի շրջաններն էին: 2020-ի մայիսից փոխեց զորամասը՝ նպատակ ունենալով խորացնել ուսումը ռազմական գործում:

Ամուսնացած էր, ունի մեկ դուստր:

Սեպտեմբերի 27-ին սկսած պատերազմը կիսատ թողեց հայրենասեր ու ազգանվեր հայորդու նպատակները, երազանքները: Առանց մի վայրկյան տատանվելու մեկնեց Արցախ՝հայրենի հողն ու ջուրը պաշտպանելու:

Հոկտեմբերի 8-ին տղաներն իջել են Սիսիանի դիրքերից: Երեկոյան տանից դուրս գալիս պատգամել է միայն, որ իրենց լավ պահեն... Զանգահարել է հաջորդ օրը՝ հոկտեմբերի 9-ին, ասել, որ Կարմիր շուկայում են...

Դա եղել է նրա վերջին զանգը: Հոկտեմբերի 10-ին թշնամու ԱԹՍ-ն հարվածել է մարտական գործողությունների պատրաստվող և զինվորներ տեղափոխող ավտոշարասյանը: Առավոտյան փնտրել են նրան ու գտել արդեն զոհված... Հետագայում վաշտի հրամանատարը, ընկերները պատմել են, որ Գեղամը, լսելով այրվող ընկերների օգնության կանչերը, ճիչերը, հետ է գնացել՝ նրանց օգնելու, ու հենց այդ պահին էլ արկի բեկորը երկու տեղից կպել է նրան...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու արժանացել է «Արիության» և «Մարտական ծառայության» մեդալների:

Սիմոնյան Ռաֆիկ Սարոյի

Ծնվել է 1994 թ. նոյեմբերի 28-ին Սիսիանի շրջանի Սպանդարյան գյուղում: 2000 թ. ընտանիքը տեղափոխվել է Մասիս քաղաք: Սովորել է Մասիսի թիվ 3 հիմնական դպրոցում, այնուհետև թիվ 5 ավագ դպրոցում: 2011-2012 թթ. սովորել է Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում:

2012 թ. ընդունվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ:

2013թ. զորակոչվել է բանակ, ծառայել Երևանի հատուկ նշանակության զորքերում:

Ընկերներն ակնածանքով են պատմում հերոսացած Ռաֆիկի մասին. *«Ռաֆին բնութագրող ամենադիպուկ բառը պատվախնդրությունն է: Հպարտ էր, ուժեղ, հայ տղայի լավագույն հատկանիշներով օժտված: Միևնույն ժամանակ իր՝ լեռնեցու ծագումը ցույց տվող միամտություն ուներ: Նրան շատ-շատ էին սիրում: Թեև զինվորական չէր, բայց հատուկ նշանակության զորքերում անցկացրած ծառայությունը նրա վրա մեծ ազդեցություն էր թողել. վարժ տիրապետում էր բոլոր զենքերին, անգիր գիտեր զենքերի տեխնիկական բնութագրերը, ճկուն էր և շատ ուժեղ: Մենք հրաշք ընկեր ենք կորցրել, նրա նման տղաները պիտի երեխաներ ունենային՝ շատ երեխաներ, ավմ՛ղ, չհասցրեց...»:*

Մայրը որդու մասին մեզ պատմում է արցունքախեղդ ձայնով. *«Միակ որդիս էր, մի աղջիկ էլ ունեմ, ամուսնացած է, երեխաներ ունի: Ռաֆոս հրաշալի որդի էր, հրաշալի ընկեր, եղբայր ու քեռի: Սեպտեմբերի 27-ին կամավորագրվել է: Մեզ չէր ասել, որ Արցախ է գնացել: Մի օր զանգահարեցի իրեն, խնդրեց՝ չզանգեմ, որովհետև վտանգավոր է, կասկածեցի, որ Սիսիանում չէ, խոստովանեց:*

Որդիս ամբողջ պատերազմն անցել է, եղել է Արցախի գրեթե բոլոր տարածքներում: Ես չեմ կարողանում լսել նրա պատերազմական օրերի պատմությունները, միայն ձեռքս սեղմելիս միաբերան կրկնում են՝ իսկական հերոս ես ծնել, հպարտ եղիր:

Երկու օր, ընդամենը երկու օր էր մնում, որ պատերազմն ավարտվեր: Եթե երկու օր էլ դիմանար, բայց եղավ ահավորը՝ որդիս նահատակվեց»:

Սեպտեմբերի 29-ին ընկերոջ՝ Զախար Իսկանդարյանի հետ բարձրացել են Բարձրավանի դիրքեր, մնացել մինչև հոկտեմբերի 7-ը, իսկ հոկտեմբերի 8-ին, հրետանային գումարտակի կազմում, մեկնել Կարմիր շուկա, մասնակցել Մարտունու, Ֆիզուլիի մարտերին: Հրետանային գումարտակը ճանաչվել էր լավագույններից:

Զոհվել է 2020 թ. նոյեմբերի 7-ին Ննգի գյուղում: Նոյմեբերի 9-ին՝ զինադադարի օրը, նրա աճյունն ամփոփվեց Մասիսի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Սողոմանյան Մելիք Սեյրանի



Ծնվել է 2001 թ. մայիսի 14-ին Սիսիանի շրջանի Որոտան գյուղում: Մինչև 3-րդ դասարանը սովորել է Որոտանի (Ուրուտի) միջնակարգ դպրոցում:

2010 թ. ընտանիքը վերաբնակվել է Արցախի Հանրապետության Քարոտան գյուղում: Աշխատասիրության ու ձգտման շնորհիվ գերազանց առաջադիմությամբ ավարտել է միջնակարգ դպրոցն ու ընդունվել Արցախի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական բաժինը: Ցանկանում էր ֆիզիկայի ուսուցիչ դառնալ, զարգացնել ազատագրված ու իր համար հարազատ դարձած գյուղը:

2019 թ. հունիսի 15-ին զորակոչվել է բանակ: Ծառայել է Մատաղիսի զորամասում. իր գիտելիքներով աչքի ընկած երիտասարդն արժանացել է կրտսեր սերժանտի կոչման: Ընկերները կարոտով են հիշում հաղթանդամ ֆիզիկոսին, ով պատրաստակամ էր օգնելու բոլորին ու երբեք չէր դժգոհում: Հիշում են, թե ինչպես ամենածանր պահերին անգամ հույս էր տալիս ընկերներին, ինչպես էր սովորեցնում հաշվարկներ կատարել, երբեմն բարդ հաշվարկներ կատարում մյուսների փոխարեն…

Արցախյան 3-րդ պատերազմ... 31 օր Մելիքն ու ընկերները պայքարեցին իրենց դիրքում ու չլքեցին այն, 31 օր թշնամին թուրք հատուկ ջոկատայինների ու վարձկան ահաբեկիչների օգնությամբ չկարողացավ մտնել մի խրամատ, որտեղ 18-20 տարեկան հայորդիներն էին: Այդ փաստը կատաղեցնում էր թշնամուն. գրոհներն ավելի ու ավելի դաժան էին դառնում…

Մելիքի ավագ եղբայրը՝ Սասունը, առաջնագծում էր՝ Վարանդայում (Ֆիզուլի), լուրեր էին տարածվել, թե զոհվել է, բայց օրեր անց դուրս էր եկել շրջափակումից ու տուն վերադարձել: Երբ հարազատները հավաքվել էին ու հայտնել Մելիքի զոհվելու բոթը, մայրը հրաժարվել էր հավատալ՝ հույս ունենալով, որ Մելիքն էլ Սասունի պես կվերադառնա:

Մելիք Սողոմոնյանը նահատակվել է հոկտեմբերի 27-ին՝ Մատաղիսում: Զոհվել է հանուն Արցախի, հանուն իր տան...

Մելիքի մարմինը հարազատները գտել են Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքի դիահերձարանում՝ 2020 թ. նոյեմբերի 20-ին:

Հերոսի աճյունն ամփոփված է Սիսիանի քաղաքային պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» և «6-րդ ՊՇ Անձնուրաց պաշտպան» մեդալներով:

Ստեփանյան Կարեն Ռուբիկի

Ծնվել է 1979 թ. մարտի 11-ին Սիսիանի Շաղատ գյուղում: Սովորել և գերազանց առաջադիմությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Օմարում:

Ամուսնացած էր, ունի երկու երեխա:

Ընտանիքի միակ որդին էր ու ազգանունը շարունակելու առաքելությունը նրա ուսերին էր:

Անին ամուսնու մասին կարոտով ու ցավով է խոսում. *«Հրաշալի ամուսին եմ ունեցել, նա շատ լավ հայր էր, երեխաներս՝ մի աղջիկ ու մի տղա ունենք, մի տեսակ չեն պատկերացնում, որ իրենց հայրն այլևս երբեք չի գալու. սովոր էին հայրիկին ուշ-ուշ տեսնել, բայց... Մենք մեր ամենաթանկն ենք տվել հայրենիքին, չգիտեմ էլ հպարտ ենք, թե ինչ, բայց սա անտանելի ցավ է...»:*

2009 թ. պայմանագրային ծառայության է անցել է Սիսիանի զորամասում, պաշտպանում էր հարազատ գյուղին մոտ գտնվող սահմանները: Ընկերները պատմում են, որ Կարենի հետ ժամանակն աննկատ էր անցնում, կարողանում էր հետաքրքիր թեմաներ գտնել՝ *«Նրա հետ երկար տարիներ դիրք ենք պահել, միասին վերջին բաժակ ջուրն ու հացն ենք կիսել: Ծառայության ընկերությունն ուրիշ բան է, ուրիշ է, երբ դու չես քնում, որ ընկերդ մի կես ժամ ավել քնի, մերոնցից շատերը զոհվեցին, ոչ մեկին չենք ուզում առանձնացնել, բոլորն էլ մեր եղբայրներն են ու մենք իրենց պարտք ենք...»:*

Պատերազմի օրերին Նախիջևանի սահմանային դիրքերում էին: Հոկտեմբերի 8-ին իջել են դիրքերից և Սիսիանի գնդի հետ մեկնել Արցախ: Կարմիր շուկայից տեղափոխվել են Վարանդա, թեժ մարտեր են մղել թշնամու դեմ, մեծ կորուստներ հասցրել նրան, ընկել շրջափակման մեջ, բայց հմուտ գործողությունների շնորհիվ կարողացել դուրս գալ շրջափակումից և նորից մասնակցել մարտերին, հետո նահանջել են և փորձել միանալ գնդին, սակայն մեքենա նստելու պահին անօդաչուն հարվածել է և... Զոհվել է Կարենը, ընկել է հավատով, որ հաղթանակը մերն է լինելու, որ իր ու ընկերների արյունով ներկված հողի տերը հայն է մնալու...

Կարենի զոհվելու բոթն ավելի ուշ են իմացել՝ հոկտեմբերի 17-ին, իսկ ԴՆԹ անալիզի պատասխանը եկել է 2021թ. փետրվարի 27-ին:

Հուղարկավորվել է 2021թ. մարտի 1-ին՝ Շաղատի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ստեփանյան Հրաչյա Գագիկի

Ծնվել է 1983 թ. ապրիլի 20-ին Սիսիան քաղաքում: Ավարտելով Սիսիանի թիվ 1 հիմնական դպրոցը՝ զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Բալահովիտում: Զորացրվելուց հետո վերադարձել է հարազատ բնօրան, ամուսնացել, կազմել համեստ, օրինակելի ընտանիք: Ունեցել են երկու զավակ և անմնացորդ նվիրվել իր ընտանիքին: 2005 թ. որոշում է շարունակել իր հայրենանվեր առաքելությունը՝ որպես պայմանագրային զինծառայող: Կրկին զենք է վերցնում, կրկին զինվորականի համազգեստ հագնում, կրկին անքուն գիշերներ անցկացնում...

Ծառայում էր Սիսիանի N զորամասում և լավագույն ծառայության համար դարձել էր ջոկի հրամանատար: Տարիների ընթացքում հմտացել էր, կայացել, առաջընթաց ու ձեռքբերումներ ունեցել, արդարացրել ազատամարտիկ հոր հույսերը և գնացել նրա ճանապարհով...

2019 թ. որպես լավ հետախույզ՝ հրամանատարությունից առաջարկություն էր ստացել տեղափոխվել Կապան, համաձայնվել էր...

Իր փոքրիկ ջոկատով դեռևս օգոստոսի սկզբին կարողացել էր դիրք գրավել Աջաբաջի ուղղությամբ:

Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան զանգահարել էր տուն, խոսել կնոջ հետ, հորդորել, որ չընկճվի... Սեպտեմբերի 28-ին հայրը՝ Գագիկը, արդեն առաջնագծում էր՝ Վարանդայում (Ֆիզուլի):

Սեպտեմբերի 27-ից մինչև հոկտեմբերի 3-ը Հրաչյան եղել է Կապանի դիրքերում: Վատառողջ լինելու պատճառով նրան տեղափոխում են Կապանի ԲԿ: Հոկտեմբերի 7-ին մի քանի ժամով վերադարձել էր Սիսիան. այնքան մտահոգ էր, այնքան տխուր... Չլսեց անգամ կնոջ հորդորը, որ մնա Սիսիանում, հետ չգնա, այստեղ բուժվի... *«Ես չեմ կարող ընկերներիս մենակ թողնել, ինչպես կարող եմ թողնել հայրենիքս այսքան դժվար պահին»,* – ասաց Հրաչյան և վերադարձավ Կապան՝ դիրքեր: Առողջական վիճակը կրկին վատթարացավ և նրան տեղափոխեցին Քաջարանի ԲԿ: Մի քանի օր պառկելուց հետո ինքնակամ, առանց բժշկի թույլտվության վերադարձավ դիրքեր՝ Դավիթբեկ: Վերջին զանգը հոկտեմբերի 30-ին էր, մի քանի ժամ հետո լուր եկավ, որ Հրաչյան վիրավորվել է արկի պայթյունից և տեղափոխվել հիվանդանոց, որտեղ էլ մահացել է: 37-ամյա Հրաչյան իր հերոսական կյանքը զոհաբերեց հանուն հայրենիքի, հանուն հաղթանակի... Ընկավ՝ հերոսին վայել, ընկավ՝ զենքը ձեռքին, ընկավ՝ հաղթանակի հույսով:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ նոյեմբերի 1-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Վարդազարյան Արծրուն Վարդազարի

Ծնվել է 1958 թ. դեկտեմբերի 2-ին Սիսիանի տարածաշրջանի Վաղատին գյուղում: Եղել է ընտանիքի առաջնեկը, ավարտել է Վաղատինի միջնակարգ դպրոցը: Զինվորական պարտքը կատարել է խորհրդային բանակում:

Ամուսնացել էր, ունի երեք երեխա:

Մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին և միայն հոր հորդորով չի մեկնել առաջնագիծ, քանզի այնտեղ էր արդեն եղբայրը՝ Վարդան Վարդազարյանը:

Հայրենիքի հանդեպ սերը չմարեց տարիների ընթացքում: 2020 թ. սեպտեմբերի 27-ին առնելով պատերազմի լուրը, Արծրունը բազմաթիվ փորձեր արեց կամավորագրվելու: Ի վերջո հոկտեմբերի 4-ին կամավորագրվեց «Արաբո» ջոկատին: Հոկտեմբերի 8-ին մեկնեց Մարտակերտի շրջանի թիվ 51 դիրք և մասնակցեց անմիջական մարտերին: Պատերազմի մասնակից, իր մարտական ընկերոջ՝ Հարութի պատմելով՝ դիրքը եղել է անհարմար: Արծրունն ունենալով շինարարի ձիրք, ամնիջապես կազմակերպել է ամրացնելու, կառուցելու գործընթացը: Մեկ ուրիշ մերօրյա հերոսի՝ Մոնթեի պատմելով՝ Արծրունը չէր օգտվում պաշտպանական միջոցներից, դրանք տալիս էր զինվորներին, կանգնում այն դիրքերում, որտեղ առավել վտանգավոր էր՝ ասելով, թե ինքն իր կյանքն արդեն ապրել է, և որ զինվորի պարտքն է ոչ միայն հաղթել, այլև շարունակել ապրել ու սերունդ թողնել: Մեկ ուրիշ մարտական ընկերոջ՝ Սոսի պատմելով՝ ամենահուսահատված պահերին տեսնելով իրենցից տարիքով ամենաավագին՝ Արծրունին՝ կարողացել են բարձր պահել մարտական ոգին: Հուսադրել, խնամել, ոգևորել է զինվորներին՝ ստանալով «Պապի» մականունը: Առ այսօր էլ Արծրունի ընտանիքը ստանում է զանգեր նրա մարտական ընկերներից, որոնք պատմում են «Պապի» և նրա արարքների մասին:

Վերջին զանգը եղել է հոկտեմբերի 14-ին, իսկ մահվան մասին տեղեկությունը հայտնի է դարձել հոկտեմբերի 18-ին:

Արծրուն Վարդազարյանը և նրա նման շատ հերոսներ չխնայեցին իրենց կյանքը հանուն հայրենիքի...

Հուղարկավորվել է հոկտեմբերի 21-ին Եռաբլուր պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով:

Քարամյան Վահե Արսենի

Ծնվել է 1988 թ. մարտի 30-ին Սիսիան քաղաքում: Սովորել է Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ապա տեղի պետական քոլեջի մաքսային բաժնում:

2006-2008 թթ. ծառայել է հայոց բանակում՝ Ասկերանում:

Բանակից վերադառնալուց հետո երկու տարի ապրել են Երևանում, նորից վերադարձել Սիսիան: Պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում: Որոշ ժամանակ Երևանում բնակվելուց հետո, 2016 թ. նորից անցել է պայմանագրային ծառայության, մասնակցել քառօրյա պատերազմին: Ենթասպա էր, բայց քանի որ արդեն ամուսնացել էր, նախապատվությունը տվել էր խաղաղապահ զորքերում ծառայությանը ու 44-օրյա պատերազմին մասնակցեց խաղաղապահների կազմում:

Ամուսնացած էր, ունի երեք երեխա:

Սեպտեմբերի 27-ին հերթապահ էր, առավոտյան զանգահարել է, ասել՝ գնում են Արցախ... Վահեի հետ վերջին անգամ խոսել են հոկտեմբերի 18-ին, Կարմիր շուկայից... Հոկտեմբերի 19-ին Դրախտիկ գյուղի մոտ տեղի ունեցած թեժ մարտերի ժամանակ ընկել են շրջափակման մեջ, Վահեն երկու տեղից վիրավորվել է, արյունաքամ եղել: Հոկտեմբերի 20-ին նրա աճյունը գտել են Գորիսի դիահերձարանում:

Վահեի մասին մեզ ընկերն է պատմում. *«Լուսավոր, բարի տղա էր, օգնող, հասնող: Երկար տարիներ իրար հետ ենք ծառայել, ոնց էին սպասում երրորդ երեխային, բայց ոչ ինքը, ոչ կինը չհասցրին վայելել իրենց երեխաների պատճառած հաճույքը...»:*

Վահեն որոշել էր զինվորական դառնալ և Վազգեն Սարգսյան համալսարանում հաջողությամբ հանձնել էր ընդունելության քննությունները, բայց վերջին՝ ֆիզկուլտուրայի քննությունից առաջ, ինչը հեշտ հաղթահարելի էր իր համար, կտրականապես հետ էր կանգնել իր որոշումից և ընդունվել Վանաձորի պետական համալսարանի մաքսային բաժին, սովորում էր 4-րդ կուրսում, հեռակա ուսուցմամբ:

Երևանի հիվանդանոցներից մեկում 2020 թ. հոկտեմբերի 15-ին իր երրորդ երեխային վաղաժամ լույս աշխարհ բերած Շուշանը, որ չէր հասցրել տեսնել իր նորածնի դեմքը, հոկտեմբերի 23-ին ծնողների ու եղբոր հետ շտապում էր Սիսիան՝ հուղարկավորելու զոհված ամուսնուն՝ Վահե Քարամյանին, բայց շտապող մեքենան Գորայք գյուղի մոտակայքում վթարի է ենթարկվում, ու Շուշանը դառնում է ավտովթարի զոհ:

Հոկտեմբերի 24-ին Վահեի և Շուշանի աճյուններն ամփոփվել են Սիսիանի քաղաքային գերեզմանատանը: Հետմահու արժանացել է «Մարտական ծառայության» մեդալի:

Օհանյան Հայկ Նվերի

Ծնվել է 1999 թ. դեկտեմբերի 6-ին Սիսիանի տարածաշրջանի Նորավան գյուղում: Մեկ տարեկան էլ չի եղել, երբ ընտանիքը տեղափոխվել է Արարատ քաղաք: Սովորել է Արարատի դպրոցում, բայց հանգամանքների բերումով վերջին տարին սովորել է Նորավանի դպրոցում:

2018 թ. հունվարին Արարատի զինկոմիսարիատից մեկնեց հայոց բանակ, ծառայում էր Ասկերան քաղաքում: «Ես եմ» ծրագրով էր զորակոչվել հայոց բանակ: Երկու տարվա փոխարեն մտադրվել էր հայրենիքին ծառայել երեք տարի: Նպատակն էր ոչ միայն հայրենիքին ծառայել, այլև ծրագրի ընձեռած հնարավորություններին շրջանակում կառուցել իր հետագա կյանքը, վերադառնալ ու տրամադրված գումարով տուն գնել, ընտանիք կազմել, շատ երեխաներ ունենալ, ապրել, արարել, շենացնել... Սիրած աղջիկ ուներ:

Ասում են՝ գյուղում, այն էլ՝ բազմանադամ ընտանիքում, տղան շուտ է հասունանում, ավելի վաղ է իրեն դնում պատասխանատվության տակ... Այդպես էր Հայկը մեծացել՝ ընտանիքի և գյուղի վարք ու բարքին հավատարիմ: Շատ լավ երկրաչափական պատկերացումներ ուներ, գծագրեր էր անում, ինչպես իր հայրը՝ սիրում էր խաչքարեր նկարել ու շատ էր նկարում, տաղանդավոր էր, պատրաստակամ, խիզախ էր, ուժեղ ու հպարտ... Ծառայության մեծ մասը գնացել, քիչն էր մնացել... Ու Հայկն առավել կամային էր դարձել, առավել հասուն ու ինքնավստահ... Բայց ճակատագիրը նրան ուրիշ բան էր կանխորոշել՝ պատվով տանել նաև վերջին մարտահրավերը՝ բարձր պահել զինվորի պատիվը... Ծառայում էր Ասկերանում, պատերազմի ժամանակ տեղափոխվել էր Ջրական: Վերջին անգամ Հայկի հետ հոկտեմբերի 7-ին խոսել էր սիրած աղջիկը. լսվել է պայթյուն, որից հետո հավերժորեն լռել է Հայկի հեռախոսը:

Ռազմական գործից լավ էր հասկանում, բավականաչափ գիտելիքներ ուներ, երբ խնդրում էին օդային հարվածներից զգուշանալ, հանգստացնում էր, ասում՝ գիտի իր անելիքը: Հայկը շարքային էր, դիրքի պատասխանատու, մասնակցել է Վարանդայի, Ջրականի մարտերին:

Հոկտեմբերի 10-ին Հայկի զոհվելու մասին տեղեկությունը տարածվեց...

Հայկի աճյունը գտան նրա 21-ամյակը լրանալու հաջորդ օրը՝ դեկտեմբերի 7-ին և հուղարկավորեցին Եռաբլուր պանթեոնում, իր մարտական ընկերների կողքին, որոնց հետ կռվեց, որոնց հետ ընկավ հանուն հայրենիքի: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Օհանյան Յուրի Սամսոնի

Ծնվել է 1998 թ. ապրիլի 1-ին Սիսիան քաղաքում: Սիսիանի թիվ 5 միջնակարգ դպրոցի առաջին դասարանն ավարտելուց հետո 2006 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան: Երկրորդ դասարանից սովորել է Երևանի Գ. Ադդարյանի անվան թիվ 133 դպրոցում: Հիմնական կրթությունը ստանալուց հետո ուսումը շարունակել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի վարժարանում, ապա՝ Ազգային ագրարային համալսարանում:

Մեծ նպատակներ ուներ, մեծ ծրագրեր, ասում էր՝ կամ բիզնեսմեն եմ դառնալու, կամ՝ զինվորական, ավելի կոնկրետ՝ գնդապետ: Այս մտածողությունը նրան բանակն էր տվել, Ասկերանում անցկացրած զինվորական ծառայությունը շատ բան էր սովորեցրել...

2016 թ. զորակոչվել է հայոց բանակ, ծառայել Ասկերանի զորամասում, որտեղ էլ աչքի է ընկել որպես հմուտ հրետանավոր, պարգևատրվել «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշանով:

Զորացրվելուց հետո անցել է հեռակա ուսուցման՝ միաժամանակ աշխատելով «Գազպրոմ Արմենիա» ընկերությունում՝ անվտանգության ծառայության աշխատակից, նախապես վերապատրաստվելով «Բերկուտ» թիկնապահական և պահնորդական ուսումնական կենտրոնում:

Սեպտեմբերի 27-ին, երբ թուրք-ազերիներն իրենց ագրեսիայով մթագնեցին Արցախ աշխարհի երկնակամարը, երբ հային իր հողում ապրելու իրավունքից էին ուզում զրկել, Յուրիի հայրենասեր ոգին չէր կարող սպասել. առանց մի վայրկյան անգամ մտածելու կամավոր մեկնեց ռազմի դաշտ... Սկզբում Նորավանի զորամասում էր, ապա տեղափոխվեց Մեղրի, իսկ հոկտեմբերի 13-ին՝ Արցախ:

Հավատում էր հաղթանակին, հավատում էր պատերազմի աստված իր հրետանու անվրեպությանը: Երկու տարի չկար, ինչ զորացրվել էր Ասկերանում անցկացրած պարտադիր զինվորական ծառայությունից:

Հոկտեմբերի 15-ին Քաշաթաղի շրջանի Այգեհովիտ գյուղից 20 կմ դեպի Ջրական տանող ճանապարհին ԱԹՍ-ի հարվածից զոհվեց Յուրին: Բոլորը նրան հիշում են որպես բարի, ընկերասեր ու մարդկային:

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ հոկտեմբերի 18-ին: Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

Ֆիլիպոսյան Տարոն Հրայրի

Ծնվել է 2000 թ. հոկտեմբերի 13-ին Սիսիան քաղաքում: Հիմնական կրթությունը ստացել է Սիսիանի թիվ 4 դպրոցում: Ուսումը շարունակել է ավագ դպրոցում: 2012 թ. ընդունվել և 2016 թ. գերազանցությամբ ավարտել է Սիսիանի գեղարվեստի դպրոցը:

2017 թ. ընդունվել է Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի քանդակի բաժինը:

2016 թ. ընդունվել է UWC ամառային դպրոց, մեկնել ԱՄՆ՝ մասնակցել 2-շաբաթյա Գլոբալ լիդերների ֆորումին:

Զրուցում ենք զարմուհու՝ Հասմիկի հետ, Տարոնի մասին անթաքույց ցավով է պատմում. *«Եզակի անձնավորություն էր. ամենաբարի, ամենամոտ եղբայր ու ընկեր: Տաղանդավոր էր ու հաջողակ, ինձ թվում էր, թե նրա հետ միայն դրականը կարող էր պատահել: Պատերազմը սկսվելուց օրեր առաջ հեռախոսով խոսում էինք, հիշում մեր համատեղ անցկացրած օրերը, հարցրի՝ տեսնես՝ այդքան լավ ժամանակներ էլ ե՞րբ ենք ունենալու, պատասխանեց. «Մի տեսակ զգացողություն կա, որ լավ օրեր չեն լինելու»: Հիմա եմ հասկանում, որ ինչ-որ բան էր զգում...»:*

2019 թ. զորակոչվել է բանակ, Արմավիրում 6-ամսյա ուսումնական պարապմունքներից հետո հիմնական ծառայության է անցել Արցախում՝ Ասկերանի զորամասում:

Նրա վերջին քանդակը մի տեսակ մարգարեական է՝ քանդակված է մակույկում կանգնած մարդ՝ սրտին անցք՝ ճիշտ այնպես, ինչպես վիրավորվել է ինքը:

Սեպտեմբերի 26-ը Տարոնի սիրելիի՝ Նելլիի ծննդյան օրն էր. աղջիկն արցունքներով է հիշում իրենց բոլոր հանդիպումները, շեշտում, որ իր համար թանկ է Տարոնից մնացած ամեն ինչը, իսկ իրենց նորաբողբոջ սերը, որ պիտի ծաղկեր ու պտուղներ տար, հիմա հավերժական է դարձել...

Սեպտեմբերի 27... Պատերազմի գույժի հետ Սիսիանում ցավոտ շշուկներ տարածվեցին՝ «Տարոնն էլ չկա... Տարոնը զոհվել է...»:

Ցավոք, ճշմարիտ էին շշուկները, որ պիտի վերածվեին բոթի՝ *«20 տարին չլրացած Տարոն Ֆիլիպոսյանը զոհվել է պատերազմի առաջին օրը»:*

Հիմա տարբեր ցուցահանդեսներում այցելուները սկզբում հիանում են Տարոնի քանդակներով, հետո, երբ լսում են, որ հեղինակը նահատակվել է, հեռանում են ափսոսանքով, քանզի Տարոնը շատ-շատ տաղանդավոր էր...

Հուղարկավորվել է Սիսիանի քաղաքային պանթեոնում՝ սեպտեմբերի 30-ին: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական ծառայություն» մեդալով:

Պատերազմում անհայտ ճակատագրի արժանացած մեր հայրենակիցները

Արամե Սևադայի Առաքելյան

Հայկ Աշոտի Խաչատուրով

Մաքսիմ Մարտունի Սարգսյան

Հարութ Արշավիրի Արզումանյան

Էդուարդ Ալիկի Գրիգորյան

Արա Սենիկի Ավագյան

Կարեն Ռոբերտի Իսկանդարյան

Դավիթ Միերի Գաբրիելյան

Գոռ Զոհրաբի Հովհաննիսյան

Գևորգ Զոհրաբի Հովհաննիսյան

Տիգրան Հովհաննեսի Հովհաննիսյան

Գերեվարվել ու կեղծ մեղադրանքով դատապարտվել է

Ալեքսեյ Արամայիսի Խոսրովյան

Սուրբ Էջմիածին, Մայր տաճար

Արիացյալք

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ....

Նոր-Խան Աշխոց Վարդապետաց։

Արիացեա՛ք ամ՛ռ հանկարակ-
սին՝. քաջութեամբ առնուլ ընդդէմ
խաբէութեան. հանճարեա՛ք դք ի
հատուցումն դաւանացն՝. զամ-
բարբարոսացն արդարադատ չափը-
մամբ՝. զօրացա՛ք յաղթօ՝ղք.
պրսակեա՛ք ի քրիստոսէ։

Փոխանակեա՛ք զո՛ ընծայութի-
ւնս՝ ընդ ճշմարիտ յուսոյ

անմահութեանն՝. փոխանգանա՛ք
ձերոց առիւք ընդկառարու՛մն. մանր-
իկ արեամբ յաղտոյ մեղաց տընդ-
մարդ. զօրացա՛ք յաղ։

Հայցեցէ՛ք զեան՝ դաղութիւն՝.
ճշմարիտ վրկայք սրբոյ երրորդ-
ութեանն՝. նեղելո՛ւ՛ց յանօ-
րինաց բընութե՛նէ՝. զի՝ ցընծասցո՛ւք
յաղթանակաւ մարտի
ձերոյ. նահատակք յարդոյք՝
պրսակեա՛ք։

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ
ՎԵՐԱԾԵՑ
ՀԵՆՐԻԿ
ԲԱԽՉԻՆՅԱՆԸ

Սուրբ նահատակների գնդերը սոսկալի պատերազմում
հանդիսավոր խմբով հասան պայքարի կիսակետին:

Իբրև հավերժական պաշտողներ, բարենշան երանությամբ
և Աստծո համար ողջակիզված բանական զոհեր:

Իրենց կյանքի ընթացքի ավարտին, ուրախ հոժարությամբ,
տոկացին ահավոր խոշտանգիչ չարչարանքներին:

Մահու չափ տքնելով, սաստիկ կսկծալով, քրտինք թափելով՝
արտասուքն իրենց վարդագույն արյանը խառնեցին:

Ողորմագին տառապանքով, ցավագին պաղատանքով,
աղոթելով՝ խնդրեցին ավելացնել իրենց տանջանքները:

Երկրայիններիս գերազանցող բարի ուսուցանողները
արնավառ վայելչությամբ իրենց արիացան:

Մարմնի կարիքներից, մեր կենսակից բնույթից
բարձրացան երկինք, խառնվեցին զորքերին երկնային:

Բացորոշ երևացին իբրև աշխարհի քարոզիչներ,
հրեշտակների տոնախմբություններ՝ գրված Գրքում կյանքի...

Համո Սահյան



ՉՏԵՍՆԵԻ

Չտեսնեի, մեր երդի ծուխ,
Քեզ կտրված չտեսնեի:
Ամ, մեր սյունի ծունկը ծալված,
Վիպը ծռված չտեսնեի:

Չտեսնեի բակն՝ ամայի
Ու դռները՝ կրնկահան
Եվ գերանը՝ հասակով մեկ
Գետնին փռված չտեսնեի:

Ամ, յոթ գույնի մամուռ հագած
Մեր երկանքի քարի վրա
Քարմաղի խեմքն ունջը կերած
Ու խարխլված չտեսնեի:

Խաչիպապի որդու, թոռան,
Թոռն-թոռան օրորոցի
Փշրանքները նշխար-նշխար՝
Փոշում ցրված չտեսնեի:

Տան երդկալը՝ ցանկապատի
Ջարդ ու փշուր կողերի մեջ
Եվ բահն անտեր՝ խոպան մարգի
Հողում խրված չտեսնեի:

Գայի, ճաքած շրթունքներով
Համբուրեի արցունքդ պաղ,
Ամ, պապերիս ձեռքի սափող,
Քեզ փշրված չտեսնեի:

Իմ տնավեր լավից լավեր,
Աչքս փակվեր մի բուռ հողով,
Ձեր այդքան թանկ անունները
Քարին գրված չտեսնեի:

Վարուժան Խաստուր

ՏՂԵՐՔ...

Տղերք, լույսի նման տղերք,
Մեր չմարող հույսի նման տղերք,
Չկեռացող, չհեռացող տղերք,
Հեքիաթներից ոսկի խնձոր
Ու հավատամք բերող
Խենթ ու խելառ տղերք,
Մեծ ու փոքր հարգող՝
Սրտներդ բաց տղերք,
Նեղյալներին ոգի
Ու հաց տանող տղերք,
Ձեր մարմինը կամքով,
Արիական ջանքով
Ու տքնանքով
Մարվող տղերք,
Մեր դրոշը
Աշխարներին
Հպարտությամբ պարվող,
Ցնծավառ ու կիսվուն,
Մեր դյուցազուն տղերք,
Մեր երապից ծլած,
Մեր անուրջից ծնված,
Կաղնիացած,
Մեր դաշտերը հերկող,
Մեր ապագան բերքող,
Տիեզերքը պեղող,
Մեր արտերին պապակ
Անձրևի պես տեղող,
Օջախ պահող
Ու շենացնող
Մեր էության տղերք,
Մեր գիտության տղերք...:
Տղերք՝ Վահագնաբոց,
Տղերք՝ վեհ ու հուրհեր,
Տղերք՝ կամքով արի,
Մշտապորեղ, բարի,
Գաղափարի տղերք,
Արծրվի պես ճախրող
Եվ սիգապանծ, անանց
Մեր վեհապանծ հուշի
Անդրանիկի ու Չավուշի տղերք,
Մեր հայրենի հողը
Ձեր ավիշով օծող,
Նախրալույս արյամբ
Երկիր պահող՝
Մեր բալասան տղերք,
Արևածուփ ու բորբ
Մեր սրբական տղերք,
Մեր գալիքի տղերք,
Հայրենիքի տղերք:
Մեր երկիրը Հայոց
Ստահակներից,
Աղտ ու կեղտից մաքրող
Ապաքինող,
Հոգու պարտքի
Ու հավատքի տղերք,
Սահմաններին կանգնած,
Մեր պահապան
Ու մեր վահան տղերք,
Մեր կորության տղերք,
Հպորության տղերք,
Մեր մարտերում ընկած
Եվ փառապանծ, անանց,
Մեր լուսաբաց տղերք:
Ես ինչ անեմ արդյոք
Ու ինչ անեմ,-
Սիրտս հանեմ,
Ձեր ճամփեքին ցանեմ,
Իմ աղոթքը մանեմ,
Թոն ու թուխպը
Վանեմ-տանեմ,
Գավիթները հույսի
Խնդությունով բեռնեմ,-
Ես ձեր բակին մեռնեմ,
Ես ձեր կարկին մեռնեմ՝
Մեր հայրենի հողից
Ոչ մի թիզ չտվող,
Չարին ընդառաջող,
Չատրկացող
Եվ թշնամյաց ձեռքից
Մասիս սարը բերող,
Միահամուռ ու կուռ
Արևաբույր տղերք,
Լույսի համբույր տղերք,
Մաքրամաքուր տղերք,
Մեր ճշմարիտ տղերք,
Աղյուծասիրտ տղերք,
Վատծով լցված տղերք,
Հաղթանակած տղերք...

ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՆԹԵՈՆ

Սյունի վանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարի հարևանությամբ պանթեոնը հիմնադրվեց Արցախյան առաջին պատերազմի տարիներին:

Այդ պատերազմում Սիսիանի տարածաշրջանից զոհվեց 92 հոգի (երեք հոգի էլ անհետ կորած են):

1991-2015 թթ. պանթեոնում ամփոփվել է 48 նահատակի աճյուն:

Մյուս զոհերը հուղարկավորվել են իրենց ընտանեկան գերեզմանոցներում:
2016 թ. ապրիլյան պատերազմում զոհված ութ սիսիանցիները նույնպես հուղարկավորվել են պանթեոնում:

2020 թ. 44-օրյա պատերազմում Սիսիանի տարածաշրջանից զոհվեց 79 հոգի, որից 65-ի աճյունը նույնպես ամփոփվել է այդտեղ:

Հաշվի առնելով, որ պանթեոնում այլևս ազատ տեղ չկա հուղարկավորության համար, Սիսիան քաղաքի նոր գերեզմանատանն առանձնացվել է գերեզմանատեղի՝ զոհված ազատամարտիկների համար. այնտեղ հողին են հանձնել 44-օրյա պատերազմի երկու նահատակի աճյուն:

ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Հուշահամալիրը հիմնվեց 1992-ի սեպտեմբերի 26-ին. այդ օրն այնտեղ հուղարկավորվեցին Արցախյան պատերազմում նահատակված երկու քաջարանցի:

Հետագայում այդտեղ ամփոփվեցին մարտական գործողությունների ընթացքում, ինչպես և մինչև 1996 թ. բանակային ծառայության ժամանակ կոված զինծառայողները՝ 24 նահատակ: Այդ պատերազմում կոված մյուս քաջարանցիները հուղարկավորվել են իրենց ընտանեկան գերեզմանոցներում:

2020 թ. 44-օրյա պատերզմում նահատակվեց 20 քաջարանցի, որոնց անունը նույնպես ամփոփվել է այդ պանթեոնում:

ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՊՈՒՐԱԿ

Հիմնադրվել է 1990-ականների վերջին՝ նախաձեռնությամբ Վոլոդյա Ակատյանի, Ղևոնդ Հովհաննիսյանի և ուրիշ հայրենասերների: Առաջինը կանգնեցվել է անմահ Փարամազի (Մաթևոս Սարգսյանի) հուշարձանը. բացումը տեղի է ունեցել 2001 թ. հունիսի 15-ին (1915-ի այդ օրն էին Փարամազին ու նրա 19 ընկերներին կախաղան հանել Պոլսի Սուլթան Բայազետի հրապարակում):
Հուշարձանը կառուցվել է Հնչակյան կուսակցության և երախտապարտ մեղրեցիների ջանքերով:

2003-ին հիշատակի պուրակում կանգնեցվել է հուշաքար, որի վրա գրվել են Արցախյան առաջին պատերազմում կոիված 18 մեղրեցիների անունները:

2021 թ. սեպտեմբերի 26-ին պուրակում կանգնեցվել է մի նոր հուշաքար, որի վրա գրվել են Արցախյան երրորդ պատերազմում

նահատակված 20 մեղրեցիների անունները: Հուշաքարը կանգնեցվել է մեղրեցի Բախշի Բախշյանի և Անդրանիկ Մովսիսյանի նախաձեռնությամբ:

ՆԱԽԱՏԱԿ ԳՈՐԻՍԵՑԻՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐԱՆԸ

1980-ին կառուցվեց Հայրենական մեծ պատերազմում Գորիս քաղաքից զոհված 1381 զինվորականի հիշատակը հավերժացնող հուշարձանը (Գորիսի տարածաշրջանից այդ պատերազմում զոհվել է 4144 հոգի): Հուշարձանի նախագծի հեղինակ և ճարտարապետ՝ Գևորգ Մուշեղյան: Հուշարձանի շրջակայքը վերակառուցվել է 1985 թվականին՝ Սևադա Զաքարյանի նախագծով:

Արցախյան առաջին պատերազմում զոհված 172 գորիսեցիներից յուրաքանչյուրը հողին է հանձնվել իր ընտանեկան գերեզմանոցում (այդ պատերազմում անհետ կորել է 6 գորիսեցի):

Ընտանեկան գերեզմանոցում է ամփոփվել 2016 թ. ապրիլյան պատերազմում զոհված զինվորի աճյունը:

2016 թ. մայիսի 9-ին համալիրում բացվեց Արցախյան գոյամարտում հայ ժողովրդի հերոսությունն արտացոլող հաղթակամարը: Նախաձեռնությունը Սուրեն Խաչատրյանինն էր:

Հուշահամալիրի տարածքում 2020-ի Արցախյան պատերազմի օրերին հիմնվեց պանթեոն՝ ռազմի դաշտում մարտիրոսված գորիսեցիների համար, որտեղ ամփոփված են 43 զոհվածի աճյունները:

ԿԱՊԱՆԻ ԲԱՂԱՔՈՒՐՋԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

1990 թ. ապրիլի 24-ին համալիրում բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողը (ճարտարապետ՝ Յուրա Գևորգյան):

1990 թ. մայիսի 9-ին բացվեց Մեծ հայրենականում զոհված 3036 կապանցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը (ճարտարապետ՝ Յուլիկ Արմենյան):

1996 թ. ապրիլի 24-ին բացվեց Արցախյան գոյամարտում զոհված կապանցի ազատամարտիկների պանթեոնը (այդ պատերազմում Կապանի տարածաշրջանից զոհվել է 109, անհետ կորել՝ 13 հոգի):

2015 թ. ապրիլի 2-ին հուշահամալիրում կանգնեցվեց Սպարապետ Վազգեն Սարգսյանի կիսանդրին (բանդակագործ՝ Նարեկ Օրդյան):

Պանթեոնում հետագայում հուղարկավորվեցին 2016 թ. բառօրյա պատերազմի կապանցի 3 նահատակները:

2020 թ. 44-օրյա պատերազմում Կապանի տարածաշրջանից 50 զոհվածից 47-ը նույնպես հուղարկավորվել է հուշահամալիրի պանթեոնում:

... Եվ պահենք այս հողը մի բուռ, Անունը՝ Հայաստան պահենք

Մի՛, ինչքան կոհեր ենք տվել,
Որ պահենք այս հողը մի բուռ,
Անունը Հայաստան պահենք:
Արյունի ծովեր ենք տվել,
Որ պահենք այս հողը մի բուռ,
Անունը Հայաստան պահենք:
Քրտինքի ծովեր ենք տվել,
Որ կորողը բուրաստան պահենք,
Տաճար ու ոստան պահենք:

Այս մի բուռ քարեղեն հողում,
Այս մի բուռ քարեղեն հողում
Դեռ ինչքան ջանք է հարկավոր,
Որ պահենք հացը հոգևոր:
Եվ պահենք մեր քայլը՝ այս իևնթ
Քառատրոփ թռչող կյանքի հետ:
Եվ պահենք մեկանով լեցուն
Մեր հոգուն տարեկից լեկուն:

Սեփական մեր բույրը պահենք,
Եվ պահենք մեր համը սեփական,
Սեփական մեր գույնը պահենք,
Եվ ապրենք տանը սեփական:
Եվ տոհմ ու գերդաստան պահենք,
Եվ պահենք այս հողը մի բուռ,
Անունը Հայաստան պահենք:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

«Սասունցի Դավիթ» արձան, Երևանի Սասունցի Դավթի հրապարակ: Բարձրությունը՝ 9,3 մ, քանդակագործ՝ Երվանդ Քոչար, ճարտարապետ՝ Միքայել Մազմանյան, հիմնադրվել է 1959թ.: